ՀԱՅԿ Ս. ՔՈԹԱՆՋՅԱՆ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԳԻՏՅԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ. ՆԱԽԿ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ–ՂԱՐԱԲԱՂ, ՀԱՅԱՍՏԱՆ, ԱՆԴՐԿՈՎԿԱՍ–ԱՖՂԱՆՍՏԱՆ

ГАЙК С. КОТАНДЖЯН

ПОЛИТОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ БЕЗОПАСНОСТИ: ПЕРЕСТРОЙКА СССР – КАРАБАХ, АРМЕНИЯ, ЗАКАВКАЗЬЕ – АФГАНИСТАН

HAYK S. KOTANJIAN

POLITICAL PROBLEMS OF SECURITY: PERESTROIKA IN THE USSR – KARABAKH, ARMENIA, SOUTH CAUCASUS – AFGHANISTAN





Նվիրվում է Գեորգիյան ասպետների՝ իմ պապ Արարատ Ավոյանի, պապիս պապ Սոտնիկ Մելքոնի, նրանց զինակիցների՝ Դոնի ու Կուբանի կազակների հիշատակին

Посвящается памяти Георгиевских кавалеров-моего деда Арарата Авояна, деда моего деда Сотника Мелкона, их соратников-Донских и Кубанских казаков

Dedicated to the memory of Knights of St. George-my Grandfather Ararat Avoyan, Great Great Grandfather Sotnik Melkon, their companions-in-arms-Don and Kuban Cossacks

4342

ՀԱՅԿ Ս. ՔՈԹԱՆՋՅԱՆ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐ.

ԽՍՀՄ ՎԵՐԿԱՌՈՒՑՈՒՄ–ՂԱՐԱԲԱՂ, ՀԱՅԱՍՏԱՆ, ԱՆԴՐԿՈՎԿԱՍ–ԱՖՂԱՆՍՏԱՆ

էջ 15–272

ГАЙК С. КОТАНДЖЯН

ПОЛИТОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ БЕЗОПАСНОСТИ:

ПЕРЕСТРОЙКА СССР–КАРАБАХ, АРМЕНИЯ, ЗАКАВКАЗЬЕ–АФГАНИСТАН

сс. 273–536

HAYK S. KOTANJIAN

POLITICAL PROBLEMS OF SECURITY:

PERESTROIKA IN THE USSR–KARABAKH, ARMENIA, SOUTH CAUCASUS–AFGHANISTAN

pp. 537–655



ՀՀ ՊՆ ԴՐԱՍՏԱՄԱՏ ԿԱՆԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ИНСТИТУТ НАЦИОНАЛЬНЫХ СТРАТЕГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ
ИМ. ДРАСТАМАТА КАНАЯНА МО РА

DRASTAMAT KANAYAN INSTITUTE FOR NATIONAL STRATEGIC STUDIES, MOD, RA

ԵՐԵՎԱՆ
ԵՐԵՎԱՆ 2009
YEREVAN

ՀՏԴ 32.001:94/99
ԳՄԴ 66+63.3
Ք – 750

ՔՈԹԱՆՋՅԱՆ ՀԱՅԿ Ս.

Ք – 750 Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ. ԽՍՀՄ վերակառուցում–Ղարաբաղ, Հայաստան, Անդրկովկաս–Աֆղանստան.– Եր.: ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, 2009.– 656 էջ:

Գիրքը մի ժողովածու է, որն արտացոլում է Աֆղանստանում ԽՍՀՄ վարած պատերազմի, ԽՍՀՄ վերակառուցման, 1988 թ. Սպիտակի կործանարար երկրաշարժի, Ղարաբաղյան ազգային-ազատագրական շարժման ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծման, ինքնիշխան Հայաստանի Հանրապետության շուրջ ձևավորված անվտանգային միջավայրում տեղի ունեցող քաղաքական գործընթացների հետ կապված ռազմավարական զարգացումները: Հեղինակը՝ ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի ղեկավար, քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ), Ռուսաստանյան ռազմագիտական ակադեմիայի իսկական անդամ, հակաահաբեկչության գծով փորձագետ (ԱՄՆ) գեներալ-մայոր Հ. Քոթանջյանը, հենվելով ՌԴ և ԱՄՆ-ի առաջատար քաղաքագիտական-անվտանգային կենտրոններում ձեռք բերված գիտելիքների ու իր բազմամյա գիտակիրառական գործունեության փորձի վրա, որպես նշված գործընթացների ականատես մասնակից, իր հոդվածների, զեկուցումների և հարցազրույցների միջոցով ժամանակի հոլովույթում ուրվագծում է քաղաքական-անվտանգային զարգացումների ընթացքը՝ հստակելով ու վերլուծելով պահի փուլանիշային իրադարձությունները:

Տեսական ու կիրառական նշանակություն ունեցող այս գիրքը հասցեագրված է ազգային անվտանգության քաղաքագիտության ոլորտի մասնագետներին, անվտանգության ապահովման հիմնախնդիրներով զբաղվող պետական ու քաղաքական գործիչներին, ինչպես նաև ընթերցողների լայն շրջանի:

ՀՏԴ 32.001:94/99
ԳՄԴ 66+63.3

ISBN 978-99941-2-314-8

© Հ. Ս. Քոթանջյան, 2009 թ.
© ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, 2009 թ.

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Հեղինակն իր խորին երախտագիտությունն է հայտնում
«Հայռուսգազարդ» ՓԲԸ Վարչության նախագահ–Գլխավոր տնօրեն
Կարեն Վիլհելմի Կարապետյանին՝
գրքի հրատարակումը հովանավորելու համար:

Հեղինակը երախտապարտությամբ նշում է
իր ծնողների՝ Սերգեյ Քոթանջյանի և Լեռնուհի-Սեդա Ավոյանի
ուղեցույց օրինակը,
իր արտասահմանյան երկարատև ծառայողական
և ակադեմիական գործուղումների ժամանակ
կնոջ՝ Ռոզա Քոթանջյան-Սարգսյանի
և որդիների՝ Վահանի ու Սարգսի (Սերգեյի)
բարոյական աջակցությունը

Հայկ Քոթանջյան

СЛОВО ПРИЗНАТЕЛЬНОСТИ

Автор выражает свою глубокую признательность
Председателю Правления–Генеральному директору
ЗАО "АрмРосгазпром"
Карену Вильгельмовичу Карапетяну
за спонсорство в организации издания данной книги.

Автор с благодарностью отмечает вдохновляющий пример
своих родителей Сергея Котанджяна и Лернуи-Седы Авоян,
моральную поддержку супруги Розы Котанджян-Саркисян,
сыновей Ваана и Саргиса (Сергея)
во время своих зарубежных долгосрочных
служебных и академических командировок.

Гайк Котанджян

ACKNOWLEDGMENTS

The author owes a debt of gratitude
to Karen V. Karapetyan,
Chairman of the Board–Director General, "ArmRusgasprom" CJSC
for sponsorship in organizing the publication of the given book.

The author appreciates the encouraging example
of his parents Sergey Kotanjian and Lernouhi-Seda Avoyan,
the moral support of his wife Rosa Kotanjyan-Sarkissian
and his sons Vahan and Sargis (Sergey)
during his overseas long-term business and academic trips.

Hayk Kotanjian

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱԼԵԶՈՒ ՆՅՈՒԹԵՐԻ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐ. ԽՍՀՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ–ՂԱՐԱԲԱՂ, ՀԱՅԱՍՏԱՆ, ԱՆԴՐԿՈՎԿԱՍ–ԱՖՂԱՆՍՏԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 15

Զ. Բալայան, ՆԱՄԱԿ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ 18

Ն. Տեր-Գրիգորյանց, ԽՈՍՔ ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ 22

Դ. Կազուտին, ՁԵՐՈՆԵՐԻ ԳՈՒՄԱՐԸ՝ ՄԵԿ 26

Ս. Պրոկոպչուկ, ԿԻՍՎԱԾ ՑԱՎԸ 29

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՎՏԱՐԱՆԴԻԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՎՏԱՐԱՆԴԻԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (1991 թ. ապրիլ–դեկտեմբեր, Մոսկվա) 31

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ, ՁԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ. ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱԳՐԻԴՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՀԻՄՆՎԱԾ ԵՆ «ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՐԱՑՈՒՅՑԻ» ՎՐԱ 48

ՀՀ ՆԱԽՍԳԱՀԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵՎՈՐ Է ՀԱՅԱՍՏԱՆ–ՍՓՅՈՒՌՔ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌՈՒՄՈՎ 56

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ՝ ԻՍՐԱՅԵԼԻ ՕՐԻՆԱԿՈՎ 58

ՀԱՆՐԱՔՎԵՆ ՈՐՊԵՍ «ԲԱՐԻ ԿԱՄՔԻ» ԺԵՍՏ. ՂԱՐԱԲԱՂՅՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՍՑԵՆԱՐՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 64

ՆԱԽԱԳԱՀ ԱԼԻԵՎԸ ԿՈՂՄ Է ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆԸ,
ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ, ԱՄՆ-Ի, ՖՐԱՆՍԻԱՅԻ
ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՀԱԿԱՌԱԿ 79

«ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ՝
ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՔ 81

ԻՍՐԱՅԵԼԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ ՋԻՆԿՈՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ
ՈԳՈՒ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ՓՈՐՁԻ ՄԱՍԻՆ՝ ՀՀ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ 88

ՀԱՅ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱՉԱՓԻ ՄԵՋ 114

ԼՌՀ ՃԱՆԱՉՄԱՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՆՈՐՄԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 121

ԱՊՐԲԵՋԱՆԸ ԼԻԱԶՈՐԱԶԵՐԾՈՒՄ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ,
ԱՄՆ-ԻՆ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻՆ ԵԱՀԿ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ԿԱԶՄՈՒՄ 126

ԱՊՐԲԵՋԱՆ. ՉՀԱՁՈՂՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ
ԱՐԿԱԾԱԽՆԴՐՈՒԹՅՈՒՆ 130

ԱՊՐԲԵՋԱՆ. ՀԱԿԱԺՈՂՎՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՈՒՄ 132

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԶԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՄՇԱԿՄԱՆ
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 142

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԴՈԿՏՐԻՆԻ
ՄՇԱԿՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ 157

ԿՈՍՈՎՈՅԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԱԶԳԱՄԻՋՅԱՆ
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐ 179

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 197

ՈԱԶՄԱՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ 208

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԶԳԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԱՖՂԱՆՍՏԱՆԻ ՕՐԻՆԱԿՈՎ 228

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՁԻՆՎԱԾ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ 242

ԽՍՀՄ ՊՐԵԶԻԴԵՆՏ Մ. ԳՈՐԲԱՉՈՎԻՆ
ԱՄՆ-Ի ՊՐԵԶԻԴԵՆՏ Ջ. ԲՈՒՇԻՆ 261

ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋ 263

СОДЕРЖАНИЕ
МАТЕРИАЛОВ, ПУБЛИКУЕМЫХ НА РУССКОМ ЯЗЫКЕ

ПОЛИТОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ БЕЗОПАСНОСТИ: ПЕРЕСТРОЙКА СССР – КАРАБАХ, АРМЕНИЯ, ЗАКАВКАЗЬЕ – АФГАНИСТАН

ВСТУПЛЕНИЕ 275

З. Балаян. ПИСЬМО К ЧИТАТЕЛЮ 278

Н. Тер-Григорьянц. СЛОВО ОБ АВТОРЕ 282

Д. Казутин. СУММА НУЛЕЙ ПЛЮС ЕДИНИЦА 286

С. Прокопчук. РАЗДЕЛЕННАЯ БОЛЬ 289

О ПРАВИТЕЛЬСТВЕ В ИЗГНАНИИ НАГОРНОГО КАРАБАХА

О ПРАВИТЕЛЬСТВЕ В ИЗГНАНИИ НАГОРНОГО КАРАБАХА (апрель – декабрь 1991 г., Москва) 291

НАУЧНЫЕ СТАТЬИ, ДОКЛАДЫ И АВТОРСКИЕ ИНТЕРВЬЮ

ПЕРСПЕКТИВЫ МИРА И БЕЗОПАСНОСТИ НА ЮЖНОМ КАВКАЗЕ: МАДРИДСКИЕ ПРИНЦИПЫ КАРАБАХСКОГО УРЕГУЛИРОВАНИЯ ОСНОВАНЫ НА "ПАРАДИГМЕ ВОЙНЫ" 306

О ПРОБЛЕМЕ ОРГАНИЗАЦИИ ТЕРРИТОРИАЛЬНОЙ ОБОРОНЫ ГОСУДАРСТВА НА ПРИМЕРЕ ИЗРАИЛЯ 313

"РЕФЕРЕНДУМ – В КАЧЕСТВЕ ЖЕСТА ДОБРОЙ ВОЛИ": СЦЕНАРИИ МИРА И ВОЙНЫ В КАРАБАХЕ 318

ПОНЯТИЕ "ОБОРОННАЯ ПОЛИТИКА" КАК ТЕОРЕТИКО-МЕТОДОЛОГИЧЕСКИЙ ИНСТРУМЕНТ ОСУЩЕСТВЛЕНИЯ ОБОРОННЫХ РЕФОРМ В АРМЕНИИ 330

ПРЕЗИДЕНТ АЛИЕВ И ЗА МИР, И ЗА ВОЙНУ – ВОПРЕКИ ЗАЯВЛЕНИЮ ПРЕЗИДЕНТОВ РОССИИ, США И ФРАНЦИИ 337

ОБ ОПЫТЕ ФОРМИРОВАНИЯ БОЕВОГО ДУХА ВОИНА В АРМИИ ОБОРОНЫ ИЗРАИЛЯ В СВЕТЕ ОБОРОННЫХ РЕФОРМ РА 339

ЗА АМНИСТИЮ: КОНСОЛИДИРОВАННОЙ АРМЕНИИ ВПРЕДЬ НЕ ДАНО ПРОИГРАТЬ НИ ОДНОЙ ВОЙНЫ 362

РАЗВИТИЕ АРМЯНСКОЙ НАУКИ В МАСШТАБАХ СТРАТЕГИИ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ АРМЕНИИ 363

ОЗДОРОВЛЕНИЕ АМЕРИКАНО-РОССИЙСКИХ ОТНОШЕНИЙ ПОЙДЕТ НА ПОЛЬЗУ ВСЕМУ КАВКАЗУ И АРМЕНИИ 369

"ГЕНОЦИД ГОРСКИХ ЕВРЕЕВ"–ПРОДУКТ СПЕЦПРОПАГАНДЫ АЗЕРБАЙДЖАНА 371

К ВОПРОСУ О СТРАТЕГИИ ПРИЗНАНИЯ НКР В КОНТЕКСТЕ ПРИНЦИПОВ И НОРМ МЕЖДУНАРОДНОГО ПРАВА 373

АЗЕРБАЙДЖАН ДЕЗАВУИРУЕТ РОССИЮ, США И ФРАНЦИЮ В СОСТАВЕ МИНСКОЙ ГРУППЫ ОБСЕ 377

ПОПЫТКА АЗЕРБАЙДЖАНСКОЙ АРМИИ ПРОВЕРИТЬ АРМЯНСКИЕ ПОЗИЦИИ БОЕМ–ПРОВАЛЕНА 380

АЗЕРБАЙДЖАН – АНТИДЕМОКРАТИЗМ И КОЛОНИАЛИЗМ В ПЕРСПЕКТИВЕ ЕГИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ 382

БАКУ ТЕРЯЕТ САМООБЛАДАНИЕ И ЗАПУГИВАЕТ ВОЙНОЙ СОПРЕДСЕДАТЕЛЬСТВО МГ ОБСЕ 391

ВОЗМОЖНОСТЬ АГРЕССИИ АЗЕРБАЙДЖАНА И "КОНТРВОЙНЫ СУДНОГО ДНЯ" 393

О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ АЗЕРБАЙДЖАНСКОЙ ЭТНОПОЛИТИКИ 397

О МЕТОДОЛОГИИ МЕЖВЕДОМСТВЕННОЙ РАЗРАБОТКИ СТРАТЕГИИ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ 412

ДЕТАЛИ ВИЗИТА СОВЕТНИКА МИНИСТРА ОБОРОНЫ АРМЕНИИ В ТУРЦИЮ: НЕУДАВШАЯСЯ ПРОВОКАЦИЯ В АНКАРЕ 424

О ЗАЯВЛЕНИИ ПРЕЗИДЕНТА ПУТИНА ПО ПРЕЦЕДЕНТНОСТИ КОСОВСКОГО РЕГУЛИРОВАНИЯ 427

ПРЕЗИДЕНТ АЛИЕВ ПРЕДЛАГАЕТ ФАЛЬСИФИКАЦИЮ ИСТОРИИ ВМЕСТО КОМПРОМИССОВ 431

ДИНАМИЗМ РАЗВИТИЯ ОДКБ: К ВОПРОСУ О ПЕРСПЕКТИВЕ ДИАЛОГА НАТО – ОДКБ 436

КАРАБАХСКИЙ ПРОЦЕСС: ЕВРОСОСЕДСТВО КАК РЕСУРС ПРЕОДОЛЕНИЯ КОЛОНИАЛИЗМА 447

ЗАСЕДАНИЕ ПАСЕ И САММИТ НАТО – КАРАБАХСКИЕ ОРИЕНТИРЫ 456

ОСОБЕННОСТИ РАЗРЕШЕНИЯ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА 460

О МОРАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИХ ЦЕННОСТНЫХ ОРИЕНТАЦИЯХ МОДЖАХЕДА 470

ПОЛИТОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ УРЕГУЛИРОВАНИЯ И РАЗРЕШЕНИЯ КАРАБАХСКОГО ВООРУЖЕННОГО КОНФЛИКТА ... 483

ТОНКАЯ НИТЬ СОГЛАСИЯ 499

ПРЕЗИДЕНТУ СССР М. ГОРБАЧЕВУ ПРЕЗИДЕНТУ США ДЖ. БУШУ 513

ПРОТИВОПРАВНОЕ ПРАВО 515

ВЫХОД ИЗ ТУПИКА 523

БЛОКАДА...– ВРЕМЯ ИГР? 528

CONTENTS
OF THE MATERIALS PUBLISHED IN ENGLISH

POLITICAL PROBLEMS OF SECURITY: PERESTROIKA IN THE USSR – KARABAKH, ARMENIA, SOUTH CAUCASUS – AFGHANISTAN

INTRODUCTION 539

Z. Balayan. A LETTER TO THE READER 542

N. Ter-Grigoryants. ABOUT THE AUTHOR 546

D. Kazutin. NON-ENTITIES AND PERSONALITIES 550

S. Prokopchuk. THE SHARED PAIN 553

ACADEMIC ARTICLES, PRESENTATIONS AND AUTHOR'S INTERVIEWS

PEACE AND SECURITY PERSPECTIVES IN THE SOUTH CAUCASUS: THE MADRID PRINCIPLES OF KARABAKH CONFLICT SETTLEMENT ARE BASED ON THE "WAR PARADIGM" 556

"REFERENDUM AS A GESTURE OF A GOOD WILL": PEACE AND WAR SCENARIOS FOR KARABAKH 563

KARABAKH: PEACE, WAR AND DEMOCRACY 574

PRESIDENT ALIYEV IS BOTH FOR PEACE AND FOR WAR – IN DEFIANCE OF THE STATEMENT BY THE PRESIDENTS OF RUSSIA, THE USA AND FRANCE 577

RECOGNITION OF NAGORNO KARABAKH INDEPENDENCE BY ARMENIA LOOKS LOGICAL AND JUSTIFIED 579

IMPROVEMENT IN THE AMERICAN-RUSSIAN RELATIONS WILL BE OF BENEFIT TO THE ENTIRE CAUCASUS AND ARMENIA 584

ON THE METHODOLOGY OF THE REPUBLIC OF ARMENIA'S NATIONAL SECURITY STRATEGY INTERAGENCY ELABORATION... 586

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիներին բարեկամներս ու գործընկերներս բազմիցս ինձ խորհուրդ են տվել քաղաքական ակնարկ գրել Ղարաբաղյան ազգային-ազատագրական շարժման անհայտ էջերից մեկի՝ Լեռնային Ղարաբաղի վտարանդիական կառավարության մասին, որը խիստ գաղտնիության պայմաններում գործել է 1991 թ. ապրիլ–դեկտեմբեր ամիսներին: Ի վերջո, Ղարաբաղյան հակամարտության լուծման այսպես կոչված Մադրիդյան սկզբունքների ոչ պաշտոնական քննարկման և փաստաթղթերին ծանոթանալու ժամանակ բարեկամներիցս մեկը՝ ժուռնալիստ Տիգրան Հենրիկի Լիլոյանը, համոզեց ինձ, որ անհրաժեշտ է լայն հասարակայնությանը ներկայացնել Խորհրդային Միության փլուզման ընթացքում Ղարաբաղյան հիմնախնդրի լուծման վերաբերյալ ԽՍՀՄ վերակառուցման ղեկավար կենտրոնների գնահատականների ձևավորման ու որոշումների մշակման վրա քաղաքագիտական և քաղաքական ազդեցության այդ յուրահատուկ գաղտնի օղակի գործունեությունը:

Ուստի իմ պարտքն եմ համարում շնորհակալություն հայտնել Ձորի Հայկի Բալայանին և Աշոտ Գառնիկի Մանուչարյանին «Լեռնային Ղարաբաղի վտարանդիական կառավարության մասին (1991 թ. ապրիլ–դեկտեմբեր, Մոսկվա)» իմ ակնարկի վերաբերյալ խորհրդատվության և փորձաքննության համար, քանի որ նրանք, գտնվելով այդ կառավարության ակունքներում, ծանրակշիռ ներդրում կատարեցին Ղարաբաղյան շարժման մեջ՝ վերակառուցման վերելքի ու ծախողման, ԽՍՀՄ աղետալի փլուզման ժամանակ Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի անկախության հռչակման, Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծման հարցով հանրաքվեների անցկացման՝ սպառնալիքներով հղի ժամանակաշրջանում:

Այս գիրքն սկսվում է ԽՍՀՄ նախկին ժողովրդական պատգամավոր, գրող Ձորի Հայկի Բալայանի «Խոսք ընթերցողին» և նախկինում ՀՀ Պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, ԽՍՀՄ Ցամաքային զորքերի գլխավոր հրամանատարության շտաբի պետի տեղակալ, Աֆղանստանում ԽՍՀՄ ՁՈՒ-ի 40-րդ բանակի շտաբի պետ գեներալ-լեյտենանտ Նորատ Գրիգորի Տեր-Գրիգորյանցի «Խոսք հեղինակի մասին» ակնարկներով:

Այնուհետև գրքում ներկայացված են ԽՍՀՄ վերակառուցման, Հայաստանի և Ղարաբաղի անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներին,

ինչպես նաև Աֆղանստանում ԽՍՀՄ վարած պատերազմին վերաբերող իմ հոդվածները, մշակումներն ու հարցագրույցները, որոնք հրապարակվել են խորհրդային, հայկական, ռուսական, ամերիկյան և արևմտաեվրոպական հրատարակություններում:

Հարկ է ընթերցողների ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ իրենց դատին ներկայացվող սույն գրքում նյութը խմբավորված է հայերեն, ռուսերեն և անգլերեն բաժիններում, որոնք մի շարք դեպքերում ներառում են թարգմանական տարբերակը չունեցող լեզվական բնագրեր: Նյութերը զետեղված են հակառակ ժամանակագրության պահպանմամբ՝ նոր հրապարակումներից դեպի ավելի վաղ շրջանի հրապարակումներ:

Պետք է ըստ արժանվույն գնահատել ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, ակադեմիկոս Սերգեյ Ալեքսանդրի Համբարձումյանի, Հայաստանի ժողովրդական բանաստեղծուհի Սիլվա Բարունակի Կապուտիկյանի, ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, արվեստագետ Հենրիկ (Լարիկ) Սուրենի Իգիթյանի, պետական և հասարակական գործիչ Ալեքսան Մաթևոսի Կիրակոսյանի, Լեռնային Ղարաբաղի մտարանդիական կառավարության արդարադատության նախարար, միջազգային իրավունքի պրոֆեսոր Յուրի Գեորգիի Բարսեղովի, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարներ Վազգեն Ջավենի Սարգսյանի և Սերժ Ազատի Սարգսյանի, Լեռնային Ղարաբաղի կոմերիտմիության մարգկոմի նախկին առաջին քարտուղար, ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր Հասարակական գիտությունների ակադեմիայի ասպիրանտ, այժմ փիլիսոփայական գիտությունների թեկնածու Մարատ Շմավոնի Մուսայելյանի հետ Ղարաբաղյան գործընթացի պրոբլեմների վերաբերյալ կարծիքների պարբերական փոխանակման օգտակարությունը:

Ինձ համար կիրառական ռազմավարական վերլուծության իսկական դպրոց դարձավ իմ մասնակցությունը ԽՍՀՄ նոր աֆղանական քաղաքականության մշակմանը Աֆղանստան երկարաժամկետ գործուղմանս ժամանակ: Այնտեղ ինձ բախտ վիճակվեց օգտվելու այնպիսի մեծավաստակ վերլուծաբան-տարածքայնագետի մշտական խորհրդատվություններից, ինչպիսին է դոկտոր-պրոֆեսոր (անցյալում՝ գնդապետ) Միխայիլ Ֆիլանտիևիչ Սլինկինը:

Պարտքս եմ համարում նոր գիտելիքների ձեռքբերման գործում ցուցաբերած օգնության համար շնորհակալություն հայտնել իմ ռուսաստանյան գիտական խորհրդատուներին՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, սոցիոլոգիայի պրոֆեսոր, Կառավարման ռուսաստանյան ակադեմիայի Սոցիոլոգիայի և սոցիալ-հոգեբանական հետազոտությունների

կենտրոնի ղեկավար Ժան Տերենտիևիչ Տոշչենկոյին, իրավաբանական գիտությունների դոկտոր, միջազգային իրավունքի պրոֆեսոր, ՌԴ ԱԳՆ-ի Դիվանագիտական ակադեմիայի Միջազգային հետազոտությունների մեթոդաբանության կենտրոնի ղեկավար Էդուարդ Իվանովիչ Սկակունովին, գեներալ-մայոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, ԲԳՈՒ ակադեմիկոս, ՌԴ ԶՈՒ-ի Գլխավոր շտաբի Ռազմական ակադեմիայի Ռազմաքաղաքական գիտությունների ամբիոնի վարիչ Իգնատ Սեմյոնովիչ Դանիլենկոյին, իմ ամերիկյան ակադեմիական խորհրդատուներ՝ ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի (ՊԱՀ) Ղեկավար կազմի համար ազգային անվտանգության դպրոցի տնօրեն Ջոզեֆ Ղը Սատերին և գիտության գծով դեկան դոկտոր Ջեկ Քանգասին, ՊԱՀ-ի Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի (ԱՌՀԻ) գիտության դեպարտամենտի շտաբի պետ, ԱՄՆ-ի ՌՕՈՒ-ի գնդապետ Էնն Մոյսանին, ՊԱՀ-ի Ազգային ռազմական քոլեջի Ակադեմիական կոմիտեի անդամ դոկտոր Թերեսա Սաբոնիս-Հելֆին, ՊԱՀ-ի ԱՌՀԻ-ի ավագ գիտաշխատող դոկտոր Յուջին Բ. Ռումերին, ԱՄՆ-ի ՊԱՀ-ի Հակաահաբեկչության գծով միջազգային ծրագրի տնօրեն Սառա (Բետի) Ֆրանկենին:

Կարևոր եմ համարում նշել հայ-ամերիկյան «Հայք» հետազոտական հաստատության հիմնադիր ղեկավար Բաբկեն Վաղարշակի Վարդանյանի՝ 1992 թվականից կատարված դարաբաղյան ուսումնասիրությունները, որոնցում ինձ 1992–1996 թթ. վստահված էր Արցախյան հակամարտության գծով գլխավոր մասնագետի ու մշտական մեթոդաբանական սեմինարի գիտական ղեկավարի դերը:

Հեղինակը երախտագիտությամբ նշում է ԱՊՀ Աֆղանական պատերազմի վետերանների գործերով կոմիտեի նախագահ, Խորհրդային Միության հերոս գեներալ Ռուսլան Սուլթանովիչ Աուշևի և մոսկովյան «Սոբեսեդնիկ» շաբաթաթերթի հիմնադիր Լևոն Գուրգենի Հայրապետյանի այն օգնությունը, որը նրանք ցուցաբերեցին բարդ հետվերակառուցումային 1992 թ.՝ ԽՍՀՄ փլուզումից հետո առաջին տարում, իր մենագրական հետազոտությունների արդյունքներն ամփոփող «Համաձայնության–հակամարտության էթնոքաղաքագիտության ներածություն. քաղաքակրթական վերլուծության տեսական-մեթոդաբանական պրոբլեմներ» և «Համաձայնության–հակամարտության էթնոքաղաքագիտություն. ազգային անվտանգության քաղաքակրթական տեսանկյունը» աշխատությունների հրատարակման գործում:

ՀԵՂԻՆԱԿ

ՆԱՄԱԿ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ*

Այսօր քչերն են հիշում, ուստի քչերը գիտեն, որ Շուշիի հիրավի անառիկ բերդի գրավման փառապանծ, եթե չասենք՝ փրկիչ ու բախտորոշ հաղթանակին նախորդել են ամենադժվարին անցքեր, որոնք յուրաքանչյուր առանձին վերցրած դեպքում կարող էին հանգեցնել մեր ժողովրդի համար ողբերգական, նույնիսկ՝ մահացու ելքի: Չէ՞ որ միայն Լաչինի ազատագրումից հետո, երբ կապ ստեղծվեց ոչ միայն Մայր Հայրենիքի, այլև արտաքին աշխարհի հետ, Արցախ «հորդեցին» բարեկամների բազմաթիվ հոսքեր ինչպես Հայաստանից, այնպես էլ ԱՊՀ երկրներից ու Սփյուռքից: Եվ ահա թե ինչը գրավեց իմ ուշադրությունը. շատերը այսօր էլ դեռ չգիտեն, թե ինչ էր կատարվում այնտեղ՝ Արցախում և «նրա շուրջը» (Գորբաչովի տերմինը): Մինչդեռ չորս տարի շարունակ Արցախի հայությունը գտնվում էր արտակարգ դրության և դաժան պարետային ժամի, Բաքվի ղեկավարության կողմից իրականացվող բռնաճնշումային ռեժիմի սարսափելի պայմաններում, ի դեպ Բաքվին, ըստ էության, ենթարկվում էր միևնույն ատամները զինված վեցհազարանոց զորք: Բավական է ասել, որ ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության այսպես կոչված ներքին զորքերը փաստորեն գտնվում էին Ադրբեջանի կոմկուսի երկրորդ քարտուղար Վ. Պոլյանիչկոյի և ներքին զորքերի գեներալ Վ. Սաֆոնովի հրամանատարության տակ: Այդ ամենի հետ մեկտեղ, դա պետք էր նաև Ղարաբաղի քրիստոնյա բնակչության շրջանում հակառուսական տրամադրություններ ստեղծելու համար: Քանի որ, շիտակն ասենք, այդ անօրեն ճիվաղները պարզապես չարագործում էին Ղարաբաղում և հատկապես՝ Ստեփանակերտում:

Քչերը գիտեն նաև այն մասին, թե ինչու ընդամենը մեկ տարի գոյատևեց Հատուկ կառավարման կոմիտեն, որը Գորբաչովի հրամանով Ղարաբաղում փոխարինել էր և՛ կուսակցական, և՛ խորհրդային իշխանությանը: Բանն այն էր, որ Ա. Ի. Վոլսկու գլխավորած այդ Կոմիտեն անմիջականորեն ենթարկվում էր Մոսկվային: Մենք՝ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներս, բազմիցս գգուշացրել էինք Գորբաչովին, որ Բաքուն անշուշտ կդիմի ամենաստոկալի սադրանքների՝ Վոլսկու Կոմիտեն լուծարելու համար: Սակայն, ինչպես հայտնի է, Գորբաչովն ունակ չէր լսելու, և ոչ մի խորհուրդ նրա վրա ոչ մի կերպ չէր ազդում: Եվ հարկ չեղավ երկար սպասելու այդ սադրանքը, որը վերաճեց 1990 թ. հունվարին Բաքվում

* Հեղինակի ֆաքսիմիլային ստորագրությամբ բնագիրը տես էջ 278–281:

տեղի ունեցած իսկական հայոց ցեղասպանության: Կարծում եմ՝ ամենևին էլ պատահական չէր, որ նման իրավիճակում ցեղասպանության կազմակերպիչներին պատժելու փոխարեն Գորբաչովն ստորագրեց մի հրամանագիր, որով արտակարգ իրավիճակ էր մտցվում ոչ թե Բաքվում, որտեղ արյուն էր թափվում, այլ Ղարաբաղում: Ընդամին նա իր այդ հրամանագրով միաժամանակ լուծարեց Վոլսկու Կոմիտեն: Այսպես ասած՝ ինչն էլ պահանջվում էր ապացուցել:

Ստեղծվեց մի իրավիճակ, երբ քչերն էին կասկածում, որ Ղարաբաղի օրերը հաշվված են: Պոլյանիչկոն և Սաֆոնովը ամեն օր զեկուցում էին ոչ թե Մոսկվայի, այլ Բաքվի իրենց պարագլուխներին այն մասին, թե ինչպես է ամբողջ աշխարհի աչքի առաջ պարզապես կործանվում Ղարաբաղը: Եվ այս ամենը կատարվում էր ԽՍՀՄ հոգեվարքի ֆոնի վրա: Երբեմնի հզոր տերությունում հաստատված քաոսը հանգեցրեց այն բանին, որ Խորհրդային բանակը, դուրս գալով Կենտրոնի քաղաքական ղեկավարման շրջանակից, սկսեց անդառնալիորեն քայքայվել: Ազերիների խղճուկ բանդկազմավորումները կարողանում էին առանց ավելորդ ջանքերի զինաթափել զինվորական ստորաբաժանումներ ու գնդեր: Սկսվեց պարզապես շղթայական ռեակցիա, որը վաղ թե ուշ պետք է հանգեցներ ահավոր պայթյունի:

Եվ Արցախում տիրող այս մահացու վտանգավոր իրավիճակում, բացի հստակորեն գործող, գրագետ կերպով կազմակերպված ընդհատակից, որը ղեկավարում էին Սերժ Սարգսյանի ու Ռոբերտ Քոչարյանի գլխավորած Ազգային խորհուրդը և Ինքնապաշտպանության ուժերի կոմիտեն՝ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների, Ազգային խորհրդի, աշխատանքային խմբի անդամների ակտիվ մասնակցությամբ, հարկ էր լինում ձեռնարկել այնպիսի ոչ սովորական միջոցներ, ինչպիսիք են ազգային անհնազանդությունը, Մոսկվայում ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների հացադուլները և անգամ՝ Լեռնային Ղարաբաղի վտարանդիական կառավարության ստեղծումը:

Այդ մասին ես հաճախ եմ հիշում: Մեկ անգամ չէ, որ պատրաստվել եմ բրքրել արխիվները և հրապարակել մեր Ազատագրական շարժման, մեր Սրբազան պատերազմի այս բավականին հետաքրքիր էջը:

Եվ ահա, գտնվելով Խաղաղ օվկիանոսում՝ «Արմենիա» առագաստանավում, ես էլեկտրոնային փոստով անսպասելի լուր ստացա Հայկ Քոթանջյանից. նա ինձ հայտնում էր, որ ավարտել է մի աշխատություն, որում լիարժեք կերպով արտացոլվում է մեր «գավակը», մեր ընդհանուր գործը: Այն իրոք որ ընդհանուր էր, ճիշտ է՝ խիստ գաղտնի: Դրա կազմակերպման գործում ակտիվ դեր խաղաց Հայաստանի Կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի հարցերով շտաբի ղեկավար, հետագա-

յում՝ ՀՀ Նախագահի՝ ազգային անվտանգության հարցերով խորհրդական Աշոտ Մանուչարյանը: Առաջ անցնելով՝ ասեմ, որ Վտարանդիական կառավարության շրջանակներում մենք իսկայական աշխատանք ենք ծավալել հատկապես Մոսկվայում՝ պաշտոնական կառավարական շրջաններում:

Կարծում եմ՝ այդ աշխատանքի մասին իր գրքում կպատմի Հայկը, իսկ ես կցանկանայի թեկուզ համառոտակի պատմել հեղինակի մասին: Բանն այն է, որ Վտարանդիական կառավարությունում, որը գործեց 1991 թ. ապրիլից մինչև դեկտեմբեր, կային երեք նախարարներ՝ Ազգային անվտանգության, Արդարադատության և Արտաքին գործերի: Անվտանգության նախարար էր նշանակվել Մարիուս Յուզբաշյանը, Արդարադատության նախարար՝ Յուրի Բարսեղովը: Իսկ որպես Արտաքին գործերի նախարար ես առաջարկեցի Հայկ Քոթանջյանին: Դա այն ժամանակն էր, երբ հայերին անպատիժ կերպով սպանում էին ո՛չ միայն ադրբեջանցի օմոնականները, այլև ներքին գործերի գինվորները: Հիշում եմ՝ համբերության բաժակը լցվեց այն օրը, երբ գինվորները դիմահար կրակով սպանեցին հրաշալի քանդակագործ, Սպիտակի երկրաշարժի զոհերի հուշարձանի հեղինակ, երեք մանուկների հայր Սպարտակ Հակոբյանին: Այդ ժամանակ ես՝ որպես ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, ելույթ ունեցա Հայաստանի Գերագույն խորհրդի նստաշրջանում և առաջարկեցի այդ հանցագործության հետաքննության համար ստեղծել հանձնաժողով՝ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Հայկ Քոթանջյանի գլխավորությամբ: Դրա համար ես ունեի ծանրակշիռ փաստարկներ: Բանն այն է, որ հանրապետության կոմերիտմիության ԿԿ նախկին առաջին քարտուղարն սկիզբ առնող Ղարաբաղյան շարժման եռուն շրջանում երկու տարի գլխավորել էր Հրազդանի շրջանի կուսակցական կազմակերպությունը, մի շրջանի, որտեղ բնակչության գրեթե կեսը կազմում էին ծնունդով արցախցիներ ու գարդմանցիներ:Դրան հավելենք նաև այն, որ հենց Հայկի ժամանակ այդտեղ ապաստան էին գտել Սումգայիթյան ջարդերից մազապուրծ եղած շատ փախստականներ, և նրանք բոլորը ապահովվել էին հանգրվանով: Հաշվի էր առնվել նաև այն հանգամանքը, որ Հրազդանից հետո Հայկը աշխատել էր որպես Հայաստանի կոմկուսի ԿԿ առաջին քարտուղարի տեսուչ և բազմիցս պաշտոնական ուղևորություններով մեկնել էր պաշարված Արցախ՝ շփումներ հաստատելով Հատուկ կառավարման կոմիտեի ղեկավարության հետ:

Այսօրվա պես հիշում եմ, թե ինչպես Մոսկվայում՝ իմ պատգամավորական սենյակում, ծնվեց Քոթանջյանի՝ գործնականում պաշտպանությանը պատրաստ դոկտորական ատենախոսության թեման փոխելու գաղափարը: Քանի որ նա որպես ԽՄԿԿ ԿԿ դեսպանորդ-խորհրդական Մոսկվայի կողմից գործուղվել էր ճակատային Աֆղանստան, ատենախոսությունը

համապատասխանաբար արտացոլում էր աֆղանական պրոբլեմը: Եվ ահա հենց իմ սենյակում «Տարածաշրջանային պատերազմների քաղաքագիտությունը Աֆղանստանի օրինակով» թեման փոխարինվեց «Համաժայնության-հակամարտության էթնոքաղաքագիտություն. ազգային անվտանգության քաղաքակրթական տեսանկյունը» թեմայով: Եվ եթե մինչ այդ դոկտորանտը հիմնականում շփվում էր ԽՄԿԿ ԿԿ-ին առընթեր Հասարակական գիտությունների ակադեմիայի իր գործընկերների հետ, ապա ատենախոսության թեմայի փոփոխությունից հետո նրա առջև բացվեցին ԽՄԿԿ ԿԿ անվտանգային, այդ թվում՝ ռազմական-անվտանգային, քաղաքականության մշակման այնպիսի ազդեցիկ և կարևոր գիտական ռազմավարական կենտրոնների դռները, ինչպիսիք էին ԽՍՀՄ վերակառուցման անցումային գործընթացների հակամարտաբանական վերլուծության խմբերը, ԽՍՀՄ ԱԳՆ-ի Դիվանագիտական ակադեմիայի Միջազգային հետազոտությունների մեթոդաբանության կենտրոնը և ԽՍՀՄ Զինված ուժերի Գերագույն շտաբի Ռազմական ակադեմիայի ռազմաքաղաքական գիտությունների ամբիոնը: Դժվար չէ հասկանալ, թե մեզ համար որքան օգտակար էին այդ գործուն շփումները, հատկապես, եթե հաշվի առնենք, որ դա տեղի էր ունենում Լեռնային Ղարաբաղի քաղաքական-վարչական և տեղեկատվական լիակատար մեկուսացման և, ես կասեի, ոչ միայն Արցախի Ազգային խորհրդի գործիչների, այլև ամբողջ ղարաբաղյան մտավորականության ու երիտասարդության անպատիժ ճնշիչ հետապնդումների պայմաններում: Ծրագրված բռնաճնշումային յուրաքանչյուր ձեռնարկման կասեցմամբ փրկվում էր մեր մեծ թվով ընկերների կյանքը:

Իհարկե, հանուն Ղարաբաղի փրկության կատարվող աշխատանքը այն ամենադժվարին պայմաններում լայնամասշտաբ ու համալիր էր, ընդսմին դրան անմիջականորեն մասնակցում էին նոր Հայաստանի Կառավարությունն ու արցախյան ընդհատակը, ինչպես նաև Հայկական ԽՍՀ և Արցախի պատգամավորական կորպուսը: Սակայն չի կարելի մոռացության տալ գաղտնի կազմակերպությունների, հատկապես՝ Լեռնային Ղարաբաղի վտարանդիական կառավարության դերը:

Կարելի է միայն երախտագիտությամբ ողջունել այս գրքի հեղինակի՝ Արցախի Վտարանդիական կառավարության արտաքին գործերի նախարար գեներալ Հայկ Քոթանջյանի պատասխանատու հիշողությունն այն բախտգեներալ Հայկ Քոթանջյանի պատասխանատու հիշողությունն այն բախտորոշ ժամանակների մասին, երբ վճռվում էր ոչ միայն Ղարաբաղի, Հայաստանի և Սփյուռքի, այլև մեր ամբողջ ժողովրդի ապագան:

Զորի ԲԱԼԱՅԱՆ

«Արմենիա» առագաստանավ, Խաղաղ օվկիանոս

ԽՈՍՔ ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ*

Գրքի հեղինակի հետ ծանոթացել եմ Աֆղանական պատերազմի ժամանակ, երբ ես ԽՍՀՄ ԶՈՒ-ի՝ Աֆղանստանում ինտերնացիոնալ պարտքը կատարող 40-րդ բանակի շտաբի պետ–հրամանատարի առաջին տեղակալ էի: Այս տարիներին Հայկ Քոթանջյանը Աֆղանստանում ԽՄԿԿ կենտկոմի դեսպանորդ-խորհրդականի կարգավիճակ ունեցող վերլուծաբանից և քաղաքականության մշակողից հասել է մինչև հայկական Զինված ուժերի գեներալ-մայորի ու դիվանագիտության մեջ գեներալական կարգի՝ Հայաստանի Հանրապետության Արտակարգ դեսպանորդի և Լիազոր նախարարի աստիճանի:

Քոթանջյանի համար կիրառական վերլուծության, ռազմավարական գնահատականների ձևավորման ու քաղաքականության մշակման իսկական դպրոց դարձավ գաղտնիության «հատուկ թղթապանակ» և «ամենուր» մտնելու թույլտվության աշխատակարգերով նրա մասնակցությունը աֆղանական քաղաքականության վերագնահատմանը, որը կատարվեց Գլխավոր քարտուղար Լ. Բրեժնևի մահից հետո: Ռազմավարական հետազոտությունների ու մշակումների մեթոդների էության և առանձնահատկությունների յուրացումը զգալի չափով տեղի ունեցավ Աֆղանստան նրա երկարաժամկետ գործուղման ընթացքում, որտեղ նրան հանձնարարվեց ձևավորել Քաղաքական վերլուծության և հակազդեցության մշտապես գործող միջգերատեսչական հանձնաժողով և համադասել նրա աշխատանքը: ԽՄԿԿ ԿԿ դեսպանորդ-խորհրդականների և այլ խորհրդային հաստատություններից ներգրավված մասնագետների խմբի կազմում Քոթանջյանը մասնակցեց նոր քաղաքականության այնպիսի բաժինների մշակմանը, ինչպիսիք են մոջահեդների կազմակերպություններին համագործակցությանը հակելու մեթոդաբանությունը, բանակցությունները Սիմադ Շահ Մասուդի խմբավորման հետ, հակամարտող կողմերի միջև երկխոսության կազմակերպման գործում խորհրդային կողմի համագործակցությունը ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Դիեգո Կորդովեսի առաքելության հետ: Հայկ Քոթանջյանին՝ փիլիսոփայական գիտությունների 37-ամյա թեկնածուին, որը պատերազմի էր գործուղվել Հայաստանի կոմկուսի կենտկոմի գիտության

* Հեղինակի ֆաքսիմիլային ստորագրությամբ բնագիրը տես էջ 282–285:

բաժնի վարիչի տեղակալի պաշտոնից, հանձնարարվել էր Աֆղանստանի պատմության մեջ առաջին Գիտությունների ազգային ակադեմիայի նախագծի մշակման և ստեղծման համադատումը:

Քաղաքական գործչի, դիվանագետի ու գիտնականի պրոֆեսիոնալ գործունեության հետ մեկտեղ Քոթանջյանն անցել է փիլիսոփայական, քաղաքական-հոգեբանական, հակամարտաբանական և քաղաքագիտական-անվտանգային գիտական պատրաստման դպրոցներ ստացիոնար ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում, որոնք գործում էին Մոսկվայի այնպիսի հեղինակավոր կենտրոններում, ինչպիսիք են ԽՄԿԿ ԿԿ-ին առընթեր Հասարակական գիտությունների ակադեմիան – Կառավարման ռուսաստանյան ակադեմիան (այժմ՝ ՌԴ Նախագահին առընթեր Պետական ծառայության ռուսաստանյան ակադեմիա), ԽՍՀՄ–ՌԴ Դիվանագիտական ակադեմիայի Միջազգային հետազոտությունների մեթոդաբանության կենտրոնը, ԽՍՀՄ–ՌԴ ԶՈՒ-ի Գերագույն շտաբի Ռազմական ակադեմիայի ռազմաքաղաքական գիտությունների ամբիոնը: Հայկ Քոթանջյանի խորհրդային-ռուսաստանյան համակարգային պատրաստումը հետագայում հարստացվել է ակադեմիական ստաժավորմամբ ու վերապատրաստմամբ ԱՄՆ-ի և Եվրոպայի հայտնի մասնագիտական կենտրոններում:

Սույն գրքի հեղինակը Ղարաբաղյան ազգային-ազատագրական շարժման հետ սերտորեն առնչվել է 1988 թ.՝ Հայաստանի Հրազդանի շրջանի ղեկավար եղած ժամանակ, մի շրջանի, որի բնակչության կազմում զգալի տեսակարար կշիռ ունեին Ղարաբաղի հայերը և ադրբեջանցիները: Լինելով Ղարաբաղյան շարժման ժողովրդավարականությունը չընդունող Հայաստանի կոմկուսի կենտկոմի ղեկավարության սկզբունքային քաղաքական հակամարտության մեջ՝ Քոթանջյանը կազմակերպեց Սումգայիթում 1998 թ. հայերի ջարդերի զոհերի մեծ մասի բնակեցումը Աղվերանի առողջարաններում:

Հարկ է Քոթանջյանի վաստակը համարել այն, որ այդ բարդ պայմաններում նա հակամարտող կողմերի ներկայացուցիչների հետ բանակցությունների միջոցով կասեցրեց բախումները Հրազդանի շրջանի հայ և ադրբեջանցի բնակչության միջև: Ավելին, նա Հայաստանում առաջինը 1989 թ. կազմակերպեց երեք հազար ադրբեջանցիների փոխանակումը նույն թվաքանակով բաքվեցի հայերի հետ՝ նրանց գույքային իրավունքների պահպանմամբ, ինչի շնորհիվ նրանք խուսափեցին այլ բաքվեցի հայերի ճակատագրից, որոնք դարձան 1990 թ. հունվարին Ադրբեջանի իշխանությունների ցեղասպանական գործողությունների զոհը:

Ի պատիվ հեղինակի՝ նա Հայաստանի կոմկուսի ԿԿ այն եզակի անդամներից էր, որը, օգտվելով վերակառուցման հրապարակայնության սկզբունքից, իր հավատարակշռված ելույթներով մշտապես մասնակցում էր Ղարաբաղյան շարժման բազմահազարանոց հանրահավաքներին Հրազդանում ու Չարենցավանում և, ինչը այն ժամանակ հատկապես կարևոր էր, հանդես էր գալիս միութենական հեռուստատեսությամբ: Ուշադրության են արժանի Ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ Քոթանջյանի բազմաթիվ կառուցողական հրապարակումները հայկական թերթերում, ինչպես նաև վերակառուցման գաղափարական ամբիոն դարձած «Մոսկովսկիե նովոստի» թերթում, կենտրոնական «Օգոնյոկ» և «Նովոյե վրեմյա» հանդեսներում:

Հայկ Քոթանջյանը Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղարի տեսուչ, Հայկական ԽՍՀ ԿԿ անդամ և Գերագույն խորհրդի պատգամավոր եղած ժամանակ դարձավ վերակառուցման դիրքերից Ղարաբաղյան գործընթացի առաջատար քաղաքական վերլուծողը: Հայաստանում և Ադրբեջանում հակամարտային գործընթացների հետազոտությունը լրացնելով Մոսկվայում վերակառուցման ժողովրդավարական թևի ներկայացուցիչների հետ շփումներով՝ սույն գրքի հեղինակը 1989–1990 թվականներին փաստորեն դարձավ Հայաստանի ղեկավարության համար Ղարաբաղյան գործընթացի վերաբերյալ պաշտոնական վերլուծական նյութերի հիմնական մշակողը: Ղարաբաղյան գործընթացին նվիրված նրա փակ վերլուծական գրությունների քաղաքական-իրավական էության մասին կարելի է պատկերացում կազմել այս գրքում հրապարակվող ելույթներով, որոնցով նա հանդես է եկել Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջաններում, ինչպես նաև հանրապետական ու միութենական մամուլում:

Հայկ Քոթանջյանին հանձնարարվել էր Լենինականում (այժմ՝ Գյումրի) Համամիութենական շտաբի կազմում իրականացնել Հայաստանում 1988 թ. երկրաշարժից տուժած բնակչության տարահանման և ԽՍՀՄ հանգստյան տներում ու առողջարաններում տեղավորման քաղաքական ղեկավարումը: Երկրաշարժից տուժած ընտանիքների տարահանման Համամիութենական շտաբի ապարատի ակտիվ աշխատանքում ներգրավելու միջոցով նա իր պաշտպանության տակ առավ «Ղարաբաղ» կոմիտեի՝ ծերբակալությունից խուսափած ակտիվիստներին:

Գրքի հեղինակի մասին այս համառոտ ակնարկը լիարժեք չէր լինի, եթե մենք չնշեինք նրա հիմնավոր մասնակցությունը անկախ Հայաստանի Զինված ուժերի քաղաքական-անվտանգային հիմքերի մշակմանն ու

գործնական ամրապնդմանը: Ես հարգանքով ու ջերմությամբ եմ հիշում Մոսկվայում 1991 թ. Հայկ Քոթանջյանի հայրենասիրական շահագրգռվածությունը, որը նա դրսևորեց նորանկախ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Զինված ուժերի ստեղծման գործում մասնագիտական օգնություն ցույց տալու նպատակով ինձ Երևան հրավիրելու հնարավորության հարցով կայացած առաջին միջնորդական խորհրդատվությունների ժամանակ:

Սիա ՀՀ պաշտպանական-անվտանգային քաղաքականության համակարգի ձևավորման գործում նրա ներդրման համառոտ բնութագիրը. հեղինակել և հրատարակել է «Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականության հիմունքներ. ազգային անվտանգության ռազմաքաղաքական տեսանկյուն» մշակումը պաշտպանության նախարարության իր կողմից հիմնադրված Ռազմական քաղաքականության բաժնի գրիֆով (1992), ստեղծել է «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսը (1994), մշակել է ՀՀ ՊՆ ռազմադիվանագիտական ծառայության համակարգը՝ ԱՄՆ-ում ՀՀ առաջին ռազմական գրասենյակի հիմնմամբ և ղեկավարմամբ (1995–2002), ստեղծել է ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը (ԱՌՀԻ) (2003–2005), ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի «Աշխատանքային տետրեր» վերլուծական-կիրառական հանդեսը (2006) և ազգային անվտանգության քաղաքագիտության ոլորտում դոկտորական աստիճանների շնորհման՝ Հայաստանի Զինված ուժերի պատմության մեջ առաջին մասնագիտացված գիտական խորհուրդը (2009):

Հայկ Քոթանջյանի տեսական-մեթոդաբանական և գիտական-կազմակերպչական գործունեության կարևոր փուլ պետք է համարել Սերժ Սարգսյանի գլխավորությամբ Հայաստանի պատմության մեջ առաջին Ազգային անվտանգության ռազմավարության մշակման (2004–2007) միջգերատեսչական գործընթացի գիտական ղեկավարումը, ինչպես նաև ռազմավարական տրամաչափի նախագծերի ու փաստաթղթերի միջգերատեսչական մշակման ժամանակակից ամերիկյան մեթոդաբանության ներմուծումը Հայաստանի քաղաքական մշակույթի մեջ: Արդեն հաստատ տարիքում իր նկատմամբ պրոֆեսիոնալ խստապահանջության մասին է վկայում այն փաստը, որ 2008 թ. Ջորջ Մարշալի անվան Եվրոպական կենտրոնը հեղինակին ըստ գիտական գործունեության արդյունքների ընդգրկեց լավագույն շրջանավարտների ցուցակում:

ԽՍՀՄ – ՈԳ ԶՈՒ-ի գեներալ-լեյտենանտ
Նորատ Գրիգորի ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆՑ
23.09.2009

ՁԵՐՈՆԵՐԻ ԳՈՒՄԱՐԸ՝ ՄԵԿ*

Հասարակական լճացումը միշտ էլ ծանծրալի ու ծանր է սեփական միօրինակության պատճառով: Ցուցադրական համախոհությունը, վարմունքի բյուրոկրատական կանոնակարգումը, ոչ միայն աշխատանքի վարձատրման, այլ նաև մարդու անձնական արժանիքների գնահատման հարցում համընդհանուր հավասարեցումը («անփոխարինելի մարդիկ մեզանում չկան» սկզբունքով)՝ այսպես ասած սկզբունքային դիմադրումը, որը վերաբերում է հասարակական կյանքին և մարդկանց՝ սա է «լճացման էության» ամենօրյա պատկերը:

Հեղափոխական դարաշրջաններն, ընդհակառակը, ապշեցնում են իրադարձությունների, իրավիճակների, մարդկային արարքների հարստագույն զանազանությամբ: Անհատը ձեռք է բերում իր ինքնիշխան իրավունքները, սկսում է եռանդուն գործել և միաժամանակ՝ հարգանք, ուշադրություն, ըմբռնում պահանջել իր անձի հանդեպ: Իսկ կյանքում հաճախ պատահում է, որ արտաքուստ իրար նման իրավիճակները, երկվորյակ-իրավիճակները իրականում միանգամայն հակառակ իմաստ ունեն: Անհրաժեշտ է լինում կրկին ուսանել, սակայն դա դժվար է նաև այն պատճառով, որ վերակառուցման հակառակորդներին հարկավոր է նման միանշանակությունը: Նրանց գենքը պիտակն է:

Զանգվածային տեղեկատվության միջոցների, գաղափարախոտական հիմնարկների և ստեղծագործական միությունների ղեկավարների հետ հունվար ամսին կայացած հանդիպման ժամանակ Միխայիլ Գորբաչովն ասաց. «Հաճախ մեզ քննադատում են՝ ոմանք աջից, մյուսները՝ ձախից: Վերջիններն ասում են, որ վերակառուցումը կանգ է առել, կոչ են անում դիմել առավել վճռական քայլերի, կադրերի արմատական թարմացման և այլն: Դա մասնավորապես ակնհայտ էր Կենտկոմի հոկտեմբերյան պլենումի ժամանակ»:

*Ինչպես հիշում եք, հոկտեմբերյան պլենումում քննարկվեց ավանգարդիզմը**: Սակայն պահպանողականությունը պահպանողականություն չէր լինի, եթե չփորձեր այդ իրողությունից իր օգուտը քաղել: Մանավանդ որ պահպանողականությունն ու ավանգարդիզմը՝ խոսքային պաճուճանքի ողջ տարբերությամբ հանդերձ, իրականում նույնանում են:*

Վերջերս «Պրավդայում» հրապարակվեց «Խղճի դատ, կամ որոշ մանրամասներ Հայաստանի կյանքից» հոդվածը: Դրանում խոսվում էր, թե ինչպես հանրապետության կոմկուսի կենտկոմի անցած տարվա երկու պլենումներում ելույթ ունեցավ Հրազդանի կուսշրջկոմի առաջին քարտուղար, կենտկոմի անդամ Հայկ Քոթանջյանը: Նա անդրադարձավ Հայաստանի կյանքի տարբեր ոլորտներն ընդգրկած կոռուպցիայի և հովանավորչության փաստերին: Խոսեց նաև տոսկալի չափեր ընդունած «ստվերային» էկոնոմիկայի մասին: Այն մասին, որ հանրապետության աշխատավորությունը մշտապես հանդիպում է սոցիալական անարդարության տարբեր դրսևորումների և կոռուպցիայի նկատմամբ իրավական ու բարոյական անպաշտպան վիճակում է:

Հանրապետության կոմկուսի կենտկոմի վերջին՝ դեկտեմբերյան պլենումը դատապարտեց Հայկ Քոթանջյանի երկու ելույթները՝ որակելով դրանք սխալ և անհիմն: «Դա ամբոխավարություն է, որի հետևում թաքնված են անձնական ամբիցիաներն ու պաշտոնամոլական շարժառիթները»՝ այսպիսին էր բացահայտ «սցենարով» ելույթ ունեցող հռետորների մեծ մասի եզրահանգումը:

Համաձայն մեծամասնության կարծիքի՝ ստացվում էր, որ պլենումը գործ ունի «ծախից քննադատության» տիպիկ դրսևորման հետ: Հայկ Քոթանջյանին փառամոլության մեջ մեղադրող հանրապետական կոմկուսի կենտկոմի անդամները դրանով իսկ չափազանց թափանցիկորեն պարզորոշ ակնարկում էին իրենց կացության նմանությունը այն իրավիճակին, որն ստեղծվել էր ԽՄԿԿ կենտկոմի հոկտեմբերյան պլենումում: Իբր դրանք երկվորյակ իրավիճակներ են:

Բնավ էլ այդպես չէ. դրանք բևեռային իրավիճակներ են: Մոսկովյան «էպիզոդում» մենք գործ ունեինք քաղաքական պատրանքների ճգնաժամի հետ, ըստ որոնց հնարավոր էր իբր միմիայն վերևից, գործուն և ազնիվ ղեկավարության միջոցով, այսինքն՝ «մաքրվածների» օգնությամբ, բայց և այնպես վարչական մեթոդներով հասնել հասարակության հեղաբարձրացման: Սա հենց վերակառուցման դրամատիկ մի դրվագ էր: Հայկական «էպիզոդում» մենք գործ ունենք հենց վարչահրամանատարական մեթոդների գերիշխանության դեմ ուղղված բողոքի հետ:

* *Д. Казутин.* Сумма нулей плюс единица. «Московские новости», 7 февраля 1988 г.

** Խոսքը վերաբերում է ԽՄԿԿ կենտկոմի 1987 թ. հոկտեմբերյան պլենումին, որտեղ բացահայտվեց իշխանության համար Մ. Գորբաչովի և Բ. Ելցինի միջև ծավալված անգիջում պայքարը (*Հ. Մ. Բ.*):

Ի պատիվ Հայկ Քոթանջյանի, նա անձնատուր չեղավ «նոմենկլատուրային անձանց»՝ վերակառուցման հակառակորդների համախմբման փաստի առջև, որը հանրապետությունում արգելակման մեխանիզմի հիմնական ուժն է: Նա արիաբար մենամարտեց այդ ուժի դեմ: Եվ բառացիորեն հայտնվեց «փոքրամասնության միայնության մեջ»:

«Մեծամասնությունը միշտ իրավացի է»՝ այս կարծես թե շատ ժողովրդավարական, կոլեկտիվ սկզբունքով հաճախ էր պատսպարվում և շարունակում է դեռ պատսպարվել բյուրոկրատի կամայականությունը և ամենահետևողական, եթե կարելի է այսպես ասել, անսկզբունքայնությունը... «Ի՞նչն է կարևոր՝ կոլեկտի՞վը, թե՞ անհատը»՝ ահա այսպիսի զուտ հռետորական, բյուրոկրատական, իսկ հաճախ նաև կոռուպցիայի ենթարկված «կոլեկտիվիզմի» ժամանակներին հատուկ հարց է տալիս «Կոմունիստ» ամսագրի առաջին համարում փիլիսոփա Իգոր Կոնը և պատասխանում. «Իհարկե՝ կոլեկտիվը, բայց եթե այն բաղկացած է անհատներից: Միավորների գումարը միշտ էլ մեկից ավելի է, իսկ զերոների գումարը՝ զերո»:

Դեռ երբեք նոր գաղափարը անմիջապես չի դարձել մեծամասնության սեփականությունը: Այդ առումով մեծամասնությունը շատ հաճախ սխալվել է: Ներկայիս վերակառուցումը նույնպես փոքրամասնության նախաձեռնությամբ է ծավալվել, փոքրամասնություն, որն արտահայտեց ողջ հասարակության արմատական շահերը: Այդուհանդերձ պահանջվեց ժամանակ, նաև՝ համառ ջանքեր, որպեսզի մեծամասնությունը համակվի բարեփոխումների գաղափարներով:

Դատելով «Պրավդայի» հոդվածից՝ այդ գաղափարները դեռևս չի յուրացրել Հայաստանի կոմկուսի կենտկոմի անդամների մեծ մասը: Այդ «հնագույն մեծամասնությունը» նախընտրում է զերոների գումարի վիճակում մնալ, նույնիսկ այն բանից հետո, երբ նրանց մեջ հայտնվել է մեկը»: Այս կարգի «թվաբանությունը» անհանդուրժելիորեն հակասում է ժամանակի ոգուն:

Դմիտրի ԿԱԶՈՒՏԻՆ

ԿԻՍՎԱԾ ՑԱՎԸ*

(Հատված)

Բախտս բերեց. աղետի գոտում բազմօրյա գործուղման անքուն հորձանուտում առիթ ունեցա հանդիպելու ճշմարիտ առաջնորդների և պրոֆեսիոնալների, ում ներուժն իսկապես դրսևորվեց Պլուտոնի բարբարոս արարքների հետևանքների հետ անմնախընթաց մենամարտի ընթացքում: Այդ մարդիկ, իրենց տարիքային և ազգային, պաշտոնի ու բնավորության տարբերություններով հանդերձ, մի ընդհանուր հատկանիշ ունեին՝ իրադրությունն ակնթարթորեն գնահատելու, պատասխանատու որոշումներ ընդունելու, և, որ ամենակարևորն է՝ դրանք նախանձելի համառությամբ ի կատար ածելու ունակությունը: Բացի այդ, նաև շատ նման էին զուտ արտաքնապես: Հոգնատանջ, քամուց կոշտացած դեմքեր, քնի մշտական պակասից կարմրած աչքեր, կոպտացած ձեռքեր, որոնք շատերին էին հանել:

Լենինականի համար ամենածանր, առաջին իսկ օրերին հաջողվեց, թեև կցկտուր (ինտերվյուների ժամանակը չէր) զրուցել Հրազդանի կուսշրջկոմի նախկին առաջին քարտուղար Հայկ Քոթանջյանի հետ, նա այժմ Հայաստանի կոմկուսի կենտկոմի կուսկազմակերպիչ-տեսուչ է: Այո, հենց նույն այն Քոթանջյանի հետ, ում վերջին ժամանակների համար համարձակ ու վճռական արարքով երկու տարի առաջ հիանում էր ողջ ազնիվ Հայաստանը:

Երկրաշարժի առաջին իսկ ժամերից Հայկ Քոթանջյանը կազմակերպում էր շուրջօրյա փրկարար աշխատանքներ, հոգ էր տանում անօթևան մնացած մարդկանց համար կյանքի ամենատարրական պայմանների ստեղծման մասին, իրագործում ողջ մնացած տղամարդկանց տեղաբաշխումն ամենաթեժ կետերում: Ավերվել էին 46 ձեռնարկություններից գրեթե բոլորը: Բարեբախտաբար, կանանց մեծ մասը երեխաների հետ միասին էվակուացվեցին երկրի հանգստի տներ և առողջարաններ:

– Միմիայն միասնական աշխատանքով կարելի է մարդուն շեղել վշտից ու սգից...

---

* *С. Прокопчук.* Разделенная боль. Киев, 1989, сс 43–44. Բերվում է ըստ *Հ. Ս. Քոթանջյան,* Հայկական «Երկրաշարժը» (կոնֆլիկտաբանական ուրվագծեր): Ե., 1992:

Այս բառերը արտասանեց զուսպ, կշռադատված, կարծես բարձրաձայն մտածելով: Մաքուր սափրված, թարմ վերնաշապիկով էր մի քաղաքում, ուր ամեն ինչ ծխի և փոշու մեջ էր: Ներքուստ ծգված էր, ճշտապահ, համեստ: Ինձ թվաց, որ նա իսկական կուսակցական աշխատողի հավաքական մի կերպար է, ում ծգտում են շրջապատող մարդիկ, լիովին վստահում նրան՝ համարելով համախոհ, գործի մարդ: Ամպագոռգոռ ճառերից բոլորն են հոգնել: Առանձին «ֆունկցիոներների» դատարկախոսությունն արդեն ոչ միայն չի ընկալվում, այլ նաև հակառակ արդյունք է տալիս: Հիշում եմ «էրեբունի» հյուրանոցի սրահում հեռուստացույցների մոտ հավաքվածների զայրացկոտ արձագանքը, երբ էկրանից հոսեց միալար, կարծես թե մանրակրկիտ հայելու առջև հղկված, հանրապետության ղեկավարներից մեկի ելույթը, որում չկար ոչ ճշմարիտ կարեկցանք, ոչ էլ կոնկրետ կշռադատված որևէ առաջարկ:

Մինչդեռ այդ կարգի մարդիկ երկրաշարժի առաջին իսկ շաբաթներին չդիմացան փորձությանը: Մարդկանց գրգռում էին դրանց ցուցամոլությունը, ինքնահիացումը, ուրիշների ուսերին սեփական պատասխանատվությունը գցելու ծգտումը, իսկական պատկերը գունազարդելու, հիմնահարցի սրությունը շրջանցելու հակումը:

Քոթանջյանը այդօրինակ «ոսկեբերանների» հակադրությունն է:

Ստանիսլավ ՊՐՈԿՈՊՉՈՒԿ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՎՏԱՐԱՆԴԻԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՎՏԱՐԱՆԴԻԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(1991 թ. ապրիլ – դեկտեմբեր, Մոսկվա)

Ղարաբաղյան հայության ազգային-ազատագրական շարժման դրսևորումները ճնշելու նպատակով 1990 թ. հունվարին՝ Բաքվի հայ բնակչության ջարդերն սկսվելուն պես[1], Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի երկրորդ քարտուղար Վ. Պոլյանիչկոյի և նրա գլխավորած Կազկոմիտեի կողմից հաստատվեց արտակարգ դրության կոմունիստական ռազմավարչական ռեժիմ[2]: Ազգային-ազատագրական շարժման ղեկավարման գործում ԼՂԻՄ-ի կուսակցական-պետական մարմինների ներգրավվածության պատճառով Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի որոշմամբ ԼՂԻՄ-ում դադարեցվեց բոլոր մակարդակների կուսակցական ու խորհրդային ներկայացուցչական ղեկավար մարմինների գործունեությունը[3], փակվեցին ՋԼՄ-ները: ԽՍՀՄ ՋԼՄ-ներում ԼՂԻՄ-ում տիրող իրավիճակի լուսաբանման նկատմամբ, հակառակ վերակառուցման հրապարակայնության քաղաքականությանը, սահմանվեց ԽՄԿԿ կենտկոմի գրաքննություն:

1991 թ. ապրիլին սկսվեց «Օղակ» պատժիչ զորային օպերացիան, որը Ղարաբաղում զինված կազմավորումների զինաթափման, Հյուսիսային Արցախից հայ բնակչության տեղահանման և Լեռնային Ղարաբաղի հայերին ռազմական ուժի գործադրման սպառնալիքով ահաբեկման ենթարկելու՝ Բաքվում և Մոսկվայում մշակված պլանի մի մասն էր: Խորհրդային զորքերը, ադրբեջանական միլիցիայի ուժերը և հատուկ նախանշանակման ջոկատները գրոհ ձեռնարկեցին Ղարաբաղը հյուսիսից շրջապատող հայկական գյուղերի վրա: Մինչև 1991 թ. հուլիս շարունակված «Օղակ» օպերացիայի հետևանքով էթնիկական զտման ենթարկվեց Լեռնային Ղարաբաղին սահմանակից Հյուսիսային Արցախի գյուղերի ամբողջ հայ բնակչությունը:

Բռնաճնշումների պայմաններում Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդն ստիպված եղավ անցնելու ընդհատակ: Ղարաբաղի ազգային-ազատագրական շարժման ղեկավարության հետ համաձայնեցնելով և Հայկական ԽՍՀ՝ Վազգեն Մանուկյանի գլխավորած Կառավարության որոշմամբ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության շահերի պաշտպանությունը որոշակի չափով ստանձնեց Հայաստանի Կառավարության առընթեր Լեռնային Ղարաբաղի հարցերով արտակարգ շտաբը[4]: Հայաստանի Կառավարության առընթեր Շտաբի հետ սերտ համագործակցությամբ, խիստ գաղտնիության հարկադրված պայմաններում Ստեփանակերտում գործում էր Արցախի արտակարգ շտաբը՝ Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի ղեկավարությամբ:

Լեռնային Ղարաբաղի քաղաքական-վարչական ու տեղեկատվական լրիվ մեկուսացման, նրա ազգային գործիչների հետապնդումների պայմաններում ԽՍՀՄ կուսակցական և պետական համապատասխան մարմիններում Ղարաբաղի հայության շահերի պաշտպանության նպատակով ՀԽՍՀ Կառավարության հանձնարարությամբ և Արցախի արտակարգ շտաբի ղեկավարության հետ համաձայնեցմամբ ՀԽՍՀ Կառավարության առընթեր Լեռնային Ղարաբաղի հարցերով շտաբը որոշում ընդունեց Լեռնային Ղարաբաղի վտարանդիական կառավարություն ստեղծելու մասին: Որոշվեց Կառավարության կազմը ձևավորել բարձր որակավորում ունեցող այն մասնագետներից, որոնք օժտված էին ռազմավարական գնահատումների ու որոշումների ձևավորմանը մասնակցության պրոֆեսիոնալ հմտություններով, ինչպես նաև անձնական շփումներ ունեին ԽՍՀՄ վերակառուցման շրջանի քաղաքական վերնախավի ազդեցիկ ներկայացուցիչների հետ՝ վերակառուցման ժողովրդավարական ռեսուրսների օգտագործմամբ հանդերձ: Այս Կառավարության առաքելությունը պետք է իրականացվեր առավելապես Մոսկվայում՝ Լեռնային Ղարաբաղի շուրջ եղած քաղաքական-անվտանգային իրադրության զարգացումից բխող ինքնուրույն որոշումներ կայացնելու արտակարգ լիազորություններով օժտված նախարարների գործունեության խիստ գաղտնիության և ինքնավարության ռեժիմով[5]:

Լեռնային Ղարաբաղի վտարանդիական կառավարությունը գործել է 1991 թ. ապրիլից մինչև դեկտեմբեր՝ իր կազմում ունենալով երեք նախարարների՝ Արտաքին գործերի, Ազգային անվտանգության և Արդարադատության: Նախարարների գործունեությունն իրականացվում էր արտաքին քաղաքականության, արտաքին քաղաքական տեղեկատվության և ազգային անվտանգության քաղաքագիտության, պետական և ռազմական անվտանգության, ինչպես նաև իրավական քաղաքականության բնագավառներում՝ պետական շրջաններում ու վերակառուցման ժամանակ Մոսկվայում ստեղծված ազդեցիկ ոչ կառավարական մասնագիտական ընկերակցություններում նրանց ունեցած և ստեղծվող օրինական պրոֆեսիոնալ դերերի օգտագործմամբ:

Անցումային շրջանի բարդության և Հայաստանի նոր ձևավորվող ազգային իշխանությունների ռեսուրսների սահմանափակության հետևանքով

Վտարանդիական կառավարության նախարարներին առաջարկվեց իրենց գործունեության ռեսուրսային ապահովման համար ստեղծել մասնագիտական հովանիներ՝ ԽՍՀՄ վերակառուցման աղետալի կերպով ավարտվող փուլում առկա իրավաքաղաքական գործիքարանի ճկունության և ազատությունների շրջանակներում: Խիստ գաղտնիության պահանջների և Հայաստանից կենտրոնացած ֆինանսավորում չլինելու պատճառով նախարարությունների աշխատակազմերի գոյությունը բացառված էր: Սկզբնական փուլում Վտարանդիական կառավարության նախարարների գործունեության համադասումը անհատական վստահական ձևաչափով կատարում էին Աշոտ Մանուչարյանը, երբ նա Հայկական ԽՍՀ Կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի հարցերով շտաբի պետ էր, ինչպես նաև նրա լիազոր ներկայացուցիչները:

Որպես Լեռնային Ղարաբաղի վտարանդիական կառավարության անդամ առաջարկվեցին հետևյալ թեկնածությունները. որպես Ազգային անվտանգության նախարար՝ Հայկական ԽՍՀ ՊԱԿ-ի նախկին նախագահ գեներալ-լեյտենանտ Մարիուս Յուզբաշյանը, որը ժամանակին ղեկավարել էր ԽՍՀՄ ՊԱԿ-ի ԱԳՎ գործակալական հետախուզության «C» ստորաբաժանումը, որպես արտաքին գործերի նախարար՝ Աֆղանստանում ԽՄԿԿ կենտկոմի նախկին դեսպանորդ-խորհրդական, վերակառուցման քաղաքական ուղեգիծը Հայաստանի կոմկուսի կենտկոմում ներկայացնող[6] Հայաստանի կոմկուսի Հրազդանի շրջկոմի առաջին քարտուղար, ազգային անվտանգության քաղաքագիտության բնագավառում Հասարակական գիտությունների ակադեմիայի ավագ գիտաշխատող և դոկտորանտ Հայկ Քոթանջյանը, որպես Արդարադատության նախարար՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի Միջազգային իրավունքի հանձնաժողովի անդամ, իրավաբանական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Յուրի Բարսեղովը:

Կարևոր է նշել, որ երեք նախարարներն էլ գործում էին այն կազմակերպությունների կուսակցական-պետական գործունեության նորմերին համապատասխան, որոնց կազմում նրանք ԽՍՀՄ ապահնտեգրման և միասնական իրավաքաղաքական տարածության փլուզման ծայրահեղ բարդ ժամանակաշրջանում իրականացնում էին իրենց պրոֆեսիոնալ գործունեությունը: Այլ կերպ ասած՝ այս գործիչները, պաշտպանելով Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության անվտանգության շահերը, գործում էին որպես վերակառուցման ճգնաժամային փուլ ապրող միութենական այն կազմակերպությունների լիիրավ անդամներ, որոնցում ունեին որոշակի դերեր, որոնց համախումբն էլ հենց կազմում էր երեք նախարարներից յուրաքանչյուրի «պատասխանատվության գոտին» ու գործունեության բովանդակությունը:

1991 թ. ապրիլի սկզբին հայկական պատգամավորական կորպուսի նստավայր «Մոսկվա» հյուրանոցում ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Զորի Բալայանը Լեռնային Ղարաբաղի վտարանդիական կառավարության արտաքին գործերի նախարարի գաղտնի պաշտոնն առաջարկեց տողերիս հեղինակին, երբ նա ԽՄԿԿ կենտկոմին առընթեր Հասարակական գիտությունների ակադեմիայի դոկտորանտ ու ավագ գիտաշխատող էր: Զորի Բալայանի այս մտահղացման նպատակն էր Ղարաբաղի շրջափակումը վերացնելու ուղղությամբ մասնագիտական քաղաքական-վարչական և վերլուծական ջանքերի գործադրումը՝ որպես հավելում Մոսկվայում իր գլխավորած խորհրդարանական ճեռնարկումների: Այս առաջարկությունը ամրագրվեց դրան հաջորդած գաղտնի հանդիպման ժամանակ, որը տեղի ունեցավ ապրիլին Մոսկվայում՝ Հայաստանի ղեկավարության անունից Հայկական ԽՍՀ Կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի հարցերով շտաբի ներկայացուցիչ, հետագայում՝ Հայաստանի Նախագահի Գլխավոր խորհրդականի տեղակալ, պետանվտանգության փոխգնդապետ Վահան Ավագյանի խնդրանքով:

Առաջարկությունը հիմնավորվում էր այն հանգամանքով, որ հեղինակը, 1987–1989 թթ. գլխավորելով Հայաստանի շրջանների շարքում համախումբ հզորությամբ երկրորդ՝ Հրազդանի շրջանը, կազմակերպել էր 1988 թ. սումգայիթյան ջարդերից տուժածների բնակեցումը շրջանի հանգստյան տներում, բանակցությունների ճանապարհով կանխել էր հայ և ադրբեջանական բնակչության միջև բախումները[7]: Նշվում էր սումգայիթյան ջարդերի հայ տուժածների քննչական ցուցմունքների համակարգված հավաքման՝ նախադեպը չունեցող կազմակերպումը Աղվերանի հանգստյան տներում[8]: Մյուս փաստարկներն էին հեղինակի՝ որպես պատերազմող Աֆղանստանում ԽՄԿԿ կենտկոմի դեսպանորդ-խորհրդականի արտաքին քաղաքական ծառայության փորձը, նրա գործունեությունը որպես Ղարաբաղյան գործընթացի քաղաքական կուրատորի[9], որը Հայաստանի կոմկուսի կենտկոմում պատասխանատու էր այդ հակամարտության քաղաքական վերլուծության համար, Ղարաբաղյան հանրաքվեի քաղաքական-իրավական տեսանկյան մշակումը, ինչպես նաև 1988–1989 թթ. Հայաստանի հյուսիսում տեղի ունեցած երկրաշարժի գոտուց բնակչության տարահանման և ապաստանով ապահովման կազմակերպումը, որը նա իրականացրել էր՝ լինելով Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղարի տեսուչ, Հայկական ԽՍՀ կենտկոմի անդամ և Գերագույն խորհրդի պատգամավոր:

Առաքելության ավարտական փուլում՝ 1991 թ. նոյեմբեր–դեկտեմբեր ամիսներին, Լեռնային Ղարաբաղի վտարանդիական կառավարության

արտաքին գործերի նախարարի պաշտոնում հեղինակի գործունեությունը և Հայաստանի նոր ղեկավարության պլանները համադասում էին Հայկական ԽՍՀ Նախագահի՝ ազգային անվտանգության գծով գլխավոր խորհրդական Աշոտ Մանուչարյանը, նրա տեղակալներ Վահան Ավագյանը և Էդուարդ Սիմոնյանցը, ինչպես նաև ԽՍՀՄ Կառավարությունում Հայկական ԽՍՀ Կառավարության մշտական ներկայացուցիչ Ֆելիքս Մամիկոնյանը:

Մոսկվայում Լեռնային Ղարաբաղի վտարանդիական կառավարության արտաքին գործերի նախարարի գաղտնի առաքելությունը 1991 թ. ապրիլից մինչև դեկտեմբեր ես մտահղացման համաձայն իրականացնում էի որոշակի սպեկտրով այնպիսի պրոֆեսիոնալ դերերի օրինական ձեռքբերմամբ, որոնց համախումբն ապահովում էր Լեռնային Ղարաբաղի անվտանգության շահերի պաշտպանությունը՝ էթնոքաղաքական հակամարտությունների նկատմամբ ԽՍՀՄ ղեկավարության որդեգրած քաղաքականության ձևավորման վրա ներգործելու միջոցով: Այդ նպատակով ստիպված եղա առաջին հերթին փոխելու իմ ատենախոսական ուսումնասիրության թեման՝ «Տարածաշրջանային պատերազմների քաղաքագիտությունը Աֆղանստանի օրինակով» թեմայի փոխարեն վերցնելով «Ազգային անվտանգության էթնոքաղաքագիտական պրոբլեմները. «համաձայնության-հակամարտության» քաղաքակրթական վերլուծություն» թեման:

Դոկտորական ատենախոսության թեմայի փոփոխությամբ օրինականացվում էր դոկտորանտուրայի հիմնական բազայի՝ ԽՄԿԿ կենտկոմին առընթեր Հասարակական գիտությունների ակադեմիայի հետ համագործակցության մեջ ԽՄԿԿ կենտկոմի արտաքին, անվտանգային, այդ թվում՝ ռազմաանվտանգային, քաղաքականության մշակման այնպիսի ազդեցիկ ռազմավարական կենտրոնների ներգրավումը, ինչպիսիք էին՝ ԽՍՀՄ ԱԳՆ-ի Դիվանագիտական ակադեմիայի միջազգային հետազոտությունների մեթոդաբանության կենտրոնը, ԽՍՀՄ ՋՈՒ-ի Գերագույն շտաբի Ռազմական ակադեմիայի ռազմաքաղաքական գիտությունների ամբիոնը և ԽՍՀՄ ՋՈՒ-ի ԽՄԿԿ միացյալ կուսկոմը: Դրանց թվում ներգրավված էին նաև վերակառուցումը մասնագիտորեն սպասարկող՝ ռազմավարական հետազոտությունների այնպիսի ազդեցիկ ոչ կառավարական կենտրոններ, ինչպիսիք են ԽՍՀՄ Արտաքին քաղաքականության ասոցիացիան, Ազգային և միջազգային անվտանգության հիմնադրամը, Միջազգային հարաբերությունների մոդելավորման տեսության ռուսաստանյան ասոցիացիան, ԽՍՀՄ Սոցիոլոգիական ասոցիացիայի Վարչությունը: Տվյալ շարքում յուրահատուկ տեղ էր գրավում ՈՒԽՖՍՀ Գերագույն խորհրդի

ամենաշաբաթյա տպագիր օրգանի՝ Բորիս Ելցինի քաղաքական ուղեգիծը ներկայացնող «Ռոսիա» թերթի Անդրկովկասի գծով քաղաքական մեկնաբանի պաշտոնը:

Այսպիսով՝ ազգային անվտանգության էթնոքաղաքագիտության շատ կարևոր ոլորտում հեղինակի դոկտորական ատենախոսության մեթոդաբանական հիմքի ընդլայնումը, համաձայնեցված լինելով ԽՄԿԿ կենտկոմի հետ, հնարավորություն տվեց Արցախի արտաքին գործերի նախարարի առաքելությունը առավելագույնս զուգորդելու ատենախոսական հետազոտության հետ, որը կատարվում էր ԽՍՀՄ-ում առկա տարածաշրջանային հակամարտությունների վերաբերյալ քաղաքական-անվտանգային որոշումների պատրաստման ժամանակ ԽՄԿԿ կենտկոմի գիտական սնուցում կատարող մի շարք հիմնարկությունների հովանու ներքո: Այլ կերպ ասած՝ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի անվտանգության հնար աղետալի հետևանքներով հղի ԽՍՀՄ փլուզմանը նախորդած շրջանում հեղինակը ներգրավվեց պետական, ինչպես նաև վերակառուցման շնորհիվ ստեղծված ոչ կառավարական այն մասնագիտական միությունների գործունեության մեջ, որոնք ապահովում էին Արցախի անվտանգության պաշտպանության ռազմավարական համատեքստը:

Վերակառուցմանը ցուցաբերվող գիտական աջակցության ուղղությամբ գործող ռազմավարական խմբերում հեղինակի ներգրավումը կատարվեց մի ճգնաժամային շրջանում, որն անմիջականորեն նախորդեց ԽՄԿԿ կենտկոմի ղեկավարության ծրագրի տապալմանը՝ կապված հանրաքվեի անցկացման արդյունքներով բոլոր միութենական հանրապետությունների հետ նոր Միութենական պայմանագրի կնքման հետ: Այդ բարդ շրջանում որպես ԽՍՀՄ, այդ թվում՝ Միութենական պայմանագրի կնքման գործընթացում Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի, իրավաքաղաքական կերպափոխման գործիք դիտվում էր 1990 թ. ապրիլի 3-ին ընդունված «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքը:

Լեռնային Ղարաբաղի բնակչության անվտանգության շահերի պաշտպանության ռազմավարությունն իրականացնելու համար հեղինակին հարկ եղավ ընկերների ու գործընկերների աջակցությամբ ստեղծել և կատարել ստորև բերվող մի շարք մասնագիտական դերեր, որոնք նպաստում էին ժողովուրդների ինքնորոշմանը ԽՍՀՄ վերակառուցման դիրքերից ցուցաբերվող քաղաքագիտական, իրավաքաղաքական և քաղաքական-տեղեկատվական աջակցությանը[10]:

• *ավագ գիտաշխատող ԽՍԿԿ կենտկոմին առընթեր Հասարակական գիտությունների ակադեմիայի Սոցիոլոգիական և սոցիալ-հոգեբանական հետազոտությունների կենտրոնում*, որը ղեկավարում էր փիլիսոփայական գիտությունների դոկտոր, սոցիոլոգիայի պրոֆեսոր Ժան Տոշչենկոն[11]: Կենտրոնը նույն Ակադեմիայի Քաղաքագիտական հետազոտությունների կենտրոնի հետ համագործակցությամբ կատարում էր վերակառուցման անցումային քաղաքական գործընթացների ռազմավարական հետազոտություններ[12],

• *վերլուծաբան ԽՍՀՄ–ՈԴ ԱԳՆ-ի Դիվանագիտական ակադեմիայի՝ իրավագիտության դոկտոր, միջազգային իրավունքի պրոֆեսոր Էդուարդ Սկակունովի ղեկավարած Միջազգային հետազոտությունների մեթոդաբանության կենտրոնի «Հակամարտություն» և «Կայունություն» համամիութենական քաղաքական-անվտանգային նախագծերի մշակողների խմբում*: Կենտրոնն զբաղվում էր ԽՍՀՄ վերակառուցման ավարտական փուլում դրա արտաքին և ներքին քաղաքականության փոխպայմանավորվածության տեսական-մեթոդաբանական ու գիտակիրառական քաղաքական-անվտանգային պրոբլեմների հետազոտությամբ[13]: Այս թեմաները ԽՍԿԿ կենտկոմի պատվերով մշակվել են 1990 թվականից՝ «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքի ստեղծման, Միութենական հանրաքվեի մշակման և նոր Միութենական պայմանագրի պատրաստման ընթացքում: Այդ նախագծերի մշակման աշխատանքներում հեղինակը՝ որպես ԽՍԿԿ կենտկոմի դոկտորանտ, ներգրավվել է 1991 թ. ապրիլից՝ Լեռնային Ղարաբաղի վտարանդիական կառավարության արտաքին գործերի նախարարի պարտականությունների կատարման պահից,

• *գիտնական-քարտուղար Միջազգային հարաբերությունների տեսության և մոդելավորման ռուսաստանյան ասոցիացիայում (ՄՀՏՄՌԱ)*, որը հիմնադրել էին ԽՍՀՄ ԱԳՆ-ի Դիվանագիտական ակադեմիայի միջազգային հետազոտությունների մեթոդաբանության կենտրոնը և ՈՒԽԴՍՀ Ազգային հարաբերությունների գծով պետական կոմիտեն Հարվարդի համալսարանի Ջոն Քենեդիի անվան պետութենագիտության դպրոցի ու ռազմավարական հետազոտություններ կատարող այլ ոչ կառավարական անկախ կենտրոնների հետ ակադեմիական համագործակցությունն ավելի ճկուն դարձնելու նպատակով: ՄՀՏՄՌԱ-ի հիմնադիր-նախագահն էր իրավաբանական գիտությունների դոկտոր, ԽՍՀՄ (հետագայում՝ ՈԴ) ԱԳՆ-ի Դիվանագիտական ակադեմիայի միջազգային իրավունքի պրոֆեսոր էդուարդ Սկակունովը, որը Ասոցիացիայի գործունեությունն ուղ-

ղորդեց ԽՍՀՄ վերակառուցման ժամանակ ներքաղաքական ու միջազգային հարաբերությունների փոխպայմանավորվածության պրոբլեմների միջգիտաճյուղային քաղաքական-անվտանգային հետազոտմանը,

• *Անդրկովկասի գծով քաղաքական տեսաբան Ռուսաստանի Դաշնության Գերագույն խորհրդի Նախագահության տպագիր օրգան «Ռոսիա» թերթում*՝ էթնոքաղաքական հակամարտությունների գոտիներ ծառայողական գործուղումներով և վերլուծական զեկուցագրերի ներկայացմամբ,

• *հակամարտային վերլուծությունների գծով գիտական խորհրդատու ԽՍՀՄ Արտաքին քաղաքական ասոցիացիայում* տարածաշրջանային գինված հակամարտությունների գոտիներ գործուղումներով, երբ Ասոցիացիայի նախագահը էդուարդ Շևարդնաձեն էր, իսկ Հակամարտային վերլուծությունների գծով կենտրոնի ղեկավարը՝ էմիլ Պայինը,

• *փորձագետ՝ գեներալ-մայոր Լեոնիդ Շերշնևի ղեկավարած Ազգային և միջազգային անվտանգության ռուսաստանյան հիմնադրամում*: Հիմնադրամի ռազմական փորձագետների օժանդակությամբ հեղինակը՝ Լեռնային Ղարաբաղի վտարանդիական կառավարության արտաքին գործերի նախարարը, համագործակցություն է հաստատել ՈԴ ՀՈՒ-ի Գերագույն շտաբի Ռազմական ակադեմիայի ռազմաքաղաքական գիտությունների ամբիոնի՝ կայունության և անվտանգության պրոբլեմների վերլուծության խմբի հետ[14],

• *անդամություն ԽՍՀՄ Սոցիոլոգիայի ասոցիացիայի վարչությանը*: Այդ շրջանում Ասոցիացիան զբաղվում էր առավելապես վերակառուցման ավարտական փուլի անցումային գործընթացների քաղաքական-սոցիոլոգիական հետազոտություններով,

• *խորհրդատու ԽՍՀՄ ՀՈՒ-ի ԽՍԿԿ միացյալ կուսկոմիտեում* (կարճատև՝ մինչև Մոսկվայում ձեռնարկված հեղաշրջման (պուտչի) ավարտը, երբ ԽՍԿԿ համաբանակային կուսկոմիտեի քարտուղարը գեներալ Միխայիլ Սուրկովն էր)[15]:

Կարևոր է նշել, որ Լեռնային Ղարաբաղի վտարանդիական կառավարության առաքելության վերջնական սահմանագիծը դարձավ Լեռնային Ղարաբաղում կայացած հանրաքվեն, որը համապատասխան «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքի անցկացվեց դեկտեմբերի 10-ին՝ այդ օրենքի իրավակիրառության շրջանում, նախքան 1991 թ. դեկտեմբերի

21-ին Ալմա Աթայում ԽՍՀՄ պաշտոնական լուծարման մասին հռչակագրի ստորագրումը:

Հետագայում ՀՀ Նախագահի՝ ազգային անվտանգության հարցերով խորհրդականի աշխատակազմն առաջարկեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նոր ստեղծվող Կառավարության ձևավորման ժամանակ օգտագործել Լեռնային Ղարաբաղի վտարանդիական գաղտնի (ոչ լեգալ) կառավարության փորձը: ԼՂՀ առաջին օրինական Կառավարության կազմի նախագծում նույն պաշտոններում 1992 թ. սկզբին ներգրավված էին Վտարանդիական կառավարության բոլոր երեք նախարարները (Մարիուս Յուզբաշյանը՝ որպես Ազգային անվտանգության նախարար, Հայկ Քոթանջյանը՝ որպես Արտաքին գործերի նախարար, Յուրի Բարսեղովը՝ որպես Արդարադատության նախարար): Սակայն ոչ լեգալ Կաբինետի անդամներն իրենց առաքելությունը համարեցին ավարտված, ինչը պայմանավորված էր ԽՍՀՄ փլուզմամբ, որի վերակառուցման իրավաքաղաքական դաշտում նրանց վիճակվեց լուծել Ղարաբաղի հայության ինքնորոշման իրավունքի գաղտնի պաշտպանության խնդիրները, և օրինական ԼՂՀ ստեղծման միջոցով այդ իրավունքի իրացմամբ:

Լեռնային Ղարաբաղի վտարանդիական կառավարության արտաքին գործերի նախարարի առաքելությունը հեղինակը Հայաստանի Նախագահի վարչակազմի ներկայացուցիչների խնդրանքով[16] 1991 թ. հոկտեմբերից մինչև դեկտեմբեր ավարտեց հաջողությամբ պսակված վստահական բանակցություններով, որոնց նպատակն էր ԽՍՀՄ Ցամաքային զորքերի Գլխավոր հրամանատարության Շտաբի պետի նախկին տեղակալ գեներալ-լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանցին[17] հրավիրել Հայաստան՝ ՀՀ ԶՈՒ-ի Գլխավոր հրամանատարի պաշտոնում Հայաստանի և Ղարաբաղի ազգային բանակների շինարարության մասնագիտական ղեկավարման համար (ժամանելուց հետո նա նշանակվեց Պաշտպանության նախարարի առաջին տեղակալ): Արտաքին գործերի գաղտնի նախարարի դերակատարությամբ սկսված իմ ծառայությունները գեներալ Տեր-Գրիգորյանցին հրավիրելու հետ կապված բանակցությունների հետևանքով փաստորեն երկարածգվեցին մինչև 1992 թ. մարտ, այսինքն՝ 1991 թ. դեկտեմբերյան հանրաքվեի արդյունքներով ԼՂՀ Կառավարության ձևավորման ժամկետների սահմաններից դուրս (Լեռնային Ղարաբաղի արտաքին գործերի նախարարի պարտականությունների կատարման երկարածգումը առաջարկել էր ՀՀ Նախագահի՝ ազգային անվտանգության գծով աշխատակազմը):

1991 թ. ապրիլ–դեկտեմբեր ամիսներին հեղինակը Լեռնային Ղարաբաղի նախարարների ոչ լեգալ Կաբինետի անդամ լինելու շրջանում ոչ միայն զբաղվել է քաղաքական-անվտանգային խնդիրների լուծմամբ, այլև կատարել է ազգային անվտանգության քաղաքագիտության, հակամարտային վերլուծության և ռազմական քաղաքականության բնագավառում մշակումներ և մենագրական հետազոտություններ[18], որոնք Լեռնային Ղարաբաղի վտարանդիական կառավարության արտաքին գործերի նախարարի առաքելության տեսական-մեթոդաբանական և գիտակիրառական բաղկացուցիչների մի յուրահատուկ հանրագումար էին: Լուծվել է նաև հետևյալ խնդիրը, հեղինակի ատենախոսական ուսումնասիրությունը՝ «աֆղանական պատերազմի քաղաքագիտության» ոլորտից փոխադրվեց ղարաբաղյան կողմնորոշում ունեցող «համաձայնության–հակամարտության էթնոքաղաքականության» ոլորտ, ընդսմին ազգային անվտանգության քաղաքագիտության գծով դոկտորական ատենախոսությունը պաշտպանվել է ԽՄԿԿ կենտկոմի արդեն «ապամարքսիստականացած» Ակադեմիայում, որը վերափոխվել էր ՌԴ Նախագահին առընթեր Կառավարման ակադեմիայի (ներկայումս՝ ՌԴ Նախագահին առընթեր Պետական ծառայության ռուսաստանյան ակադեմիա):

Պատերազմող Աֆղանստանի, ԽՍՀՄ վերակառուցման և Լեռնային Ղարաբաղի քաղաքական-անվտանգային, այդ թվում՝ հակամարտաբանական, պրոբլեմների մշակման գործում հեղինակի ներգրավվածությունը որոշակի չափով պայմանավորեց Պաշտպանության նախարարի առաջին տեղակալ գեներալ-լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանցի հրավերը՝ մասնակցելու նորանկախ Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի ռազմաքաղաքական հիմունքների ստեղծմանը:

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ 1991 թ. ապրիլին Լեռնային Ղարաբաղի վտարանդիական կառավարությունն ստեղծելու՝ ազգային-ազատագրական շարժման առաջնորդների մտահղացման կարևորությունը պայմանավորված էր Արցախի անվտանգության դեմ ուղղված այն մահացու սպառնալիքների գիտակցմամբ, որոնք ստեղծվում էին ԽՍՀՄ տարածքում, Վարշավյան պայմանագրի կազմակերպության և ՆԱՏՕ-ի պատասխանատվության գոտիներում, ինչպես նաև ամբողջ աշխարհում ընթացող քաղաքական զարգացումների աղետալի անորոշությունների հետևանքով:

Որոշակի չափով հենց Վտարանդիական կառավարության նախարարների ցուցաբերած փորձագիտական օգնության, գնահատումների ձևավորմանն ու որոշումների մշակմանը նրանց մասնակցության շնորհիվ համապատասխան ղեկավար միութենական հիմնարկները հնարավորինս

զերծ էին մնում Լեռնային Ղարաբաղի հարցում սխալներ կատարելուց: Այս ճգնաժամային քաղաքական խորհրդատվությունն իրականացվում էր ԽՍՀՄ փլուզման՝ նախկին միութենական հանրապետությունների անվտանգային հեռանկարների տեսանկյունից դժվար կանխատեսելի փուլում՝ նորանկախ ազգային պետությունների ընկերակցության կազմավորման նախաշեմին:

Վտարանդիական կառավարության գործունեության շրջանում տիրող քաղաքական անորոշության և Ղարաբաղի ու Հայաստանի անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների ռազմավարական մասշտաբների մասին պատկերացում կարող է տալ ԽՍՀՄ-ում կոմունիստական վարչակարգի փլուզման ընթացքում տեղի ունեցած այնպիսի փուլանիշային ներքաղաքական իրադարձությունների թվարկումը, ինչպիսիք են միութենական հանրաքվեի տապալումը, ԱԴՊԿ *(ГКЧП)* արկածախնդրությունը, ԽՍՀՄ-ը համադաշնության կերպափոխելու նպատակով Միութենական պայմանագրի կնքման ձախողումը, վերակառուցման վերջին փուլում Ձինված ուժերի և ԽՍՀՄ հատուկ ծառայությունների նկատմամբ ԽՄԿԿ կենտկոմի վերահսկողության փաստացի վերացումը, հայաստանի ազգային անկախության հռչակումը, ինքնորոշման հարցով ՀՀ ու ԼՂՀ հանրաքվեների անցկացումը և վերջապես՝ ԽՍՀՄ փլուզումը:

Հայկ ՔՈԹԱՆՋՅԱՆ

2009 թ. հուլիս – օգոստոս
Վաշինգտոն – Երևան

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

[1] Տես «Prelude to conflict: events leading to the Defense of Karabakh». «Armenian National Committee of America. Eastern Region» (http://www.anca.org/press_releases/press_releases.php?prid=65).

[2] 1989 թ. հունվարի 12-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահությունն ընդունեց հրամանագիր «Ադրբեջանական ԽՍՀ ԼՂԻՄ-ում հատուկ ձևի կառավարում մտցնելու մասին»՝ ստեղծելով Հատուկ կառավարման կոմիտե (ՀԿԿ), որը գլխավորում էր ԽՄԿԿ կենտկոմի կողմից նշանակված Ա. Վոլսկին, ընդսմին նա համատեղում էր ԽՄԿԿ մարզկոմի առաջին քարտուղարի և մարզխորհրդի նախագահի գործառույթները: ՀԿԿ-ն անմիջականորեն ենթարկվում էր միութենական կենտրոնական կուսակցական և խորհրդային մարմիններին:

1989 թ. օգոստոսի 16-ին ժողովրդական ներկայացուցիչների համագումարը Ղարաբաղում 1918–1920 թթ. գոյություն ունեցած Ազգային խորհրդի օրինակով ստեղծեց Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդ և ԼՂԻՄ-ը հռչակեց անկախ միութենական սուբյեկտ:

1989 թ. նոյեմբերի 28-ին Երևանում չդադարող բազմահազարանոց հանրահավաքների և ցույցերի պայմաններում, երբ ըստ էության շրջապատման մեջ էր Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի շենքը, ընդունվեց Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի որոշումը «Հայկական ԽՍՀ և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին»:

Բաքվում կազմակերպված հայկական ջարդերի ժամանակ, 1990 թ. հունվարի 15-ին, Մոսկվայի կողմից ՀԿԿ լուծարմամբ Լեռնային Ղարաբաղում ամբողջ իշխանությունը փոխանցվեց կուսակցական և վարչական գործառույթներ համատեղող «կազմկոմտեին», որը ներկայացնում էր Ադրբեջանի Կառավարությունը, սակայն գլխավորում էր ԽՄԿԿ կենտկոմի կողմից նշանակված՝ Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի 2-րդ քարտուղար Վ. Պոլյանիչկոն (սպանվել է 1993 թ. օգոստոսի 1-ին Հյուսիսային Օսեթիայում ահաբեկչական գործողության ժամանակ, երբ նա օսեթա-ինգուշական հակամարտության գոտում ժամանակավոր վարչակազմի ղեկավարն էր): Արտակարգ միջոցների կիրառման համար որպես իրավական հիմք դիտվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության 1990 թ. հունվարի 15-ի «ԼՂԻՄ-ում և որոշ այլ շրջաններում արտակարգ դրություն հայտարարելու մասին» հրամանագիրը:

Կազմկոմիտեին տրվել էին բռնաճնշումներ կիրառելու մեծ լիազորություններ՝ ընդհուպ մինչև զանգվածային տեղահանումների կազմակերպում (նշված հրամանագրով պետական իշխանության և կառավարման մարմիններին իրավունք էր տրվում «քաղաքացիներին ժամանակավորապես արտաքսակեցնել բնակության համար վտանգավոր շրջաններից՝ նրանց տրամադրելով այլ բնակելի շինություններ», հոդ. 2, մաս 5): Ըստ էության, դա ոչնչով չսահմանափակված կոմունիստական ռազմավարչական բռնապետության մարմին էր, որն իր գործողություններում ղեկավարվում էր անմիջականորեն ԽՄԿԿ և Ադրբեջանի կոմկուսի կենտկոմներից ստացվող հրահանգներով: Անծնագրային ռեժիմի ստուգման և անօրինական կազմավորումների զինաթափման պատրվակով կատարվում էին արտադատարանային գնդակահարություններ, զանգվածային կալանումներ, հայկական շրջաններում համատարած էթնիկական զտումներ:

[3] ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի գործունեությունը դադարեցվել էր ավելի վաղ՝ ԼՂԻՄ-ի ՀԿԿ ստեղծման կապակցությամբ, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության

1989 թ. հունվարի 12-ի «Ադրբեջանական ԽՍՀ ԼՂԻՄ-ում կառավարման հատուկ ձև մտցնելու մասին» հրամանագրով: Միաժամանակ ԽՄԿԿ կենտկոմի որոշմամբ դադարեցվել էր Ադրբեջանի կոմկուսի Լեռնային Ղարաբաղի մարզկոմի գործունեությունը:

[4] Հայկական ԽՍՀ Կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի հարցերով շտաբը գլխավորում էր Աշոտ Մանուչարյանը, որը հետագայում՝ 1991 թ. հոկտեմբերի 16-ի նախագահական ընտրություններից հետո, դարձավ Հայաստանի Նախագահի ազգային անվտանգության հարցերով գլխավոր խորհրդական:

[5] «Լեռնային Ղարաբաղի շուրջ»՝ ձևակերպում, որը տեղ է գտել ԽՄԿԿ կենտկոմի փաստաթղթերում, և որը արտացոլում է Ղարաբաղյան խնդրի լուծման հարցում ԽՍՀՄ ղեկավարության վարած քաղաքականության մանիպուլյատիվ բնույթը:

[6] Տես «Conflict, cleavage and change in Central Asia and the Caucasus». By *Karen Dawisha, Bruce Parrott*. 1997: «Google Books. Political science» (http://books.google.com/books?id=XvMfelVY71sC&pg=PA90&lpg=PA90&dq=Hayk+Kotanjian+perestroika&source=bl&ots=SZtApaA3tB&sig=BYvRwrDoeWrQM5oFq_WpWFkCt8Q&hl=en&ei=JJeISIr3GZKutge-mtjnDA&sa=X&oi=book_result&ct=result&resnum=2#v=onepage&q=&f=false):

[7] Ադրբեջանական կողմի հետ բանակցությունների հաջողությանը էապես նպաստեց ՀԿԿ կենտկոմի կողմից հրազդանի շրջանին կցված Հայկական ԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Վլադիմիր Մովսիսյանի և Հայկական ԽՍՀ Սպառողական կոոպերացիայի նախագահ Մուրադ Մուրադյանի օգնությունը:

[8] Սումգայիթի հայ բնակչության դեմ կատարված ցեղասպանական հանցագործությունների մասին վկայությունների տվյալ քննչական գրանցումը, չնայած ԽՄԿԿ կենտկոմի բացասական վերաբերմունքին, կազմակերպվեց 1989 թ. հեղինակի՝ որպես Հայաստանի կոմկուսի Հրազդանի շրջկոմի առաջին քարտուղարի, Հայկական ԽՍՀ Գլխավոր դատախազ Սուրեն Օսիպյանի և կենտկոմի վարչական մարմինների բաժնի վարիչ Մավր Դավթյանի միջև լուռ համաձայնությամբ: Ներկայումս նյութերի այս ժողովածուն Սումգայիթի հակահայկական ջարդերի վերաբերյալ վկայությունների՝ Հայաստանում եղած միակ համակարգված փաստագրական աղբյուրն է:

[9] 1989 թ. հոկտեմբերի 15-ին Հայկական ԽՍՀ 11-րդ գումարման Գերագույն խորհրդի տասներորդ արտահերթ նստաշրջանում քննարկվեցին Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդից և ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեից ստացված տեղեկություններն այն մասին, որ 1989 թ. հոկտեմբերի 10-ին ԼՂԻՄ-ում 2 ամիս ծառայություն անցնելուց հետո, համաձայն պլանի, կատարվում էր ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի ստորաբաժանումների հերթական փոխարինում: Սվերդլովսկի հրշեջ-տեխնիկական ուսումնարանը Շուշիից ուղևորվում էր դեպի Կիրովաբադի օդանավակայան, որպեսզի մեկնի Սվերդլովսկ՝ իր մշտական տեղաբաշխման վայրը: Ստեփանակերտի կենտրոնում ԽՍՀՄ ՆԳՆ զինծառայողների շարասյունից անզեն մարդկանց վրա կրակ արձակվեց, ինչի հետևանքով տուժեց 6 մարդ, որոնցից մեկը՝ Սպարտակ Հակոբյանը, մահացավ: Հայ պատգամավորները պահանջեցին քաղաքական գնահատական տալ այդ միջադեպին՝ այն համարելով ԼՂԻՄ-ի հայ բնակչության կամքն ընկճելու և նրան ահաբեկելու նպատակով Ադրբեջանի նախաձեռնած քաղաքական գործողությունների շղթայի օղակներից մեկը: Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի

նստաշրջանը ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Զորի Բալայանի առաջարկությամբ որոշում ընդունեց միջադեպի բոլոր հանգամանքներն ուսումնասիրելու նպատակով ստեղծել հանձնաժողով: Հայկական ԽՍՀ ԳԽ պատգամավոր, Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղարի տեսուչ Հ. Քոչարյանի գլխավորած հանձնաժողովը, չնայած Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի կողմից ԽՄԿԿ կենտկոմ ներկայացված բողոքին, ժամանելով Ստեփանակերտ, ՀԿԿ ղեկավարի տեղակալներ Վալերի Սիդորովի և գեներալ-մայոր Սերգեյ Կուպրեևի հետ փոխզգործությամբ միջադեպը գնահատեց որպես սադրանք՝ ուղղված ԼՂԻՄ-ի հայ բնակչության և ՀԿԿ-ի դեմ: Հայկական ԽՍՀ ԳԽ հանձնաժողովի կազմում, բացի պաշտոնատար անձանցից, ներգրավված էին նաև Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հասարակայնության ներկայացուցիչներ Կիմ Բալայանը և Ռոբերտ Քոչարյանը (տես «Провокация? Или выстрелы в упор» «KWPA–Karabakh War Press Archive» (http://press.karabakh.info/%D0%9F%D1%80%D0%BE%D0%B2%D0%BE%D0%BA%D0%B0%D1%86%D0%B8%D1%8F%3F_%D0%98%D0%BB%D0%B8_%D0%B2%D1%8B%D1%81%D1%82%D1%80%D0%B5%D0%BB%D1%8B_%D0%B2_%D1%83%D0%BF%D0%BE%D1%80):

[10] Ինքնորոշման ճանապարհով Լեռնային Ղարաբաղի հայության անվտանգության շահերը առաջ մղելու նպատակով անմիջական ժողովրդավարության իրավաքաղաքական գործիքարանի օգտագործման պրոբլեմների մշակումը հեղինակն սկսել էր դեռ 1989–1990 թթ.՝ Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղարի տեսուչ–Ղարաբաղյան գործընթացի քաղաքական համակարգող եղած ժամանակ (տես սույն ժողովածուն, էջ 523):

[11] Տես ԽՍՀՄ անցումային զարգացումների քաղաքական-անվտանգային կանխատեսումները, որոնք հեղինակը հրապարակել էր 1991 թ. սկզբին՝ վերակառուցման ամբիոնի դեր կատարող «Օգոնյոկ» հանդեսում (տես սույն ժողովածուն, էջ 499):

[12] 1991 թ. անցումային գործընթացների հետազոտման աշխատանքներին, որոնք կատարվում էին ԽՄԿԿ կենտկոմի Ակադեմիայում, միացան ԱՄՆ-ի Ելի համալսարանի մի խումբ քաղաքագետներ՝ ամերիկյան քաղաքագիտության «կենդանի դասականներ» Ռոբերտ Դալի (Robert Dahl) և Դեյվիդ Ապտերի (David Apter) գլխավորությամբ:

[13] 1991 թ. ապրիլից «Կայունություն» և «Հակամարտություն» նախագծերի վերլուծական խմբերի նիստերում ուշադրությունը կիզակետվում էր միութենական Կենտրոնի և ինքնիշխանացող միութենական հանրապետությունների ղեկավարությունների միջև քաղաքական հակամարտության պրոբլեմների մշակման վրա (Լիտվան, Էստոնիան, Լատվիան, Վրաստանը, Մոլդովան, Հայաստանը չմասնակցեցին 1991 թ. մարտին կայացած միութենական հանրաքվեին):

«Կայունություն» և «Հակամարտություն» նախագծերի անդամների կատարած խմբային փորձաքննությունների աշխատակարգով իրականացվեցին ինչպես ԽՄԿԿ կենտկոմի համապատասխան խմբերի, այնպես էլ ինքնիշխանացող ՌԽՊՀՀ ելցինյան վարչակազմի քաղաքական խորհրդատվություններ: Միութենական հանրաքվեի, ԱԴՊԿ տապալված հեղաշրջման, ԽՍՀՄ փոխարեն ԱՊՄ (Անկախ Պետությունների Միություն) ստեղծման մասին պայմանագրի նախագծի և նովոգարյովյան գործընթացի արդյունքների լայն համատեքստում գիտական փորձաքննության ենթարկվեց Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման վերաբերյալ ելցինյան վարչակազմի մշակումների փաթեթը, որը հետագայում՝ 1991 թ. Ռուսաստանի Նախագահ Բորիս Ելցինի և Ղազախստանի Նախագահ Նուրսուլտան Նազարբաևի Ստեփանա-

կերտ կատարած այցից հետո, ստացավ «Ժելեզնովոդսկի նախածեռնություն» անվանումը: Այս ամենը, մի կողմից, օգնում էր ԽՍՀՄ վերափոխվող քաղաքական կենտրոնին՝ օբյեկտիվ կերպով գնահատելու վերակառուցման քաղաքականության մոտալուտ ձախողումը, մյուս կողմից՝ նախագծերի մշակմամբ ապահովվում էր փլուզվող ԽՍՀՄ տարածքում նոր ուժային կենտրոններին, առաջին հերթին՝ ՈՒԽԴԱՀ–ՈՂ նոր ելցինյան վարչակազմին քաղաքական ռազմավարական խորհրդատվությունների տրամադրումը:

[14] Հեղինակը 1992 թ. շարունակում էր մասնակցել այն կազմակերպությունների գործունեությանը, որոնք 1991 թ. ապրիլ–դեկտեմբերին ապահովում էին Լեռնային Ղարաբաղի վտարանդիական կառավարության արտաքին գործերի նախարարի պարտականությունների կատարումը: Հեղինակը՝ որպես Ազգային և միջազգային անվտանգության ռուսաստանյան հիմնադրամի փորձագետ, Աֆղանական պատերազմի վետերանների խմբի կազմում մասնակցեց Թբիլիսի, Ցխինվալ և Գորի կատարած այցելությունների, ինչպես նաև գեներալ-մայոր Ռուսլան Աուշևի ղեկավարած Պատերազմների վետերանների միջազգային կոմիտեի ու Աֆղանական պատերազմի վետերանների կոմիտեի փորձագետների՝ Կովկասում զինված հակամարտությունների լուծման հարցերով Թբիլիսիում կայացած համաժողովի արդյունքներով Հարավօսեթական զինված հակամարտության «սառեցման» նախագծի մշակման աշխատանքներին:

[15] 1991 թ. օգոստոսին հեղինակը, կատարելով Լեռնային Ղարաբաղի վտարանդիական կառավարության արտաքին գործերի նախարարի պարտականությունները և լինելով ԽՍՀՄ ԶՈՒ-ի ԽՄԿԿ Միացյալ կուսկոմի գիտական խորհրդատու, օպերատիվ մշտագննման ռեժիմով ԱԴՊԿ կազմակերպած պուտչի զարգացման ռազմաքաղաքական բաղադրիչի վերաբերյալ ռազմավարական խորհրդատվությամբ էր ապահովում Հայաստանի Նախագահի ազգային անվտանգության գծով գլխավոր խորհրդականի ծառայությունը: Այդ մասնագիտական քաղաքական-անվտանգային գնահատումները նպաստեցին ԽՍՀՄ տարածքում քաղաքական ճգնաժամի դինամիկայի վերաբերյալ օբյեկտիվ ռազմավարական կանխատեսումներին, որոնք հիմք դարձան ԱԴՊԿ տապալումից հետո՝ 1991 թ. սեպտեմբերի 21-ին, «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքին համապատասխան Հայաստանի Հանրապետության անկախության հարցով հանրաքվե անցկացնելու վերաբերյալ որոշում կայացնելու համար:

[16] Մոսկվայում ՀՀ մշտական ներկայացուցիչ Ֆելիքս Մամիկոնյանը, վերը հիշատակված էդուարդ Սիմոնյանցը և Վահան Ավագյանը, ինչպես նաև Վահան Շիրխանյանը:

[17] Հեղինակը ԽՄԿԿ կենտկոմի դեսպանորդ-խորհրդական եղած ժամանակ Աֆղանստանից ճանաչում է գեներալ Նորատ Տեր-Գրիգորյանցին, որն այնտեղ ԽՍՀՄ ԶՈՒ-ի 40-րդ բանակի շտաբի պետն էր:

[18] Ստացիոնար դոկտորանտուրայի և Լեռնային Ղարաբաղի վտարանդիական կառավարության արտգործնախարարի առաքելության շրջանակներում կատարված մենագրական հետազոտության արդյունքներով 1992 թ. Մոսկվայում հեղինակը հրապարակեց մի շարք հակամարտաբանական մենագրություններ՝ "Грани согласия – конфликта. Цивилизационные проблемы теоретической и прикладной политологии", "Введение в этнополитологию консенсуса – конфликта. Теоретико-методологические проблемы цивилизационного анализа", "Этнополитология консенсуса – конфликта. Цивилизационный аспект национальной безопасности":

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ, ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ. ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱԴՐԻԴՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՀԻՄՆՎԱԾ ԵՆ «ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՐԱՑՈՒՅՑԻ» ՎՐԱ

ԶԵԿՈՒՑՈՒՄ

Հարվարդի համալսարանի Սևծովյան ավազանի անվտանգության ծրագրի գիտագործնական խորհրդաժողովում

Մոսկվա 2009 թ. հոկտեմբերի 8

Հարգելի գեներալ Օլստրյում և դոկտոր Կոնոպլյով,

Համաժողովի հարգելի մոսկովյան տանտերեր,

Հարգելի գործընկերներ,

Թույլ տվեք գոհունակություն հայտնել այն փաստի առթիվ, որ մեր հեղինակավոր Հարվարդյան սեմինարի էստաֆետը Երևանից հաջողությամբ փոխանցվել է Մոսկվային, և ողջունել նրա հարգելի կազմակերպիչներին ու մասնակիցներին:

Եվ դա ոչ միայն խորհրդանշական է, այլև կարևոր է իր քաղաքական էությամբ: Միջազգային անվտանգության ժամանակակից ճարտարապետության ստեղծումը դժվար է պատկերացնել առանց Մոսկվայի և Վաշինգտոնի միջև արդյունավետ երկխոսության ու համագործակցության ձևավորման: Ռուս-ամերիկյան հարաբերություններում տեղի ունեցող վերջին զարգացումները նոր հնարավորություններ են ստեղծում համաշխարհային, առաջին հերթին՝ եվրոպական անվտանգային համասեռ տարածության ձևավորման համար[1]: Կարևոր է, որ երկու պետությունների ղեկավարներն էլ, ելույթ ունենալով համաշխարհային հանրության առջև, որպես միջազգային անվտանգության ժամանակակից համակարգի ձևավորման հիմք են դիտում այն սկզբունքը, ըստ որի բացառվում է սուբյեկտների անվտանգության ապահովումն ի հաշիվ այլ սուբյեկտների անվտանգության[2]: Եվ այժմ որպես միջազգային անվտանգության նոր համակարգի հիմք առաջարկվում է դիտել ոչ թե «պատերազմի հարացույցը», այլ «խաղաղության հարացույցը»:

Քսանյակի վերջին գագաթնաժողովը Փիտսբուրգում, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 64-րդ նստաշրջանը, Ստրասբուրգում ՆԱՏՕ-ի Հոբելյանական գագաթնաժողովը, հուլիսին ԱՄՆ-ի և Ռուսաստանի նախագահների մոսկովյան բանակցությունները, Մեծ ութնյակի գագաթնաժողովը Ակվիլում զգալի չափով թարմացրին պատկերացումները համաշխարհային համակարգային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում ձևավորվող հանընդհանուր անվտանգության տարածաշրջանային հատվածների ուրվագծերի մասին:

Հարավկովկասյան տարածաշրջանը անմիջականորեն ներգրավված է ՈԴ, ԱՄՆ-ի, ԵՄ-ի, ԵԱՀԿ, ՆԱՏՕ-ի և ՀԱՊԿ-ի ռազմավարական շահերի ոլորտում և, համապատասխանաբար, զգայուն կերպով է արձագանքում այդ ուժային կենտրոնների միջև եղած հարաբերությունների փոփոխություններին[3]: Նախագահ Բարակ Օբամայի իշխանության գալուց հետո Ամերիկայի կողմից միջազգային հարաբերությունների ոլորտում «խելացի ուժի» կարևորումը նախադրյալներ է ստեղծում Հարավային Կովկասում տարածաշրջանային անվտանգության ավելի հաշվեկշռված համակարգի ձևավորման համար՝ դրանում տարածաշրջանային կառուցվածքաստեղծ տարրերի ու կապերի ներգրավմամբ:

Հարավային Կովկասում տարածաշրջանային անվտանգության օպտիմալ ճարտարապետության ստեղծմանը նպաստում են ԵՄ-ի նոր «Արևելյան գործընկերություն» ծրագրի շրջանակներում տարածաշրջանային համագործակցության ծավալման հեռանկարների շուրջ ընթացող խորհրդատվությունները: Տարածաշրջանային անվտանգության ամրապնդման համար նոր հնարավորություններ ստեղծվեցին Հայաստանի Նախագահի նախաձեռնությամբ՝ միտված առանց նախապայմանների Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման, ինչպես նաև Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակման վերացման հնարավորությունների հարցով հայ-թուրքական երկխոսության ծավալմանը: Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման վերաբերյալ արձանագրությունների նախագծերի ներկայացումը ինչպես Հայաստանում և Թուրքիայում, այնպես էլ Հայկական Սփյուռքում կազմակերպվող լայն հասարակական քննարկումների նպատակաուղղված է ժողովուրդների միջև վստահության ամրապնդմանը, ինչպես նաև Հարավային Կովկասում խաղաղության ու կայունության ամրապնդմանը[4]:

Միջազգային անվտանգության տարբեր կազմակերպություններին Հայաստանի հավասարակշռված մասնակցությունը, արտաքին քաղաքական նախաձեռնությունները ուղղված են Հարավային Կովկասում կայունությանը ցուցաբերվող միջազգային աջակցության ներուժի մեծացմանը,

ինչն իրականացնում են ՄԱԿ-ը, ԵԱՀԿ-ն՝ իր Մինսկի խմբով, ՀԱՊԿ-ը՝ Օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի ստեղծմամբ, ՆԱՏՕ-ն՝ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի միջոցով, ԵՄ-ն՝ իր «Արևելյան գործընկերություն» ինտեգրային ծրագրով, Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության համաժողովներով: Դրան են միտված նաև Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և հենց տարածաշրջանային դերակատարների քաղաքական-դիվանագիտական ջանքերը[5]:

Հարավային Կովկասում անվտանգության ապահովման համատեքստում հատուկ ուշադրության է արժանի 2008 թ. նոյեմբերին Ղարաբաղյան կարգավորման վերաբերյալ Ռուսաստանի Նախագահի նախաձեռնությամբ Մայնդորֆյան հռչակագրի ստորագրումը Հայաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի ղեկավարների կողմից, ինչպես նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ պետությունների նախագահների 2009 թ. հուլիսի համատեղ հայտարարությունը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման Մադրիդյան սկզբունքների վերաբերյալ, որում միջնորդ պետությունները արտահայտում են իրենց աջակցությունը Հայաստանի և Ադրբեջանի լիդերներին՝ Ղարաբաղյան խնդրի խաղաղ կարգավորման ճանապարհին[6]:

Ղարաբաղում տարածաշրջանային անվտանգության աղետալի սասանմամբ հղի պատերազմը չվերսկսելու հուսադրող գործոն է հակամարտող կողմերի համաձայնությունը Մինսկի խմբի Համանախագահների այն առաջարկության հետ, թե որպես Ղարաբաղյան հակամարտության կարգավորման և լուծման հիմքում պետք է դրվեն ՄԱԿ-ի Կանոնադրության հետևյալ երեք հիմնադրույթները՝ «ուժի չգործադրման», «տարածքային ամբողջականության» և «ժողովուրդների ազատ ինքնորոշման» սկզբունքները: Հարավային Կովկասում խաղաղության պահպանման գործընթացի վրա անշուշտ դրական ազդեցություն է գործում Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների միջև չընդհատվող երկխոսությունը, որն ուղեկցվում է Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի ղեկավարների աջակցությամբ, ինչպես նաև Մինսկի խմբի Համանախագահների խորհրդատվություններով[7]:

Կցանկանայի հատկապես շեշտել կողմերի միջև այնպիսի համընդունելի համաձայնության ձեռքբերման անհրաժեշտությունը, որի դեպքում հաշտության հիմքը, ոչ թե «պատերազմելու սպառնալիքն» է, այլ երկուստեք ձգտումը խաղաղությանը: Մադրիդյան սկզբունքների համակարգն անշուշտ ունի դրական կողմեր, քանի որ դրանում արտացոլված են Մինսկի

խմբի Համանախագահների հռչակած վերոնշյալ հիմքային սկզբունքները: Այդ առումով պետք է ըստ արժանվույն գնահատել Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի ներդրումը Մինսկի գործընթացը խաղաղ միջոցներով առաջ մղելու գործում: Միևնույն ժամանակ, պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ մասնագետները, այդ թվում՝ մերամերիկյան գործընկերները, հարցականի տակ են դնում Նախագահ Ջորջ Բուշի վարչակազմի արտաքին քաղաքականության որոշ առանձնահատկությունների արդարացված լինելու փաստը: Լայն իմաստով խոսքը Բուշի վարչակազմի անվտանգային մտածողության մեջ ռազմական բաղադրիչի գերակշռության և, համապատասխանաբար, արտաքին քաղաքական պրոբլեմների լուծման ժամանակ ուժային գործիքարաների նախապատվություն տալու մասին է[8]: Ընդսմին այդ պրոբլեմների թվում են ազատ ինքնորոշման իրավունքի իրացման հետ կապված այն տարածաշրջանային միջազգային հակամարտությունները, որոնք 1949 թ. Ժնևյան համաձայնագրերի 1-ին Լրացուցիչ արձանագրության համաձայն՝ նույնականացվում են որպես ազգային-ազատագրական և հակագաղութային[9]:

Ցավոք, այդ դժգոհությունը վերաբերում է նաև Ղարաբաղյան հակամարտության լուծման նկատմամբ որոշ մոտեցումների: Մադրիդյան սկզբունքների պարագայում Բուշի վարչակազմի վերը նշված մեթոդաբանական սխալականությունը դրսևորվում է այն բանում, որ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման և լուծման հիմքում դրված է ոչ թե «խաղաղության», այլ «պատերազմի հարացույցը»: Տվյալ մոտեցմամբ հակամարտության խաղաղ կարգավորման որոնումը հայտնվում է «պատերազմ վերսկսելու սպառնալիքի» ոչ կառուցողական ձևաչափում: Զգալի չափով հենց դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ ադրբեջանական կողմը որպես «հիմնական փոխզիջում» ներկայացնում է «ռազմական գործողություններ չվերսկսելու իր պատրաստակամությունը»: Այլ կերպ ասած՝ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման՝ «պատերազմի հարացույցի» վրա հիմնվող այս մոտեցման դեպքում չկա Ադրբեջանին ուղղված այնպիսի հանդիպական համարժեք փոխզիջումների խթանելու մեխանիզմ, որոնք նպատակաուղղված լինեն կայուն խաղաղության իրատեսական հաստատմանը: Դրանով կարելի է բացատրել այն փաստը, որ Ադրբեջանը բազմակի գերազանցել է հարձակողական սպառազինությունների վերաբերյալ ԵՍԶՈՒ պայմանագրով սահմանված առաստաղները, ոչ միայն ներազգային լսարանում, այլև միջազգային ամբիոններից բացահայտ կերպով քարոզում է իր Զինված ուժերի ինտենսիվ նախապատրաստումը պատերազմի վերսկսմանը:

Այստեղ տեղին է հիշել Նախագահ Հեյդար Ալիևի ավելի իրատեսական դիրքորոշումը, որը նա ցուցաբերեց Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հետ Ռուսաստանի միջնորդությամբ 1994 թվականի գարնանն ընթացող բանակցություններում՝ Ադրբեջանի Նախագահ Այազ Մութալիբովի և ժողովրդական ճակատի առաջնորդ Աբուլֆազ Էլչիբեյի սանձազերծած պատերազմի արդյունքներով զինադադար կնքելու վերաբերյալ: 1994 թ. մայիսին տեղի ունեցող բանակցությունների անմիջական մասնակիցների վկայությամբ՝ տվյալ դիրքորոշման էությունն այն էր, որ Ադրբեջանը պատրաստ է ճանաչելու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գոյության փաստը, մի սուբյեկտի, որն ստեղծվել էր 1991 թ. ԽՍՀՄ-ում գործող վերակառուցումային օրենսդրությանը համապատասխան իրագործված հանրաքվեի արդյունքներով: Այսպիսով ճանաչվում էր Ադրբեջանի կազմից Լեռնային Ղարաբաղի և այն Հայաստանի Հանրապետության հետ կապող Լաչինի ու Քարվաճառի շրջանների դուրս գալու օրինականությունը: Փոխարենը՝ Նախագահ Հեյդար Ալիևը բանակցություններ էր վարում նոր օրինական հայկական պետության դեմ Ադրբեջանի նախկին ղեկավարության սանձազերծած ագրեսիայի հետմղման հետևանքով Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանության ուժերի ստեղծած անվտանգության գոտու մյուս տարածքները վերադարձնելու հնարավորության շուրջ: Այդպիսին էր Ղարաբաղյան հակամարտության արմատական լուծման ու հայ և ադրբեջանական ժողովուրդների միջև կայուն խաղաղության հաստատման նպատակով փոխադարձ զիջումների շուրջ 1994 թ. ընթացող խորհրդատվությունների էությունը:

Եվ այսպես. Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի իշխանությունները 15 տարի առաջ հենց «խաղաղության հարացույցի» հիման վրա էին ընկալում այն իրողությունները, որոնք ԽՍՀՄ փլուզման նախօրեին և օրինականորեն ինքնորոշված Ղարաբաղի դեմ Նախագահ Մութալիբովի սանձազերծած պատերազմի հետևանքով ձևավորվել էին Արևելյան Անդրկովկասում «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու մասին» ԽՍՀՄ օրենքին և միջազգային իրավունքի նորմերին համապատասխան:

Նախագահ Բարակ Օբամայի թիմն իրեն տարանջատում է Ջորջ Բուշի վարչակազմի անվտանգային ռազմավարությունից, որը կողմնորոշված էր ռազմական ուժի գործոնի գերակշռությամբ «կոշտ անվտանգությանը»: ԱՄՆ-ի նոր վարչակազմի կողմից «խելացի ուժի»՝ որպես անվտանգային քաղաքականության համակարգաստեղծ ու գերակայող պարամետրի հռչակումը նախադրյալներ է ստեղծում Ղարաբաղյան կարգավորման գործընթացի մեթոդաբանական հիմքի վերանայման համար:

Այդ նոր պայմաններում զգալի չափով ԱՄՆ-ի նախորդ վարչակազմի ջանքերով ձևավորված Մադրիդյան սկզբունքների վերակողմնորոշումը «պատերազմի հարացույցից» «խաղաղության հարացույցի» կարող է հակամարտության երեք կողմերին էլ դրդել համարժեք փոխզիջումների՝ ի նպաստ Հարավային Կովկասում կայուն խաղաղության հաստատման:

Այն ուժերը, որոնք փորձում են գաղութային պատերազմների վերսկսման միջոցով լուծել տարածաշրջանային ազգային-ազատագրական հակամարտությունները[11], պետք է ամենայն լրջությամբ դասեր քաղեն անցյալ տարի Վրաստանում տեղի ունեցած պատերազմի ողբերգական հետևանքներից: Ռուսի միջազգային իրավունքի՝ ՄԱԿ-ի Կանոնադրության մեջ ձևակերպված և ԵԱՀԿ Մինսկի խմբի որդեգրած երեք վերը նշված հիմնարար սկզբունքների պահպանման պայմանով Ղարաբաղյան հիմնախնդրի փոխզիջումային լուծման ուղիների ու միջոցների համատեղ որոնումն ստանում է ռազմավարական տրամաչափ և կարող է դառնալ Հարավային Կովկասում կայունության ու անվտանգության ապահովման հիմք[12]:

Տարածաշրջանում փոխըմբռնման և վստահության մթնոլորտի հաստատման համատեքստում Ղարաբաղյան հակամարտության լուծման համար կարևոր նպաստավոր հանգամանք է Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարներ Սերժ Սարգսյանի և Իլհամ Ալիևի միջև չընդհատվող երկխոսությունը: Նախագահներ Բարակ Օբամայի և Դմիտրի Մեդվեդևի ջանքերով ԱՄՆ-ի և Ռուսաստանի միջև «խաղաղության հարացույցի» և «խելացի ուժի» սկզբունքի հիման վրա արդյունավետ երկխոսության զարգացմամբ Հարավային Կովկասի երկրների համար բացառիկ հնարավորություն է ստեղծվում իրենց լուման ներբերելու՝ հավասարակշռված տարածաշրջանային անվտանգության կառուցման մեջ նախադրյալներ ստեղծելով համարժեք փոխզիջումների, ինչպես նաև տարածաշրջանային ու անդրտարածաշրջանային ծրագրերի միջոցով երաշխավորված կայուն խաղաղություն հաստատելու համար:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

[1] *Г. Котанджян.* Исходя из требований глобальной безопасности. «Голос Армении», 18 октября 2008 г. (http://www.golos.am/index.php?option=com_content &task=view&id=36617&Itemid=41);

«Dr. MG Hayk Kotanjian of Armenia named Marshall Center Graduate of the Month for May, 2008» (http://www.marshallcenter.org/site-graphic/lang-en/page-alum-news-1/xdocs/alum/news-newsbrief/08-18.htm).

[2] «Выступление Президента России Д. А. Медведева на 64-й сессии Генеральной Ассамблеи ООН». Нью-Йорк, 23 сентября 2009 г. (http://www.mid.ru/brp_4.nsf/0/E2B8C97B2C9E5D43C325763B0022E081);

«Remarks by the President to the United Nations General Assembly». The White House. 23 September, 2009 (http://www.whitehouse.gov/the_press_office/Remarks-by-the-President-to-the-United-Nations-General-Assembly).

[3] *Dr. Ceslav Ciobanu.* Political economy of «Frozen Conflicts» in ex-Soviet States: challenges and prospects for the U.S. and Russia. «Virginia State University International Conference», April, 2007 (http://pdc.ceu.hu/archive/00003276/01/political_economy.pdf).

[4] «Protocols between the Republic of Armenia and the Republic of Turkey». 31 August, 2009 (http://www.mfa.am/pr_09/20090831_protocol.pdf);

Philip H. Gordon. Readout on Azerbaijan, Armenia and Turkey Meetings New York City, Bureau of European and Eurasian Affairs, 28 September, 2009 (http://www.state.gov/p/eur/rls/rm/2009/129940.htm).

[5] «Speech by President of the Republic of Armenia H. E. Mr. Serzh Sargsyan at the 45th Munich Security Conference». 07.02.2009 (http://president.am/events/statements/eng/?pn=3&id=30);

Dr. Hayk Kotanjian. Guidelines on developing Armenian National Security Strategy in the Context of regional security architecture of the South Caucasus. «Monograph», SNSEE-INSS-NSOOC, NDU, USA. Washington–Yerevan, 2004–2005;

Владимир Кузьмин, Михаил Фалалеев, Юрий Гаврилов. Сумма сил. Вчера ОДКБ создала коллективные силы оперативного реагирования. «Российская газета», Центральный выпуск № 4842 от 05.02.2009 г. (http://www.rg.ru/2009/02/05/armiya.html).

[6] «Joint Statement on the Nagorno-Karabakh Conflict by U.S. President Obama, Russian President Medvedev, and French President Sarkozy at the L'Aquila Summit of the Eight», 10 July, 2009 (http://www.osce.org/item/38731.html);

«Декларация Азербайджанской Республики, Республики Армения и Российской Федерации». Московская область, замок Майендорф 02.11.2008 г., «Официальный сайт Президента России» (http://www.kremlin.ru/text/docs/2008/11/ 208670.shtml);

«Сопредседатели Минской группы ОБСЕ представили главе МИД Армении результаты проведенных в Баку и Степанакерте встреч». «Новости-Армения», 02.03.2009 (http://www.newsarmenia.ru/arm1/20090302/42034520.html).

[7] «Минская группа ОБСЕ осудила нарушение режима прекращения огня в Карабахе». «ИА REGNUM», 05.03.2009 (http://www.regnum.ru/news/1133901.html);

«Statement of the Co-Chairs of the OSCE Minsk Group: There is no military solution to the Nagorno-Karabakh conflict». «REGNUM», 19.02.2009 (http://www.regnum.ru/english/1127568.html);

«Военного решения нагорно-карабахского конфликта не существует: заявление сопредседателей МГ ОБСЕ». «ИА REGNUM», 19.02.2009 (http://www.regnum.ru/news/1127568.html);

Андрей Сафонов. Как разморозить конфликты? «Новая Газета Онлайн Приднестровье», 04.06.2008 (http://novaiagazeta.org.ru/index.php?newsid=259).

[8] «Олбрайт критикует внешнюю политику администрации Буша». РИА «Новости» 21.08.2003 (http://www.rian.ru/politics/20030821/422798.html);

«Анализ внешней политики Буша-младшего («United Press International», США)». 11 ноября 2004 г. «ИноСМИ.Ru» (http://www.inosmi.ru/translation/214565.html);

«Обама и Байден призвали покончить с провальной внешней политикой Буша». РИА «Новости», 24.08.2008 (http://rian.ru/world/20080824/150624379.html);

Картер: «Команда Буша – худшая за всю историю». 21.05.2007 (http://www.km.ru/magazin/view.asp?id=96F21455E1D64D36918EDEF05C8F30C1);

«Резолюции, принятые Генеральной Ассамблеей ООН на двадцать восьмой сессии», т.1 (18 сентября – 18 декабря 1973 г.). Нью-Йорк, 1974, с. 184.

[9] «Protocol Additional to the Geneva Conventions of 12 August 1949, and relating to the Protection of Victims of International Armed Conflicts (Protocol I)», 8 June, 1977, Part I, Art. I, Point 4»;

[10] *Г. Хачатрян, Г. Казарян, С. Маргарян.* Победы–какими они были. Позывной 44 (на арм. яз.), «Армянская энциклопедия». Ереван, 2008.

[11] *Dr. Hayk Kotanjian.* Azerbaijan: Anti-Democratism and Colonialism. A glance at the perspective of regional security after Kosovo. «REGNUM» News Agency, 12.02.2008 (the text disseminated by the Information Resource Center, Public Affairs Section, U. S. Embassy, Yerevan).

[12] *Dr. Hayk Kotanjian.* «Referendum as a gesture af a good will»: peace and war scenarios for Karabakh» (http://www.harvard-bssp.org/bssp/news).

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵՎՈՐ Է ՀԱՅԱՍՏԱՆ–ՍՓՅՈՒՌՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌՈՒՄՈՎ

2009 թվականին ճայթած համաշխարհային ճգնաժամի հետևանքով մեծ պետությունները ճշգրտում են իրենց ռազմավարական օրակարգում այս կամ այն երկրի ընդգրկման անհրաժեշտությունը: Առաջնային կարևորություն չունեցող պետությունները ռազմավարական համագործակցության շրջանակից տեղափոխվում են տվյալ մեծ տերությունների գերակայությունների եզրերից դուրս՝ դեպի լուսանցք:

Այս պարագայում սփյուռքային կազմակերպությունների համար գերակա շահ է դառնում իրենց ազգային պետության հետ ջանքերի համադրումը՝ ուղղված քաղաքացիության պետության ռազմավարական օրակարգում Մայր երկրի տեղի ու դերի պահպանմանը: Այս գերխնդրի լուծումն ուղղված է նաև քաղաքացիության տվյալ պետությունում սփյուռքի դիրքերի ամրապնդմանը: Այս մոտեցմամբ ԱՄՆ-ի ռազմավարական օրակարգում ամրագրելով, մի կողմից՝ Ամերիկայի, և մյուս կողմից, Իսրայելի, Իռլանդիայի, Հնդկաստանի, այժմ նաև Թուրքիայի ու այլ պետությունների ազգային ռազմավարական շահերի համադրումը՝ տվյալ սփյուռքները միաժամանակ ապահովում են այդ երկրների ռազմավարությանը համահունչ իրենց համայնքային զարգացումը:

Ռազմավարական գերակայությունների ճգնաժամային վերադասավորումների պայմաններում այս նպատակադրմամբ սկսել է գործել վերջերս ստեղծված Ամերիկայի թուրքական ընկերակցության համաժողովը՝ *AATA*-ն[1], որն իր էությամբ կրկնօրինակում է հրեական հայտնի լոբբիստական կազմակերպությունը: Խոսքը վերաբերում է թուրքերի կողմից Ամերիկա-իսրայելական հասարակական-քաղաքական գործերի կոմիտեի՝ *AIPAC*-ի[2], փորձի արդյունավետ օգտագործմանը:

Իհարկե, Հայ Սփյուռքն ունի Հայության գերակա շահերի պաշտպանության իր ուրույն փորձը, որը հիմնականում խարսխված է Եղեռնի ճանաչմանն ուղղված գերկարևոր գործունեության վրա: Գերկարևոր՝ որովհետև այս գործոնը, լինելով Սփյուռքի հայության ինքնության պահպանման հիմքը, այժմ դարձել է նաև սփյուռքահայության համախմբման փաստորեն միակ գաղափարը: Այս առումով, Հայոց Սփյուռքի կազմակերպվածքը միահարկ է, այսինքն նա չունի պետութենակենտրոն վերնաշենք:

Խոսքը վերաբերում է այն մտավոր-կազմակերպական վերնաշենքին, որը հարգելով անդամակցող կազմակերպությունների բազմապիսության իրավունքը, համադասեր «Մայր Պետություն–Սփյուռք» համակարգի զարգացման ռազմավարական շահերն ու Հայաստանակենտրոն ծրագրերը:

Վերջերս տեղի ունեցած Նախագահի համահայկական ուղևորությունը[3] իր դրական կողմերի հետ մեկտեղ միջազգային հանրության առջև բացահայտեց նախկինում չբյուրեղացած և անորոշության մեջ թաքնված այն փաստը, որ Սփյուռքն ու Հայաստանի Հանրապետությունն այս պահին չունեն համընկնող ազգային-քաղաքական օրակարգեր: Միմյանց դեմ հակամարտող երկու քաղաքական օրակարգերի առկայության փաստի թերագնահատման դեպքում կարող է խաթարվել Սփյուռքի առանց այդ էլ չհամակարգված հայաստանանպաստ լոբբիստական գործունեությունը: Այսինքն՝ Հայոց Սփյուռքի ներուժը գերազանցապես միտված կլինի ներպարփակվելու իր գոյատևման համար մղվող պայքարի նեղ տեղային շրջանակներում:

Սա մի լուրջ մարտահրավեր է, որի խորունկ իմաստավորումն ու կառուցողական գործարկումը կարող են Հայաստանի և Սփյուռքի միացյալ ջանքերով առաջ բերել համագործակցության մոդելի անհրաժեշտ արդիականացում:

Արդի փորձը հուշում է, որ արդյունավետ են գործում այն համակարգերը, որոնք կարողանում են իրենց ներքին կազմակերպությունների բազմապիսի յուրահատկությունները համադրել համազգային ներկայացուցչական կազմակերպության՝ համընդգրկուն համաձայնության ձեռքբերմանն ուղղված համադասող դերի հետ: Այսպիսով՝ Համաշխարհային Հայության համակարգի պարագայում խոսքը այդ «կազմակերպությունների կազմակերպության» ստեղծման և գործարկման մասին է: Մի կազմակերպության, որն իր ջանքերը կուղղի համազգային ռազմավարական գերակայությունների շուրջ Սփյուռքի և Հայաստանի Հանրապետության համաձայնության ձեռքբերմանը ու դրա վերահաստատման շարունակական ապահովմանը:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

[1] Assembly of American Turkish Associations (http://www.ataa.org/about/index.html#bot).

[2] The American Israel Public Affairs Committee. America's Pro-Israel Lobby (http://www.aipac.org).

[3] Панармянское турне важно с точки зрения переосмысления отношений Армения–Диаспора. Panorama.am армянский информационный портал, 30.09.2009 (http://www.panorama.am/ru/politics/2009/09/30/qotanjyan/1).

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ՝ ԻՍՐԱՅԵԼԻ ՕՐԻՆԱԿՈՎ*

Պաշտպանությանը պետության պատրաստման առանցքային ուղղություններից է տարածքային պաշտպանության (ինքնապաշտպանության) կազմակերպումը: Այն առավել մեծ կարևորություն ունի փոքր տարածքով պետությունների համար, որոնք համապատասխանաբար չունեն ռազմաճակատի խորություն և ռազմավարական թիկունք: Տարածքային պաշտպանության ստորաբաժանումները, որոնք կազմավորվում են տարածքային-գոտիական սկզբունքով, նախանշանակվում են հակառակորդի՝ ռազմաճակատը ճեղքած ուժերի առաջխաղացումը կասեցնելու կամ դրանք ջախջախելու, նրա դեսանտային (դիվերսիոն) խմբերը վնասազերծելու համար: Այդ ստորաբաժանումները պետք է պատրաստ լինեն տվյալ տարածքի բռնազավթման դեպքում կերպափոխվելու անհամաչափ զինված պայքարի մեթոդների կիրառմամբ պարտիզանական դիմադրության, այդ թվում՝ հակազդեցության մարտական սուբյեկտների ցանցային, համակարգի, որում օպերացիաների անմիջական կատարողներն օժտվում են ինքնուրույն որոշումներ կայացնելու և գործելու հատուկ լիազորություններով: Հավանական հակառակորդի հնարավոր հարձակման գլխավոր ուղղություններում տարածքային պաշտպանությունն իրականացվում է ռազմականացված բնակավայրերի ծնով:

Ժամանակակից հրեական պետության տարածքային ինքնապաշտպանության ավանդույթներն սկսել են ծնավորվել 1942 թ., երբ Պաղեստինի տարածքում գտնվող արաբական և հրեական բնակավայրերի շփման գծի երկայնքով տեղաբաշխված հրեական կոլեկտիվ գյուղատնտեսական բնակավայր-կոմունաներին՝ կիբուցներին**, կցվեցին «Պալմախ»*** հարվածային ջոկատները:

---

* ՀՀ ՊՆ ԱՈՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2009, հմ. 3:

** Կիբուց *(Kibbutz)*՝ բնակավայրերի տարածքներում Իսրայելի հրեաների գյուղատնտեսական-արտադրական կոոպերատիվ միավորումներ, որտեղ մարդիկ համատեղ աշխատում են, որոշումներ ընդունում, բաշխում եկամուտները և զբաղված են պատրաստմամբ ինքնապաշտպանությանը:

*** Պալմախ *(«Palmach»)*՝ Իսրայելի Պետության Պաշտպանության բանակի հիմք դարձած ընդհատակյա «Հագանահ» Պաշտպանության բանակի հատուկ նախանշանակման հարվածային ջոկատները (տես «Первый командующий». В кн.: *В. Фроммер.* Реальность мифов. Иерусалим, Гешарим, 5762 г.–«Мосты Культуры». М., 2003, сс. 48–62):

«Դատաստանի օրվա» պատերազմից («Յոմ-Կիպուր», 1973 թ.) քաղած դասերի հաշվառմամբ՝ պաշտպանության խորություն չունենալու, թշնամական պետություններով շրջապատված լինելու պայմաններում, Իսրայելում 1970-ական թվականների երկրորդ կեսին ձեռնամուխ եղան պաղեստինյան արաբների և հրեաների բնակության դասավորության փոփոխման ռազմավարական պլանի մշակմանն ու իրականացմանը: Այդ պլանով նախատեսվում էր որպես տարածքային պաշտպանության համակարգի ամրապնդման ռազմավարական ռեսուրս ստեղծել նոր հրեական բնակավայրեր, ինչը նպատակաուղղված էր հրեա և արաբ բնակչության շփման գծի պաշտպանությանը ինչպես պետական սահմանի, այդ թվում՝ ծովեզրի, գոտում, այնպես էլ երկրի ներսում, ներառյալ՝ Իսրայելի ազգային անվտանգության համար առանձնակի կարևորություն ներկայացնող հաղորդակցման ենթակառուցվածքներն ու այլ օբյեկտներ:

Հրեական բնակավայրերի ծավալման նոր ռազմավարությունը՝ որպես Իսրայելի տարածքային պաշտպանության ամրապնդման միջոց, հետևողականորեն կյանքի է կոչվել 1977 թ., երբ պաշտոնաթող գեներալ Արիել Շարոնը[1], որը Իսրայելում ծավալված բնակեցման նոր շարժման գաղափարախոսն էր, Մենահիմ Բեգինի կառավարությունում ստանձնեց գյուղատնտեսության նախարարի պաշտոնը: Գյուղատնտեսության, ապա՝ պաշտպանության նախարարի պաշտոններում գեներալ Ա. Շարոնի հաջորդաբար գտնվելու շրջանում նրա ղեկավարությամբ մշակվել և ծնավորվել է Իսրայելի տարածքային պաշտպանությունն արմատապես ամրապնդած հրեական պաշտպանական-աշխատանքային բնակավայրերի ու մարտական պահակակետերի՝ նոր դասավորությամբ տեղակայման գործում հայրենասիրությամբ տոգորված հրեա բնակչության և ՑԱՀԱԼ*-ի փոխգործության արդյունավետ համակարգը:

Իսրայելի տարածքային պաշտպանության համակարգի բարեփոխման ծրագրի հաջողությանը նպաստել են հետևյալ գործոնները.

– 1977 թ. իշխանության եկած «Լիկուդ» կուսակցության ծրագրում ազգային անվտանգության շահերի գերակայության արձանագրումը,

– բնակության տարածքների դասավորության բարեփոխման՝ որպես տարածքային պաշտպանության ամրապնդման հանգուցային գործոնի ռազմավարական նշանակությունն ըմբռնող պետական գործչի՝ գեներալ Ա. Շարոնի նպատակային նշանակումը գյուղատնտեսության նախարարի պաշտոնին[2],

---

* ՑԱՀԱԼ (*TSAHAL–Tsva Haganah Le-Israel* (եբր.))՝ Իսրայելի Պետության Պաշտպանության բանակ:

– տարածքային պաշտպանության բարեփոխման տվյալ ծրագրի իրականացման գործում Իսրայելի անպարտելիության գաղափարին մոլեռանդորեն նվիրված երիտասարդ հրեա հայրենասերների «Գուշ էմունիմ» («*GUSH EMUNIM*[3]»՝ «Գաղափարով համակված՝ միություն») կազմակերպության ներգրավումը,

– գյուղատնտեսության նախարարության և ՑԱՀԱԼ-ի փոխգործությունն ըստ Իսրայելի Պետության պաշտպանության ռազմավարական առումով կարևոր ուղղություններում նոր բնակավայր-կիբուցների կառուցման, բարեկարգման ու բնակեցման պլանների:

Սույն ակնարկում չի դրվում տարածքային պաշտպանության իսրայելական համակարգի մանրամասների վերլուծության խնդիր: Միևնույն ժամանակ, մենք կարևոր ենք համարում Իսրայելի տարածքային պաշտպանության համակարգի ձևավորման, գյուղատնտեսության և պաշտպանության նախարարությունների ռազմավարական փոխգործության կշռադատված պետական քաղաքականության շնորհիվ մշակված և իրականացված տվյալ ծրագրի էությունը ներկայացնել այն մարդկանց ուշադրությանը, որոնք պատասխանատու են ՀՀ և ԼՂՀ արդյունավետ պաշտպանության ապահովման համար:

Եվ այսպես. Իսրայելի իշխանությունների փորձի էությունն այն է, որ վճռվեց տարածքային պաշտպանության համակարգը կատարելագործել Պաղեստինի հատուկ հատկացված հողատարածքներում նոր դասավորությամբ հրեական բնակավայրերի հիմնադրման միջոցով՝ գյուղատնտեսության ու պաշտպանության նախարարություններին համապատասխան ռեսուրսների տրամադրմամբ:

Գեներալ Արիել Շարոնի պլանների համաձայն՝ գյուղատնտեսության և պաշտպանության նախարար նրա եղած ժամանակ նոր բնակավայրերի ստեղծումը կատարվել է երկու փոխկապված ծրագրերի զուգահեռ իրագործմամբ.

1) *վարչաիրավական և սոցիալ-տնտեսական* (նորաբնակների սոցիալական պաշտպանության նպատակաուղղված արտոնությունների համար իրավական հիմքերի ստեղծում, բնակավայրերի ինքնակառավարման մարմինների ձևավորում, ֆինանսական և նյութական ռեսուրսների հատկացում) և *բարոյահոգեբանական* (մոլեռանդ հայրենասերների շրջանից նորաբնակների կազմի հավաքագրում, ինչպես նաև նրանց սոցիալական և հոգեբանական շարժառիթավորում),

2) *պաշտպանական-կազմակերպական* (ՆԱՀԱԼ-ի՝ ստորաբաժանումները ապագա բնակավայրի տեղում դաշտային ռազմաշինարարական ճամբար էին դնում և օրվա նախատեսված ժամանակահատվածում զբաղվում էին պաշտպանությանը մարտական պատրաստմամբ և ռազմաշինարարական գործունեությամբ. օբյեկտի հանձնման պլանային ժամկետներում ամենօրյա մարտական պատրաստումն ավարտելուց հետո ՆԱՀԱԼ-ի մարտիկները, զինված շինարարական տեխնիկայով և շինանյութերով, ռազմական ինժեներների ղեկավարությամբ կառուցում էին բնակավայրի համալիրը և լրիվ պատրաստ վիճակում շահագործման էին հանձնում ապագա կիբուցի ինքնակառավարման մարմիններին):

Հարկ է շեշտել, որ այդ ծրագրերի հաջողությունն զգալի չափով պայմանավորված էր այն հանգամանքով, որ Իսրայելի Պաշտպանության բանակի ՆԱՀԱԼ[4] հատուկ բրիգադի ստորաբաժանումները համալրվում էին առավելապես «Գուշ էմունիմ» հայրենասիրական կազմակերպության երիտասարդ անդամներով, որոնք անվերապահորեն նվիրված էին ցանկացած ապագա պատերազմում կամ թշնամու հետ տեղային զինված բախումներում Իսրայելի Պետության անպարտելիության ապահովման գաղափարին: Կարևոր է նշել, որ ՆԱՀԱԼ-ի մարտիկների մի զգալի մասը Պաշտպանության բանակից զորացրվելուց հետո դառնում էր իր իսկ կառուցած կիբուցի ակտիվ անդամ: Իսրայելի իշխանությունները հատուկ ուշադրություն էին դարձնում նոր կիբուցների բնակեցման համար սոցիալական, տնտեսական ու ֆինանսական նախադրյալների ստեղծմանը:

Իսրայելի Պաշտպանության բանակի ՆԱՀԱԼ բրիգադի ակունքների մոտ կանգնած է եղել Իսրայելի Պետության հիմնադիր Դավիդ Բեն-Գուրիոնը: Նրա գաղափարը մարմնավորվել էր այդ բացառիկ զորամիավորման մեջ՝ բաղկացած զինվոր-շինարար-գյուղացիներից, որոնք իրականացնում էին տարածքային պաշտպանությունն ու միաժամանակ յուրացնում էին խոպան հողերը: Բեն-Գուրիոնը համարում էր, որ սահմանների պաշտպանության ոչ մի զուտ ռազմական մոտեցում իր արդյունավետությամբ չէր կարող համեմատվել հայրենասեր զինվոր-շինարար-գյուղացիների կառուցած հրեական գյուղերի համակարգի հետ, որոնք գործում են որպես տարածքային ինքնապաշտպանության կազմակերպություններ:

ՆԱՀԱԼ-ը եբրայերեն *Noar Halutzi Lohem* («Պայքարող պիոներական երիտասարդություն») բառերի հապավումն է: Ստեղծված լինելով

---

[3] Ռուսալեզու և հայալեզու գրականության մեջ հանդիպում է նաև «ՆՈՀԱԼ» ձևը (օրինակ՝ «Зарубежное военное обозрение», 2001, № 5–6; *Հ. Ս. Քոթանջյան*, Իսրայելի պաշտպանության բանակում զինվորի մարտական ոգու ձևավորման փորձի մասին՝ ՀՀ պաշտպանական բարեփոխումների լույսի ներքո: «ՀԲ», 2009, հմ. 1–2, և այլն):

[4] Ռուսալեզու և հայալեզու գրականության մեջ հանդիպում է նաև «ՆՈՀԱԼ» ձևը (օրինակ՝ «Зарубежное военное обозрение», 2001, № 5–6; *Հ. Ս. Քոթանջյան*, Իսրայելի պաշտպանության բանակում զինվորի մարտական ոգու ձևավորման փորձի մասին՝ ՀՀ պաշտպանական բարեփոխումների լույսի ներքո: «ՀԲ», 2009, հմ. 1–2, և այլն):

1948 թ.՝ այդ կազմակերպությունն զբաղվել է Պաշտպանության բանակում կամավոր ծառայությանը նախազորակոչային տարիքի երիտասարդության պատրաստմամբ՝ նպատակ ունենալով Իսրայելի չյուրացված տարածքներում ստեղծել գյուղատնտեսական ռազմականացված բնակավայրեր ահաբեկիչների հարձակումները հետ մղելու համար: Ինչպես վերը նշվեց, 1973 թ. «Դատաստանի օրվա» պատերազմից[5] հետո Իսրայելի Պետության ազգային անվտանգության գերակայություններից մեկը դարձավ տարածքային պաշտպանության ամրապնդումը նոր հրեական բնակավայրեր կառուցելու և դրանք հայրենասեր բնակչությամբ, առաջին հերթին երիտասարդներով բնակեցնելու միջոցով՝ նրանց ապահովելով զենքով ու զինամթերքով և պատրաստելով պաշտպանողական մարտական գործողությունների վարմանը:

Նկատի ունենալով այն ոչ միարժեք տպավորությունները, որ ստացել եմ Քաշաթագի շրջան կատարած այցելությանս ժամանակ, նպատակահարմար եմ համարում, որ պաշտպանությանը ՀՀ և ԼՂՀ պատրաստումը մշակող գերատեսչություններն ու մասնագետները ուսումնասիրեն Իսրայելի ՑԱՀԱԼ-ի և գյուղատնտեսության նախարարության համագործակցության այն փորձը, որը նրանք ձեռք են բերել պաշտպանական-աշխատանքային բնակավայրերի լավ մտածված և արդյունավետ կերպով գործող համակարգի համատեղ ստեղծման ժամանակ:

Հարկ եմ համարում որպես եզրափակիչ դիտողություն նշել, որ Իսրայելում տարածքային պաշտպանության կազմակերպումն իրականացնում էին իրենց հայրենասիրությունը գործով ապացուցած պրոֆեսիոնալներ, որոնց շնորհիվ բացառվում էր պետության հատկացրած ռեսուրսների, այդ թվում՝ ի հաշիվ Հրեական սփյուռքից ստացվող հանգանակությունների, նկատմամբ որևէ կոռուպցիոն ոտնձգություն:

Եվ, վերջապես, տարածքային պաշտպանության կազմակերպման գործում հրեա ժողովրդի ձեռք բերած հաջողության առավել լայն՝ անվտանգային-ռազմավարական, հիմքի իմաստավորման համար տեղին է մեջբերել գեներալ և պետական գործիչ Արիել Շարոնի այն խոսքը, թե էրեց Իսրայելի՝ ազգային անվտանգության հարցերում «առկա է Իսրայելի և Սփյուռքի հրեաների փոխադարձ պատասխանատվությունը: Իսրայելը, ինչպես ես հաստատում եմ տանը և արտասահմանյան ուղևորությունների ժամանակ, իսրայելական նախագիծ չէ: Դա համաշխարհային Հրեության նախագիծն է»[6]:

* «*Eretz Israel*»–«Իսրայելի Երկիր»:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

[1] ««Դատաստանի օրվա» պատերազմի (1973 թ. հոկտեմբեր) առաջին իսկ ժամերին Շարոնը գլխավորեց ռեզերվիստների գրահատանկային դիվիզիան: Ծանր պաշտպանողական մարտերից հետո, որոնք ըստ էության կանխեցին ամբողջ Հարավային ռազմաճակատի քայքայումը, Շարոնի դիվիզիան անցավ հակահարձակման, որին ոչ ոք չէր սպասում, նույնիսկ արաբների ուխտադրուժ հարձակումից շփոթված Դայանը: Արիկի տանկերը մարտանցեցին Սուեզի ջրանցքը, ոչնչացրին հրթիռային մարտկոցները, շրջապատեցին եգիպտական բանակները Սինայում և դուրս եկան Կահիրեի մատույցներ: Իսրայելը փրկված էր, Արիկը ճանապարհ հարթեց դեպի խաղաղություն: 1978 թ. նախագահ Անվար Սադաթը պատմական այցով ժամանեց Իսրայել: «Դիմավորողների մեջ կա՞ արդյոք Արիել Շարոնը», հարցրեց նա՝ իջնելով օդանավասանդուղքով: Երբ Արիկը մոտեցավ նախագահին, Սադաթը սեղմեց նրա ձեռքը և ասաց. «Դուք, գեներալ Շարոն, մեզ համար զինվորական սխրանքի մարմնավորում եք»» (տես *Давид Шехтер*. Надежда Израиля. Ариэль Шарон. В кн.: «Рядом с премьер-министрами», Иерусалим, Гешарим, 5762 г.–«Мосты Культуры», М., 2001, с. 324):

[2] Տես «Settling the Territories», in: «WARRIOR. THE AUTOBIOGRAPHY OF ARIEL SHARON», by *Ariel Sharon with David Chanoff*. NY, 2005, PP. 355–372:

[3] Տես նույն տեղում, էջ 361:

[4] ՆԱՀԱԼ-ի հիմքի վրա 1982 թ. կազմավորված նույնանուն հետևակային բրիգադը համարվում է իսրայելական բանակի ամենամարտունակ զորամասերից մեկը: Այն նախկինի պես համալրվում է միայն հայրենասեր կամավորներով: Զորակոչը ՆԱՀԱԼ, ինչպես և Իսրայելի բանակի բոլոր մարտական զորամասեր, կատարվում է մրցութային կարգով՝ հավանական թեկնածուների թիվը, որպես կանոն, գերազանցում է նորակոչիկներ ընդունելու բրիգադի իրական հաստիքային հնարավորությունները (տես «Еврейская Виртуальная Библиотека («Jewish Virtual Library»)» (http://www.Jewishvirtuallib-ra-ry.org/source/Society_&_Culture?nahal.html)):

[5] Տես «The Yom Kippur War (1973)», in: «Story of my life», by *Moshe Dayan*. 1976, PP. 463–547:

[6] «Epilogue», in: «WARRIOR. THE AUTOBIOGRAPHY OF ARIEL SHARON», P. 541.

ՀԱՆՐԱՔՎԵՆ ՈՐՊԵՍ «ԲԱՐԻ ԿԱՄՔԻ» ԺԵՍՏ. ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՍՑԵՆԱՐՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ*

ԶԵԿՈՒՑՈՒՄ

«Հարավային Կովկասում անվտանգային միջավայրի վերագնահատում. տարածաշրջանային հակամարտություններ, կայունություն և կերպափոխում» թեմայով խորհրդաժողովում՝ նվիրված Ղարաբաղում կրակի դադարեցման վերաբերյալ Ադրբեջանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության եռակողմ Համաձայնագրի ստորագրման 15-ամյակին

Երևան 2009 թ. մայիսի 14

Մեր խորհրդաժողովը կայանում է այնպիսի պայմաններում, երբ շահագրգիռ դերակատարներն ինտենսիվ կերպով որոնում են կայուն համաշխարհային, առաջին հերթին՝ եվրոպական, համասեռ անվտանգային տարածության ձևավորման ուղիներ: Աշխարհի առաջատար մասնագետները որպես միջազգային անվտանգության նոր ճարտարապետության կարևոր հիմք դիտում են այն սկզբունքի պահպանումը, ըստ որի բացառվում է մի սուբյեկտի անվտանգության ապահովումն ի հաշիվ մեկ այլ սուբյեկտի:

Այսօրվա համաժողովը վերլուծաբանների ընկերակցության ուշադրությունը կենտրոնացնում է մեր պայթյունավտանգ տարածաշրջանի՝ Հարավային Կովկասի անվտանգային բնութագրերի գնահատման նկատմամբ նման մոտեցման կիրառման հնարավորության վրա[1]: Մեր կարծիքով՝ խոսքը պետք է առաջին հերթին վերաբերի անցյալ տարի Վրաստանում տեղի ունեցած պատերազմի ողբերգական հետևանքներից կշռադատված դասեր քաղելուն[2] և նախկին մետրոպոլիաների կողմից

* Սույն տեքստի ռուսերեն տարբերակը տեղադրված է «Ռեգնում» լրատվական գործակալության կայքում (http://www.regnum.ru/news/1164397.html) և տպագրվել է «Գոլոս Արմենիի» թերթի 2009 թ. ապրիլի 28-ի համարում, անգլերեն տարբերակը տեղադրված է Հարվարդի համալսարանի Սևծովյան անվտանգության ծրագրի կայքում (http://www.harvard-bssp.org/static/files/390/Lyon%20University%20Yerevan%20INSS%20Regional%20Security%20South%20Caucasus%20Conference.pdf):

պատերազմի վերսկսմամբ տարածաշրջանային հակամարտությունների լուծման փորձի կրկնության հնարավորությանը՝ այս անգամ արդեն Ղարաբաղում:

Ինչպես հիշում եք, վերջին չորս տարիներին ռազմավարական հետազոտությունների մեծ թվով կենտրոնների համար գլխավոր թեմաներից մեկն էր տարածաշրջանային հակամարտությունների ապասառեցման ռազմաքաղաքական ու ռազմական տեխնոլոգիաների մշակումը[3]: Ըստ էության, եթե իրերն անվանենք իրենց իսկական անուններով, հիմքեր ունենք փաստելու նման փորձերի ձախողումը Կովկասում, որտեղ հիշյալ տեխնոլոգիաները կիրառվեցին այնպիսի գաղութարարական պատերազմների ձևով, որոնք զինված ուժերի միջոցով իրենց տարածքային ամբողջականության վերականգնման նպատակով իրագործված օպերացիաների քողի տակ սանձազերծեցին նախկին մետրոպոլիաները՝ ճնշելով փաստացի ինքնորոշված ժողովուրդների կամքը:

Ադրբեջանը պատրաստվում է «ապասառեցման» այս մոդելը կիրառել Ղարաբաղյան հակամարտության նկատմամբ: Բաքվի իշխանությունները անսահմանափակորեն մեծացնում են իրենց ռազմական ներուժն ու սաստկացնում ռևանշիստական հայտարարությունները, «տարածքային ամբողջականության վերականգնման» համար պատերազմի են նախապատրաստվում այնպիսի դիվանագիտական ձեռնարկումների քողի ներքո, որոնք նպատակաուղղված են սպասվելիք տարածաշրջանային մասշտաբի նոր համակարգային, առաջին հերթին՝ մարդասիրական, աղետի արդարացմանը միջազգային հանրության կողմից:

Վերջերս կայացած Անվտանգության հարցերով մյունխենյան խորհրդաժողովը, Քսանյակի լոնդոնյան գագաթնաժողովը, Ստրասբուրգում տեղի ունեցած ՆԱՏՕ-ի Հոբելյանական գագաթնաժողովը զգալի չափով նորացրեցին մեր պատկերացումները համաշխարհային համակարգային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում ձևավորվող համընդհանուր անվտանգության եվրոպական ու տարածաշրջանային հատվածների ճարտարապետության ուրվագծերի մասին[4]: Հարավային Կովկասում տարածաշրջանային անվտանգության օպտիմալ ճարտարապետության որոնումը վերջին ժամանակներս լրացվեց Կովկասում կայունության ու համագործակցության գծով Թուրքիայի նախաձեռնությամբ[5], ԵՄ-ի «Արևելաեվրոպական գործընկերություն» նոր ծրագրի շրջանակներում ծավալվելիք տարածաշրջանային համագործակցության վերաբերյալ խորհրդատվություններով[6]: Տվյալ նախաձեռնությունների նպատակն է Հարավային Կովկասում կայունության

պահպանմանն ուղղված այն միջազգային աջակցության ներուժի մեծացումը, որը ցուցաբերում են ՄԱԿ-ը, ԵԱՀԿ-ն՝ իր Մինսկի խմբով, ՀԱՊԿ-ը՝ Արագ արձագանքման կոլեկտիվ ուժերի ստեղծմամբ[7], ԵՄ-ը՝ իր «Եվրոպական հարևանություն» ինտեգրային ծրագրով[8], ՆԱՏՕ-ն՝ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի միջոցով, Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության համաժողովները: Դրան են միտված նաև տարածաշրջանային այնպիսի դերակատարների քաղաքական-դիվանագիտական ջանքերը, ինչպիսիք են Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Թուրքիան և Իրանը:

Ղարաբաղում պատերազմի չվերսկսման հուսադրող գործոն է այն հանգամանքը, որ Մինսկի խմբի համանախագահները որպես Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ու լուծման հիմքային սկզբունքներ հռչակեցին ՄԱԿ-ի Կանոնադրության երեք հիմնադրույթները՝ «ուժի չկիրառում, տարածքային ամբողջականություն և ժողովուրդների ազատ ինքնորոշում»[9]: Հարավային Կովկասում խաղաղության պահպանման վրա, անշուշտ, դրական ազդեցություն է գործում Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների միջև անընդմեջ ընթացող երկխոսությունը, որն ուղեկցվում է Մինսկի խմբի համանախագահների խորհրդատվություններով: Ղարաբաղյան հակամարտության խաղաղ լուծման գործընթացի շարունակման համար կարևոր խթան պետք է համարել Հայաստանի, Ադրբեջանի ու Ռուսաստանի ղեկավարների կողմից Ղարաբաղյան կարգավորման վերաբերյալ մայնդորֆյան հռչակագրի ստորագրումը, որը տեղի ունեցավ 2008 թ. նոյեմբերին ՈՂ Նախագահի նախաձեռնությամբ[10]:

Հարավային Կովկասում պատերազմի չվերսկսմանը միտված երկխոսության ինտենսիվացմանը նպաստում է այն հանգամանքը, որ ՈՂ, ԱՄՆ-ի, ԵՄ-ի, ՆԱՏՕ-ի և ՀԱՊԿ-ի ռազմավարական շահերի տիրույթում համասեռ անվտանգային միջավայրի ձևավորման համար լուծումների որոնումներում, այլ պետությունների ղեկավարների հետ մեկտեղ, ներգրավվել են նաև մեր տարածաշրջանում առաջատար դերակատարների թվին պատկանող երկրների այնպիսի համեմատաբար նոր առաջնորդներ, ինչպիսիք են Ռուսաստանի Նախագահ Դմիտրի Մեդվեդևը, ԱՄՆ-ի Նախագահ Բարակ Օբաման, Ֆրանսիայի Նախագահ Նիկոլա Սարկոզին և Գերմանիայի Կանցլեր Անգելա Մերկելը: Մեր տարածաշրջանը, ինչպես և ամբողջ աշխարհը, մեծ նշանակություն է տալիս ԱՄՆ-ի նոր վարչակազմի ուրվագծվող երկխոսությանը տարածաշրջանի քաղաքական-անվտանգային ընկերակցության այնպիսի կարևոր անդամի հետ, ինչպիսին է նախագահական

ընտրություններին նախապատրաստվող Իրանը, ինչպես նաև Մերձավորարևելյան-Հարավասիական տարածաշրջանի մի շարք առանցքային դերակատար պետությունների հետ[11]:

Տարածաշրջանում քաղաքական-անվտանգային իրադրության հավասարակշռության պահպանմանն զգալի չափով նպաստում է նաև Հայաստանի Նախագահի նախաձեռնությունը՝ միտված ՀՀ-ի և ԹՀ-ի միջև առանց նախապայմանների միջպետական հարաբերությունների հաստատման հնարավորության վերաբերյալ հայ-թուրքական երկխոսության մեկնարկմանը: Տվյալ փուլում Կովկասում խաղաղության պահպանման գործում պրագմատիկ ներդրում կարող է դառնալ Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատմանն ուղղված ջանքերի կենտրոնացումը[12]:

Նման պայմաններում մեր տարածաշրջանում կայունության և անվտանգության երաշխավորվածությունը մի պրոբլեմ է, որը պահանջում է մեր գիտաժողովի կարգի միջազգային համաժողովներում մասնագիտական իմաստավորում և պատասխանատու որոշումներ ընդունող ազգային ու միջազգային կենտրոնների կողմից քաղաքական-անվտանգային առաջարկությունների ձևավորում:

Հարավարևելյան Կովկասի անվտանգությունը առաջին հերթին պայմանավորվում է այն գաղութարարական պատերազմի չվերսկսման երաշխիքներով, որը նախկին մետրոպոլիան հանձին Ադրբեջանի կարող է սանձազերծել միջազգային հանրության կողմից չճանաչված, սակայն փաստացի օրինապատշաճ ձևով ինքնորոշված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ[13], որն ստեղծվել է Ժնևյան համաձայնագրերի 1-ին լրացուցիչ արձանագրության համաձայն որպես միջազգային ու ազգային-ազատագրական հակամարտություն նույնականացվող Ղարաբաղյան հակամարտության հետևանքով[14]:

Ղարաբաղում պատերազմի վերսկսման սպառնալիքի գնահատման համար հատուկ ուշադրության են արժանի հետևյալ գործոնները, որոնք ազդում են ուժի միջազգային կենտրոնների կողմից Հարավային Կովկասում կայունության ու անվտանգության վերաբերյալ ընդունվող որոշումների անաչառության վրա.

– միջազգային հանրությունում ադրբեջանական իշխանությունների կողմից Ղարաբաղյան հակամարտության նենգափոխված նույնականացման քաղաքական ու քարոզչական արգասիքների առաջմղումը. նրանք աղա-

վաղում են այդ հակամարտության ազգային-ազատագրական բնույթը, իրավաքաղաքական ու պատմական հիմքերը, ժխտում ԼՂՀ ստեղծման օրինականությունը, ինչպես նաև լռության են մատնում այն փաստը, որ Լեռնային Ղարաբաղի ադրբեջանցիները 1991 թ. դեկտեմբերին Բաքվի ցուցումով բոյկոտեցին ադրբեջանցի ընտրողներին հասցեագրված հայ համայնքի հրավերը՝ մասնակցելու ԱդրԽՍՀ հայաբնակ Շահումյանի շրջանի ու մինչ այդ Ադրբեջանի իշխանությունների կողմից ԽՍՀՄ օրենսդրության խախտմամբ կազմալուծված ԼՂԻՄ-ի տարածքի կարգավիճակի հարցով հանրաքվեին[15],

–իրավասու միջազգային կազմակերպությունների այն պասիվությունը, որով նրանք, չնայած Վրաստանում տեղի ունեցած պատերազմի ողբերգական հետևանքներին, վերաբերվում են Ղարաբաղում նոր պատերազմի սանձազերծման նպատակով Ադրբեջանի ինտենսիվ ռազմականացմանը՝ ԵՍԶՈՒ պայմանագրով նախատեսված թույլատրելի առաստաղների բազմակի գերազանցմամբ[16],

–ՀՀ տարածքի նկատմամբ Ադրբեջանի հրապարակային պետական գավթողական նկրտումները, որոնց ուղեկցում են Կենտրոնական Ասիայից ադրբեջանցիների թյուրք նախնիների եկվորության փաստի նենգափոխումը, իրենց բնօրրանում հայերի՝ որպես եկվորների հռչակումն ու բազում հազարամյակների ընթացքում ստեղծված հայկական մշակութային ժառանգության վերագրումը ադրբեջանցիների նախնիներին[17],

–այն հանգամանքը, որ Ադրբեջանի իշխանություններն առաջ են քաշում ադրբեջանական ժողովրդի նկատմամբ հայերի ու ռուսների կողմից իրագործված, սակայն Կովկասի պատմության մեջ իրականում երբեք տեղի չունեցած ցեղասպանության կեղծ գիտական «հիմնավորումը», ինչն ուղեկցվում է Ադրբեջանի Նախագահի հրամանագրով այդ կեղծիքի ամրագրմամբ և «Ցեղասպանության օրվա»՝ որպես պետական Համազգային սգո օրվա հռչակմամբ,

–Բաքվի իշխանությունների կողմից ադրբեջանական բնակչության շրջանում ի դեմս հայ ժողովրդի թշնամու կերպարի սերմանումը, ինչն ուղեկցվում է Խոջալու ավանի ադրբեջանական ու թուրք-մեսխեթական բնակչության նկատմամբ հորինված ցեղասպանական գործողության ակտիվ շահարկմամբ, թեև Ադրբեջանի այդ ժամանակվա Նախագահ Ա. Մութալիբովի հավաստմամբ՝ իրականում այդ ցեղասպանությունը իշխանությունը գավթելու նպատակով իրականացրել էին ադրբեջանական ընդդիմության զինված ջոկատները[18],

–Բաքվի ղեկավարության իրականացրած այն ցինիկ ձեռնածությունները, որոնց Ղարաբաղյան հակամարտությունը հօգուտ Ադրբեջանի լուծելու համար ընթացող աշխարհաքաղաքական առուծախում ենթարկվում է միջազգային հանրության քաղաքական ռեսուրսը՝ այլընտրանքային փոխադրաուղիներով Եվրոպան ածխաջրածնային վառելիքով ապահովելու վերաբերյալ նախագծերի կիրառմամբ,

–Ադրբեջանում Ալիևների ընտանիքի ժառանգական վարչակարգի հակաժողովրդական էության խորացումը. ադրբեջանական պետության՝ որպես հակաժողովրդական «նավթային սուլթանության» իրավաքաղաքական համակարգի կայացումը, մի համակարգ, որը ամենևին չի համապատասխանում Լեռնային Ղարաբաղում հաստատված ժողովրդավարության մակարդակին:

Հարավային Կովկասում պատերազմի վերսկսման հնարավորության գնահատման արդյունքներն ամփոփելով՝ հիմք ունենք պնդելու, որ Ադրբեջանի ղեկավարությունը, օգտագործելով սուլթանական տիպի նավթային ժառանգական դիկտատուրաներին բնորոշ կեղծ ժողովրդավարական տերմինաբանությունը, ԼՂՀ-ի դեմ նոր ռազմական ագրեսիայի նպատակամղված նախապատրաստումը քողարկում է Հայաստանի Նախագահի հետ երկխոսությանն իր մասնակցությամբ: Այսպիսով՝ առկա է Հարավային Կովկասում կայունության և անվտանգության ռազմական խաթարման ռեալ սպառնալիք, ինչը միջազգային հանրության հատուկ ուշադրության կարիք ունի:

Ալիևի վարչակարգը, ձևականորեն չհրաժարվելով Մինսկի խմբի համանախագահության շրջանակներում կատարվող խորհրդատվություններից, իրականում շարունակում է իր ժողովրդին ու միջազգային հանրությանը պարտադրել Ղարաբաղյան հակամարտության ազգային-ազատագրական բնույթի, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծման օրինականության իրավաբանական ու քաղաքական փաստի խեղաթյուրված մեկնաբանությունը[19]: Ադրբեջանը շահարկում է այն հանգամանքը, որ Հայաստանը չօգտագործեց ստեղծված հնարավորությունը և չհասավ այն բանին, որ ՄԱԿ-ն ընդունի ԼՂՀ օրինական ստեղծման բացառիկության փաստը՝ ի տարբերություն նախկին խորհրդային տարածքում առկա մյուս բոլոր տարածաշրջանային հակամարտություններից («ուշացած» Աբխազիայի, Հարավային Օսեթիայի և Մերձդնեստրյան հակամարտություններ)[20]: Ալիևի վարչակարգը փորձում է Ղարաբաղյան հակամարտության նենգափոխված նույնականության հիման վրա ժխտել ԼՂՀ ստեղծման օրինականության, ԼՂՀ-ի դեմ Ադրբեջանի ձեռնարկած

ագրեսիայի փաստերը և ԼՂՀ ինքնապաշտպանության օրինապատշաճությունը: Շընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կազմավորման օրինականությունը՝ Բաքուն նաև ժխտում է այն փաստը, որ համաձայն Լեռնային Ղարաբաղում կայացած օրինապատշաճ հանրաքվեի՝ ԱդրՀ-ն 1991 թ. դեկտեմբերից իր կազմում այլևս չի ներառում ԼՂՀ տարածքը[21]:

Ադրբեջանի իշխանություններն օգտագործում են իրենց ածխաջրածնային գրավչության ռեսուրսները այն նպատակով, որ միջազգային հանրությանը որպես հակամարտության լուծման հիմք պարտադրեն միջազգային իրավունքի նորմերին ու միջազգային պրակտիկայի ստանդարտներին համապատասխանող և ուղղակի ժողովրդավարության միջոցներով իրականացված Լեռնային Ղարաբաղի ազատ ինքնորոշման հարացույցի փոխարինումը Ադրբեջանի ու Հայաստանի միջև տարածքային վեճի հաղթահարման հարացույցով: Բաքուն հրամայաբար պահանջում է Լեռնային Ղարաբաղի սահմանափակ, ներքին ինքնորոշում միայն որպես Ադրբեջանի Հանրապետության սուբյեկտի[22]: Անտեսվում է միջազգային պրակտիկան՝ կապված էրիտրեայի, Արևելյան Թիմորի ու Կոսովոյի խաղաղ ինքնորոշումների հետ, երբ դրանք իրագործվեցին ոչ թե մետրոպոլիա հանդիսացող Եթովպիայի, Ինդոնեզիայի ու Հարավսլավիայի ամբողջ բնակչության, այլ միայն ինքնորոշվող էրիտրեացիների, հարավթիմորցիների ու կոսովցի ալբանացիների շրջանում անցկացված հանրաքվեի միջոցով:

Այդ պատճառով Ղարաբաղյան հիմնահարցի փոխզիջումային լուծման օրինական ուղիների ու միջոցների որոնումը, կատարված լինելով ՄԱԿ-ի Կանոնադրության մեջ արտացոլված և ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից որդեգրված վերոնշյալ միջազգային իրավական երեք հիմնարար սկզբունքների պահպանման պայմանով, ձեռք է բերում ռազմավարական տրամաչափ և կարող է դառնալ Հարավային Կովկասում կայունության ու անվտանգության ապահովման հիմք: Դրա համար կպահանջվի անցկացնել հանրաքվե ոչ թե Ադրբեջանի Սահմանադրության մեջ սուլթանական տիպի իշխանության հակաժողովրդավարական էության ամրապնդմանը միտված հերթական տարրերի ներմուծման հարցով[23], այլ ԱդրՀ Հիմնական օրենքի 11-րդ հոդվածը ՄԱԿ-ի Կանոնադրությամբ ու Մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ միջազգային համաձայնագրերով հռչակված ազատ ինքնորոշման սկզբունքներին լիովին համապատասխանեցնելու նպատակով[24]:

Տվյալ պարագայում հակամարտության լուծումը, մեր համոզմամբ, կարող է ձեռք բերվել Ղարաբաղյան հակամարտության կարգավորման մոտակա փուլերում այն գործոնների բացառմամբ, որոնք սպառնում են Կովկասում խաղաղության պահպանմանը: Ադրբեջանի կողմից պատերազմի վերսկսման սպառնալիքի էությունը պարզելու համար անհրաժեշտ է ավելի հանգամանորեն ուսումնասիրել որոշ միտումներ, որոնք ուրվագծվում են վերջին վեց տարիների ընթացքում Մինսկի խմբի համանախագահների հովանու ներքո իրականացվող խորհրդատվությունների ժամանակ: Այս տարիներին Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ խորհրդատվությունների օրակարգում ներառվեց այն փոխզիջման բանաձևը, որով արևմտյան փորձագետների խորհրդով հանդես եկավ հայկական կողմը, այն է՝ չնայած 1991 թ. դեկտեմբերի 10-ին Լեռնային Ղարաբաղում կայացած հանրաքվեի օրինապատշաճությանը, նախկին ԼՂԻՄ-ի բնակչության շրջանում նոր հանրաքվե անցկացնելու հարցում շահագրգիռ կողմերի համաձայնությունը:

Որպես բարի կամքի դրսևորում ակնկալվող նոր հանրաքվեի անցկացման կողմնակիցների դիրքորոշման էությունն այն է, որ այդպիսով արտացոլվում է նրանց ցանկությունը՝ Ադրբեջանի ղեկավարությանը տալ իր ընտրողների առջև «պարզ դեմքով» հանդես գալու հնարավորություն: Այդ մտահղացումը պետք է մեղմեր պետական հակահայկական քարոզչության ռևանշիզմով թունավորված ադրբեջանցիների դժգոհությունը միջազգային իրավունքի և միջազգային պրակտիկայի նորմերին ու ընթացակարգային պահանջներին լիովին համապատասխանող հանրաքվե անցկացնելու դեպքում Լեռնային Ղարաբաղի անկախ կարգավիճակի սպասվելիք հաստատումից:

Սակայն երկրորդ հանրաքվեի միջոցով ադրբեջանական իշխանությունների «դեմքը պարզեցնելու» վերաբերյալ Արևմուտքի առաջարկությունը Բաքվի կողմից ցինիկորեն վերածվեց մի խարդախ հնարի, որը միտված էր 1991 թ. հանրաքվեի ու անկախ ղարաբաղյան պետականության օրինականության նկատմամբ վստահության քայքայմանը: Նախագահ Ի. Ալիևը փորձում է Լեռնային Ղարաբաղի բնակչության ազատ ինքնորոշման իրավունքն ու նրա օրինապատշաճ կամաարտահայտման փաստը նենգաբար կեղծել Լեռնային Ղարաբաղին անկախություն տալու անհնարինության վերաբերյալ իր հայտարարություններով[25]: Դեռ ավելին. Նախագահ Ի. Ալիևը պարբերաբար հանդես է գալիս Ղարաբաղի համար պատերազմը ինքնապաշտպանության պատրվակով վերսկսելու՝ փաստորեն օրինական ԼՂՀ-ի դեմ երկրորդ զինված ագրեսիան ձեռնարկելու սպառնալիքներով[26]:

Միևնույն ժամանակ, առաջին փուլում փախստականներին ու ժամանակավոր տեղահանվածներին Ղարաբաղ վերադարձնելու և ԼՂՀ անվտանգության գոտուց տարածքներ հանձնելու վերաբերյալ ներկայումս քննարկվող առաջարկությունները պարունակում են Ղարաբաղում ազգամիջյան լարվածության վերականգնման ու կայունության խախտման սպառնալիք, որը կհանգեցնի նոր գաղութարարական պատերազմի հրահրման: Նման պայմաններում ոչ միայն պրոբլեմային հարց է դառնում երկրորդ հանրաքվեի անցկացումը քննարկվող 10-15 տարվա հեռանկարում, այլև հարցականի տակ կարող է դրվել ընդհանրապես նման հանրաքվեի անցկացման հնարավորությունը:

Եվ այսպես. Ղարաբաղում Ադրբեջանի կողմից պատերազմի վերսկսման սպառնալիքը միանգամայն ռեալ է: Տեսանելի ապագայում ռեալ են դրա սանձազերծման հետևյալ երկու սցենարները.

–առաջին սցենարը միջազգային հանրության առջև իրեն արդարացնելու տեսակետից Բաքվի համար ավելի նախընտրելի է. այն հիմնվում է ադրբեջանցի փախստականների ու ժամանակավոր տեղահանվածների՝ Ղարաբաղ վերադարձի դեպքում տեղի հայության հետ ընդհարումներից նրանց Ադրբեջանի զինված ուժերով պաշտպանության պատրվակի մոգոնման վրա: Խոսքը վերաբերում է Ադրբեջանի պլաններին՝ նախքան երկրորդ հանրաքվեի անցկացումը փախստականների ու տեղահանվածների արագ վերադարձն օգտագործելու Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի չորոշվածությամբ պայմանավորված հին հայ-ադրբեջանական միջհամայնքային թշնամանքը հրահրելու նպատակով.

–երկրորդ սցենարը Բաքվի համար պակաս ցանկալի է. այն կապված է Ադրբեջանի կողմից մտացածին ինքնապաշտպանության իրավունքը միջազգային հանրությանը հիմնավոր կերպով ներկայացնելու բարդության հետ, քանի որ հայկական կողմը կատարում է 1994 թ. ՀՀ-ի, ԱդրՀ-ի և ԼՂՀ-ի միջև կնքված զինադադարի համաձայնագիրը և մասնակցում է ԵԱՀԿ Մինսկի խմբի հովանու ներքո Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման վերաբերյալ խորհրդատվություններին[27]:

Ամփոփելով ելույթը՝ փորձենք տալ այն հարցի պատասխանը, թե ինչպես Հարավային Կովկասում պահպանել կայունությունն ու ապահովել անվտանգությունը, եթե Ադրբեջանի կողմից նոր գաղութարարական ագրեսիայի անթաքույց նախապատրաստումը կրկնօրինակում է անցած տարի Հարավային Օսեթիայում տեղի ունեցած պատերազմի սանձազերծման սցենարը:

Առկա միտումների պայմաններում տարածաշրջանային անվտանգության շահերի տեսանկյունից ավելի պրագմատիկ է թվում այն առաջարկությունը, ըստ որի՝ երկրորդ հանրաքվեն անցկացվի ոչ թե փախստականների ու տարածքների պայթյունավտանգ վերադարձից հետո, այլ սկզբնական փուլում՝ Ղարաբաղի հայ ու ադրբեջանական համայնքների ներկայիս բնակության վայրերում՝ ՄԱԿ-ի ու ԵԱՀԿ վերահսկողությամբ և ուժային երաշխիքով: Ընդսմին նպատակահարմար է հաշվի առնել Կոսովոյում ՄԱԿ-ի ու ԵԱՀԿ ներկայացուցչությունների գործունեության փորձը՝ Ղարաբաղյան հակամարտության յուրահատկությունների հաշվառմամբ[28]: Ղարաբաղյան հակամարտության գլխավոր առանձնահատկություններն են այն փաստերը, որ 18 տարի անընդմեջ գործում են ժողովրդավարական եղանակով ընտրվող ԼՂՀ իշխանությունները, որոնք ի շահ ազգային ու միջազգային անվտանգության՝ արդյունավետ կերպով կատարում են ԼՂՀ Սահմանադրությամբ և օրենսդրությամբ նորմավորված պարտավորությունները, ինչպես նաև հակամարտության գոտում միջազգային խաղաղարարական ուժեր չլինելու պայմաններում կրակի դադարեցման ռեժիմի պահպանումը: Ուստի քաղաքական-անվտանգային հրամայական է ղարաբաղյան կողմին վերադարձնել հակամարտության լիարժեք լուծման վերաբերյալ բանակցային գործընթաց:

Խաղաղ միջոցներով զինված հակամարտությունների լուծման նկատմամբ սույն մոտեցումը, որը համապատասխանում է ուժի չկիրառման, ազատ ինքնորոշման իրավունքի ու տարածքային ամբողջականության միջազգային իրավական սկզբունքներին, կարող է դառնալ նաև Հարավային Օսեթիայում ու Աբխազիայում նոր պատերազմի այլընտրանք: Իմ համոզմամբ՝ մեր տարածաշրջանում զինված հակամարտությունների լուծման նկատմամբ առաջարկվող մոտեցման հետագա մասնագիտական մշակումը կօգնի համապատասխան ազգային ու միջազգային կենտրոններին տրամադրվող խորհրդատվություններին՝ նրանց կողմից հօգուտ Հարավային Կովկասում նոր պատերազմների բացառման ու տարածաշրջանային անվտանգության գործուն ճարտարապետության ձևավորման կայացվող արդյունավետ որոշումների ընդունման ժամանակ:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

[1] Տես *Dr. Hayk Kotanjian.* Guidelines on Developing Armenian National Security Strategy in the Context of Regional Security Architecture of the South Caucasus. Monograph, SNSEE-NSOOC, NDU, USA. Washington–Yerevan, 2004–2005:

[2] Տես *Dr. Hayk Kotanjian.* Azerbaijan: anti-Democratism and Colonialism. A Glance at the Perspective of Regional Security after Kosovo. «REGNUM» News Agency, 12.02.2008 (տեքստը տարածվել է Երևանում ԱՄՆ-ի դեսպանատան Հասարակության հետ կապերի բաժնի Տեղեկատվական ռեսուրսների կենտրոնի կողմից):

[3] Տես *Dr. Ceslav Ciobanu* (VSU Eminent Scholar, Associate Professor of Economics, Ambassador (ret.), Senior Research Scholar, «Center for Security and Science»). Political Economy of «Frozen Conflicts» in ex-Soviet States: Challenges and Prospects for the U.S. and Russia. «Virginia State University International Conference», April, 2007 (pdc.ceu.hu/archive/00003276/01/political_economy.pdf); նաև՝ *Dr. Ceslav Ciobanu.* Frozen and Forgotten Conflicts in the post-Soviet States: Genesis, Political Economy and Prospects for Solution. «United States Institute of Peace», «Virginia State University». Richmond, 2008 (http://www.ipp.md/files/Publicatii/2008/USIP_manuscript_MAR 13_08__Moldova_.doc); նաև՝ *Андрей Сафонов.* Как разморозить конфликты? «Новая Газета», 04.06.2008 (http://novaiagazeta.org.ru/ index.php?newsid=259); նաև՝ «ЕС будет активно участвовать в разрешении «замороженных конфликтов» на Южном Кавказе». ИА «REGNUM», 04.05.2006 (http://www.regnum.ru/news/634636.html):

[4] Տես «Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը Մյունխենի Անվտանգության քաղաքականության հարցերով համաժողովում»: ՀՀ Նախագահի պաշտոնական կայք, 07.02.2009 (http://www.president.am/events/news/arm/?search=Մյունխեն&id=395):

[5] Տես *Դենիզ Չաքար,* Թուրքիայի դերը Կովկասում. Կովկասում կայունության և համագործակցության պլատֆորմ: «Աշխատանքային տետրեր», 2008, հմ 3–4:

[6] Տես «External Relations. Eastern Partnership». The Official site of the European Commission (http://ec.europa.eu/external_relations/eastern/index_en.htm):

[7] Տես «В Кремле состоялась внеочередная сессия Совета коллективной безопасности Организации Договора о коллективной безопасности (ОДКБ)». Официальное интернет-представительство ОДКБ (http://www.dkb.gov.ru/start/index.htm); նաև՝ «ՀԱՊԿ Կոլեկտիվ անվտանգության խորհրդի և ԵՎՐԱԶԵՍ Միջպետական խորհրդի արտահերթ նիստերը Մոսկվայում»: ՀՀ Նախագահի պաշտոնական կայք, 04.02.2009 (http://www.president.am/events/visits/arm/?visits=1&id=52), նաև՝ «Внеочередные заседания Совета коллективной безопасности ОДКБ и Межгосударственного совета ЕврАзЭС в Москве». Официальный сайт Президента РА, 04.02.2009 (http://www.president.am/events/visits/rus/?visits=1&id=52); նաև՝ «Extraordinary sessions of the Council of the CSTO and EurAsEC in Moscow». The Official site of the President of the RA, 04.02.2009 (http://www.president.am/events/visits/eng/?visits=1&id=52); նաև՝ *Владимир Кузьмин, Михаил Фалалеев, Юрий Гаврилов.* Сумма сил. Вчера ОДКБ создала коллективные силы оперативного реагирования. «Российская газета», Центральный выпуск N 4842 от 05.02.2009 г. (http://www.rg.ru/2009/02/05/armiya.html):

[8] Տես «EU in the World. European Neighbourhood Policy». The Official site of the European Commission (http://ec.europa.eu/world/enp/index_en.htm#):

[9] «Сопредседатели Минской группы ОБСЕ представили главе МИД Армении результаты проведенных в Баку и Степанакерте встреч». Агентство международной информации «Новости-Армения», 02.03.2009 (http://www.newsarmenia.ru/arm1/20090302/42034520.html); նաև՝ «Прорыв в урегулировании Карабахского конфликта возможен в мае-июне–Брайза». Агентство международной информации «Новости-Азербайджан», 16.04.2009 (http://www.newsazerbaijan.ru/karabakh/20090416/42820844.html); նաև՝ «Минская группа ОБСЕ осудила нарушение режима прекращения огня в Карабахе». ИА «REGNUM», 05.03.2009 (http://www.regnum.ru/news/1133901.html); նաև՝ «Военного решения Нагорно-карабахского конфликта не существует: заявление Сопредседателей МГ ОБСЕ». ИА «REGNUM», 19.02.2009 (http://www.regnum.ru/news/1127568.html):

[10] Տես «Декларация Азербайджанской Республики, Республики Армения и Российской Федерации». 02.11.2008 г., Московская область, замок Майендорф. Официальный сайт Президента России (http://www.kremlin.ru/text/docs/2008/11/208670.shtml):

[11] Տես «Obama offers Iran «new beginning»». «BBC News», 20.03.2009 (http://news.bbc.co.uk/2/hi/americas/7954211.stm); նաև՝ «Obama Offers Direct Nuclear Talks With Iran». «SKY News», Website of the Year, 09.04.2009 (http://news.sky.com/skynews/Home/World-News/Barack-Obama-Offers-Direct-Talks-With-Iran-Over-Nuclear-Programme-And-Issues-Warning-To-Israel/Article/200904215258771?f=rss); նաև՝ «Совместное заявление Президента Российской Федерации Д. А. Медведева и Президента Соединенных Штатов Америки Б. Обамы относительно переговоров по дальнейшим сокращениям стратегических наступательных вооружений». Официальный сайт Посольства Соединенных Штатов Америки, Москва, Россия, 01.04.2009 (http://russian.moscow.usembassy.gov/st_040109b.html); նաև՝ «Obama In Turkey: Meets With Leaders, Addresses Parliament». «The Huffington Post», 06.04.2009 (http://www.huffingtonpost.com/2009/04/06/obama-meets-with-abdullah_n_183399.html); նաև՝ «Obama calls for talks with Iran over Iraq». «Breitbart.com», 08.04.2009 (http://www.breitbart.com/article.php?id=080408220807.ud9xv11e&show_article=1); նաև՝ *Michael R. Gordon and Jeff Zeleny.* Obama Envisions New Iran Approach. «The New York Times», 02.11.2007 (http://www.nytimes.com/2007/11/02/us/politics/02obama.html?_r=1):

[12] Տես «Նախագահ Սերժ Սարգսյանի հրավերով այսօր Հայաստան է ժամանել Թուրքիայի Նախագահ Աբդուլլահ Գյուլը»: ՀՀ Նախագահի պաշտոնական կայք, 06.09.2008 (http://www.president.am/events/news/arm/?search=Գյուլ&pn=1&id=172), *նաև՝* «Նախագահ Սերժ Սարգսյանի հարցազրույցը թուրքական «Ռադիկալ» օրաթերթին»: ՀՀ Նախագահի պաշտոնական կայք, 28.08.2008 (http://www.president.am/events/news/arm/?search=Գյուլ&pn=1&id=160); նաև՝ «Gül in landmark visit to Armenia». «BBC News», 06.09.2008 (http://news.bbc.co.uk/2/hi/europe/7602066.stm):

[13] Տես «Декларация о предоставлении независимости колониальным странам и народам». ООН, Генеральная Ассамблея. «Официальные отчеты. XV сессия. Резолюции». Нью-Йорк, 1961, сс. 74–75:

[14] Տես «Дополнительный протокол к Женевским конвенциям от 12 августа 1949 г., касающийся защиты жертв международных вооруженных конфликтов» (Протокол I). Часть I, статья 1, п. 4. «Права человека». «Сборник международных договоров», т. I (часть вторая), «Универсальные договоры». ООН. Нью-Йорк–Женева, 1994, с. 1028:

[15] Տես «Закон АзР «Об упразднении НКАО АзР», 26 ноября 1991 года». «Ведомости ВС АзР», 1991, № 24; նաև՝ *С. Золян.* СБСЕ в Карабахском Конфликте (1992 год), «Нагорный Карабах: Проблема и Конфликт». Глава 6, «ArmenianHouse. org» (http://www.armenianhouse.org/zolyan/nf-ru/karabakh/6.html). «Հետագայում Լեռնային Ղարաբաղի և հարևան Շահումյանի շրջանի հայ համայնքը հռչակեց անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծումը (ԼՂՀ անկախությունը հռչակվեց 06.01.1992 թ.՝ հանրաքվեից հետո, արդեն նորընտիր Գերագույն խորհրդի կողմից, միևնույն 02.09.1991-ին՝ Ադրբեջանի կողմից 1918–1920 թթ. պետական անկախության վերահաստատման հռչակումից հետո, ԼՂՀ-ն ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու մասին ԽՍՀՄ օրենքին համապատասխան հայտարարվեց դաշնային տարածք՝ հանրաքվեի միջոցով կարգավիճակի հետագա ճշգրտմամբ.– *Ս. Զ.*): Դա Ադրբեջանում առաջ բերեց բուռն արձագանք՝ ներառյալ Ազգային ասամբլեայի կողմից 1991 թ. նոյեմբերի 26-ի բանաձևի ընդունումը, ըստ որի՝ մարզի ինքնավարությունը վերացվում էր, և այն դրվում էր Ադրբեջանի ամբիջական ղեկավարման տակ: Սակայն տարածաշրջանի ներսում անկախության հռչակմանը հետևեցին նոր խորհրդարանի ընտրություններ ու հանրաքվե, որը ճնշող մեծամասնությամբ վավերացրեց Անկախության հռչակագիրը, թեև ադրբեջանական բնակչությունը բոյկոտեց այդ իրադարձությունը»:

[16] Տես *Hayk Kotanjian.* Azerbaijan: anti-Democratism and Colonialism in the Perspective of Regional Security. «REGNUM» (http://www.regnum.ru/english/953962.html) (Report at the conference called «Caucasus and Middle East countries as potential partners in the process of forming regional security system». Yerevan, 07.02.2008):

[17] Տես «Азербайджан–Армения–Карабах. Академическое сообщество Армении обратилось к Минской группе ОБСЕ», 27 декабря 2005 г. (http://www.rol.ru/news/misc/newssng/05/12/27_061.htm); նաև՝ «В Азербайджане продолжается фальсификация истории региона». Заявление академического сообщества Армении, ИА «REGNUM», 30.12.2005 (http://www.regnum.ru/news/568526.html):

[18] Տես «Я гуманист в душе». Интервью Президента АзР А. Муталибова чешской журналистке Дане Мазаловой. «Независимая газета», 02.04.1992:

[19] Տես *Ильхам Алиев.* Мои университеты. «Azerbaijan.az», 24 декабря 2007 (http://azerbaijan.news.az/index.php?Lng=aze&Pid=19934) (հատվածներ Իլհամ Ալիևի ուղիղ խոսքից. «Արդի աշխարհում իշխանության անցումը ընտանիքի մի անդամից մյուսին ինքնին չի համարվում հակաժողովրդավարական փաստ», «Ավելին. նշեմ, որ Հեյդար Ալիևի իսկական ժառանգորդն է կրտսեր որդիս՝ մեր ընտանիքի ամենակրտսեր անդամ Հեյդար Ալիևը»):

[20] Տես «Закон СССР «О порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР» N 1410-1 от 3 апреля 1990 г.». «Ведомости Съезда народных депутатов СССР, Верховного Совета СССР», 1990, № 15; «Закон АзР «Об упразднении НКАО АзР», 26 ноября 1991 года». «Ведомости ВС АзР», 1991, № 24; «Акт о результатах референдума о независимости Нагорно-Карабахской Республики», 10 декабря 1991 г., Степанакерт, Нагорно-Карабахская Республика, Министерство Иностранных Дел (http://www.nkr.am/rus/facts/referendum.html):

[21] Տես «Акт о результатах референдума о независимости Нагорно-Карабахской Республики», «Декларация о государственной независимости Нагорно-Карабахской Республики». Е., 1995, сс. 85–89:

[22] Տես «...Самоопределение может быть реализовано только в рамках территориальной целостности Азербайджана». «Еще раз о принципиальных позициях Азербайджана по вопросу урегулирования армяно-азербайджанского конфликта». «Day.Az», 14.05.2008 (http://www.day.az/print/news/politics/118039.html); նաև՝ «Азербайджан создаст в Карабахе условия для двух общин». «BBC, Russian.com», 23.03.2009 (http://news.bbc.co.uk/hi/russian/international/newsid_7958000/7958793.stm):

[23] Տես «Council of Europe. Venice Commission». The Official site of the Venice Commission (http://www.venice.coe.int/docs/2005/CDL-AD(2005)029-e.asp); նաև՝ «Азербайджан меняет Конституцию». ИА «REGNUM», 18.03.2009 (http://www.regnum.ru/news/1138356.html); նաև՝ «На пленарной сессии Венецианской комиссии СЕ обсудят отзыв по поправкам в Конституцию Азербайджана». Агентство международной информации «Новости-Азербайджан», 12.03.2009 (http://www.newsazerbaijan.ru/international/20090312/42771087.html):

[24] Տես «Конституция АзР». Статья 11–«государственные границы могут изменяться только на основе волеизъявления народа Азербайджана, выраженного путем референдума, проводимого по решению Милли Меджлиса Аз.Р (среди всего населения Азербайджана)»; նաև՝ «СБСЕ. Заключительный Акт». Хельсинки, 1 августа 1975 г. Принцип VIII. ОБСЕ (www.osce.org/documents/msc/1975/08/4044_ru.pdf); նաև՝ «Международный пакт о гражданских и политических правах. Резолюция ГА ООН 2200 А (XXI) от 16 декабря 1966 г.». «Центр ООН по правам человека». «Права человека: Сборник международных договоров»; «Международный пакт об экономических, социальных и культурных правах. Резолюция ГА ООН 2200 А (XXI) от 16 декабря 1966 г.». «Центр ООН по правам человека». «Права человека: Сборник международных договоров»:

[25] Տես *Ильхам Алиев:* «Нагорному Карабаху никогда не будет предоставлена независимость». Заявления президента Ильхама Алиева на заседании Совета Безопасности. «Day.Az», 07.04.2009 (http://www.day.az/news/politics/152509.html); նաև՝ «Карабах никогда не будет независимым: *Ильхам Алиев*». ИА «REGNUM», 08.04.2009 (http://www.regnum.ru/news/fd-abroad/karabax/1148033.html); նաև՝ *Ильхам Алиев:* «Мировое сообщество осознает неправоту Армении, но закрывает на это глаза». «Day.Az», 18.04.2008 (http://www.day.az/news/politics/115065.html); նաև՝ *Ильхам Алиев:* «Еще раз хочу сказать, что время вовсе не работает на Армению, а наоборот. Никакая зарубежная помощь, поверьте, в этот раз им не поможет». «Day.Az», 13.09.2007 (http://www.day.az/news/politics/91887.html):

[26] Տես «Алиев допускает возобновление войны в Карабахе». ИА «Lenta.ru», 10.07.2006 (http://lenta.ru/news/2006/07/10/aliev/); նաև՝ ««Вероятность возобновления войны возрастает»: Нагорный Карабах за неделю». ИА «REGNUM», 13.07.2007 (http://www.regnum.ru/news/856254.html); նաև՝ «Азербайджан готов силой вернуть Нагорный Карабах». ИА «Lenta.ru», 24.01.2006 (http://lenta.ru/news/2006/01/24/war/):

[27] Տես «Բիշքեկյան արձանագրություն»: Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Արտաքին գործերի նախարարություն (http://www.nkr.am/hy/document/43/), նաև՝ «Бишкекский протокол». Личный сайт Владимира Казимирова (http://vn.kazimirov.ru/doc9.htm):

[28] Տես «The Official site of the United Nations Mission in Kosovo (UNMIK)» (http://www.unmikonline.org/); նաև՝ «OSCE Mission in Kosovo». The Official site of the OSCE (http://www.osce.org/kosovo/):

ՆԱԽԱԳԱՀ ԱԼԻԵՎԸ ԿՈՂՄ Է Ե՛Վ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆԸ, Ե՛Վ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ, ԱՄՆ-Ի, ՖՐԱՆՍԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՀԱԿԱՌԱԿ*

–Ինչպե՞ս եք գնահատում Նախագահ Ալիևի հայտարարությունը Չատամ Հաուզում՝ Ղարաբաղը վերադարձնելու համար պատերազմ սկսելու Ադրբեջանի պատրաստության առիթով:

–Դա Ադրբեջանում գործնականորեն բոլոր արձանագրային միջոցառումների ժամանակ հնչեցվող բազմամյա ռազմաշունչ ճարտասանության հերթական տարօրինակությունն է: Նախկինում Ադրբեջանի Նախագահը նոր պատերազմի կոչերով ելույթ էր ունենում իր տանը՝ հիմնականում ներքին լսարանի համար: Ղարաբաղում պատերազմը վերսկսելու Ադրբեջանի պատրաստության մասին Իլհամ Ալիևի հայտարարությունը այժմ արդեն ցուցադրաբար ուղղված է միջազգային հանրությանը: Ընդսմին դա արվում է Մոսկվայում Հայաստանի Նախագահի հետ նրա հանդիպման նախօրյակին, որը Ռուսաստանի Նախագահը կազմակերպում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ-պետությունների ղեկավարների ձևաչափով Ղարաբաղյան պրոբլեմի՝ վերջերս Իտալիայում տեղի ունեցած քննարկումից հետո:

Չատամ Հաուզի ամբիոնից Իլհամ Ալիևի արած ռազմաշունչ կոչերը, որոնք հնչեցվում են G-8-ի հանդիպման արդյունքներով ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Ֆրանսիայի նախագահների հրապարակած հայտարարությունից անմիջապես հետո, սկզբունքորեն հակասում են Հայաստանի և Ադրբեջանի նախագահներին Ղարաբաղյան հակամարտության խաղաղ լուծման այլընտրանք չլինելու վերաբերյալ Բարակ Օբամայի, Դմիտրի Մեդվեդևի և Նիկոլա Սարկոզիի ուղերձի էությանը: Այս հայտարարությունը փաստացի լիազորազերծում է Ալիևի ստորագրությունը Մայնդորֆյան հռչակագրի տակ, որը հաստատում է Ադրբեջանի ղեկավարի հակվածությունը հակամարտությունը լուծելու առանց ուժի գործադրման, ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքի և տարածքային ամբողջականության սկզբունքների հիման վրա:

* «Голос Армении», 18 июля 2009 г. (http://www.golos.am/index.php?option=com_content&task= view&id= 48131&Itemid=41).

–Ինչպե՞ս կբացատրեիք Ադրբեջանի Նախագահի դիրքորոշման նման հակասականությունը:

–Դժվար է մեկնաբանել հարևան պետության նախագահի դիրքորոշման նման հակասումը այն պայմանավորվածություններին, որոնք հրապարակայնորեն ձեռք են բերվել պետությունների ղեկավարների մակարդակով: Իլհամ Ալիևը Լոնդոնից սպառնում է նոր պատերազմով, թեև համաշխարհային ուժային կենտրոնները նախազգուշացրել են անցյալ տարի Վրաստանում տեղի ունեցած ռազմական աղետից դասեր քաղելու անհրաժեշտության մասին:

Ըստ երևույթին, Ձեր հարցի պատասխանը պետք է փնտրել քաղաքական տրամաբանության սահմաններից դուրս: Հոգեբանական գիտությունը նման վարքը որակում է որպես անձնավորության երկատում, երբ անհատը մասնատվում է երկու (իսկ երբեմն նաև ավելի) տարբեր անձնավորությունների, ընդ որում, դրանցից մեկը, որպես կանոն, չի էլ կասկածում մյուսի գոյության մասին: Նման գործընկերների նկատմամբ քաղաքական վստահության մակարդակը հարցականի տակ է դնում Ղարաբաղում կայունության և անվտանգության երաշխիքների ռեալությունը ոչ միայն տարածաշրջանային, այլև ավելի լայն՝ միջազգային, համատեքստում:

«ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՔ*

Հայաստանի Հանրապետությունում սկսվել է պաշտպանական բարեփոխումների իրականացման երկրորդ փուլը: Այս փուլում, ի թիվս այլ արմատական փոփոխությունների, կատարվում են պաշտպանության նախարարության և ՁՈՒ-ի Գլխավոր շտաբի գործառույթների հստակ տարանջատում և նորովի համադասում, ռազմական ոլորտում քաղաքացիական վերահսկողության համակարգի՝ որպես ժողովրդավարության կարևոր տարրի ձևավորում[1]: Պաշտպանության նախարարությունն իր ստորաբաժանումներով հանդերձ վերածվում է գլխավոր պետական ռազմաքաղաքական հաստատության, իսկ ԳՇ-ն դառնում է զորային կառավարման կենտրոնական մարմին:

Նման նորարարական բովանդակություն և համապետական տրամաչափ ունեցող բարեփոխումների արդյունավետությունը ենթադրում է առողջ բանականության վրա հիմնվող գիտափորձարարության տարրերի կիրառում, ընդսմին դրանք պետք է փորձարկված լինեն պաշտպանական-քաղաքական կերպափոխումների բարդ գործընթացներում:

Այդ գործընթացներից ամենաէականը պաշտպանական համակարգի կառավարման օպտիմալ մոդելի կերտումն է: Ինքնին հասկանալի է, որ դա օբյեկտիվորեն պետք է կատարվի մեզ հայտնի մոդելների ու մեր իրականության դրսևորումների համակարգված ուսումնասիրության հիման վրա, քանի որ մեզ ավելի հայտնի նախկին խորհրդային «ապարատային» վարչարարության բրգաձև մոդելի և արևմտյան «մենեջմենտի» մոդելի[2] էկլեկտիկ միախառնումը չի կարող տալ բավարար արդյունք:

Սակայն տվյալ երևույթները, այդ թվում՝ կառավարման մոդելները, համեմատելու և դրանց դրական ու բացասական կողմերը բացահայտելու նպատակով անհրաժեշտ է նախ համապատասխան դիտարկման հարթության մեջ հստակ սահմանել այդ երևույթներին բնորոշ համակարգաստեղծ հասկացությունները: Հարկ է նշել, որ անվտանգային, այդ թվում՝ պաշտպանական, քաղաքականության ազգային հասկացութային և տեր-

* «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2009, հմ. 1–2:
Հոդվածը գրված է Դ. Չիլինգարյանի, Վ. Ավետիսյանի և Ա. Մինասյանի համահեղինակությամբ:

միջազգային անվտանգության ռազմավարության համատեքստում ճիշտ ըմբռնել ինչպես մեր ազգային-պաշտպանական շինարարության մեջ առավելապես կիրառվող նախկին խորհրդային և ռուսաստանյան, այնպես էլ արևմտյան ռազմաքաղաքական-անվտանգային մշակույթներից ներբերվող անհրաժեշտ հասկացությունները:

Մեր կարծիքով՝ նման կարևոր համակարգաստեղծ հասկացություններից է «պաշտպանական քաղաքականությունը»: Նշենք, որ թեև արևմտյան քաղաքագիտության մեջ այս հասկացությունն օգտագործվում է վաղուց[3], սակայն անգամ բարեփոխվող ռուսաստանյան ռազմաքաղաքական տերմինաբանության մեջ այն դեռևս գրանցում չի ստացել. որպես բառահոդված չկա նոր ռազմագիտական բառարաններում[4]: Այդուհանդերձ, մի շարք ռուսաստանյան ռազմագետներ հակված են ընդունելու այս հարցի նկատմամբ արևմտյան մոտեցումը: Մասնավորապես՝ Ռուսաստանի ռազմական գիտությունների ակադեմիայի նախագահ, բանակի գեներալ Մ. Գարեևը գրում է. «Եթե մեր ռազմական դոկտրինը նախկինի պես որոշի միայն ռազմական սպառնալիքները և երկրի անվտանգության ապահովման ռազմական եղանակները, ապա անհրաժեշտություն կծագի ունենալու առանձին «դոկտրին», որը սահմանի այսպես կոչված ոչ ռազմական սպառնալիքներին հակազդեցության կարգը... Մեր կարծիքով՝ նպատակահարմար կլիներ բոլոր ռազմական ու ոչ ռազմական սպառնալիքները դիտարկել օրգանական միասնության մեջ և երկրի անվտանգության ապահովման վերաբերյալ պաշտոնական տեսակետները շարադրել մեկ փաստաթղթում: Հնարավոր է, որ տվյալ դեպքում այն պետք է կոչվեր «պաշտպանական դոկտրին»»[5]:

Խնդիրն ավելի լավ հասկանալու համար վերը նշված եղանակով փորձենք պարզել համապատասխան շարք կազմող անգլերեն, ռուսերեն և հայերեն գիտական տերմինների համարժեքության հարցը: Անգլերենում այդ շարքը ներառում է *defense, army, military, war* տերմինները*: Առաջինը նշանակում է «պաշտպանական», երրորդը թեև նշանակում է «ռազմական», սակայն ամերիկյան ըմբռնմամբ վերաբերում է միայն բանակին (army), այսինքն՝ ցամաքային զորքերին, և այս իմաստով նույնական է երկրորդի հետ, չորրորդը նշանակում է «պատերազմական»:

* Սույն հոդվածում մենք դիտարկում ենք միայն այս տերմինների ածականական օգտագործման դեպքը:

Ռուսերենում այդ շարքը կազմում են հետևյալ տերմինները՝ *оборонный, армейский, войсковой, военный*: Ընդսմին երկրորդը և երրորդը վերաբերում են զորատեսակի: Այս տերմինների դիմաց մենք ունենք «պաշտպանական», «ռազմական», «զինվորական», «բանակային», «զորային», «պատերազմական» տերմինները: Եթե ուսումնասիրենք այն հասկացությունները, որոնք սահմանվում են այս բառերով, ապա կհամոզվենք, որ կարելի է կառուցել համարժեքների հետևյալ շարքերը՝ *defense – оборонный – պաշտպանական, army (military) – военный (армейский, войсковой) – ռազմական* (բանակային, զինվորական, զորային) և *war – военный – պատերազմական*[6]: Ինքնին հասկանալի է, որ նման ոչ միարժեք համապատասխանությունը հաճախ դառնում է սխալ ըմբռնումների պատճառ:

Եվ այսպես. ինչպե՞ս կարելի է ձևակերպել «պաշտպանական քաղաքականությունը» *(defense policy, оборонная политика)*: Փորձենք տալ սահմանումը՝ հիմնվելով արևմտյան և ռուսական քաղաքագիտական-անվտանգային ու ռազմագիտական գրականության մեջ բերվող ձևակերպումների[7] և «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության նախագծի» բառարանի վրա[8]:

Պաշտպանական քաղաքականությունը պետության քաղաքականության բաղկացուցիչ մասն է, որը նպատակաուղղված է հավանական արտաքին թշնամուց պետության, նրա բնակչության, տարածքային ամբողջականության և ինքնիշխանության պաշտպանությանը: Այն պաշտոնապես ամփոփվում է «Ազգային անվտանգության ռազմավարության» պաշտպանական բաժնում և դրա դրույթների վրա հիմնվող «Ռազմական դոկտրինում»*: Պաշտպանական քաղաքականության սուբյեկտներն են՝ պետությունը, նրա մասնագիտացված համապատասխան հաստատություններն ու հիմնարկները, ինչպես նաև անվտանգային կողմնորոշում ունեցող միջազգային կազմակերպությունները:

Ամբողջականություն կազմող պաշտպանական քաղաքականությունն ունի փոխկապված, սակայն բովանդակությամբ ու իրականացման ձևերով սկզբունքորեն տարբերվող երկու բաղադրիչ.

– *ներքին*՝ կապված պետության պաշտպանական ներուժի ձևավորման ու զարգացման, ռազմական կազմակերպվածքի ստեղծման, պահման ու

* Ռազմավարական տրամաչափի ազգային քաղաքական-անվտանգային փաստաթղթերի եռաստիճան համակարգի դեպքում (օրինակ՝ ԱՄՆ-ում) մշակվում են երեք փաստաթուղթ՝ «Ազգային անվտանգության ռազմավարություն», «Պաշտպանական ռազմավարություն» և «Ռազմական ռազմավարություն» (կամ «Ռազմական դոկտրին»):

նախապատրաստման, ռազմական շինարարության և զինված բռնության միջոցների օրենքով սահմանված կիրառման հետ,

– արտաքին՝ կապված պետության, նրա բնակչության, ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության պաշտպանության, հնարավոր արտաքին ագրեսիայի կանխման և հետմղման, ինչպես նաև սահմանների պահպանման կամ ընդարձակման, պետության սահմաններից դուրս գտնվող որոշակի տարածաշրջաններում գերիշխանության հաստատման (պահպանման) և պաշտպանողական կամ ագրեսիվ նվաճողական նպատակների իրականացման հետ:

Տարբերակում են նաև խաղաղ ժամանակվա և պատերազմական ժամանակվա պաշտպանական քաղաքականություններ:

Ներքին պաշտպանական քաղաքականությունը առավելապես հիմնված է ներպետական իրավական նորմերի վրա:

Արտաքին պաշտպանական քաղաքականությունը հիմնված է ներպետական իրավական ակտերում իրենց նորմատիվային արտացոլումն ստացած համապատասխան միջազգային իրավական նորմերի և պետության միջազգային պայմանագրերի ու արտաքին քաղաքականության հայեցակարգի վրա:

Ներքին պաշտպանական քաղաքականությունը, հենվելով պետության ռազմական, տնտեսական, սոցիալական, մտավոր, հոգևոր-մշակութային ներուժի վրա, արտացոլում է հետևյալ սկզբունքները.

– ներքին պաշտպանական քաղաքականության համապատասխանություն պետության պաշտպանական անվտանգության շահերին և ռեալ հնարավորություններին,

– պաշտպանական խնդիրների լուծման համար պետության կենսագործունեության տարբեր ոլորտներում գործադրվող միջգերատեսչական ջանքերի համադասում, համակարգում և սիներգիայի ապահովում,

– պետության սոցիալ-տնտեսական ու ռազմական-ռազմավարական առավելությունների զարգացում և օգտագործում,

– ռազմաքաղաքական ու ռազմավարական խնդիրների լուծում նվազագույն մարդկային, բարոյաքաղաքական ու նյութական ռեսուրսների ծախսերով,

– զինված ուժերի և ամբողջ պետության մշտական պատրաստություն ագրեսիայի հուսալի հետմղմանը,

– կշռադատված ռազմական բավարարություն, հնարավոր հակառակորդների զգալի ռազմական գերակշռության կանխում, հատկապես՝ զինված պայքարի կարևոր միջոցների մշակման ու հանկարծակի կիրառման ոլորտում:

Արտաքին պաշտպանական քաղաքականությունը, ներառելով արտաքին ռազմական քաղաքականությունն իր բոլոր ոլորտներով և ամբողջ գործիքարանով հանդերձ, արտացոլում է հետևյալ սկզբունքները.

– արտաքին պաշտպանական քաղաքականության համապատասխանություն երկարաժամկետ արտաքին ռազմավարական-անվտանգային նպատակներին և միջազգային անվտանգային միջավայրի զարգացումներին,

– պաշտպանական խնդիրների լուծման համար քաղաքական, տնտեսական, դիվանագիտական, տեղեկատվական ու ռազմական միջոցների համադասում,

– հավանական հակառակորդ պետությունների պաշտպանական համակարգերում առկա թույլ ու խոցելի տեղերի, ինչպես նաև նրանց փոխհարաբերությունների համակարգում եղած հակասությունների բացահայտում և օգտագործում,

– առավել մեծ թվով դաշնակիցների ձեռքբերում և նրանց համատեղ ջանքերի միասնականության ապահովում,

– հնարավոր հակառակորդների հետևողական մեկուսացում և թուլացում,

– հնարավոր գլխավոր հակառակորդների դեմ պայքարում առավել կարևոր խնդիրների լուծման համար ռազմական, ռազմատնտեսական ու դիվանագիտական ջանքերի կենտրոնացում:

Եվ այսպես. պաշտպանական քաղաքականությունը պետության պաշտպանական անվտանգության ապահովման կարևորագույն գործիքն է, որի մշակումը կրում է միջգերատեսչական բնույթ, իսկ իրականացումը բազմաոլորտ է՝ ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային ասպարեզում: Պաշտպանական քաղաքականության մշակման և իրականացման ղեկավարումն ու կառավարումը իր իրավասությունների սահմաններում կատարում է *որպես մեկ ամբողջություն հանդես եկող պաշտպանության նախարարությունը*:

ՀՀ-ում պաշտպանական բարեփոխումների հետևանքով պաշտպանության նախարարության ստորաբաժանումները, դադարելով զորամաս լինելուց, վերածվում են վարչական-ապարատային գործիքի, որի հիմնական գործառույթներն են.

–փորձագիտական խորհրդատվությունները՝ պաշտպանական քաղաքականության ոլորտում պաշտպանության նախարարության ղեկավարության կողմից (նախարարը և նրա տեղակալները) ռազմաքաղաքական, ռազմական, ռազմատեխնիկական, ֆինանսատնտեսական, տեղեկատվահոգեբանական, գիտական ու կրթական, մշակութային և այլ բնույթի ռազմավարական որոշումների նախապատրաստման ժամանակ,

–այդ որոշումների կատարման պլանավորումը, կազմակերպումը և վերահսկումը ինչպես միջգերատեսչական համագործակցության շրջանակներում, այնպես էլ Գլխավոր շտաբի միջոցով՝ զորային օղակում:

Այսպիսով՝ բարեփոխումների տրամաբանությունից բխում է, որ ամբողջ պաշտպանության նախարարությունը՝ հանձինս նախարարի, նրա տեղակալների ու խորհրդականների, ինչպես նաև աշխատակազմի, աշխատակազմից դուրս կառուցվածքների և առանձնացված ստորաբաժանումների, պետք է զբաղվի պաշտպանական քաղաքականությամբ՝ և՛ արտաքին, և՛ ներքին՝ ռազմական, պաշտպանական-իրավական, պաշտպանական-տնտեսական, պաշտպանական-ֆինանսական, պաշտպանական-տեխնիկական, պաշտպանական-կրթական, պաշտպանական-գիտական, պաշտպանական-տեղեկատվական, պաշտպանական-դաստիարակչական և այլն:

Ռազմական քաղաքականությունը պետք է դիտել որպես պաշտպանական քաղաքականության առանցքային բաղադրիչ, որը հետադարձ գործառութային կապեր ունի մյուս բոլոր բաղադրիչների հետ: Ընդսմին ռազմական քաղաքականության հայեցակարգային (ղեկավարման) մասը (պաշտպանության նախարարի իրավասության սահմաններում որոշումների ընդունում, Նախագահի, Ազգային ժողովի ու Կառավարության իրավասությանը վերաբերող իրավական ակտերի և այլ փաստաթղթերի նախագծերի մշակում ու միջգերատեսչական համաձայնեցում կամ մասնակցություն դրանց մշակմանը, ինչպես նաև սահմանված կարգով այդ նախագծերի ներկայացում ընդունման կամ հաստատման) ապահովում է պաշտպանության նախարարությունը, իսկ գործադրման մասը (պլանավորում, իրականացում և վերահսկողություն)՝ զինված ուժերի գլխավոր շտաբը՝ որպես զինված ուժերի կառավարման կենտրոնական մարմին: Հետադարձ գործառութային կապերի շրջանակներում գլխավոր շտաբն իր իրավասության սահմաններում մասնակցում է նաև ռազմական քաղաքականության հայեցակարգային բաժինների փորձաքննության ապահովմանը՝ համապատասխան իրավական ակտերի և այլ փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ տրամադրելով փորձագիտական խորհրդատվություն և ներկայացնելով առաջարկություններ[9]:

Կարծում ենք, որ սույն մեթոդաբանական նկատառումները օգտակար կլինեն ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի կառուցվածքային կերպափոխումների մշակմամբ ու իրականացմամբ զբաղվող մասնագետների համար և համապատասխան նախադրյալներ կստեղծեն այդ գործընթացի ավելի համակարգված ըմբռնման համար:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

[1] Տես *Ս. Օհանյան*, Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումները. երկրորդ փուլ: «ՀՔ», 2008, հմ. 2–3:

[2] Այս մոդելների վերլուծությունը տես *Դ. Ս. Չիլինգարյան, Վ. Պ. Ավետիսյան, Տ. Ռ. Մարտիրոսյան*, ԱՄՆ-ի պաշտպանական քաղաքականության համակարգի ղեկավարման ու կառավարման փորձի մասին: «ՀՔ», 2008, հմ. 4:

[3] Տես, օրինակ, *D. J. Murray, P. R. Viotti*. The Defense Policies of Nations: a comparative study. 1994 (http://books.google.com/books?id=MCnY_VN9AjIC&printsec=frontcover&dq=D.+J.+Murray,+The+Defense+Policies+of+Nations:+a+comparative+study&lr=#PPR7,M1); *A. A. Jordan, W. J. Tailor, M. J. Mazarr*. American National Security. 1999 (http://books.google.com/books?id=qIp9MkJvms8C&printsec=frontcover&hl=ru):

[4] Տես, օրինակ, «Военный энциклопедический словарь». М., 2002:

[5] *М. Гареев*. Новые условия–новая военная доктрина. «Независимое военное обозрение», 2 февраля 2007 г.

[6] Տես, օրինակ, *R. Bowyer*. Dictionary of Military Terms. 3-d edition. London, 2004:

[7] Տես *P. L. Hays, B. J. Vallance, A. R. Van Tassel*. American Defence Policy. 1999 (http://books.google.com/books?id=evo4nKODKDsC&dq=%22defense=policy%22+and+%22military+policy%22&printsec=frontcover&source=in&hl=en&ei=_7m3SY6nOdKd_gaUI5m9Cw&sa=X&oi=book_result#PPP1,M1), նաև՝ «Война и мир в терминах и определениях». Словарь под ред. Д. О. Рогозина. М., 2004: Հարկ է նշել, որ քաղաքագիտության մեջ շատ քիչ թվով հասկացություններ ու տերմիններ ունեն միակ և համընդհանուր ճանաչում ստացած սահմանումներ:

[8] Տես «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության նախագիծ. հիմնական տերմիններ և հասկացություններ»: «ՀՔ», 2006, հմ. 2:

[9] Այս մասին ավելի հանգամանորեն տես *Դ. Ս. Չիլինգարյան, Վ. Պ. Ավետիսյան, Տ. Ռ. Մարտիրոսյան*, նշ. աշխ., ինչպես նաև այնտեղ բերված գրականությունը:

ԻՍՐԱՅԵԼԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ ԶԻՆՎՈՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՈԳՈՒ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՓՈՐՁԻ ՄԱՍԻՆ՝ ՀՀ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ*

Հայաստանի Հանրապետության անկախության տարիներին երկրի հասարակական-քաղաքական որոշ շրջաններում մեծ հետաքրքրություն առաջացավ Իսրայելի Պետության նկատմամբ: Այդուհանդերձ, տարածաշրջանային թշնամական միջավայրում Իսրայելի արդյունավետ գոյության փորձի մասնագիտական ըմբռնման ու գնահատման ուղղությամբ էական քայլեր չձեռնարկվեցին, մասնավորապես՝ չհետազոտվեց բնակչության, հատկապես՝ զինվորականության բարոյահոգեբանական պատրաստման իսրայելական համակարգը: Մեր կարծիքով՝ հրեա զինվորականի դաստիարակության գործում Իսրայելի ձեռքբերումների գնահատողական վերլուծությունը առանձնակի կարևորություն է ստանում հայ զինվորականի մարտական ոգու ապահովման համակարգի բարեփոխման համատեքստում:

Փորձենք ՀՀ ազգային անվտանգության շահերի տեսանկյունից ներկայացնել հրեա զինվորականի վարքականոնի, նրա ռազմահայրենասիրական դաստիարակության հայեցակարգային դրույթները: Հարցը դիտարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ Հայաստանի Հանրապետության և Իսրայելի Պետության ազգային անվտանգության ռազմավարական շահերը ոչ լիովին են համընկնում. երկու պետությունների, ինչպես նաև համաշխարհային հրեության ու հայության միջև թեև առկա են որոշակի նմանություններ, սակայն կան և էական տարբերություններ[1]: Կարևոր ենք համարում նաև շեշտել այն հանգամանքը, որ 2008 թվականը նշանավոր էր այս երկու ժողովուրդների պատմության մեջ: Այդ տարի լրացավ հայոց պետականության՝ ի դեմս Հայաստանի Առաջին Հանրապետության վերականգնման 90-ամյակը և հրեական պետականության՝ ի դեմս Իսրայելի Պետության վերականգնման 60-ամյակը: Հատկանշական է, որ այս բախտորոշ իրադարձությունները հաջորդեցին այդ երկու ժողովուրդների դեմ իրագործված ցեղասպանությանը՝ Հայոց Մեծ Եղեռնին (առաջին համաշխարհային պատերազմ) և հրեաների Ողջակիզմանը՝ Հոլոքոստին (երկրորդ համաշխարհային պատերազմ): Իսրայելի Պետության վերաստեղծման 60-ամյակին նվիրված տոնախմբությունների շրջանակներում Երևանի՝ ֆաշիստական Գերմանիայի նկատմամբ տարած «Հաղթանակի» զբոսայգում կայացավ հայ-հրեական բարեկամության ծառուղու և հրեա ժողովրդի

* «Հայկական բանակ», 2009, հմ. 1–2:

պետականության վերականգնման հոբելյանին նվիրված հուշակոթողի բացումը: Երևանի քաղաքապետարանի և ՀՀ-ում հրեական համայնքի համագործակցությամբ կազմակերպված միջոցառման ժամանակ ՀՀ-ում Իսրայելի դեսպան Շեմի Յուրև իր ելույթում նշեց, որ ենթադրվում է իսրայելական «Կերեն Կեյմետ Լե-Իսրայել» (*Հրեական ազգային հիմնադրամ*) կազմակերպության ու հայկական համայնքի համագործակցությամբ Իսրայելում հիմնել հայկական պետականության վերականգնման 90-ամյա հոբելյանին նվիրված ծառուղի:

Վերադառնալով սույն ուսումնասիրության խնդրո առարկա հարցին՝ նշենք, որ Իսրայելում հրեա զինվորականի ռազմահայրենասիրական դաստիարակության կարևորության աստիճանը գնահատելու համար մենք հատուկ ընտրեցինք Իսրայելի Նախագահ, ռազմական հետախուզության նախկին ղեկավար Խայիմ Հերցոգի «Իսրայելի հերոսները» գիրքը[2]:

Ինչպես հին, այնպես էլ ժամանակակից հրեաների հերոսականության օրինակները ներառող և շարունակ համալրվող պանթեոնի մշակմանը Նախագահ Խ. Հերցոգի անմիջական մասնակցությունը վկայում է, որ Իսրայելում ռազմահայրենասիրական դաստիարակությունը պետության նախագահի ուղղակի ղեկավարման ոլորտն է:

Եվ ռազմական, և՛ քաղաքացիական մասնագիտություններ ունեցող հրեա հերոսների պանթեոնի համալրման շարունակականության սկզբունքը, որը համաձայնորեն որդեգրել են Իսրայելն ու իսրայելակենտրոն սփյուռքը, ծառայում է այն գաղափարին, որ հրեության հերոսականությունը մշտապես բնորոշ է եղել հրեա ժողովրդին հրեական պետականության երեքհազարամյա պատմության բոլոր շրջաններում[3]: Տվյալ մեթոդաբանության բացառիկ կարևորությունը միտված է հրեաների հերոսական վարքի լավագույն օրինակների մշտական բացահայտմանը: Դրա նպատակն է նույնիսկ միապաղաղ բանակային առօրյայում իր ժողովրդին ծառայելու ունակության տեսանկյունից յուրաքանչյուր հրեայի կամ հրեուհու մեծ ինքնահարգանքի պահպանումը՝ էրեց-Իսրայելի պաշտպանության և ամրապնդման գործում յուրաքանչյուր հրեա զինվորականի անձնական ռեսուրսի առավելագույն և ստեղծագործական ներդրմամբ: Այլ կերպ ասած՝ Նախագահ Խ. Հերցոգը, հրեա երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության գործում կատարելով իր պարտքը, հրեա ժողովրդի պատմությունը ներկայացնում է որպես ազգային ինքնության պահպանման շարունակական հերոսական գործընթաց՝ այն բաժանելով երեք հիմնական ժամանակագրական փուլերի.

• օտարաբնակության պայմաններում պայքարի երկու հազարամյակ,

• գրեթե 100 տարի՝ Պաղեստին ներգաղթն սկսվելուց հետո,

• Իսրայելի ազգային պետականության վերականգնման ու պաշտպանության 60-ամյա շրջան:

Տվյալ առաքելությունը կատարում է տարածքով ու բնակչությամբ ոչ մեծ, սակայն իր քաղաքական, տնտեսական ու ռազմական հաղթանակների շնորհիվ համաշխարհային աշխարհաքաղաքական կենտրոններից մեկի դերն ստանձնած ու Մերձավոր Արևելքում առանցքային նշանակություն ձեռք բերած պետության նախագահը: Ակնհայտ է, որ նման ոչ սովորական պետության ղեկավարը, ներգրավված լինելով Իսրայելի և սփյուռքի ազգային ռեսուրսի շարունակական նորարարական փոխզարգացման միջոցով անվտանգության ապահովման դինամիկ գործընթացում, լինելով հույժ զբաղված գործիչ, ցուցադրաբար է ժամանակ հատկացնում հրեության հերոսներին նվիրված գիրք գրելուն: Խոսքն այն մասին է, որ երկրի նախագահը ցուցադրում է հրեա ժողովրդի գոյատևման և առաջադիմական զարգացման գործում համաշխարհային հրեության գլխավոր համազգային գերակայություններից մեկը՝ թելադրված Իսրայելի կենսականորեն կարևոր շահերի բոլոր ոլորտներում և, առաջին հերթին, ռազմական անվտանգության ոլորտում հրեաների ամենօրյա ու զանգվածային հերոսականության անհրաժեշտությամբ:

Սույն հոդվածում փորձ է արվում ներկայացնելու այն տրամաբանությունը, որով ղեկավարվել է Իսրայելի նախագահը հրեա ժողովրդի հերոսների անընդհատ համալրվող պանթեոնի կառուցվածքի և բովանդակության մշակման համար՝ այդ պանթեոնը դիտելով որպես հրեա և հրեուհի զինվորականների մարտական ոգու ձևավորման համակարգի հիմք*:

1. Հին ժամանակների հրեա հերոսների կանոնացումը ժամանակակից հրեա զինվորականի մարտական ոգու դաստիարակության համակարգում

Հրեա հերոսների պանթեոնում առանձնահատուկ տեղ է հատկացվում ուժով ու թվաքանակով գերազանցող փղշտացիներին ծնկի բերած *Դավթի* որպես հերոս թագավորի (մ. թ. ա. 11–10-րդ դարեր) կերպարին: Մարտը, որում Դավիթը քարի դիպուկ հարվածով տապալեց Գողիաթին, ապա սրով գլխատեց նրան, հիմնարար կերպով խորհրդանշում է հրեաների ռազմական պատմությունը, այն է՝ հրեա զինվորի հավատը, հնարամտությունը, արագաշարժությունն ու խիզախությունը ավելի գորեղ եղան, քան հսկա փղշտացու ֆիզիկական ուժը: Դա այն փաստի արտացոլումն է, որ Իսրայելի բանակը թեև միշտ եղել է հակառակորդի զորքերից սակավաթիվ ու թույլ, սակայն հաղթել է, քանի որ չի ընդունել խաղի՝ թշնամու թելադրած կանոնները:

Իսրայելի պատմության պաշտոնական մեկնաբանությունը նպատակաուղղված է հրեաների համախմբմանն այն գաղափարի շուրջ, որ մ. թ. ա. 2-րդ դարից՝ Մակաբեների ապստամբության ժամանակներից, գործում է մի բարոյական օրենք, ըստ որի՝ ամբողջ հրեա ժողովուրդը պատասխանատվություն է կրում յուրաքանչյուր հրեայի անվտանգության համար, որտեղ էլ նա լինի: Հրեա զինվորին ոգեշնչող հերոսների շարքում կարևոր տեղ ունի *Հուդա Մակաբեն* («Մուրճ»), մի գեղջուկ, որը դարձավ քաջարի զինվոր, ապա՝ տաղանդավոր զորավար և ժողովրդին երկրի անկախության համար պայքարի ոգեշնչող առաջնորդ: Միևնույն ժամանակ, իսրայելական հայրենասիրական դաստիարակության համակարգում Հուդա Մակաբեն ներկայացվում է որպես մի զինվոր, որը, հասունության տարիքում դառնալով քաղաքական գործիչ ու դիվանագետ, ամրապնդում էր պետականության՝ որպես հրեության բարձրագույն արժեքի առաջնայնության ճանաչման հրեական ավանդույթը և ձգտում էր հրեական պետությունը դարձնելու միջազգային հանրության և ուժերի հաշվեկշռի համակարգի մաս: Իսրայելի պաշտոնական պատմության մեջ և ռազմահայրենասիրական դաստիարակության գործում Հուդա Մակաբեի կերպարն օգտագործվում է որպես այնպիսի հերոսի կերպար, որը հրեաների սրտերում սերմանեց անսասան հավատ դեպի ազատության անմար իդեալը ու պատրաստակամություն՝ կյանքն ի փառս Իսրայելի անկախության զոհաբերելու:

Բար-Կոխբան, թշնամիների դեմ պայքարում այդ վճռական ու դաժան բռնապետ-առաջնորդը, միավորեց հրեաներին ու գլխավորեց 115–117 թթ. նրանց ապստամբությունը հռոմեացիների դեմ: Նրա կերպարը քարոզվում է որպես հրեա ժողովրդի հերոսական տոկունության, անպարտելի Հռոմեական կայսրության դեմ փոքր ժողովրդին ոտքի հանելու համարձակություն ունեցող առաջնորդի խորհրդանիշ: Հրեա զինվորի մարտական ոգու ամրապնդման համար ակտիվորեն օգտագործվում է Բար-Կոխբայի ապստամբական բանակից վերցված այն օրինակը, որ դրան զինվորագրվելու յուրաքանչյուր թեկնածու պետք է որպես հայրենիքին իր նվիրվածության ու հանուն նրա կյանքը զոհելու պատրաստակամության ապացույց կտրեր իր մատը[4]: Ընդ որում, ենթադրվում է թաքնված զուգահեռ սամուրայների «Բուսիդո» պատվո վարքականոնի հետ, որն ուներ

* Հեղինակը շնորհակալություն է հայտնում «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի պատասխանատու քարտուղար Լեյտենանտ Ա. Շահվերդյանին՝ լրացուցիչ աղբյուրների ցանկի ճշտման գործում ցուցաբերած օգնության համար:

նմանատիպ նորմ՝ մատը կտրել ի նշան նվիրվածության Հայրենիքի փրկության գործին: Հետագայում այդ նորմը կիրառվեց երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ կամիկաձեների երդման մեջ:

Հրեա երիտասարդության շրջանում որպես հրեական ոգու տոկունության, կամքի աննկունության և զինվորական արիության խորհրդանիշ քարոզվում է զելոտների հերոսական պայքարը 73 թ. *Մասադա ամրոցը* պաշարած հռոմեական լեգեոնի դեմ[5]: Մինչև վերջ դիմակայելով հռոմեացիների գրոհներին՝ հրեա տղամարդիկ միաձայն որոշեցին սպանել իրենց կանանց ու երեխաներին, իսկ հետո վիճակ գցելով ընտրեցին այն տասը զինվորին, որոնք նախքան բերդ թշնամու մտնելն սպանեցին մյուսներին: Երիտասարդ զինվորները երդվում են այն ժայռի գագաթին, որտեղ գտնվում էր հերոսական Մասադան: Հրեա զինվորականների երդումն է՝ «Մասադան այլևս չի ընկնի»:

2. Տրումպելդորի սխրագործությունը՝ որպես ժամանակակից հրեա զինվորականի վարքականոնի հիմք

Նորագույն ժամանակաշրջանի հերոս հռչակվեց *Իոսիֆ Տրումպելդորը*[6], որի շիրմին կանգնեցված է մռնչացող առյուծ: 1920 թ. Թել Հայ ռազմագյուղատնտեսական բնակավայրի պաշտպանությունը գլխավորած Տրումպելդորն իր մահից առաջ ասաց մի խոսք, որը Իսրայելի հայրենասիրական քարոզչությունը դարձրեց ժամանակակից հրեա հերոս զինվորականի՝ որպես անթերի անձնավորության, ազնիվ, համեստ ու խիզախ ասպետի դաստիարակության օրինակ: Իսրայելի պաշտպանության բանակի երիտասարդ զինվորականները երդում են տալիս Տրումպելդորի շիրմի վրա, որի քարին փորագրված է նրա վերջին խոսքը. «Երջանիկ է նա, ով մեռնում է Հայրենիքի համար»:

Հենց Թել Հայի պաշտպանության կազմակերպման օրինակը դարձավ տարածքային պաշտպանության համակարգի ստեղծման առաջին փորձը. 40-ական թվականներին կիբուցներում (կոմունաներում) աշխատանքի և ծառայության միջոցով արաբական բանդակազմավորումների դեմ *Հագանահի* հատուկ նախանշանակման *Պալմախ* ստորաբաժանման պայքարում դրվեց ՆՈՀԱԼ տարածքային պաշտպանության հիմքը:

3. Ֆաշիզմին հրեական գետտոների մարտիկների դիմադրության ոգու հերոսականությունը

Հրեա զինվորականության հերոսապատման մեջ, որը լայնորեն կիրառում է Իսրայելի և սփյուռքի հայրենասիրական քարոզչությունը, առանձնահատուկ տեղ են գրավում Երրորդ ռայխի* համակենտրոնացման ճամբարներում (Օսվենցիմ, Մայդանեկ, Դահաու և այլն) հրեաներին ոչնչացնելու նպատակով գերմանական ՍՍ ջոկատների կողմից զանգվածային տեղահանումներին *Վարշավայի և այլ գետտոների հրեաների զինված դիմադրության* օրինակները[7]: Դաստիարակչական քարոզչությունն ուղղված է հրեա զինվորների դրսևորած կորովի փառաբանմանը, երբեմն ամոթալի ու նսեմացուցիչ գետտոյի հասկացությանը զինվորական փառքի ու պատվի լուսապսակի վերագրմանը:

4. Իսրայելի ինքնապաշտպանության և անկախության համար ընդհատակյա պայքարի հերոսականությունը

Հագանահի Պալմախի հերոսները: Երիտասարդ հրեաների մարտական ոգու դաստիարակության գործում կարևորություն է տրվում 1940-ական թվականներին Իսրայելի Պետության ստեղծման համար մղված պայքարում Հագանահի Պալմախ հատուկ նախանշանակման ստորաբաժանման վարած մարտական գործողությունների փորձին[8]: Հենց այդ փորձով է հիմնավորվում Իսրայելի Պաշտպանության բանակում՝ *ՑԱՀԱԼ*-ում, գործող այն սկզբունքը, ըստ որի՝ հրամանատարը պետք է գտնվի իր զինվորների առջևում: Քանի որ Պալմախն ուներ հատուկ նախանշանակման առաքելություն, նրա հրամանատարներից պահանջվում էր ոչ թե գնալ իր ենթակաների հետևից, ինչպես ընդունված է մի շարք բանակներում, այլ առաջնորդել նրանց: Պալմախում, ինչպես նաև ներկայիս ՑԱՀԱԼ-ում, հրամանատարի՝ «Իմ հետևի՛ց» հրամանը շարքային զինվորներին ներկայացվում է որպես հրամանատարի պարտավորություն՝ առավել մեծ վտանգի ենթարկելու ոչ թե զինվորին, այլ իր անձը:

Հայրենասիրական դաստիարակության հոգեբանական արդյունավետության ապահովման ընդհանուր սկզբունքի համաձայն՝ հրեա զինվորականի հերոսականությունը անպայման անձնավորվում է կոնկրետ հրեա հերոսների մեջ: Այստեղ երիտասարդությունը հետևում է Պալմախի այնպիսի մարտիկների օրինակներին, ինչպիսիք են Կնեսետի և կառավարության անդամ դարձած Իգալ Ալոնը, ապագայում Գլխավոր շտաբի պետ, ապա՝ Իսրայելի Նախագահ դարձած Իծհակ Ռաբինը, Գլխավոր շտաբի պետ ու պաշտպանության նախարար դարձած Մոշե Դայանը, որը 1956 թ. գլխավորեց Սինայի հաղթական ռազմարշավը:

Հրեա հերոսուհի Հաննա Սենեշը: Նախագահ Խ. Հերցոգը անհրաժեշտ է համարել հրեա հերոսների պանթեոնում ներառել նաև քսաներեքամյա

* Երրորդ ռայխ (կայսրություն)՝ ֆաշիստական Գերմանիա:

հրեուհի *Հաննա Սենեշին* (1921–1944)՝ անվախ դիվերսանտ պարաշյուտիստուհուն, որը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին բրիտանական դեսանտայինների կազմում կռվել էր Եվրոպայում, իջեցվել գերմանական թիկունք, լռել խոշտանգումների ժամանակ և 1944 թ. գնդակահարվել հունգարական բանտում: Հաննա Սենեշի կերպարի քարոզչությունն ուղղված է հրեա կանանց զինծառայության հայրենասիրական շարժառիթավորմանը. Իսրայելում, ի տարբերություն տղամարդկանցից, որոնք ծառայում են երեք տարի, կանայք ծառայում են երկու տարի, ինչը հնարավորություն է տալիս մեծ թվով տղամարդկանց ներգրավելու շարային ծառայության մեջ և դրանով իսկ որոշ չափով համակշռելու Իսրայելին թշնամի պետությունների բանակների թվային գերազանցությունը:

5. Ձոհողության հերոսականացումը և թշնամուն զուգաչափ հատուցման անխուսափելիության սկզբունքը

Ամբողջ աշխարհի հրեա երիտասարդության մեջ հերոսական ոգու դաստիարակության գործում բացառիկ կարևորություն է տրվում *թշնամուն զուգաչափ փոխհատուցման անխուսափելիության քարոզմանը*: Այն հիմնվում է հետևյալ փաստի վրա: Հրեական ընդհատակյա պայքարը, որը երկրորդ աշխարհամարտի տարիներին՝ մինչև 1948 թ. Պաղեստինից բրիտանացիների հեռանալը, մղվում էր հրեաների Պաղեստին ներգաղթին խոչընդոտող Մեծ Բրիտանիայի դեմ, գլխավորում էր Իսրայելի ապագա վարչապետ Մենահիմ Բեգինը: Հրեա ընդհատակյա ուժերի մարտիկներին ճիպոտահարելու ու կախաղան բարձրացնելու անթույլատրելիության և դրա համար անգլիացիներին անխուսափելի զուգաչափ փոխհատուցման մասին հրեական ընդհատակի ահազանգը բրիտանական վարչակազմն ընդունեց իրեն հատուկ գոռոզամիտ թերահավատությամբ և գերեվարված հրեա մարտիկների նկատմամբ բռնություն գործադրեց: Դրան ի պատասխան՝ գերեվարված բրիտանացի սերժանտները ցուցադրաբար և անհապաղ կախաղան հանվեցին, ինչը ցնցեց թե՛ Մեծ Բրիտանիան, թե՛ ամբողջ արաբական աշխարհը: Դա դաս եղավ հրեական ինքնապաշտպանական ուժերի ու հրեական պետության ստեղծման բոլոր հակառակորդների համար:

Իսրայելի Պետությունն իր ամենօրյա գործունեությամբ հաստատում է այն բանի քարոզչությունը, թե այսօրվա հրեան այլևս նախկինում ստորացված մարդը չէ: Ժամանակակից հրեան, ինչպես և հերոսական անցյալում, պարտավոր է իր խելքի, ոգու, կամքի և ռազմարվեստի ամբողջ ներուժը ներդրել հանուն հրեա ժողովրդի պատվի պաշտպանության՝ թշնամուն

ցուցադրելով այնպիսի փոխհատուցման անխուսափելիությունը, որը զուգաչափ լինի յուրաքանչյուր հրեա զինվորականի նկատմամբ կատարված և համայն հրեությանը նսեմացնող հանցագործությանը:

6. Ազգի առաջնորդ հերոսները. Բեն-Գուրիոն՝ «Իսրայելը չի կարող իրեն թույլ տալ պարտություն անգամ մեկ պատերազմում», «Այլևս երբե՛ք»

Պետական քարոզչության մեջ *Դավիդ Բեն-Գուրիոնը*[9] (1886–1973) հանդես է գալիս որպես ազնիվ և իմաստուն ազգային առաջնորդ: Նա մի հերոս է, որը ոգեշնչել է ժողովրդին իր նպատակամղվածությամբ, ազգի ապագան խորը թափանցելու կարողությամբ: Բեն-Գուրիոնն աչքի է ընկնում համաշխարհային հրեության երկու գլխավոր փոխկապված կարգախոսների՝ «Իսրայելը չի կարող իրեն թույլ տալ պարտություն անգամ մեկ պատերազմում» և «Այլևս երբե՛ք» (խոսքը Ողջակիզման կրկնության հնարավորության մասին է), երաշխավորված ապահովման շուրջ Իսրայելն ու սփյուռքը համախմբելու և կողմնորոշելու անվեհեր քաղաքական կամքով: Իսրայելական քարոզչությունը Իսրայելի և ՑԱՀԱԼ-ի հիմնադիր Բեն-Գուրիոնի օրինակը ծառայեցնում է այն նպատակին, որ քաղաքական վերնախավն ու ժողովուրդը և խաղաղ, և մեծագույն ռազմական փորձության ժամանակ ճգտեն գտնելու ամենալավ նորարարական պրագմատիկ լուծումը, թե ինչպես համաշխարհային հրեության անսահմանափակ հոգևոր, կամային, մտավոր ու ֆինանսական ռեսուրսներն անկասելիորեն հաղթական կերպով օգտագործվեն ի նպաստ Իսրայելի և սփյուռքի:

Նշվում է 1950-ական թվականներին Եգիպտոսի դեմ ձեռնարկված Սինայի ռազմարշավի ժամանակ և փոխհատուցման սկզբունքի ընդունման գործում Բեն-Գուրիոնի ճիշտ քաղաքական ու ռազմական պրագմատիկ հաշվարկը: Ըստ այդ սկզբունքի՝ ՑԱՀԱԼ-ին և այլ ուժային կառույցների հանձնարարվում է զսպել իսլամական ահաբեկչությունը: Հետագայում այդ սկզբունքը դարձավ Իսրայելին հասցվող հարվածների կանխման նպատակով ահաբեկչական ճամբարների և շտաբների չեզոքացմանն ուղղված հատուկ կանխիչ գործողությունների հիմքը: Նշվում է նաև, որ Բեն-Գուրիոնի շնորհիվ Իսրայելն ունի արդյունավետ պրոֆեսիոնալ, ըստ հրեության աջակցության բնույթի՝ ժողովրդական բանակ, որը քաղաքականությունից դուրս է և ենթարկվում է քաղաքացիական իշխանությանը:

Այսպիսով՝ Իսրայելի Պետության ռազմահայրենասիրական քարոզչությունը, ինչպես նախորդ դեպքերում, Բեն-Գուրիոնի օրինակով ևս հարընտացնում է հրեական պատմության պանթեոնը՝ նրան պատվավոր տեղ հատկացնելով նախորդ սերունդների և անցյալի մեծ հերոսների շարքում:

7. ՑԱՀԱԼ-ի կոլեկտիվ հերոսականությունը

«Դատաստանի օրվա» պատերազմը

Հավաքական հերոսականության ռազմահայրենասիրական քարոզչությունը փառաբանում է արաբական երկրների միացյալ ուժերի դեմ «վեցօրյա պատերազմում» ՑԱՀԱԼ-ի տարած փայլուն հաղթանակը: Հատուկ շեշտվում է հրեա զինվորի աներևակայելի տոկունությունը, քանի որ նա անչափ թանկ վճարեց արաբների կողմից «Դատաստանի օրվա» պատերազմի սանձազերծման վտանգի ռեալության գնահատման գործում Իսրայելի քաղաքական ու ռազմական ղեկավարության, ինչպես նաև հետախուզության թույլ տված սխալների համար: «Դատաստանի օրվա» պատերազմում ՑԱՀԱԼ-ի հերոսականության օրինակով հրեա զինվորի դաստիարակությունը կենտրոնացվում է այն դրույթի վրա, որ անգամ էլեկտրոնիկայի ու կառավարվող հրթիռների դարաշրջանում որոշիչ է մնում *մարդկային գործոնը՝ հրեա զինվորի ոգին, տոկունությունն ու մարտական վարպետությունը:*

ՑԱՀԱԼ-ի կոմանդոսները Էնթեբեի (Ուգանդա) «Գնդաձև կայծակ» հակաահաբեկչական օպերացիայում. Իոնի Նետանյահու

Ուգանդայում 1976 թ. հուլիսի 3-ի լույս 4-ի գիշերը ՑԱՀԱԼ-ի 200 կոմանդոսներ իրականացրեցին մի օպերացիա, որի շնորհիվ ոչնչացվեցին մի խումբ ահաբեկիչներ և փրկվեցին պատանդ վերցված 105 հրեաներ[10]: Կոմանդոսների ցուցաբերած հերոսությունն ու վարպետությունը ներկայացվում են որպես ՑԱՀԱԼ-ի՝ միայն կամավորներից հավաքագրվող հատուկ նախանշանակման ընտրովի զորամասերի հիանալի զինվորականների դրսևորած մարտական վարպետության օրինակ: Դրանով իսկ Իսրայելը հաստատում է աշխարհի ցանկացած կետում հրեաների կյանքի նկատմամբ ոտնձգության համար ահաբեկիչներին անհապաղ հատուցման անխուսափելիության սկզբունքը: Վարպետորեն իրականացված կայծակնային հատուկ օպերացիան, ինչպես նաև կոմանդոսների հրամանատար Իոնի Նետանյահուի տոկունությունն ու անձնական հերոսությունը քարոզվում են այն կարևոր նպատակով, որ ամբողջ աշխարհին ի ցույց դրվի, թե, ինչպես գրում է Իսրայելի Նախագահ Խայիմ Հերցոգը, ի տարբերություն անցյալ ժամանակներից, փորձանքի մեջ հայտնված հրեաներն այժմ ունեն պաշտպաններ: Ու թեև երբեմն հրեաներն ստիպված են լինում վախ ապրել, հույսը երբեք չի լքում նրանց:

8. Իսրայելի զինվորի ռազմահայրենասիրական դաստիարակության ընդհանուր սկզբունքները

Հրեա ժողովրդի և նրա պետության առջև պատմական պատասխանատվության սերմանումն ու գիտակցումը պետության բարձրագույն գերակայությունն են:

Իսրայելի Պաշտպանության բանակում և համաշխարհային հրեության շրջանում հաջողությամբ քարոզվում և անշեղորեն արմատավորվում է ՑԱՀԱԼ-ի զինծառայողների այն կերպարը, որ նրանք՝

– մեծ մտավոր ներուժով օժտված, արհեստավարժ, անկաշառ, չկոռումպացած, մոլեռանդաբար հայրենասեր ու հերոսականորեն աներկյուղ զինվորականներ են (սկսած շարքայինից մինչև գեներալ),

– մաքրակրոն զինվորականներ են, որոնք չունեն վատ սովորություններ (խաղամոլություն, ծխամոլություն, հարբեցողություն և այլն) և հակված չեն զգայական հաճույքների (որկրամոլություն, վավաշոտություն): Հայոց բանակի կազմավորման շրջանում նման կերպարի ջատագով էր Լեոնիդ Ազգալդյանը, իսկ անցյալում՝ Անդրանիկը:

Հայրենիքին հերոսական ծառայության հրեա զինվորի բարձր շարժառիթավորմանը նպաստում են՝

• բազմադարյան օտարաբնակության պայմաններում ողբերգական կենսափորձի կրկնության անթույլատրելիության գիտակցումը, քանի որ այն ժամանակ հրեա ժողովուրդն անպաշտպան էր թշնամիների առջև և ենթարկվել էր Ողջակիզման աղետի, որի զոհ էին դարձել 6 մլն հրեաներ,

• այն բանի գիտակցումը, որ համազգային աղետի կրկնության, ուստի և որևէ պատերազմում պարտության բացառման գրավականը ուժեղ հրեական պետականությունն է՝ հանձին թշնամական պետությունների ավելի արագ զարգացող Իսրայելի, որին օժանդակում են արևմտյան ուժային կենտրոնները՝ ԱՄՆ-ը, Թուրքիան, ՆԱՏՕ-ն և ԵՄ-ը, ինչպես նաև աջակցում են ազդեցիկ հրեական սփյուռքի համաշխարհային ցանցի ռեսուրսները,

• հրեա զինվորականի մեջ այն հայրենասիրական արժեքային կողմնորոշման ձևավորումը, որ հրեական պետության զինված ուժերը պահպանում են Հեհոշուա բին Նունի հրեա զինվորների, Դավիթ թագավորի, Մակաբեների (Հասմոնեականների), Մասադայի պաշտպանների, Բար-Կոխբայի մարտիկների հինավուրց ավանդույթը, որի շարունակողը եղան Պաղեստինի վերաբնակեցման շրջանի, հակաֆաշիստական պայքարի և

Իսրայելի անկախության համար մղվող ժամանակակից պատերազմների հերոսները,

• հրեա ժողովրդի վստահությունը, որ Իսրայելն ունի իր տարածքի մեծության ու բնակչության թվաքանակի համեմատությամբ բացառիկ մեծ ռազմական, այդ թվում՝ միջուկային, ներուժ*, ինչը պայմանավորված է արաբական երկրների ու Իրանի հետ հարաբերությունների լարվածությամբ,

• միջազգային անվտանգության համակարգում Իսրայելի ունեցած բացառիկ կարևոր աշխարհառազմավարական դերակատարության գիտակցումը հրեա զինվորականների կողմից: ՑԱՀԱԼ-ի զինվորականների շրջանում ձևավորվում է վստահություն Մերձավոր Արևելքում իրենց առաքելության բացառիկության նկատմամբ: Իսրայելի տարածքից ռազմական հասանելիության սահմաններում է գտնվում Արևմուտքի նավթային ռե-

* Իսրայելի պաշտպանական ծախսերը 2002 թ. կազմել են 9,84 մլրդ ԱՄՆ-ի դոլար (1984 թ.՝ 4,3 մլրդ) և անշեղորեն աճում են, թեև բնակչության մեկ շնչի հաշվով մնում են համեմատաբար կայուն, սակայն բավական բարձր՝ մոտավորապես 1,5 հազ. դոլար:

Իսրայելի պաշտպանունակության ամրապնդմանն աջակցման գործում զգալի ներդրում է Միացյալ Նահանգներից ստացվող ռազմական օգնությունը: Առաջին անգամ Իսրայելն ԱՄՆ-ից անհատույց ռազմական օգնություն է ստացել 1974 թ. (1,5 մլրդ դոլար): 1974–2002 թթ. ժամանակահատվածում Իսրայելն ԱՄՆ-ից ստացել է 41,06 մլրդ դոլարի անհատույց ռազմական օգնություն: Ընդ որում, ռազմական օգնության միջոցների մեծ մասը Իսրայելը պարտավոր է ծախսել ԱՄՆ-ում ռազմական տեխնիկա, պահեստամասեր, զինամթերք ու հանդերձանք ձեռք բերելու համար:

Հարևան երկրների հետ մշտապես լարված հարաբերություններն Իսրայելին ստիպում են պահել հզոր զինված ուժեր՝ համալրված ռազմական պայքարի վարման ժամանակակից միջոցներով, ներառյալ՝ զանգվածային ոչնչացման զենքը: Թեև Իսրայելը երբեք բացահայտ կերպով չի անցկացրել միջուկային զենքի փորձարկումներ, այդուհանդերձ, համաձայն եղած գնահատականների՝ նա աշխարհի միջուկային տերությունների շարքում զբաղեցնում է 6-րդ տեղը՝ Միացյալ Նահանգներից, Ռուսաստանից, Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից ու Չինաստանից հետո: Միջուկային զենքի չտարածման մասին պայմանագրի շրջանակներում ԱՄՆ-ի վարչակազմի (և անձամբ Նախագահ Ռ. Նիքսոնի) հետ ձեռք էր բերվել համաձայնություն, ըստ որի «ենթադրվում, սակայն չէր ճանաչվում» Իսրայելի՝ միջուկային երկիր լինելու հանգամանքը: 1963 թվականից Իսրայելում ստեղծվում են բալիստիկ հրթիռային համակարգեր, որոնք կարող են կրել միջուկային մարտագլխիկներ: Դեռ 1989 թ. հաջողությամբ փորձարկվել է մինչև 1500 կմ հեռահարությամբ «Իերիխո–2Բ» բալիստիկ հրթիռը՝ ունակ խոցելու այնպիսի նշանակետեր, որոնք գտնվում են Լիբիայի ու Իրանի տարածքում: Իսրայելի Զինված ուժերն սպառազինված են նաև միջուկային զենքի փոխադրման ավիացիոն միջոցներով, այդ թվում՝ ամերիկյան արտադրության Ֆ-16, Ֆ-4Ե «Ֆանտոմ» և Ա-4Ն «Սկայ-Հոկ» ինքնաթիռներով: Իսրայելը Մերձավոր Արևելքի միակ տերությունն է, որն ամենայն հավանականությամբ ունի ցամաքային, ծովային ու օդային բազավորմամբ միջուկային համակարգեր:

սուրսների գրեթե կեսը, որը տեղավորվում է արևմուտքից՝ Լիբիայի, արևելքից՝ Իրանի և հարավից՝ Սաուդյան Արաբիայի միջև ընկած եռանկյունում:

Երիտասարդության հայրենասիրական դաստիարակության գործում կարևորվում է պետական աջակցությունը հրեա ժողովրդի պատմության պաշտոնական մեկնակերպին և առաքելությանը, որոնք կառուցված են մի շարք հիմնադրույթների վրա.

1. մարդկության զարգացման գործում հրեա ժողովրդի ունեցած դերը ամրագրված է Երկրագնդի վրա կյանքի ծագման հետ հրեության պատմության նույնականացման ձևով, ինչի հետևանքով Իսրայելի Պետության պաշտոնական տարեգրությունը կրում է առասպելական բնույթ և իրադարձությունները թվագրում է աշխարհի արարման օրից (թալմուդյան ավանդույթի համաձայն՝ Ադամի ժամանակաշրջանի սկիզբ ընդունված է մ. թ. ա. 3761 թ., ներկայումս Իսրայելում 5769 թվականն է),

2. աշխարհի հնագույն քաղաքակրթությունների հետ հրեական պետականության պատմության զուգաչափության հռչակումը. ըստ պաշտոնական մեկնակերպի՝ հրեական ժողովրդի պետականությունն սկիզբ է առել մ. թ. ա. 11-րդ դարում,

3. հրեա ժողովուրդն իր ամբողջ պատմության ընթացքում իր ազգային շահերը պաշտպանելու համար հարկադրված է եղել պայքարելու հակառակորդի գերազանցող ուժերի դեմ,

4. հրեական ինքնության պահպանման գործում հրեա զորավարներին պետականության անկումից հետո փոխարինելու եկան հրեա մտավորականության ներկայացուցիչները, որոնք մինչև պետականության վերականգնումը որպես կրոնին հավատարմության և ազգային ինքնության պահպանման ակունք հրեաներին շնորհեցին Թորայի՝ մեկնությունները՝ Թալմուդը,

5. երկու հազարամյակ շարունակ հուդայականությունը, Թալմուդը և նրա լեզուն՝ եբրայերենը (իվրիտերեն), եղել են հայրենիքից կտրված հրեության գոյատևման գլխավոր ազգային հոգևոր-բարոյական ռեսուրսը: Ըստ հրեության պատմության պաշտոնական մեկնության՝ պետականության կորստի՝ ցրման (օտարաբնակության) պայմաններում Թալմուդը փոխարինեց կորսված Հայրենիքը՝ էրեց-Իսրայելը,

6. երկու հազարամյակ աշխարհով մեկ սփռված բոլոր հավատացյալ հրեաները իրենց աղոթքների ժամանակ հայացքներն ուղղել են դեպի պատմական Հայրենիք՝ կրկնելով «Հաջորդ տարի՝ Երուսաղեմում» բառերը,

7. սիոնիզմը՝ որպես Իսրայելի Պետության վերաստեղծման ճանապարհով հրեության փրկության ռազմավարություն. 19-րդ դարի վերջին եվրոպական հրեության վերնախավը գիտակցեց, որ Իսրայելի Պետության ստեղծման նպատակով հրեաների Պաղեստին վերադարձը նախընտրելի է մեսիայի (փրկչի)՝ որպես հրեության փրկչի պասիվ սպասումից,

8. մինչև Իսրայելի անկախությունը Պաղեստինի կիբուցներում (կոմունաներում) արտադրողական աշխատանքով և զինված տարածքային ինքնապաշտպանությամբ հրեաների ավանդական չարչիական գործունեության փոխարինումը՝ որպես հրեա ժողովրդի սոցիալական և հոգեբանական կերպափոխման քաղաքական սկզբունք,

9. Իսրայելի Պետության վերաստեղծումը՝ որպես հրեա ժողովրդի վերածննդի հիմնական գործոն՝ նպատակաուղղված ամբողջ համաշխարհային իսրայելակենտրոն հրեության առաջընթաց զարգացմանը,

10. Իսրայելի միակ պետական լեզվի կարգավիճակի շնորհումը Թալմուդի հնագույն լեզվին՝ իվրիտերենին՝ որպես համաշխարհային հրեության էթնոլեզվաբանական բազմապիսի խճանկարի բոլոր բաղադրիչների համախմբման գործոնի,

11. համաշխարհային հրեության համակարգի իսրայելակենտրոնությունը,

12. Իսրայելի ու հրեական սփյուռքի կազմակերպությունների միջև պատասխանատու հարաբերությունների համակարգի անընդհատ կատարելագործման նպատակով յուրաքանչյուր մերձավորարևելյան ճգնաժամից դասերի ինքնաքննադատական քաղման սկզբունքը,

13. Իսրայելի և հրեական սփյուռքի միջև այն գնահատականի համաձայնեցվածությունը, որը տրվում է յուրաքանչյուր հրեայի մասնակցությանը Իսրայելի Պետության ազգային անվտանգության պաշտպանությանը՝ որպես յուրաքանչյուր հրեայի և ընդհանրապես համաշխարհային հրեության հոգևոր, բարոյական, քաղաքական ու տնտեսական զարգացման անձնական և համազգային բարձրագույն նպատակի,

---

* *Թորահ*՝ Հին կտակարանի առաջին հինգ գրքերի՝ Հնգամատյանի (Ծննդոց, Ելից, Ղևտացվոց, Թվաց, Երկրորդ օրինաց) հրեական անվանումը:

14. Իսրայելի Պաշտպանության բանակում ծառայությունը դիտվում է որպես բուհ ընդունվելուց կամ պրոֆեսիոնալ կարիերա սկսելուց առաջ յուրաքանչյուր հրեայի և հրեուհու պատվի ու արժանապատվության գլխավոր քննություն և ինչպես Իսրայելում, այնպես էլ հրեական սփյուռքում նրանց հետագա պրոֆեսիոնալ ու սոցիալական առաջընթացի հիմքային փուլ,

15. ՑԱՀԱԼ-ի մարտական գործողություններին հրեայի և հրեուհու մասնակցության շարժառիթավորումը՝ որպես Իսրայելում և հրեական սփյուռքի բնակության համայնքներում անձնական հեղինակության բարձրացման և առաջընթացի առավել արգասաբեր միջոց,

16. ՑԱՀԱԼ-ի սպայական կազմի բարձր մտավոր մակարդակը, որը ձևավորվում է ի հաշիվ հասարակության և բանակի միջև առավել կրթված ու հայրենասիրական տրամադրություններով տոգորված կադրերի փոխանակման,

17. Իսրայելի ավանդական կողմնորոշումը՝ իր զարգացումն ապահովելու ազգային անվտանգության ռազմավարության գերակայությունների հիմքի վրա, ինչն արվում է ռազմական քաղաքականության ոլորտում ԳՇ և գործատեսակների շտաբներում առաջատարի դեր կատարող տաղանդավոր գեներալներից քաղաքական վերնախավի ձևավորմամբ (Իծհակ Ռաբին, Խայիմ Հերցոգ, Արիել Շարոն, Էհուդ Բարակ, Մոշե Դայան, Էզեր Վեյցման և այլն),

18. ՑԱՀԱԼ-ի հաղթանակի համար, բացի հակառակորդի հնարավորությունները գերազանցող սպառազինությունից (ներառյալ՝ միջուկային ներուժը), անհրաժեշտ է ունենալ միակուռ, վարժված ու մշտապես մարտի ձգտող բանակ: Բանակի համախմբվածության հիմքում ժողովրդի միասնականությունն է: Հակառակորդի գերազանցող ուժերի նկատմամբ հաղթանակի հասնելու համար անհրաժեշտ են հրեա զինվորականի ոգու, խիզախության, հնարամտության, կռահողականության, ինչպես նաև մտքի և գործողությունների արագության գերազանցության անընդմեջ պահպանումը, այդ թվում՝ որոշումներ կայացնող հրամանատարների՝ հանպատրաստից ստեղծագործելու հատկությունները:

Այս արժեքներին ու սկզբունքներին համապատասխան կատարվող դաստիարակության արդյունավետության վկայությունն են հետևյալ փաստերը.

– տարածաշրջանում Իսրայելի կայուն ռազմական առաջավարությունը, որը հաստատվում է ինչպես պատերազմներում, այնպես էլ ամեն մի ռազ-

մական ընդհարման ժամանակ հակառակորդի նկատմամբ ՑԱՀԱԼ-ի անձնակազմի մարտունակության գերազանցությամբ,

– համաձայն վերջերս կայացած սոցիոլոգիական հարցումների՝ Իսրայելի հրեաների ավելի քան 94 %-ը պատրաստ է կամավոր զինվորագրվելու ՑԱՀԱԼ-ին և կյանքը զոհելու հանուն հայրենիքի (ԱՄՆ-ի քաղաքացիների շրջանում այդ ցուցանիշը 63 % է):

9. Հայ հերոսների պանթեոնի ու հերոսական իրադարձությունների օրացույցի մշակման և ՀՀ պաշտպանական բարեփոխումներում օգտագործման ուղենիշներ

Որպես Իսրայելի բանակի բարձր մարտունակության ապահովման կարևորագույն նախապայմանի՝ հրեա զինվորականի ռազմահայրենասիրական դաստիարակության ու մարտական ոգու ապահովման ավանդական արժեքների և հայեցակարգային հիմնադրույթների ուսումնասիրությունը, Իսրայելի և Հայաստանի, համաշխարհային հրեության և հայության միջև որոշակի նմանությունների ու տարբերությունների հաշվառմամբ, զգալի դրական նշանակություն ունի հայ զինվորականի հոգևոր-բարոյական դաստիարակության և ընդհանրապես ՀՀ ԶՈՒ-ի մարտունակության բարձրացման կարևոր խնդիրները լուծելու համար:

Անշուշտ, խոսքը հայ իրականության մեջ Իսրայելի զինվորականության վարքականոնի՝ որպես հրեության փորձի մեխանիկական ներբերման մասին չէ. հայ և հրեա ժողովուրդները, պատմական անցյալի որոշակի նմանությամբ հանդերձ, ունեն զուտ ազգային առանձնահատկություններ, այդ թվում՝ ռազմական արվեստի բնագավառում: Միևնույն ժամանակ, ՀՀ պաշտպանական բարեփոխումների շրջանակում հայ զինվորականության հոգևոր-բարոյական դաստիարակության, բարձր մարտական ոգու ապահովման համակարգի կատարելագործման ուղիների մշակման ժամանակ Իսրայելի օրինակով նպատակահարմար է դիտարկել հետևյալ հիմնադրույթները.

• ազգային ողբերգության կրկնության հնարավորությունը բացառելու անհրաժեշտության գիտակցում,

• հզոր անկախ պետականություն՝ որպես ազգային ողբերգության կրկնության բացառման երաշխիք,

• ամեն մի պատերազմում պետության անպարտելիության բարոյական սկզբունքի գիտակցում և հետևողական կիրառում,

• թշնամական երկրներով շրջապատված լինելու պայմաններում տարածաշրջանում պետության կայուն ռազմական առաջատարության, հակառակորդի նկատմամբ զինված ուժերի մարտունակության մշտական գերազանցության ապահովում,

• համաշխարհային սփյուռքի համակարգի պետութենակենտրոնություն,

• պետության ու սփյուռքի միջև ի շահ պետության, ազգային ժառանգության և ամբողջ ժողովրդի պաշտպանության փոխադարձաբար զարգացող ու փոխլրացնող համագործակցության գերակայություն:

Ավարտելով այս զուգահեռները՝ հարկ ենք համարում շեշտել, որ Հայաստանի Զինված ուժերում ևս կա ազգի հերոսականությունը անձնավորված ձևով ներկայացնելու ավանդույթ: Մենք ունենք մի շարք պատմական անձինք, որոնց կերպարները կարող են քարոզվել որպես անհուն հայրենասիրության, ազգանվիրության, ինքնազոհողության, քաջության տիպարներ: Հայերը՝ որպես աշխարհի հնագույն ազգերից մեկը, զգալի ներդրում ունենալով համաշխարհային մշակույթի մեջ, շարունակում են զարգացնել իրենց հարուստ պատմամշակութային ժառանգությունը: Այսպես. 2009 թ. օգոստոսի 11-ն ըստ հին Հայկական (Հայկյան) օրացույցի 4502 թ. սկիզբն է:

Մեր բազմահազարամյա պատմության մեջ քիչ չեն հերոսների ձեռքով գրված ոգեշնչող էջերը: Ընդսմին, մեր կարծիքով, «Հայոց ռազմահայրենասիրական պանթեոնում» և ազգային օրացույցում կարող են ներառվել հետևյալ առասպելական ու պատմական անձանցից և նշանակալից իրադարձություններից շատերը.

հնագույն առասպելական շրջան. Հայկ Նահապետ, որն սպանեց տիտան Բելին՝ հաստատելով հայ ժողովրդի անկախության իրավունքը,

հին պատմական շրջան (մ. թ. ա. 9-րդ դ.-մ. թ. ա. 1-ին դ.). Արգիշտի Ա թագավոր, որը Այրարատյան թագավորությունը պաշտպանեց Ասորեստանի ոտնձգություններից, *Տիգրան Մեծ*, որը շնորհիվ իր ռազմական ու դիվանագիտական տաղանդի ստեղծեց Մեծ Հայքը[11],

միջնադար և նոր պատմության շրջան (4-րդ դ.-19-րդ դ.). Արշակ Բ և *Պապ* թագավորներ՝ բարեփոխիչներ, որոնք միավորեցին հայկական տիրույթները, սպարապետ իշխան *Վարդան Մամիկոնյան*, որն առաջնորդեց հայոց բանակը 451 թ. Ավարայրի ճակատամարտում՝ տապալելով քրիստոնյա հայերին զրադաշտականության պարտադրման պարսից ծրագրերը, իշխան *Գևորգ Մարզպետունի* (10-րդ դար), որը մարմնավորում է մեծ

հայրենասերի ու ականավոր զորավարի կերպարը, մի զորավար, որը կարողացավ չնչին ուժերով ջախջախել արաբական գերակշռող ուժերը, Կիլիկիո Հայոց պետության մեծ իշխան (1187–1198) և թագավոր (1198–1219) *Լևոն Բ*, որը շնորհիվ իր ռազմական ու դիվանագիտական տաղանդի կարողացավ հաջողությամբ պայքարել ընդդեմ Եգիպտոսի սուլթան Սալահ ադ Դինի, սելջուկ թուրքերի, Բյուզանդիայի և ոչ միայն հզորացնել իր պետությունը, այլև էապես ընդարձակել նրա սահմաններն ու ազդեցության ոլորտը, հասնել եվրոպական միապետների կողմից Կիլիկիո Հայոց Թագավորության ճանաչմանը[*], ականավոր ռազմական ու պետական գործիչ *Դավիթ-Բեկ* (18-րդ դարի սկիզբ), որը գլխավորեց Սյունիքի պայքարը թուրք զավթիչների դեմ, 1812 թ. Հայրենական պատերազմի հերոս, իշխան գեներալ *Կալերիան Մադաթյան* (Մադաթով (1782–1829))[12],

հայերի ազգային-ազատագրական շարժումը Օսմանյան կայսրությունում (19-րդ դ.–20-րդ դ. սկիզբ). Այնթապի, Զեյթունի, Մուշի, Մուսա լեռան, Շապին-Գարահիսարի, Սասունի, Վանի և պատմական Հայաստանի այլ վայրերի ինքնապաշտպանության հերոսներ. Վանի հերոսական ինքնապաշտպանության կազմակերպիչ, Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադիր *Արամ Մանուկյան* (1879–1919), հայդուկ, հերոսական Սասունի ազգային-ազատագրական շարժման առաջնորդ, ազգային հերոս *Անդրանիկ Օզանյան* (Զորավար Անդրանիկ (1865–1927)), որը 1912 թ. 1-ին Բալկանյան պատերազմի մակեդոնական ճակատում գլխավորել է օսմանյան լծի դեմ ապստամբած բուլղարացիներին աջակցող հայ կամավորների ջոկատը, առաջին աշխարհամարտի տարիներին ստացել Ռուսական բանակի գեներալ-մայորի կոչում, հայ ազգային-ազատագրական շարժման կարկառուն գործիչներ, ինքնապաշտպանության առասպելական պարտիզանական առաջնորդներ *Աղբյուր Սերոբ* (Սերոբ Վարդանյան (1864–1899)), *Գևորգ Չաուշ* (Գևորգ Ղազարյան (1870/1871–1907)) և ուրիշներ,

[*] Լևոն Բ աջակցեց Սրբազան Հռոմեական կայսրության կայսր Ֆրիդրիխ 1-ին Շիկամորուսին Խաչակրաց 3-րդ արշավանքի ժամանակ, ինչի համար վերջինիս որդի Հայրիխ 6-րդից ստացավ թագ: Թագադրմանը ներկա էին Բյուզանդիայից, Սրբազան հռոմեական կայսրությունից, Բաղդադի ամիրայությունից ժամանած պատվիրակությունները: Թագադրումը կատարվեց ինչպես հայկական (Կաթողիկոս Գրիգոր Ա Ապիրատ), այնպես էլ լատինական (Հռոմի պապի պատվիրակ, Մայնցի արքեպիսկոպոս Կոնրադ Վիտելբախ) ծեսերով (տես Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Ե., 1982, *F. Tournebize.* Histoire politique et religieuse de l'Arménie. Paris, 1900, «Հայկական սովետական հանրագիտարան», հ. IV. Ե., 1978, էջ 589–590):

1918 թ. մայիսյան հերոսամարտեր[13]. Սարդարապատի օպերացիայի մշակող գեներալ Մովսես Սիլիկյան (1862–1937), Սարդարապատի և Բաշ-Ապարանի հաղթանակների կազմակերպիչներ գնդապետներ *Դանիել-Բեկ* (1861–1921) ու *Պողոս-Բեկ* (1864–1922) *Փիրումյաններ*, գեներալ *Դրո* (Դրաստամատ Կանայան (1883–1956)), զինվորական և քաղաքական գործիչ, արդի ազգային գաղափարախոսության մշակման հիմնադիր, Լեռնահայաստանի դիկտատոր *Գարեգին Նժդեհ* (Գարեգին Տեր-Հարությունյան (1886–1953), որը գլխավորեց մահմեդական հրոսակախմբերից ու բոլշևիկյան զորքերից Սյունիքի հերոսական ինքնապաշտպանությունը, ինչի շնորհիվ Զանգեզուրը մնաց հայկական, Սարդարապատի ճակատամարտի գաղափարական ոգեշնչողներ կաթողիկոս *Գևորգ Ե Սուրենյանց* (1847–1930) ու արքեպիսկոպոս *Գարեգին Հովսեփյան* (1867–1952), և ուրիշներ,

փոխհատուցման գործողություններ Հայոց ցեղասպանության երիտթուրքական գաղափարախոսների ու կազմակերպիչների նկատմամբ, որոնք մահապատժի էին դատապարտված Ստամբուլի զինվորական տրիբունալի կողմից (20-րդ դար) «Նեմեզիսի»[*] հերոսներ *Սողոմոն Թեհլերյան* (1896–1960), *Միսակ Թորլաքյան* (1890/1894–1968), *Արամ Երկանյան* (1895–1930), *Արտաշես Գևորգյան* (1894–1937), *Հակոբ Մելքումով* (Մելքումյան (1885–1962)), և ուրիշներ,

երկրորդ համաշխարհային պատերազմ (1939–1945). նշանակալից և պատվաբեր է, որ Խորհրդային բանակում ծառայել են հայազգի 5 մարշալ՝ ռազմաճակատի հրամանատար, հետագայում՝ Խորհրդային Միության պաշտպանության նախարարի տեղակալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս, Խորհրդային Միության առասպելական մարշալ *Հովհաննես Բաղրամյան* (1897–1982), Խորհրդային Միության հերոս, զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ *Համազասպ Բաբաջանյան* (1906–1977), ավիացիայի գլխավոր մարշալ *Արմենակ Խանփերյանց* (Սերգեյ Խուդյակով (1901–1950)), Խորհրդային Միության հերոս, Խորհրդային Միության նավատորմի ծովակալ *Հովհաննես Իսակով* (1894–1967), ինժեներական զորքերի մարշալ *Սերգեյ Ագանով* (1917–1996)[14]: Ընդամին Հայրենական մեծ պատերազմի տարիներին ԶՈՒ-ի տեսակների երեք շտաբների պետերից երկուսը՝ ՌՕՈՒ-ի և ՈՕՈՒ-ի շտաբների պետերը, եղել են հայ (ծովակալ Հ. Իսակովը և մարշալ Ա. Խանփերյանցը):

[*] «Նեմեզիս»՝ 1915 թ. Հայերի ցեղասպանության կազմակերպման և իրականացման մեջ մեղավոր «Միաբանություն և առաջընթաց» թուրքական կուսակցության առաջնորդների նկատմամբ հատուցման ակտերի իրականացման օպերացիայի անվանում (վրիժառության հունական աստվածուհի Նեմեզիսի անունով):

Ամբողջ Խորհրդային Միությունով ցնծացին 89-րդ հայկական Թամանյան դիվիզիայի առասպելական հրամանատար գեներալ *Նվեր Սաֆարյանի* (1907–1982), «Բալթիկայի բազե» պատվավոր տիտղոսի արժանացած, գրոհային օդաչու, Խորհրդային Միության կրկնակի հերոս, գվարդիայի փոխգնդապետ *Նելսոն Ստեփանյանի*[15] (1913–1944) անունները:

Ուզում ենք հատկապես նշել, որ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին տարբեր երկրների բանակներում ֆաշիզմի դեմ կռվել են հայ ժողովրդի 600 հազար որդիներ և դուստրեր, որոնցից 500 հազարը՝ Խորհրդային բանակում: Եվ դա այն դեպքում, երբ բուն Խորհրդային Հայաստանում մինչև պատերազմը բնակվում էր մոտ 1,3 մլն հայ, իսկ ԽՍՀՄ մյուս հանրապետություններում՝ ավելի քան 1,5 մլն: Հայ ժողովուրդը Հայրենական պատերազմին վերաբերվեց մի արտակարգ հայրենասիրական պոռթկումով: Այդ պատերազմին հայերի մասնակցությունը աննախադեպ էր թե՛ մասնակիցների թվի, թե՛ ցուցաբերած խիզախության առումով:

Պատերազմի ժամանակ կազմավորված հայկական ազգային դիվիզիաները ծանր մարտերով անցան Կովկասյան նախալեռներից մինչև Բեռլին և Բալկաններ՝ հավերժ փառքով պսակելով իրենց մարտական դրոշները: Եռակի շքանշանակիր 89-րդ հրաձգային դիվիզիան, որին Թամանյան թերակղզու ազատագրմանը ակտիվ մասնակցության համար շնորհվել էր «Թամանյան» պատվավոր անվանումը, միակ ազգային դիվիզիան էր, որը մասնակցեց Բեռլինի գրավմանը:

Աննախադեպ էր նաև Խորհրդային Միության հերոսի կոչմանն արժանացած հայերի թիվը՝ 106 մարդ, իսկ 26-ը դարձան «Պատվո» շքանշանի 3 աստիճանների ասպետներ[16]:

Աննախադեպ էին նաև երկրորդ համաշխարհային պատերազմում հայերի կրած կորուստները՝ մոտ 300 հազար սպանված: Համեմատության համար ասենք, որ երկրորդ համաշխարհային պատերազմում նման կորուստներ ունեցան Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի բանակները:

Սփյուռքահայերը ևս ակտիվ մասնակցություն ունեցան ֆաշիստական Գերմանիայի և միլիտարիստական Ճապոնիայի դեմ իրենց պետությունների մղած պայքարում: Սփյուռքի փառապանծ հերոսների թվում էին՝ Փարիզի Դիմադրության շարժման (*Մակի*) առաջնորդ, Պատվո լեգեոնի շքանշանի ասպետ, Ֆրանսիայի ազգային հերոս *Միսաք Մանուշյանը* (1906–1944), ԱՄՆ-ի ԶՈՒ-ի բրիգադի գեներալ *Հայկ Շեքերջյանը* (1886–1966), որը պատասխանատու էր Նորմանդիայում դաշնակից պետությունների զորքերի ափիհանման թիկունքային ապահովման համար, ԱՄՆ-ի

բարձրագույն զինվորական պարգևի՝ «Կոնգրեսի պատվո մեդալ» շքանշանի (այդ շքանշանով երկրորդ աշխարհամարտի ժամանակ պարգևատրվել է ընդամենը 87 հոգի) ասպետ ավագ լեյտենանտ *Էդմենտ Դերվիշյանը* (1916–1984), որն աչքի ընկավ իր անվեհերությամբ՝ միայնակ գերեվարելով հակառակորդի 45 զինվորի ու գրավելով 3 գնդացիր, և շատ ուրիշներ:

1943 թ. Թեհրանում դաշնակից պետությունների ղեկավարների անվտանգության ապահովման գործում մեծ դեր խաղացին Իրանում խորհրդային ռեզիդենտ գնդապետ *Իվան Աղայանցը* (1911–1968) և հետագայում Խորհրդային Միության հերոսի կոչմանն արժանացած *Գևորգ Վարդանյանը* (1924 թ.):

Երկրորդ համաշխարհային պատերազմին հայերի ակտիվ մասնակցությունը, մեր կարծիքով, ազգային ոգու և հերոսության դրսևորման փայլուն օրինակներից մեկն է,

կին հերոսուհիներ. Վարդան Մամիկոնյանի դուստր *Սուրբ Շուշանիկ* (5-րդ դ.), որն իր հայրենասիրության ու կրոնին հավատարմության համար դավաճան ամուսնու կողմից ենթարկվեց խոշտանգումների և մարտիրոսացավ[17], Ֆրանսիայի Դիմադրության ակտիվ գործիչ, բանաստեղծուհի *Լուիզ Ազանյանը* (1904–1944), որը գեստապոյի տանջարանում ենթարկվեց դաժան խոշտանգումների, սակայն չհայտնեց իր զինակիցների անունները և այրվեց Ռավենսբրուկ մահվան ճամբարի վառարանում, Արցախի ականավոր քաղաքական, ռազմական ու պետական գործիչ, Ղարաբաղյան շարժման կազմակերպիչներից մեկը, ԼՂՀ Աժ պաշտպանական անվտանգության և օրինապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ *Ժաննա Գալստյանը* (1948 թ. ծ.), որը Արցախյան ազատամարտի ժամանակ իր ծավալած գործունեությամբ խորհրդանշում է զինվոր հայուհու՝ Հայրենիքի անվեհեր պաշտպանի կերպարը:

Արցախյան ազատամարտ. Հայաստանի Հանրապետության պաշտպանության առաջին նախարար, ազգային կանոնավոր զինվորական կազմակերպության ստեղծման ղեկավար, Հայաստանի Ազգային հերոս *Վազգեն Սարգսյան* (1959–1999), Հայաստանի Ազգային հերոս *Մոնթե Մելքոնյան*[18] (1957–1993)՝ սփյուռքահայ մտավորականի ու տաղանդավոր զինվորականի օրինակ, մի մարդու, որն իր կյանքը նվիրեց հայության պաշտպանությանը, Հայաստանի Ազգային հերոս *Թաթուլ Կրպեյան*[19] (1965–1991), որը մարմնավորում է մահապարտ հերոսի կերպարը, հայկական հատուկ նախանշանակման ջոկատի մարտական ավանդույթների հիմնադիր *Լեոնիդ Ազգալդյան* (1942–1992), և ուրիշներ:

Այս ցուցակը կարելի է շարունակել: Բայց, միևնույն ժամանակ, այսօրվա իրականության մեջ ռազմահայրենասիրական աշխատանքի ոլորտում այս պատմական անձանց ներկայացման խնդիրը համակարգված ձևով չի լուծվում՝ ոչ որպես խորհրդանշանային հերոսների և նրանց մեծագործությունների պանթեոնի, ոչ էլ դաստիարակչական պրակտիկայում տեղեկատվական, ուսումնական, ռազմաարարողակարգային և ռազմաարծանագրային կիրառման տեսանկյունից:

Մտավոր, մշակութալուսավորական ժառանգության լավագույն նմուշների մշտական հայտնաբերումը և նպատակաուղղված կիրառումը, անշուշտ, կնպաստեն յուրաքանչյուր հայի՝ որպես իր ազգի ներկայացուցչի և իր պետության քաղաքացու մեջ իր ազգային պատմամշակութային անցյալի, լեզվի, դավանության, բարոյահոգեբանական ինքնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորմանն ու ամրապնդմանը: Այդ համատեքստում, մեր կարծիքով, զավթիչների դեմ անընդհատ պայքարի պայմաններում ու ներկայիս փուլում հայերի համար ազգային արժեքների վառ խորհրդանիշներ են հարուստ հին հնդեվրոպական լեզուն, յուրատիպ այբուբենը և գիրը՝ որպես ազգային ինքնության պահպանման զենք, քրիստոնեական հավատն ու ազգային, աշխարհում առաջին պետական, Քրիստոսի անմիջական աշակերտներ Թադեոս ու Բարդուղիմեոս առաքյալների 1-ին դարում ծավալած լուսավորչական գործունեության վրա հիմնվող Առաքելական եկեղեցին՝ որպես հոգևոր-լուսավորական կենտրոն և դարեր շարունակ ազգապահպանության մարմնացում, ինչպես նաև գիտության ու մշակույթի բնագավառներում ձեռք բերված նշանակալից նվաճումները: Ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական մասնագիտություններ ունեցող հայ հերոսների պանթեոնի մշտական համալրումը պետք է նպատակաուղղված լինի մարտական ոգու բարձրացմանը և իր ժողովրդին հավատարիմ լինելու ու ծառայելու գաղափարի սերմանմանը հայության, առաջին հերթին՝ երիտասարդ սերնդի շրջանում: Որպես ազգային մտավոր սխրանքի ականավոր ներկայացուցիչների չափանիշ, որը համապատասխանում է համաշխարհային գիտության ու մշակույթի լավագույն նմուշներին, կարելի է դիտարկել հետևյալ կերպարները.

Լուսավորություն, կրթություն, կրոն. Հայաստանյայց Առաքելական եկեղեցու հիմնադիր եպիսկոպոս *Գրիգոր Լուսավորիչ* (3–4-րդ դդ.), հայոց այբուբենի ստեղծող, լուսավորիչ, Սուրբ Գրքի թարգմանիչ, ազգային դպրոցի ու մանկավարժական մտքի հիմնադիր, գրության համակարգերի գյուտի փաստացի հայտնի հեղինակ *Մեսրոպ Մաշտոց* և նրա սխրակից կաթողիկոս *Սահակ Պարթև* (5-րդ դ.), գիտնականներ-*Մխիթարյան միաբանության հայրեր* (18–20-րդ դդ.), որոնք իրենց աշխատություններով ոչ միայն նպաստել են ազգային մշակութային ժառանգության պահպանմանն ու գիտական մտքի զարգացմանը, այլև հայ ժողովրդի մտավոր նվաճումները ներկայացրել են Եվրոպայի լայն գիտական շրջաններին, Արևմտյան Հայաստանում ծավալված ազգային-ազատագրական շարժման հոգևոր առաջնորդ Կաթողիկոս *Խրիմյան Հայրիկ* (Մկրտիչ Խրիմյան (1820–1907)), և ուրիշներ,

գիտություն. համաշխարհային պատմագրության ականավոր ներկայացուցիչ, Պատմահայր, քննադատական պատմագրության հայրենական դպրոցի հիմնադիր եպիսկոպոս *Մովսես Խորենացի* (5-րդ դ.), փիլիսոփա, նոր պլատոնականության հետևորդ, նոր պլատոնականության Ալեքսանդրիայի դպրոցի ներկայացուցիչ *Դավիթ Անհաղթ* (5–6-րդ դդ.), աշխարհագրագետ, քարտեզագիր, պատմաբան, աստղագետ *Անանիա Շիրակացի* (7-րդ դ.), բանաստեղծ, պատմաբան, լեզվաբան, աշխարհագրագետ, թարգմանիչ, Մխիթարյանների միաբանության աբբահայր *Ղևոնդ Ալիշան* (Քերովբե Ալիշանյան (1820–1901)), որն անգնահատելի ավանդ ունեցավ հայագիտության զարգացման գործում, համաշխարհային ճանաչում ստացած գիտնական, տեսական աստղաֆիզիկայի ստեղծողներից, Բյուրականի աստղադիտարանի հիմնադիր, Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս, ՌԴ Պետական մրցանակի դափնեկիր, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ ԳԱ նախագահ, Հայաստանի Ազգային հերոս *Վիկտոր Համբարձումյան* (1908–1996), արևելագետ, հասարակական գործիչ, «էրմիտաժի» տնօրեն, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս և առաջին նախագահ *Հովսեփ Օրբելի* (1887–1961), ֆիզիոլոգ, էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի հիմնադիրներից, ԽՍՀՄ ԳԱ փոխնախագահ, բժշկական ծառայության գեներալ-գնդապետ *Լևոն Օրբելի* (1882–1958), միութենական Տեսական և փորձարարական ֆիզիկայի ինստիտուտի հիմնադիր, խորհրդային ատոմային ռումբի ստեղծողներից, ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ *Աբրահամ Ալիխանյան* (1904–1970), ԽՍՀՄ «միջուկային վահանի» ստեղծող, առաջին ատոմային և ջերմամիջուկային մարտապաշարների ու հրթիռամիջուկային միջոցների առաջատար մշակող և գլխավոր կոնստրուկտոր, Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս, ԽՍՀՄ Լենինյան և չորս Պետական մրցանակների դափնեկիր *Սամվել Քոչարյան* (1909–1993), ավիակոնստրուկտոր, առաջին գերձայնային մարտական ինքնաթիռների՝ հռչակավոր ՄիԳ-երի ստեղծող, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս, Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս, ինժեներատեխնիկական ծառայության գեներալ *Արտեմ Միկոյան* (1905–1970), փառապանծ բևեռախույզ ու հիդրոլոգ, Խորհրդային Միության և Ռուսաստանի հերոս (այդ երկու պարգևներն ունեցող չորս մարդկանցից մեկը),

Սբ. Մեսրոպ Մաշտոց շքանշանի (ՀՀ) ասպետ *Արթուր Չիլինգարով* (1939 թ. ծ.), և ուրիշներ,

քաղաքականություն, դիվանագիտություն, հասարակական գործունեություն. Ռուսաստանի Կայսրությունում վարչական բարեփոխումների նախաձեռնող, ներքին գործերի նախարար, կոմս, գեներալ *Միքայել Լոռիս-Մելիքով* (1825–1888)[20], հասարակական-քաղաքական գործիչ *Պողոս Նուբար-փաշա* (1851–1930), որը Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի հանձնարարությամբ Փարիզի խաղաղության կոնֆերանսում ներկայացնում էր հայ ժողովրդի շահերը[21], ԽՍՀՄ ականավոր պետական գործիչ, Հայրենական մեծ պատերազմի տարիներին ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեի անդամ, դիվանագետ, որի ջանքերի շնորհիվ Կարիբյան ճգնաժամն ուներ խաղաղ ավարտ, *Անաստաս Միկոյան* (1895–1978), ԱՄՆ-ի Հանրապետական կուսակցության կարկառուն գործիչ, Կալիֆոռնիայի 35-րդ նահանգապետ, Կալիֆոռնիայի նախկին գերագույն դատախազ *Գուրգեն Ջորջ Դոքմեջյան* (1928 թ. ծ.), ամերիկյան դիվանագետ *Էդուարդ Ջերեջյան* (1939 թ. ծ.), լրագրող, «Ազոս» թերթի (Թուրքիա) գլխավոր խմբագիր, ազգայնամոլական շարժառիթներով թուրք ծայրահեղականների ձեռքով սպանված *Հրանտ Դինք* (1954–2007), և ուրիշներ,

գրականություն, արվեստ. բանաստեղծ, փիլիսոփա, վանական, հայկական Վերածննդի հիմնադիր *Գրիգոր Նարեկացի* (10-րդ դ.), հայ նոր գրականության ու գրական լեզվի ստեղծող, մանկավարժ, ազգագրագետ *Խաչատուր Աբովյան* (1809–1848), հայ գրականության մեջ պատմահայրենասիրական արձակի ժանրի հիմնադիր *Րաֆֆի* (Հակոբ Մելիք-Հակոբյան (1835–1888)), Հարավային Կովկասում ազգամիջյան խաղաղարարության առաջնորդ, մեծ գրող ու բանաստեղծ *Հովհաննես Թումանյան* (1869–1923), հայկական հայրենասիրական պոեզիայի դասականներ *Եղիշե Չարենց* (Եղիշե Սողոմոնյան (1897–1937)) և *Հովհաննես Շիրազ* (Հովհաննես Կարապետյան (1915–1984)), ժամանակակից ամերիկյան գրականության դասական *Վիլյամ Սարոյան* (1908–1981), հայկական նոր դասական երաժշտության հիմնադիր *Կոմիտաս* (Սողոմոն Սողոմոնյան (1869–1935)), 20-րդ դարի մեծ կոմպոզիտոր, Սոցիալիստական աշխատանքի հերոս, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ *Արամ Խաչատրյան* (1903–1978), աշխարհահռչակ ֆրանսիական էստրադային երգիչ ու դերասան, հասարակական ու դիվանագիտական գործիչ, Հայաստանի Ազգային հերոս *Շառլ Ազնավուր* (1924 թ. ծ.), և ուրիշներ:

Ամփոփում

Թեև այս տաղանդավոր մարդիկ տարբեր, երբեմն՝ հայ ժողովրդի համար աղետալի դժվար, ժամանակների ականավոր գործիչներ են, սակայն նրանց միավորում է հայրենասիրության բարձր զգացումը, անձնվեր ծառայությունն ի փառս հայ ժողովրդի: Նրանց օրինակը կարող է և պետք է ծառայի հայության հերոսական կենսունակության գաղափարի ամրապնդմանը և դրա նպատակաուղղվածությանը մարդկության ինքնաարտահայտման ամենաբարձր ստանդարտներին: Կարևոր է ազգային տաղանդն ու հերոսական ոգին իմաստավորել և քարոզել որպես հայ ժողովրդին բնորոշ հատկություն: Նպատակահարմար է կատարելագործել ազգային պետության և հայաստանակենտրոն Սփյուռքի փոխադարձաբար հարստացնող համակարգված համագործակցությունը, այդ թվում նաև ազգային հերոսականության քարոզման, ամբողջ ազգային ժառանգության համակարգման, արդյունավետ կիրառման, հարստացման ու սերնդից սերունդ փոխանցման ուղղությամբ: Այս առումով շատ կարևոր է թվում ազգային ինքնության պահպանմանն ու զարգացմանը միտված իսրայելակենտրոն սփյուռքի և էրեց-Իսրայելի արդյունավետ փոխգործության ու ամենաբարձր պետական մակարդակով ռազմահայրենասիրական դաստիարակության համակարգի ձևավորման փորձի խոր ուսումնասիրությունը:

ՀՀ-ում իրականացվող պաշտպանական բարեփոխումների համատեքստում հենց այս տեսանկյունից է ակտուալ ուսումնասիրել Իսրայելի Նախագահ և ռազմական հետախուզության նախկին ղեկավար Խայիմ Հերցոգի ներկայացմամբ Իսրայելի Պետության այն փորձը, որը նա կուտակել է ինչպես հրեական ազգային պետության, այնպես էլ վերջինիս հետ ակտիվ կերպով համագործակցող հրեական սփյուռքի տիրույթներում հրեա ժողովրդի ռազմահայրենասիրական դաստիարակության համակարգված կազմակերպման գործում:

Տեղասպանության ու Ողջակիզման ազգային աղետներին իրենց հին պետականության վերականգնմամբ պատասխանած հայ և հրեա ժողովուրդների հերոսականության համեմատական վերլուծությունը հնարավորություն է տալիս ստեղծելու հայ զինվորի մարտական ոգու ձևավորման ամբողջական համակարգ՝ բաղկացած հետևյալ տարրերից.

– *գիտական*՝ հետազոտություններ և մշակումներ,

– *մշակութային*՝ հայրենասիրական ստեղծագործությունների ստեղծում ու քարոզում,

– *ուսումնական* դասագրքերի ու ձեռնարկների ստեղծում, ուսումնադաստիարակչական գործընթացի փոխլրացնող քաղաքացիական ու զորային բաժինների կազմակերպում,

– *զինվորական ծիսական ու հերալդիկ* արշավներ մարտական փառքի վայրեր, զինվորական երդումներ հերոսների արձանների ու ճակատամարտերի հուշահամալիրների մոտ, մեր ժամանակների հերոսների պարգևատրման հանդիսավոր արարողություններ, լավագույն զինվորական ստորաբաժանումներին ու երիտասարդական հայրենասիրական կազմակերպություններին հերոսների անունների և անվանանշանների շնորհում՝ ինչպես ազգային պետության, այնպես էլ Հայոց Սփյուռքի հայության համապատասխան սոցիալական խմբերի տեղեկատվական ապահովմամբ:

«Հայաստանը իրավունք չունի պարտվելու և ոչ մի պատերազմում. այլևս երբեք ցեղասպանություն հայ ժողովրդի նկատմամբ» թևավոր խոսքը լավագույնս արտահայտում է ներկայիս անկախ Հայաստանի Զինված ուժերի առաքելությունը և պետք է դառնա հայ զինվորի մարտական ոգու ձևավորման ոլորտում պաշտպանական բարեփոխումների նպատակն ու կարգախոսը:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

---

[1] Երկու պետությունների ստեղծման գործընթացի համեմատական վերլուծության ժամանակ պետք է հաշվի առնել, որ, ի տարբերություն Հայաստանի Հանրապետությունից, Իսրայելի Պետությունը հիմնադրվել է «զրոյից»՝ արաբների թշնամական միջավայրում, հրեա բնակչություն չլինելու պայմաններում՝ հրեաների ներգաղթի (Ալիյա, 1908–1948 թթ.) միջոցով: Նրանց մեծ մասը էրեց-Իսրայելի վերականգնման գաղափարին իրենց ամբողջ գործունեությամբ, բազմակող ու մտավոր ներուժով նվիրված «մոլեռանդ հայրենասերներ» էին: Մեր իրականությունում այդպիսիք էին Մոնթե Մելքոնյանն ու Լեոնիդ Ազգալդյանը: ՀՀ ԶՈՒ-ի բարեփոխման գործում Իսրայելի փորձի ստեղծագործական ընկալումը ենթադրում է ազգային գաղափարին նվիրված, ազնիվ, մեծ մտավոր կարողություններով օժտված, բազմակողմանի զարգացած հրամանատարական ու սպայական կազմի առկայություն:

[2] Տես *Chaim Herzog*. Heroes of Israel. Profiles of Jewish Courage. Israel, 1991: Քանի որ սույն հոդվածը հիմնականում գրված է այդ գրքի հենքի վրա, մենք այսուհետև չենք նշի դրան արվող հղումները, բացի հատուկ դեպքերից:

[3] Տես *Yael Zerubavel*. Recovered Roots. Collective Memory and the Making of Israeli National Tradition. Chicago-London, 1995: Նշենք, որ սույն հոդվածը գրելիս մենք մեծապես օգտվել ենք նաև այս գրքից, ուստի հղումներում այն ևս չենք հիշատակում:

[4] Տես *Yigael Yadin*. Bar Kokhba: The Rediscovery of the Legendary Hero of the Second Jewish Revolt against Rome. Jerusalem, 1971:

[5] Տես *Yigael Yadin*. Masada: Herod's Fortress and the Zealots' Last Stand. New York, 1966:

[6] Տես *N. Ben-Ari* and *E. Kena'ani*, eds. Yosef Trumpeldor: Po'alo u-Tekufatd/Yosef Trumpeldor: His Life and His Times (Hebrew and English). Tel Aviv, 1970:

[7] Տես «Jewish Resistance: A Working Bibliography». «The Miles Lerman Center for the Study of Jewish Resistance». «Center for Advanced Holocaust Studies United States Holocaust Memorial Museum». Washington, DC (http://www.ushmm.org/research/center/lerman/bibliography/pdf/bibliography.pdf), նաև՝ «Holocaust Survivors and Remembrance Project: «Forget You Not». The Jewish Resistance During the Holocaust» (http://isurvived.org/TOC-IV.html#Resistance):

[8] Տես «Israeli Special Forces History» (http://www.isayeret.com/):

[9] Տես «David Ben-Gurion». «Knesset Members» (http://www.knesset.gov.il/mk/eng/mk_eng.asp?mk_individual_id_t=684), *նաև*՝ «David Ben-Gurion». The Jewish Agency for Israel (http://www.jafi.org.il/education/100/people/BIOS/bg.html):

[10] Տես «Entebbe Raid (Operation Entebbe, Jonatan Operation, Operation Thunderbolt)». «Britannica Online Encyclopedia», 2009 (http://www.britannica.com/EBchecked/topic/188804/Entebbe-raid); *Max Hastings*. Yoni, Hero of Entebbe. 1979; *Iddo Netanyahu*. Yoni's Last Battle: The Rescue at Entebbe. 1976; *Raffi Berg*. Recollections of Entebbe, 30 years on (http://news.bbc.co.uk/2/hi/middle_east/5101412.stm):

[11] Տես *Հրանտ Արմեն*, Մեծն Տիգրան, 2-րդ հրատ.: Կահիրե, 1957:

[12] Տես «Жизнь генерал-лейтенанта Мадатова». СПб., 1874:

[13] Տես *Ս. Աֆանասյան*, Սարդարապատի հաղթանակը. Հայաստան, 1918 թ. մայիս: Ե., 1991:

[14] Տես «Военный энциклопедический словарь». М., 2002, сс. 110, 109, 1351, 551, 29:

[15] Տես նույն տեղում, էջ 1243:

[16] Տես «Кавалеры ордена Славы трех степеней». М., 2000:

[17] Տես *Պ. Ս. Մուրադյան*, Սուրբ Շուշանիկի վկայաբանությունը (բնագրեր և հետազոտություն): Ե., 1996:

[18] Տես «Հայաստանի Հանրապետության Նախագահի 1996 թ. սեպտեմբերի 20-ի հրամանագիր Ազգային հերոսի շնորհման մասին: ՆՀ-647»:

[19] Տես «Հայաստանի Հանրապետության Նախագահի 1996 թ. սեպտեմբերի 20-ի հրամանագիր Ազգային հերոսի շնորհման մասին: ՆՀ-648»:

[20] Տես *Ю. Л. Костанян*. Граф Михаил Тариелович Лорис-Меликов. СПб., 2005:

[21] Տես *Д. Ллойд Джордж*. Правда о мирных договорах, т. 2. М., 1957:

ՀԱՅ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱՉԱՓԻ ՄԵՋ*

ՋԵԿՈՒՑՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գիտության և կրթության հանձնաժողովի լսումներում

Երևան 2008 թ. նոյեմբերի 5

Հանձնաժողովի հարգելի Նախագահ

Հարգելի գործընկերներ

Գիտության՝ որպես Հայաստանի ազգային անվտանգության ապահովման ռազմավարական գործոններից մեկի մասին ես կզեկուցեմ՝ առաջին հերթին հիմք ընդունելով այն տեղն ու դերը, որ մեր ազգային անվտանգության համակարգում զբաղեցնում է հիմնարար, կամ ֆունդամենտալ, գիտությունը: Ըստ իս՝ հիմնարար գիտության զարգացման գործում պետական շահագրգռվածություն չլինելու հանգամանքը հղի է նաև կրթական համակարգի հետաձի և, որպես հետևանք, մեր ազգի մտավոր ներուժի կորստի վտանգով: Այնուհետև ես համառոտակի կներկայացնեմ Հայաստանում ռազմավարական անվտանգային հետազոտությունների պրոբլեմների նկատմամբ իմ մոտեցումը:

Հայկական ակադեմիական գիտությունը, որը ԽՍՀՄ հիմնարար գիտության առաջատար բաղադրիչներից էր, իր ուրույն տեղն ու դերն ուներ խորհրդային երկրի՝ որպես համաշխարհային գիտական տերության հեղինակության ձևավորման գործում: Անկախության շեմին Հայաստանը, ի տարբերություն Մերձբալթյան հանրապետություններից, գիտության նկատմամբ իր քաղաքականությունը կողմնորոշեց թույլ զարգացած երկրների մակարդակի: Այսինքն՝ քաղաքականապես սահմանվեցին գաճաճ տրամաչափի գերակայություններ ու նպատակներ, որոնք

* «Հայկական բանակ», 2008, հմ. 4: Հաշվի առնելով ՀՀ-ում համընդգրկուն, այդ թվում՝ պաշտպանական, գիտահեն բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը, խմբագրությունը նպատակահարմար է գտել ընթերցողների ուշադրությունը հրավիրել ՀՀ-ում հիմնարար գիտության՝ որպես մեր հանրապետության ազգային անվտանգության ապահովման կարևոր գերակայության զարգացման հայեցակարգային խնդիրներին:

սկզբունքորեն չեն համապատասխանում հայ ժողովրդին հատուկ մտավոր ներուժին:

Միևնույն ժամանակ փոշիացվեց Հայաստանի արդյունաբերական հզորությունը, որը նպատակաուղղված էր գիտատար և առաջատար տեխնոլոգիաների մշակմանն ու կիրառմանը: Իշխանությունները փոխանակ զարկ տային միջազգային, այդ թվում՝ տարածաշրջանային, տնտեսական գործընկերակցության նոր ցանցի և շուկայի ձևավորմանը, վաճառեցին գործարանային համալիրները ջարդոնի գնով և Հայաստանը զրկեցին իր գիտելիքահենք արդյունաբերությունը արդիականացնելու ռազմավարական հեռանկարներից: Տվյալ պայմաններում ֆինանսավորման հզոր պետական աղբյուրների վերացումը հանգեցրեց Հայաստանում հիմնարար հետազոտությունների կազմակերպման գործում զգալի բարդությունների: Վիճակն էլ ավելի վատթարացավ, երբ նորանկախ Հայաստանի իշխանությունները, թերագնահատելով ֆիզիկամաթեմատիկական և այլ բնական գիտությունների բնագավառներում հայ գիտնականների համաշխարհային ճանաչում ստացած նվաճումները, ազգային գերակայությունների շարքից բացառեցին հիմնարար գիտությունը: Վերացվեցին մտավոր ներուժի վերարտադրման համար անհրաժեշտ պայմանները, առաջին հերթին՝ հիմնարար գիտության հոչակավոր հայկական դպրոցների պարարտ միջավայրը: Այս ամենի հետևանքով Հայաստանը կորցնում է իր՝ որպես զարգացած գիտությամբ աչքի ընկնող պետության վարկը: Մինչդեռ բնական գիտությունների զարգացումը Հայաստանում դիտվել է որպես գերակայություն. դեռ Խորհրդային Հայաստանի Գիտությունների ակադեմիայի ստեղծման ժամանակ հասարակագետ ակադեմիկոս Հովսեփ Օրբելու գլխավորությամբ ստեղծված Ակադեմիայի Նախագահության հիմնադիր կազմում 23 անդամից 17-ը բնական գիտությունների ներկայացուցիչ էին:

Ցավոք, անկախության առաջին տարիներին պետության կողմից թույլ տրված վերը նշված աներեւելի ռազմավարական սխալները շարունակում են անդրադառնալ ոչ միայն հիմնարար գիտության այն բնագավառների վրա, որոնք պահանջում են հետազոտական գործիքարանի խոշոր ֆինանսավորում, այլև տեսական բաժինների վրա, որոնց համար մեծ կապիտալ ներդրումներ չեն պահանջվում: Թեև առաջատար հայ մասնագետների աշխատությունները կանոնավոր կերպով թարգմանվում և հրապարակվում են արտասահմանյան հեղինակավոր գիտական հրատարակություններում, նրանց աշխատավարձը Հայաստանում շարունակում է մնալ աներևակայելի ցածր՝ կառավարական շենքերի հավաքարարների վարձատրման չափ:

Գիտական գործունեության նման ցածր վարձատրությունն սպառնում է ոչ միայն ազգի մտավոր ներուժի ապագային, այլև նման իրավիճակի հետ համակերպվող իշխանությունների հեղինակությանը: Չի կարելի շարունակել նման քաղաքականությունը, որը ակնհայտորեն հանգեցնում է գալիք գիտական սերնդին մեր ժողովրդի կուտակած մտավոր ներուժի փոխանցման ձախողմանը: Այսինքն՝ ռազմավարական տրամաչափի և անվտանգային նշանակություն ունեցող հիմնարար գիտության հեռանկարների կորստյանը: Հայաստանի ազգային անվտանգության կարևորագույն գերակայություն պետք է համարել Ազգային ակադեմիայում և առաջատար բուհերում հիմնարար հետազոտություններով զբաղվող գիտնականներին և գիտական կոլեկտիվներին իրավական, ֆինանսական ու սոցիալական աջակցության լիարժեք ապահովումը:

Ինձ հայտնի է, որ մեր հանրապետության նախագահը բացառիկ կարևորություն է տալիս Հայաստանի կայուն և անվտանգ զարգացման գործում հիմնարար գիտության դերին: Հենց Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության գերակայություններից ելնելով՝ անհրաժեշտ է գիտնականների աշխատանքի վարձատրությունը ներկայիս նսեմացուցիչ մակարդակից հասցնել մեր պետությունում գործող առավել բարձր աստիճանի հաստիքադրույքների: Տվյալ արտակարգ կարևորության պրոբլեմը հարկ է դիտել նաև հիմնարար գիտության մեջ տաղանդավոր երիտասարդության ներգրավումը շարժառիթավորելու տեսանկյունից՝ ապահովելով նրա իրավունքը՝ իր մասնագիտական աճն ու ընտանիքի ապագան պլանավորելու իր մայր հողի վրա՝ Հայաստանում: Դա նաև կնանխի շնորհալի երիտասարդների արտահոսքը, ինչի շարունակումն սպառնում է մեր ազգի մտավոր կարողությունների անդառնալի հյուծմամբ: Այս առումով հատուկ ուշադրության է արժանի արտասահմանյան բուհերում սովորող հայ երիտասարդների վերադարձն ապահովող մասնագիտական ու ֆինանսական պատշաճ պայմանների ստեղծումը:

Հայաստանի Հանրապետությունում հասունացել է հիմնարար գիտության զարգացման ռազմավարության՝ որպես ազգի կարևորագույն անվտանգային ռեսուրսի համակարգային մշակման և դրա հիման վրա ապագային միտված գիտելիքահենք հեռահար քաղաքականության վարման անհրաժեշտությունը: Դա կապված է մեր հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներում ազգային անվտանգության ռազմավարության իրացման հրամայականների հետ: Կարևոր է այս բնագավառում որոշումներ ընդունելիս ելնել հետևյալ դիտակետից. հիմնարար գիտության կոմերցիոն արժեքը բուն իմաստով հնարավոր չէ գնահատել, քանի որ այն միտված է գիտական մտքի հեռահար հորիզոնների նորացմանը և

այդ առումով՝ ճյուղային, կիրառական գիտությունների հայեցակարգային սնուցմանը: Ճյուղային հետազոտությունների ասպարեզը գերատեսչական ոլորտների տիրույթն է: Իսկ այդ՝ գերատեսչական դասի հետազոտությունների արգասիքների միջգերատեսչական համադասումը և նորամուծական գործընթացների կոմերցիոն գնահատումն ու իրավական կազմակերպական ուղեկցումը պահանջում են ճյուղային գիտության կիրարկումներով զբաղվող հատուկ պետական հաստատության կողմից ղեկավարում ու կառավարում:

Իմ կարծիքով՝ Հայաստանում գիտության զարգացման ռազմավարության մշակման ժամանակ նպատակահարմար կլիներ իրավասությունները բաժանել այնպես, որ հիմնարար գիտության միջնաժամկետ ու երկարաժամկետ հեռանկարների համար պատասխանատու լիներ Գիտությունների ազգային ակադեմիան, իսկ ճյուղային հետազոտությունների զարգացման և տնտեսության նորամուծական ենթակառուցվածքում դրանց արգասիքների կիրառման միջգերատեսչական համադասման համար՝ Կրթության և գիտության նախարարության կազմում գործող Գիտության կոմիտեն: Այս դերաբաժանման խելամիտ կազմակերպումը կնպաստի գիտության, կրթության և տնտեսության փոխլրացնող գործակցությանը:

Նպատակահարմար է սահմանել Գիտությունների ազգային ակադեմիայի՝ որպես ժամանակակից ճկունություններով օժտված և համաշխարհային գիտական ցանցի մեջ ակտիվ դերակատարմամբ պետական հիմնարկի պատասխանատվության մեխանիզմները՝ ապահովելով հիմնարար հետազոտությունների վրա բյուջետային և արտաբյուջետային միջոցների ծախսման մրցութայնությունը, թափանցիկությունն ու արդյունավետությունը: Ակնհայտ է նաև այնպիսի չափանիշների համակարգի ձևավորման անհրաժեշտությունը, որոնք հնարավորություն տան արդյունավետ կերպով դատելու Հայաստանում հիմնարար գիտության բնագավառների զարգացման մակարդակի վերաբերյալ: Հույժ կարևորություն ունի Ակադեմիայի Նախագահության վերակառուցումը համաշխարհային գիտական ցանցի հետ համագործակցությունը ապահովող իրավական-ֆինանսական-կազմակերպական ժամանակակից կարողություններով գինված կառույցի: Իմ կարծիքով՝ ռազմավարական նշանակություն կունենա ազգային տրամաչափի որոշումների ընդունման գիտական հիմնավորման գործում Ազգային ակադեմիայի՝ որպես կառավարության կոլեկտիվ խորհրդականի կարգավիճակի վերականգնումը:

Գիտության պետական կոմիտեի հիմնական խնդիրներ կարող են լինել ճյուղային գիտելիքների զարգացման միջգերատեսչական միջավայրի

ձևավորման համադասումը, տեխնոլոգիական նորամուծությունների նկատմամբ տնտեսության կորպորատիվ հատվածի ընկալունակության մեծացումը, նորամուծական միջավայրի վրա ազդող ճյուղային գիտության ներդաշնակեցումն ու զարգացումը: Կարևոր է նորամուծական ենթակառուցվածքների ձևավորման այնպիսի պրոբլեմների մշակումը, ինչպիսիք են հարկումը, մաքսային գործիքարանը, մտավոր սեփականության կարգավորումը:

Կոմիտեի հանգուցային խնդիրներ կարող են լինել նաև ճյուղային հետազոտությունների ու մշակումների ակտիվ ներբերումը տարածաշրջանային ու համաշխարհային տնտեսության մեջ, մասնավոր-պետական գործընկերության արդյունավետ մեխանիզմների ձևավորումն ու տրամաչափումը և արտադրական նորամուծական ենթակառուցվածքի առավել արդյունավետ բաղադրատարրերի զարգացումը: Այս առումով կարելի է առաջարկել ռեսուրսների կենտրոնացում այնպիսի նախագծերի վրա, որոնք առնչվեն միջազգային կոոպերացիային, այդ թվում՝ Եվրամիության հետ համագործակցության շրջանակներում:

Եթե չլուծվեն հիմնարար և կիրառական գիտաճյուղերի համակարգված զարգացման, ինչպես նաև պրակտիկայի մեջ դրանց արգասիքների նորամուծական ներդրման խնդիրները, ապա Հայաստանը կզրկվի նաև միջնակարգ և բարձրագույն կրթության շարունակական զարգացման համար անհրաժեշտ գիտական հիմքերից: Այս առումով ուշադրության է արժանի ռուսաստանյան իշխանությունների նոր գիտակրթական քաղաքականությունը, ըստ որի՝ Բոլոնիայի ակադեմիական սկզբունքները կիրառվում են ընտրողաբար՝ սեփական դրական փորձի հաշվառմամբ, ինչպես նաև պետական ակադեմիաների համակարգի միջոցով հիմնարար գիտության պետական ղեկավարման առավելությունների օգտագործմամբ: Ոխտի մենք առաջարկում ենք գիտության և կրթության պրոբլեմները դիտարկել ազգային անվտանգության գերակայությունների համատեքստում՝ շեշտը դնելով ոչ թե սպառնալիքների և դրանց չեզոքացման միջոցների հնքնանպատակ բացահայտման վրա, այլ հիմնարար և ճյուղային գիտության, ինչպես նաև կրթության երկարաժամկետ ֆինանսական, իրավական ու հաստատութենական ապահովման համակարգի կայուն զարգացման ռազմավարության մշակման վրա:

Որպես ազգային անվտանգության լուրջ պրոբլեմ պետք է դիտել նաև մեր հանրապետությունում գիտական կադրերի ատեստավորման և գիտական որակավորման համակարգում տարածված կոռուպցիան: Առաջին հերթին հարկ է վերականգնել թեկնածուական և դոկտորական աստիճանների հայցման ատենախոսությունների պատրաստման ու պաշտպանության ակադեմիական ստանդարտները: Եթե շարունակվի ատենախոսությունների վճարովի գրման և գիտական աստիճանների առուծախի բոլորիս հայտնի արատավոր պրակտիկան, ապա անխուսափելիորեն տեղի կունենա մեր ազգի գիտական հնարավորությունների դեգրադացում: Զգոնություն է պահանջում որոշ անձանց ձգտումը կոռուպցիայի դեմ պայքարի քողի տակ կազմալուծելու Հայաստանի ԲՈՀ-ը՝ գիտական որակավորման ասպարեզում իրենց դրամաշորթությունն անվերահսկելի դարձնելու նպատակով:

Հույս ունեմ, որ ասպիրանտական պատրաստման, գիտական կադրերի ատեստավորման և գիտական աստիճանների շնորհման բնագավառում կոռուպցիայի դեմ պայքարը կհանգեցնի որակավորման գիտականորեն հիմնավորված ու խստիվ սահմանված ստանդարտների ներմուծմանը:

Մի քանի խոսք անվտանգության քաղաքագիտության բնագավառում կատարվող ռազմավարական հետազոտությունների մասին: Ազգային անվտանգության ռազմավարության միջգերատեսչական մշակումը, որը կատարվել էր պաշտպանության նախկին նախարար և հանրապետության ներկայիս Նախագահ պարոն Սերժ Սարգսյանի ղեկավարությամբ, ստեղծեց հիմքեր անվտանգային քաղաքագիտության ազգային դպրոցի ձևավորման համար: Հարկ է նշել, որ առաջին քայլերն են արվում ռազմավարական հետազոտությունների բնագավառի ձևավորման ուղղությամբ: Մեկնարկել է պետական հաստատությունների ակտիվ գործունեությունը՝ Նախագահին առընթեր Քաղաքական հետազոտությունների ինստիտուտում, «Նորավանք» հիմնադրամում, Դրո հաստատությունում: Այդ համատեքստում պաշտպանության նախարարության Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը, Հայաստանի ԲՈՀ-ի հետ պայմանավորվածությամբ, մշակել է մեր հանրապետության համար նոր մասնագիտության գիտական վկայագիր, որի ամերիկյան համարժեքն է «*Security Studies*» որակավորումը: Ծավալվում է մեր ինստիտուտի մասնագիտական համագործակցությունը անվտանգային քաղաքագիտության այնպիսի առաջատար կենտրոնների հետ, ինչպիսիք են ԱՄՆ-ի Հարվարդի համալսարանը և Պաշտպանական Ազգային համալսարանը, ՌԴ նախագահին առընթեր պետական ծառայության ռուսաստանյան ակադեմիան, Ռազմավարական անվտանգային հետազոտությունների Ջորջ Մարշալի անվան եվրոպական կենտրոնը: Հուսով եմ, որ Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի, Երևանի պետհամալսարանի, Կրթության և գիտության նախարարության, ԲՈՀ-ի ու «Նորավանք» հաստատության հետ մեր համագործակցությունը հնարա-

վորություն կտա հաղթահարելու այն հավակնոտ, սակայն ինքնուս և սիրողական տարրերը, որոնք Հայաստանում բնորոշ են գիտելիքի այնպիսի կարևոր մարզին, ինչպիսին է ազգային անվտանգության բնագավառի ռազմավարական հետազոտությունների քաղաքագիտությունը:

Ավարտելով զեկուցումս՝ պատիվ ունեմ նշելու տվյալ լսումների կարևորությունը՝ ակնկալելով, որ Ազգային ժողովում տեղի ունեցող այս քննարկումը չի դառնա ժամանակի հերթական անպտուղ վատնում, այլ լուրջ ազդակ կտա հայ ժողովրդի ազգային անվտանգության կենսականորեն կարևոր արժեք ներկայացնող գիտության և կրթության զարգացման ռազմավարական խնդիրների լուծմանը:

ԼՂՀ ՃԱՆԱՉՄԱՆ ՈՒԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՆՈՐՄԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ*

Ինչպե՞ս է Ղարաբաղյան հարցի վերաբերյալ ՄԱԿ-ի բանաձևը հարաբերակցվում Միավորված ազգերի կանոնադրական հրամայականների և պատերազմի վերսկսման սպառնալիքի հետ:

Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի՝ որպես Մինսկի խմբի համանախագահների քվեարկությունը Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բանաձևի դեմ, ի լրումն 4 դեմ քվեարկածների և 100 ձեռնպահների, վկայում է, որ ՄԱԿ-ի անդամների գերակշռող մասի համար մերժելի է ՄԱԿ-ի որոշումների ընդունման ժամանակ միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների ու նորմերի համակարգված և անկանխակալ կիրառման սկզբունքի խախտումը:

Ադրբեջանին, ինչպես նաև բանաձևին կողմ քվեարկած մյուս 38 պետություններին դաս է տրվել ՄԱԿ-ում այնպիսի փաստաթղթեր անցկացնելու անթույլատրելիության առումով, որոնք հակասում են իրենց ամբողջականությամբ Միավորված ազգերի միջազգային պայմանագրաիրավական սուբյեկտայնությունը որոշող հիմնական նպատակներին և սկզբունքներին: Միավորված ազգերն այս քվեարկությամբ հաստատեցին, որ իրենց համար ընդունելի չէ Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ ադրբեջանական բանաձևում միմիայն տարածքային ամբողջականության սկզբունքի միակողմանի արտացոլումը՝ ժողովուրդների իրավահավասարության սկզբունքի և ազատ ինքնորոշման իրավունքի անտեսմամբ: Գլխավոր ասամբլեան բանաձևի հեղինակներին ի ցույց դրեց Ադրբեջանի կողմից ՄԱԿ-ի Կանոնադրության նկատմամբ իր ունեցած պարտավորությունների խախտման փաստը:

Փաստորեն Ադրբեջանին նաև մատնանշվել է, որ նա պարտավորություններ ունի, «ժողովուրդների իրավահավասարության և ազատ ինքնորոշման իրավունքի»՝ որպես ՄԱԿ-ի Կանոնադրության մեջ ամրագրված նրա հիմնարար նպատակներից մեկի սահմանման նկատմամբ:

---

* ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայք, 08.04.08 (http://www.mil.am/arm/index.php?page=2&p=1&id=431&y=2008&m=04&d=22):

Հարցագրույցը վարում է ՀՀ ՊՆ մամուլի քարտուղար գնդապետ Ս. Շահսուվարյանը:

Որո՞նք են ՄԱԿ-ի քվեարկության արդյունքների գլխավոր կողմնորոշիչ ազդակները:

Ընդհանուր առմամբ, քվեարկության արդյունքները կարևոր քաղաքական կողմնորոշիչ ազդակ են, որ ՄԱԿ-ի համար անթույլատրելի է իր իսկ կանոնադրությունը խախտող բանաձևերի ընդունումը Միավորված ազգերի կողմից՝ կապված իր գլխավոր նպատակի՝ խաղաղության և միջազգային անվտանգության պահպանման նկատմամբ անհարգալից վերաբերմունքի հետ: Քվեարկության արդյունքներից երևում է, որ ՄԱԿ-ի անդամների մեծ մասը հասկանում է Ղարաբաղյան կարգավորման հարցում Ադրբեջանի դիրքորոշման իրավական պակասավորությունը: Բացառապես Ադրբեջանի կողմից, տարածքային ամբողջականություն» կոչվածի շրջանակներում Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման ապակառուցողական մոդելի պարտադրումը Միավորված ազգերի կազմակերպությանը անհարմար դրության մեջ դրեց հենց ՄԱԿ-ին: Համաշխարհային հանրության այնպիսի ազդեցիկ դերակատարները, ինչպիսիք են Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Հնդկաստանը, որոնք բանաձևին ասել են «ոչ», ինչպես նաև ՄԱԿ-ի 100 ձեռնպահ անդամները հաստատել են Միավորված ազգերի՝ բոլոր պետությունների համար գլխավոր և հրամայական առաքելությունը, այն է՝ պահպանել միջազգային խաղաղությունը:

Ադրբեջանի իշխանությունների կողմից ԵՍԶՈՒ պայմանագրով սահմանված սպառազինությունների թույլատրելի առաստաղի բազմակի գերազանցման, այդ պետության ղեկավարության աճող ռազմատենչ ճարտասանության պայմաններում ՄԱԿ-ի կանոնադրական պահանջների անտեսման ցուցադրումը աշխարհին ահազանգում են, որ խաղաղության համար իրական սպառնալիք կա այնպիսի կարևոր աշխարհառազմավարական տարածաշրջանում, ինչպիսին է Սևծովյան ավազանը: Այս իմաստով Ռուսաստանը, ԱՄՆ-ը և Ֆրանսիան՝ որպես ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամներ, միջազգային հանրությանը պաշտոնապես հայտարարեցին իրենց մտահոգությունը այն բանի կապակցությամբ, որ Բաքուն պատրաստվում է նոր պատերազմ սանձազերծելու Հարավային Կովկասում: Ադրբեջանի ռազմամոլության չընդունումը Միավորված Ազգերի մյուս կարևոր կողմնորոշիչ ազդակն է:

Ինչպե՞ս եք Դուք գնահատում հայկական կողմի և Ադրբեջանի միջև փոխզիջման հասնելու հնարավորությունը:

Ի հակադրումն ժամանակակից միջազգային իրավունքի նորմերի՝ Բաքուն չի ընդունում, որ ԼՂՀ-ն առաջնային միջազգային սուբյեկտ է: Ներկայումս ադրբեջանական կողմը հանդես է գալիս հայտարարություններով, թե իր կողմից զիջումը կսահմանափակվի միայն այն բանով, որ ինքը կհամաձայնի շարունակելու Հայաստանի հետ խորհրդատվությունները Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ: Ինչպես հայտնի է, Ադրբեջանի Հանրապետությունը մերժում է ԼՂՀ-ի հետ անմիջական երկխոսության հնարավորությունը: Ադրբեջանն իր հրապարակային քաղաքականությամբ ոչ միայն տապալում է Մինսկի խմբի միջնորդական առաքելությունը, այլև չի արձագանքում Լեռնային Ղարաբաղի հետ երկխոսություն իրականացնելու Եվրոպայի Միության հանձնարարականներին (ԵԽԽՎ 2005 թ. հունվարի 25-ի հմ. 1416 բանաձև), թեև ԼՂՀ-ն հայտարարում է, որ պատրաստ է ԱդրՀ-ի հետ բանակցություններին: Վերջին ժամանակներս Ադրբեջանի կողմից ձեռնարկված քայլերը՝ ուղղված Մինսկի խմբի կազմում Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի լիազորազերծմանը, ՄԱԿ-ին Ղարաբաղյան կարգավորման՝ այդ կազմակերպության կանոնադրությանը իրավաբանորեն հակասող բանաձևի պարտադրման փորձը ղարաբաղյան հարցում Բաքվի իշխանությունների ապակառուցողական դիրքորոշման վկայությունն են:

Այլ կերպ ասած՝ Ադրբեջանի «զիջումը» հավասարազոր չէ ոչ միայն հայկական կողմի զիջումներին, այլև Մինսկի խմբի կողմից առաջարկվող զիջմանը: Բաքվի դիրքորոշումն իր էությամբ անառարկայական և անհեռանկարային է: Ադրբեջանի այն հայտարարությունները, թե ինքը լիովին հավատարիմ է միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին, չեն համապատասխանում իրականությանը: Բաքվի այդ ակնհայտորեն ռևանշիստական դիրքորոշման անփոփոխության պայմաններում Ղարաբաղյան հակամարտության կողմերի միջև փոխզիջման հնարավորությունները այս փուլում շատ նվազ են:

Ի՞նչ կասեիք ի պատասխան ՄԱԿ-ի Ղարաբաղյան բանաձևին ՀՀ և ԼՂՀ՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտների միջև պաշտպանական պայմանագրի կնքման առաջարկության վերաբերյալ:

ՄԱԿ-ի անդամ պետությունների գերակշռող մասը չէր կարող հաշվի չառնել այն հանգամանքը, որ իրենց անկախության համար պայքարող ժողովուրդները Միավորված ազգերի համակարգում ճանաչվում են որպես ժամանակակից միջազգային իրավունքի առաջնային սուբյեկտ: Այս տեսակետը հիմնվում է միջազգային իրավունքի այն սկզբունքների վրա, որոնք արձանագրում են ժողովրդի իրավասուբյեկտությունը հանուն իր ազատագրման մղվող պայքարում: Օրինակ՝ միջազգային իրավունքի պաշտպանության տակ վերցված այդպիսի ազգային ազատագրական մարմին էր Արևելյան Պակիստանի ժողովրդական լիգան, որն արտահայ-

տում էր բենգալական ժողովրդի՝ Պակիստանում ապրող մասի անկախությունը և հռչակեց Բանգլադեշի Հանրապետությունը:

Հայ ժողովրդի՝ Ղարաբաղում ապրող մասի միջազգային իրավասուբյեկտությունը ամրագրված է այն քաղաքական և իրավաբանական փաստով, որ ավելի քան 16 տարի է, ինչ անընդհատ և արդյունավետ կերպով գործում են օրինական, ժողովրդավարական եղանակով ընտրված ԼՂՀ իշխանությունները, որոնք ձևավորվել են 1990 թ. ԽՍՀՄ օրենքի իրավակիրարկման շրջանում՝ մինչև ԽՍՀՄ լուծարման մասին 1991 թ. դեկտեմբերի 21-ի Ալմա Աթայի հռչակագրի ստորագրումը, անցկացված հանրաքվեով: Այսպիսով՝ անկասկած կան միջազգային-իրավական հիմքեր ՀՀ և ԼՂՀ միջև միջազգային պայմանագրեր կնքելու համար:

Հայկական կողմի զիջումներին համազոր պատասխան զիջումներից Ադրբեջանի հրաժարման շարունակման դեպքում ԼՂՀ-ն իրավունք կունենա, հաշվի առնելով պատմության դասերը, միջազգային սկզբունքներն ու նորմերը, ԵԱՀԿ հանձնարարականները, տարածաշրջանային խաղաղության պահպանման ավելի արդյունավետ միջոցների և կայուն ու անվտանգ զարգացման մոդելի ընտրության շուրջ դիմել ՀՀ-ի հետ բանակցությունների: Իմ կարծիքով՝ այս փուլում նպատակահարմար է, շարունակելով պաշտպանության ոլորտում գործնական փոխգործությունը, ԼՂՀ-ի և ՀՀ-ի միջև համագործակցությունը չսահմանափակել որևէ առանձին ոլորտի շրջանակներում:

Ինչպե՞ս եք վերաբերվում Հայաստանի կողմից ԼՂՀ ճանաչման հնարավորությանը:

Ելնելով այն բանից, որ Ադրբեջանը չի դիմում պատասխան զիջումների, որոնք փոքրիշատե առադրելի լինեն ՀՀ առաջարկություններին, Հայաստանի Հանրապետության կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության փաստի ճանաչումը թվում է ԼՂՀ միջազգային ճանաչման գործընթացի տրամաբանական և արդարացված տարր: Ըստ իս՝ տվյալ փուլում ավելի պրագմատիկ կլիներ նախքան ճանաչման գործընթացն սկսելը մշակել ԼՂՀ և ՀՀ համագործակցության ռազմավարությունը Հարավային Կովկասում խաղաղության, կայունության և անվտանգության պահպանման գործում: Այս Ռազմավարության և դրա իրականացման ուղղությամբ քաղաքականության գլխավոր գերակայություններ պետք է լինեն հայ ժողովրդի նկատմամբ ցեղասպանության կրկնման երաշխավորված բացառումը, ինչպես նաև երկու ինքնիշխան հայկական պետությունների կայուն, անվտանգ ու ժողովրդավարական զարգացման ապահովումը՝ նրանց առաջադիմական միջազգային ինտեգրման համա-

տեքստում: Ազգային գերակայությունների ամբողջ շրջանով մեկ Հայաստանի, Արցախի և Սփյուռքի դաշնակցային համագործակցության համաձայնեցված ռազմավարություն ունենալը հնարավորություն կտա մշակելու միջնաժամկետ և երկարաժամկետ քաղաքականություն, ինչպես նաև պլանավորելու նրա արդյունավետ ապահովումը:

Ինչպիսի՞ն պետք է Ձեր կարծիքով լինի ԼՂՀ ճանաչման գործընթացի մեկնարկը:

Լեռնային Ղարաբաղը և Հայաստանը, հետամուտ լինելով միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում ստացած սկզբունքներին ու նորմերին, կարող են հաստատութեթացնել միջպետական համագործակցությունը: Խոսքը վերաբերում է խաղաղության պահպանման և իրենց կայուն անվտանգ զարգացման հարցերում ՀՀ և ԼՂՀ համագործակցության ռազմավարության մշակման և իրականացման գծով համատեղ Միջպետական հանձնաժողովի ձևավորմանը: Պետությունների ղեկավարների գլխավորած այս Միջպետական հանձնաժողովի քարտուղարության կազմում կարող են ներգրավվել ԼՂՀ և ՀՀ նախագահների, խորհրդարանների, ինչպես նաև կառավարությունների լիազոր ներկայացուցիչները:

Միջպետական հանձնաժողովի գործունեության կոնկրետ իրավաքաղաքական արգասիքները, այդ թվում՝ պայմանագրերի նախագծերը, կարելի կլիներ փորձաքննության ներկայացնել ոչ միայն կողմերի պետական հաստատությունների, այլև՝ անհրաժեշտության դեպքում, Սփյուռքի և միջազգային հանրության հեղինակավոր կազմակերպությունների: Ռազմավարության և քաղաքական, տնտեսական, պաշտպանական ու տեղեկութային ռեսուրսների պլանավորման, կուտակման, համադասման և նպատակային իրացման կենտրոնում պետք է դրված լինեն հայկական պետականության՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, երկմիասնության ամրապնդման և առաջադիմական զարգացման շահերը: Չեմ բացառում նաև այն, որ ժամանակի ընթացքում Միջպետական հանձնաժողովը ՀՀ-ի և ԼՂՀ-ի միջև ռազմավարական հարաբերությունները փոխակերպի երկու ինքնիշխան եղբայրական պետությունների միջև փափուկ համադաշնային համագործակցության:

Ինչպե՞ս եք Դուք վերաբերվում Մինսկի խմբի հեռանկարներին:

Իմ կարծիքով՝ Մինսկի խումբը կուտակել է Ղարաբաղյան հակամարտության կողմերի միջև միջնորդության մեծ փորձ և ամենևին էլ չի սպառել իր կառուցողական ներուժը:

ԱԴՐԲԵՋԱՆԸ ԼԻԱԶՈՐԱԶԵՐԾՈՒՄ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ, ԱՄՆ-ԻՆ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻՆ ԵԱՀԿ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ԿԱԶՄՈՒՄ*

Ի՞նչ նպատակներ է հետապնդում Ադրբեջանի արտաքին գործերի փոխնախարարի հայտարարությունն այն մասին, թե «Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը ԵԱՀԿ Մինսկի խմբի նպատակը չէ և չի կարող Հայաստանի հետ քննարկումների առարկա լինել»:

Բաքվի իշխանությունները ձեռնամուխ են եղել մի խնդրի լուծմանը, որն ակնհայտորեն դուրս է բացառապես իրենց իրավասության սահմաններից: Ադրբեջանի իշխանություններն իրենց գործողություններով փորձում են համոզել միջազգային հանրությանը, որ ՄԱԿ-ի Կանոնադրության մեջ որպես համապիտանի նորմ ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների հարգման սկզբունքի կիրառումը Ղարաբաղի հայերի նկատմամբ բացառապես Ադրբեջանի ներքին գործն է: Նրանց նպատակը ԵԱՀԿ Մինսկի խմբի լիազորազերծումն (դեզավուացում) է և նրա կազմից Ռուսաստանի, ԱՄՆ-ի ու Ֆրանսիայի հեռացումը՝ կապված Ղարաբաղյան հիմնախնդրի լուծման ժամանակ միջազգային իրավունքի նորմերի և սկզբունքների կիրառման նկատմամբ այդ պետությունների ցուցաբերած համակարգային մոտեցման հետ:

Ի՞նչ է դրված Ադրբեջանի նման դիրքորոշման հիմքում:

Բանն այն է, որ Բաքվի քաղաքական գործիչները փորձում են միջազգային հանրությանը պարտադրել Ղարաբաղյան հակամարտության կարգավորման և լուծման նկատմամբ կիրարկված միջազգային իրավունքի իրենց տեղային-պատեհապաշտական մեկնաբանումը: Եվ դա անում են «օրինաստեղծների ու անառարկելի մեկնաբանողների» գոռոզամտությամբ ոչ միայն իրենց տանը, այլև միջազգային լսարաններում: Հարևան պետության ղեկավարը, ԱԳՆ-ի պաշտոնյաները, հայտարարելով, թե Բաքվի իշխանությունները հավատարիմ են «հակամարտության լուծմանը միջազգային իրավունքի նորմերին խստագույն համապատասխանությամբ», այդ համապատասխանությունը համառորեն հանգեցնում են մի-

* ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայք, 20.03.08 (http://www.mil.am/arm/index.php?page=2&p=3&id=395&y=2008&m=04&d=22):

Հարցազրույցը վարում է ՀՀ ՊՆ մամուլի քարտուղար գնդապետ Ս. Շահսուվարյանը:

ջազգային իրավունքի նորմերից միայն մեկին՝ տարածքային ամբողջականության հայտնի սկզբունքին, և անտեսում են մյուս նորմերը, որոնք կիրառվում են Ղարաբաղյան հակամարտության նման հիմնախնդիրների քննարկման ժամանակ: Այդ համատեքստում ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքի անտեսումը ունի զուտ ձեռնածության բնույթ: Միջազգային իրավունքի նորմերի նկատմամբ Բաքվի այդ միակողմանի մոտեցումը չի կարող լուրջ ազդեցություն ունենալ ԵԱՀԿ Մինսկի խմբի Համանախագահության մասնագիտորեն պայմանավորված դիրքորոշումների վրա:

Վերադառնանք հիմնախնդրի իրավական կողմին: Ադրբեջանի օրինակով՝ ինչպիսի՞ն են պետությունների պարտավորությունները ազգային իրավունքի համակարգում միջազգային նորմերի և ստանդարտների պահպանման գծով:

Ադրբեջանի պաշտոնատար անձինք հայտարարում են, թե «Ղարաբաղի կարգավիճակի հարցը կարող է լուծվել միայն Ադրբեջանի ներքին օրենսդրության հիման վրա», և կարգավիճակի վերաբերյալ հակամարտող կողմերի հետ Մինսկի խմբի խորհրդատվությունները իբր ներխուժում են Ադրբեջանի ներքին գործերի ոլորտ:

Հատկանշական է Ադրբեջանի Հանրապետության Սահամանադրության անհամապատասխանությունը ՄԱԿ-ի Կանոնադրությամբ և 1966 թ. Մարդու իրավունքների մասին միջազգային համաձայնագրերով ձևակերպված լիակատար ազատության պայմաններում ազատ կամաարտահայտման միջոցով սեփական ճակատագիրը ինքնուրույնաբար տնօրինելու ժողովուրդների իրավունքի և սկզբունքի միջազգային-իրավական նորմի էությանը: Ինչպես հայտնի է, միջազգային հարաբերությունների համակարգում այդ փաստաթղթերը այն պայմանագրերն են, որոնք ամրագրում են Միջազգային իրավունքի ճանաչված հիմնական սկզբունքներն ու նորմերը պահպանելու և հարգելու պետությունների պարտավորությունները, և առաջին հերթին՝ մարդու իրավունքներն ու ազատությունները: Խոսքը վերաբերում է միջազգային իրավունքի այն սկզբունքներին, որոնք կազմում են նրա առավել կայուն միջուկը և համապիտանի չափանիշ են պետությունների գործելակերպի միջազգային օրինականության գնահատման համար:

Կիրառելով միջազգային հանրության կողմից ճանաչված օրինականության չափանիշները՝ Դուք ինչպե՞ս կգնահատեիք Ղարաբաղյան կարգավորման նկատմամբ Ադրբեջանի գործելակերպի համապատասխանությունը իր միջազգային պարտավորություններին:

«Ադրբեջանի ամբողջ բնակչության շրջանում հանրաքվեի միջոցով տարածքի փոփոխման մասինե Ադրբեջանի Սահմանադրության նորմը հակասում է այդ փաստաթղթի մեկ այլ նորմի, որը ծևակերպված է «Պետության գերագույն նպատակը» հոդվածում: Ըստ այդ ծևակերպման՝ «սույն Սահմանադրության մեջ թվարկված մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները կիրառվում են համապատասխան այն միջազգային պայմանագրերին, որոնց կողմ է Ադրբեջանի Հանրապետությունը»: Տվյալ դեպքում խոսքը պետք է վերաբերի վերը հիշատակված միջազգային պայմանագրերին:

Այսպիսով՝ Ադրբեջանի իշխանությունների այն պնդումները, թե իրենք Ղարաբաղյան հակամարտության լուծման գործում հավատարիմ են միջազգային իրավունքին, չեն համապատասխանում իրականությանը: Սահմանադրության մեջ միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ստացած սկզբունքների և նորմերի ամբողջովին արտացոլման տեսանկյունից, ինչպես նաև Ղարաբաղյան հակամարտության կարգավորման պրակտիկայում Ադրբեջանի գործելակերպը չի համապատասխանում միջազգային օրինականության չափանիշին:

Ի՞նչ կարծիքի եք Ադրբեջանի կողմից ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում առաջ քաշված Ղարաբաղյան բանաձևի դեմ Մինսկի խմբի անդամների քվեարկության մասին:

Դատելով Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի պաշտոնական հայտարարություններից, որոնք արվել են Գլխավոր ասամբլեայից առաջ և հետո, կարող ենք եզրակացնել, որ նրանք դեմ են քվեարկել այն պատճառով, որ Ադրբեջանի նախագիծը հակասում էր, *նախ,* միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ստացած հիմնարար սկզբունքներին ու նորմերին, ինչպես նաև դրանց կիրառման միջազգային օրինականության չափանիշին: *Երկրորդ.* Ադրբեջանի գործելակերպը չի համապատասխանում Ղարաբաղյան հակամարտության կարգավորման և լուծման գործում միջազգային իրավունքի սկզբունքների համակարգի կիրառման նկատմամբ Մինսկի խմբի հավասարակշռված մոտեցմանը: ՄԱԿ-ի հարյուր ձեռնպահ անդամները փաստորեն ընդունողականություն դրսևորեցին Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի կշռադատված դիրքորոշման նկատմամբ:

Ինչպե՞ս Դուք կբացատրեք ՄԱԿ-ի այն 39 անդամների շարժառիթավորումը, որոնք քվեարկեցին հօգուտ բանաձևի:

Այդ պետությունները, որոնք հիմնականում ներկայացնում են Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը և ՎՈՒԱՄ-ը, հանդես եկան հօգուտ

Ադրբեջանի այն դիրքերից, որոնք ավելի բնորոշ են սառը պատերազմի ժամանակներին, այն է՝ բլոկային համերաշխության սկզբունքով:

Ադրբեջանը քվեարկության արդյունքներով սպառնում է վերանայել Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի նկատմամբ իր վարած քաղաքականությունը: Ինչպե՞ս կարելի է բացատրել Ադրբեջանի անհարգալից վերաբերմունքը խաղաղ կարգավորման գործընթացում Մինսկի խմբի ունեցած ներդրմանը և Բաքվի ագրեսիվությունը Ռուսաստանի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի նկատմամբ:

Ադրբեջանը եվրոպական էներգետիկական քաղաքականության մեջ իրեն նախանշանակված դերն ընկալում է որպես Ռուսաստանի հետ աշխարհատնտեսական և աշխարհառազմավարական մրցակցության «պատմական» առաքելություն: Շահարկելով ԵՄ-ի և ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Իրանի, Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի ռազմավարական շահերը՝ Ադրբեջանը փորձում է առավելագույնս բարձրացնել իր խաղադրույքներն այնպես, որ կարողանա այդ ռեսուրսն օգտագործել Ղարաբաղյան կարգավորման գործում իր շահերի ուժային հակաիրավական առաջմղման համար: Այդ նպատակով Ադրբեջանն արդեն իսկ իրեն իրավունք է վերապահում շանտաժի ենթարկելու և՛ Ռուսաստանին, և՛ ԱՄՆ-ին, և՛ Ֆրանսիային, և՛ Մինսկի խմբին ամբողջովին: Մի շարք միջազգային փորձագետների կարծիքով՝ Ադրբեջանը կորցնում է իրականության զգացումը:

ԱԴՐԲԵՋԱՆ. ՉՀԱՁՈՂՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐԿԱԾԱԽՆԴՐՈՒԹՅՈՒՆ*

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության շփման գծում՝ Մարտակերտից հյուսիս-արևելք, Լևոնարխ գյուղից 3,5 կմ հեռավորության վրա, ադրբեջանական զինված ուժերը, խախտելով զինադադարի ռեժիմը, կրակ բացեցին ԼՂՀ դիրքերի վրա, ինչի հետևանքով հայկական կողմը երկու վիրավոր ունեցավ, իսկ ադրբեջանական կողմը ութ զոհ տվեց:

–Հրադադարի ռեժիմի խախտման վերաբերյալ հայկական և ադրբեջանական կողմերի մեկնաբանություններն իրարամերժ են: Ինչպե՞ս կմեկնաբանեիք հայ-ադրբեջանական շփման գծում տեղի ունեցած միջադեպը:

–Փաստերը սրանք են: Մարտի 4-ի առավոտյան Ադրբեջանի ՋՈՒ-ի դիվերսիոն խումբը, խախտելով հրադադարի ռեժիմը, գրավեց ԼՂՀ պաշտպանության բանակի դիրքերից մեկը: Արդյունքում պաշտպանության բանակի երկու զինծառայող վիրավորվեց: Կատարված դեպքի մասին ՀՀ ՋՈՒ-ի ղեկավարությունը ղարաբաղյան կողմի խնդրանքով տեղեկացրեց ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկին: Միաժամանակ, ստատուս քվոյի և հրադադարի ռեժիմի անհապաղ վերականգնման նպատակով հայկական կողմը փորձեց հեռախոսային կապ հաստատել ադրբեջանական ՋՈՒ-ի ղեկավարության հետ:

Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը տեղեկացրեց, որ նախարար Ս. Աբիևը զբաղվածության պատճառով չի կարող հեռախոսային բանակցություններ վարել: Հայկական կողմը ռազմական արվեստի բոլոր կանոններով ձեռնարկեց պատասխան քայլեր և ադրբեջանցի զինծառայողներին դուրս մղեց զավթված պահակակետից՝ վերականգնելով ստատուս քվոն շփման գծում:

ԼՂՀ պաշտպանության բանակի ստորաբաժանման իրականացրած հաջող ռազմական գործողությունների արդյունքում, հայ զինվորական ղեկավարությունը, Ադրբեջանի ՋՈՒ-ի ղեկավարության խնդրանքին ընդառաջելով, պատրաստակամություն է հայտնել հնարավորության տալ

* «Երկիր», ՀՅՈ Հայաստանի գերագույն մարմնի պաշտոնաթերթ, 07/03/2008 (http://yerkir.am/newspaper/?id=448):

էվակուացնելու զոհված ադրբեջանցի զինծառայողների դիակներն այն տարածքից, որտեղ տեղի էին ունեցել գործողությունները: Այս փաստերի իսկությանը տեղյակ է ԵԱՀԿ-ն:

–Զանգվածային լրատվամիջոցներում շրջանառվում է ադրբեջանցի փորձագետների այն կարծիքը, թե իբր տեղի ունեցած միջադեպը նպատակ է ունեցել շեղելու Հայաստանի բնակչության ուշադրությունը Երևանում հայտարարված արտակարգ դրությունից: Ձեր կարծիքով, ո՞րն է այդ գնահատականի քաղաքական ենթատեքստը:

–Բաքվի իշխանությունները, հասարակական շրջանակները և փորձագետները ՁԼՄ-ներում ակտիվորեն քննարկում են ադրբեջանական բանակի չհաջողված փորձը՝ ադրբեջանական և միջազգային հանրության վզին փաթաթելով կատարվածի իրենց մեկնաբանությունը: Ադրբեջանական բանակի տապալված փորձը՝ ռազմական ճանապարհով ստուգելու հայկական դիրքերը Հայաստանում ներքին կայունության վերականգնման այս ժամանակաշրջանում, Բաքվի աղբյուրները փորձում են ներկայացնել հակառակ կողմից. արյունոտ արկածախնդրության մեղքը բարդվում է հայկական կողմի վրա:

Բաքուն կեղծ տվյալներ է ներկայացնում իբր զոհված հայ զինծառայողների թվի վերաբերյալ՝ ընդգծելով ադրբեջանական բանակի մարտական ունակությունները: Ներկայացվող խեղաթյուրված փաստերը նպատակ ունեն թաքցնելու ադրբեջանական բանակի արյունոտ արկածախնդրության պարտությունը՝ կատարվածի մասին միջազգային հանրությանը ու փորձագետներին ներկայացնելով Բաքվի իշխանությունների քաղաքական շահերին հարմարեցված տարբերակ: Ադրբեջանական կողմի մեկնաբանությունը՝ հիմնված փաստերի կոպիտ խեղաթյուրման և Հայաստանում արտակարգ դրության շահարկման վրա, հայ և ադրբեջանցի ժողովուրդների, նաև Հյուսիսային Կովկասում խաղաղության և կայունության պահպանման մեջ շահագրգռված միջազգային հանրության հասարակական կարծիքը իրեն ենթարկեցնելու փորձ է:

ԱԴՐԲԵՋԱՆ. ՀԱԿԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՈՒՄ*

ԶԵԿՈՒՑՈՒՄ

«Կովկասի և Միջին Արևելքի երկրները որպես հնարավոր գործընկերներ տարածաշրջանային անվտանգության կազմավորման գործընթացում» թեմայով միջազգային գիտաժողովում

Երևան 2008 թ. փետրվարի 7

Ղարաբաղյան հակամարտության կարգավորմամբ զբաղվող միջազգային կազմակերպությունների և հետազոտողների հանրությունում ընդունված է ամեն տարվա սկզբին խաղաղարարական լավատեսություն դրսևորել այս հարցի լուծման վերաբերյալ: Պատշաճը հատուցելով այս հույժ կարևոր հույսերին՝ ոչ պակաս օգտակար եմ համարում տարածաշրջանում խաղաղության և անվտանգության առկա իրական պրոբլեմների քննարկումը փորձագիտական շրջաններում:

Հայաստանի, Ադրբեջանի և ամբողջ Հարավկովկասյան տարածաշրջանի անվտանգության համար հանգուցային պրոբլեմներից մեկը Ղարաբաղյան հակամարտության խաղաղ ժողովրդավարական լուծումն է[1]: Այս զեկուցումը նվիրված է ինքնորոշված Լեռնային Ղարաբաղի նկատմամբ նախկին մետրոպոլիայի վարած քաղաքականության գաղութատիրական էության որոշ հակաժողովրդավարական դրսևորումների գնահատումներին: Տարածաշրջանի պետությունների ժողովրդավարացման, մարդու կոլեկտիվ և անհատական իրավունքների իրացման գործընթացների էական բնութագրերի գնահատականը կարող է դիտվել որպես ինտեգրային իրավաքաղաքական հիմք՝ Հարավային Կովկասում խաղաղ գոյակցության և իրավահավասար համագործակցության սկզբունքների վրա խարսխվող տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության ձևավորումն ըմբռնելու համար:

Նախ՝ ընդհանուր գնահատականների մասին: Ղարաբաղյան պրոբլեմի՝ որպես տարածաշրջանային անվտանգության գործոնի վերաբերյալ Ադրբեջանի իշխանությունների դիրքորոշման վերլուծության ժամանակ այլ առումների հետ մեկտեղ հատուկ ուշադրության են արժանի հարևան

* << պաշտպանության նախարարության պաշտոնական կայք, 11.02.2008 (http://www.mil.am/UserFiles/File/zekucum_hayk_qotanjyan_1.doc):

պետության իշխանությունների ժողովրդավարականության արտաքին գնահատականները մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային-իրավական նորմերի համատեքստում: Ադրբեջանի Հանրապետության իշխանություններին համընդգրկուն անկախական գնահատական է տվել ամերիկյան հեղինակավոր «Ֆրիդոմ Հաուզ» իրավապաշտպանական կազմակերպությունը[2], որի ամենամյա վերջին հաշվետվության համաձայն այդ պետությունը, ինչպես և նախորդ տարիներին, «ոչ ազատ երկիր է»: Իհարկե, տարածաշրջանում նրա հարևանների՝ ինչպես Հայաստանի, այնպես էլ Վրաստանի վիճակը ժողովրդավարության առումով ևս այնքան բարվոք չէ, սակայն «Ֆրիդոմ Հաուզը» այս երկրները, ի տարբերություն «ոչ ազատ» Ադրբեջանից, գնահատում է որպես «մասամբ ազատ»:

Արևմտյան գործընկերները համարում են, որ Ադրբեջանում իշխանության համակարգը իր իրավաքաղաքական էությամբ հակաժողովրդավարական է: Դա, առաջին հերթին, դրսևորվում է իշխանության տոհմական ժառանգմամբ ու իրականացմամբ, ինչպես նաև պետության ղեկավարի կողմից ժողովրդին իր հոր՝ երկրի նախկին ղեկավարի պաշտամունքի պարտադրմամբ, ինչը բնորոշ է սուլթանատի տիպի բռնակալություններին: Ինչպես հայտնի է, իրավապաշտպանական կազմակերպությունները, որպես ժողովրդավարականության կարևոր տարր, իշխանությունների արձագանքը դիտում են որպես իրենց ժողովրդավարականության աստիճանին տրված գնահատական: Այդ տեսակետից հատկանշական է, որ հարևան երկրի նախագահը 2007 թ. դեկտեմբերի 24-ի իր ելույթում, անտեսելով «Ֆրիդոմ Հաուզի» տված գնահատականները, հայտարարել է, թե միջազգային հանրության կողմից Ադրբեջանը ճանաչվել է որպես ժողովրդավարական պետություն և իշխանության հաջորդ ժառանգորդ է հռչակել իր որդուն[3]:

Տարածաշրջանային կայունության ու անվտանգության տեսանկյունից հարևան երկրի «ոչ ազատ լինելը» ի հայտ է գալիս Արևելյան Անդրկովկասի բնիկ ժողովուրդների իրավունքների և ազատությունների նկատմամբ գաղութատիրական վերաբերմունքի ձևով, և առաջին հերթին՝ ժողովուրդների իրավահավասարության և ազատ արտաքին ու ներքին ինքնորոշման իրավունքի նկատմամբ: Ղարաբաղյան հարցի կարգավորման նկատմամբ հարևան երկրի իշխանությունների հակաժողովրդավարականությունը արտահայտվում է Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի միջև վարչաաստիճանակարգային հարաբերությունների օրինապատշաճ ժողովրդավարական դադարեցման փաստի ժխտմամբ[4]:

Այս քաղաքական և իրավական փաստի անտեսման հիմքում դրված է այն, որ Ադրբեջանը 1991 թ. իր անկախությունը պաշտոնապես հռչակեց հակաիրավական եղանակով՝ առանց ԽՍՀՄ կազմից դուրս գալու հարցով հանրաքվե անցկացնելու[5]: Որպես իրավախախտում է որակվում նաև այն փաստը, որ Ադրբեջանը իր անկախությունը հռչակեց՝ առանց բավարարելու ԼՂԻՄ-ի և հայերի ամփոփ բնակության մյուս շրջանների հայ բնակչության իրավունքը՝ ազատ և ինքնուրույն ընտրելու իր քաղաքական կարգավիճակը, ինչը «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ գործող օրենքի խախտում էր[6]: Դրա փոխարեն, Ադրբեջանի Հանրապետությունը, ընդունելով Լեռնային Ղարաբաղի ինքնավարության վերացման մասին օրենսդրական ակտ, իրեն դրսևորեց որպես մետրոպոլիայի կողմից Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազատ ինքնորոշման կամքի վրա գաղութարարական ճնշում գործադրող սուբյեկտ[7]: Լեռնային Ղարաբաղը, ի հակազդումն այդ հակաիրավական ակտի, գործող օրենքին և անմիջական ժողովրդավարության սկզբունքներին համապատասխան՝ հանրաքվեի միջոցով, դուրս եկավ Ադրբեջանական ԽՍՀ կազմից: Ադրբեջանի Հանրապետությունը, ի պատասխան ԼՂՀ նորընտիր իշխանությունների առաջարկությանը, այն է՝ սկսել խաղաղ բանակցություններ, 1992 թ. սկզբին սանձազերծեց գաղութարարական պատերազմ:

Պաշտոնական Բաքուն, ի հավելումն օրենսդրության այս խախտումների, 1991 թ. «Անկախության հռչակագրում» իրեն հայտարարելով Ադրբեջանի ժողովրդավարական Հանրապետության իրավահաջորդը, ինքն իրեն զրկեց Լեռնային Ղարաբաղը իր կազմի մեջ մտցնելու իրավունքից, քանի որ վերջինս, ունենալով վիճելի տարածքի կարգավիճակ, չի մտել Ադրբեջանի ժողովրդավարական Հանրապետության կազմի մեջ նրա գոյության ամբողջ ժամանակահատվածում՝ 1918–1920 թթ.[8]: Մինչ այդ Ղարաբաղը եղել էր Ռուսական Կայսրության, իսկ ավելի վաղ՝ Պարսկաստանի բաղադրիչ մասը, բայց՝ ոչ Ադրբեջանի, որը մինչև 1918 թ. որպես անկախ պետություն գոյություն չի ունեցել:

Ադրբեջանի Հանրապետության հակաժողովրդավարականության գաղութատիրական մեկ այլ հատկանիշ է նրա Սահմանադրության[9] անհամապատասխանությունը լիարժեք ազատության պայմաններում ինքնորոշվող բնակչության կամքի արտահայտման միջոցով իրենց ճակատագիրը ինքնուրույն տնօրինելու ժողովուրդների իրավունքի մասին միջազգային-իրավական նորմերի էությանը, ինչը ամրագրված է 1975 թ. Հելսինկյան եզրափակիչ ակտով, 1966 թ. Մարդու իրավունքների մասին միջազգային համաձայնագրերով և ՄԱԿ-ի Կանոնադրությամբ[10]: Համաշխարհային

պրակտիկան վկայում է, որ հենց այդ ճանապարհով՝ առանց մետրոպոլիայի միջամտության են իրացվել Բանգլադեշի, Էրիտրեայի, Արևելյան Թիմորի, Չեռնոգորիեի, իսկ այժմ նաև Կոսովոյի ժողովուրդների իրավունքները՝ ինքնորոշվելու հենց ինքնորոշվող ժողովուրդների, այլ ոչ թե նրանց նախկին մետրոպոլիաների՝ ի դեմս Պակիստանի, Եթովպիայի, Ինդոնեզիայի կամ Հարավսլավիա–Սերբիայի բնակչության շրջանում անցկացվող հանրաքվեներում ազատ կամաարտահայտման միջոցով:

Մի քանի խոսք այդպիսի հակաժողովրդավարականության՝ որպես ազգատեցության, բռնության և պատերազմի քարոզչության դրսևորման վերաբերյալ: Ղարաբաղի հակամարտության խաղաղ լուծման ուղղությամբ ԵԱՀԿ Մինսկի խմբի գործադրած ջանքերը հիմնվում են ՄԱԿ-ի հիմնարար սկզբունքների՝ մյուս ժողովուրդների հետ փոխհարաբերություններում խաղաղության, առաջընթացի և ժողովրդավարության փոխկախվածության վրա, քանի որ հաստատուն խաղաղությունը ժողովուրդների անվտանգ ու կայուն զարգացման նախադրյալն է, իսկ ժողովրդավարությունը՝ կարևոր պայմանը: ՄԱԿ-ի Կանոնադրությունում և մարդու իրավունքների մասին համաձայնագրերում արտացոլված այս սկզբունքները բացառում են պատերազմի քարոզչությունը: Սակայն հարևան երկրի պետական գործիչների պարբերաբար հնչեցվող հայտարարությունները պարունակում են պատերազմի անմիջական սպառնալիք: Հարևան պետության ղեկավարի նման հրապարակային ելույթները Ադրբեջանի բոլոր շրջանների բնակչության առջև, ազգային միջոցառումներում և միջազգային հանդիպումներում, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցներով դրանց լայն հրապարակումը մարտական գործողությունների վերսկսման անխուսափելիության հիմնավորում բովանդակող այդ հայտարարությունները դարձնում են պատերազմի և բռնության քարոզչություն:

Վարելով գաղութարարական պատերազմի բացահայտ քարոզչություն՝ պաշտոնական Բաքուն, հակառակ Մինսկի գործընթացի տրամաբանությանը, իր բնակչությանը մոբիլիզացնում է Ղարաբաղը ուժով վերադարձնելու համար: Պատերազմին Ադրբեջանի պատրաստությունների կոնկրետ վկայությունն է ԵՍԶՈՒ պայմանագրով նախատեսված սահմանափակումների նրա նպատակասլաց գերազանցումը: Ադրբեջանը պայմանագրով թույլատրված 220 տանկի փոխարեն ունի 579 տանկ, այսինքն՝ 2,63 անգամ ավելի, 220 մարտական զրահապատ մեքենաների փոխարեն՝ 1174-ը (5,34 անգամ ավելի), 100 մմ և ավելի տրամաչափ ունեցող և սահմանափակման ենթակա 285 միավոր հրետանու փոխարեն՝ 788-ը (2,76 անգամ ավելի), 100 մարտական ինքնաթիռի փոխարեն՝ 128-ը (1,28

անգամ ավելի)։ Կարևոր է նշել, որ Հայաստանը շարունակում է կատարել ԵՍՁՈՒ պայմանագրով ստանձնած իր միջազգային պարտավորությունները, իսկ ԼՂՀ-ն հայտարարում է, որ պատրաստ է դառնալ տարածաշրջանային անվտանգության համար այդքան կարևոր այդ պայմանագրի պատասխանատու մասնակից։

Քաղաքացիական և քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների մասին միջազգային համաձայնագրի, ինչպես նաև ՄԱԿ-ի Կանոնադրության կոպիտ խախտում են հարևան երկրի պետական գործիչների նման հայտարարությունները, որոնք դժվար է որակել այլ կերպ, քան իր ժողովրդի դրդում հայ բնակչության նկատմամբ եղեռնական գործողությունների կատարմանը։ Ցավոք, ստանձնած միջազգային պարտավորությունների նկատմամբ գաղութատիրական արհամարհանքի նման դրսևորման օրինակ է ցույց տալիս հենց հարևան պետության ղեկավարը։ Ամբողջ աշխարհի ադրբեջանցիներին հղված ամանօրյա վերջին ուղերձում նախագահ Ալիևը իրեն թույլ տվեց Լեռնային Ղարաբաղի հայերին բացահայտ կերպով սպառնալ էթնիկական զտումներով։ «Եթե Լեռնային Ղարաբաղի հայերը ցանկանում են ինքնորոշվել, թող դա անեն Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում, իսկ եթե նրանք չեն ուզում դա անել, թող լքեն Լեռնային Ղարաբաղը և իրենց համար երկրորդ պետություն ստեղծեն այլ տեղ»[11]։

Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հարցում Բաքվի իշխանությունների դիրքորոշման հակաժողովրդավարականությունը արտահայտվում է նաև ներպետական մակարդակով՝ ազգային փոքրամասնությունների ներքին ինքնորոշման իրավունքի հարցում։ Հայերին բարձր մակարդակի ինքնավարություն տալու վերաբերյալ Բաքվի խոստումների նկատմամբ թերահավատությունը հիմնված է ադրբեջանցի փախստականների ու ժամանակավորապես տարագրված անձանց իրավունքների իրացման շուրջ բանակցություններում Ադրբեջանից գաղթած հայ փախստականների իրավունքների լրիվ անտեսման փաստի վրա։ Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում էթնիկական փոքրամասնությունների ներքին ինքնորոշման իրավունքի նկատմամբ ալիևյան վարչակարգի գաղութարարության և հակաժողովրդավարականության հատկանշական, սթափեցնող օրինակ է 1993 թ. Մուղանի Թալիշական Ինքնավար Հանրապետության ջախջախումը՝ վերջինիս առաջնորդի և նրա էթնոքաղաքական զինակիցների ծերբակալմամբ[12]։

Ադրբեջանում ճշմարտացի տեղեկատվության համատարած աղավաղման ու ճնշման փաստը «Ֆրիդոմ Հաուզի» գնահատականներում արտա-

ցոլված է որպես այդ ոչ ազատ երկրի վարչակարգի հակաժողովրդավարականության կարևոր հատկանիշներից մեկը։ Ի վնաս հարևան պետության բնիկ ժողովուրդների իրավահավասարության իրականացվող տիտղոսային ազգի գերակայության պաշտոնական քաղաքականությունը իր անդրադարձն է ստանում տարածաշրջանի ժողովուրդների գիտական պատմության նպատակաուղղված արդիականացմամբ՝ միտված նրանց ազգային ինքնության աղճատմանը, ինչպես նաև Արևելյան Անդրկովկասի մշակույթի պատմական զարգացման գործում բնիկների տեղի ու դերի նվազեցմանը։ Պատմական նենգափոխումների քաղաքականության մեջ հատուկ տեղ է հատկացվում Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում բնիկ հայերի հազարամյա բնակության տարածքներին տիրելու՝ Ադրբեջանի պատմական իրավունքի հիմնավորումը։ Ինչպես երևում է գիտությունների ազգային ակադեմիայի հոբելյանական ժողովում Նախագահ Ալիևի զեկուցման տեքստից, նա 2005 թ. դեկտեմբերի 14-ին տվեց Արևելյան Անդրկովկասի պատմության նենգափոխման քաղաքական պատվեր[13]։ Համատարած հատուկ քարոզչությամբ գիտական պատմության նենգափոխման պետական քաղաքականության հետևանքով ստեղծվում է Արևելյան Անդրկովկասի ժողովուրդների՝ իրականությանը լրիվ հակասող հակագիտական պատմություն, որը հորինվում է իշխանությունների ընդերքում։

Միջազգային ակադեմիական հանրությունը արդեն արձանագրում է հարևան պետության ղեկավարի քաղաքական պատվերի իրացման կոնկրետ փորձեր՝ հնացնելու Արևելյան Անդրկովկասի՝ Պարսկաստանին ենթակա տարածքում թյուրքերի պարփակ բնակության պատմությունը։ Հարավային Կովկասում թյուրքերի 900-ամյա բնակության գիտական փաստը Բաքվի իշխանություններին ներկայանում է որպես անընդունելի չափով փոքր ժամանակահատված։ Կեղծարարները փորձում են երկարաձգել այդ պատմությունը՝ այն տանելով 10 հազար տարով հետ, ընդհուպ մինչև այն ժամանակները, երբ քարի դարի Գոբուստանի նախամարդն ստեղծել էր միջին քարեդարյան նյութական արժեքներ։ Անցյալի այս՝ վերևից պատվիրված, խեղաթյուրումները տոգորված են «Ադրբեջան» իրանական տեղանվան հետ կատարվող ձեռնածություններով՝ Պարսկաստանի անդրկովկասյան նախկին նահանգների նկատմամբ այդ տերմինի հակագիտական կիրառմամբ այն ժամանակաշրջանների համար, որոնք եղել են շատ ավելի վաղ, քան այդ տերմինն սկսել է քաղաքականապես կիրառվել Արևելյան Անդրկովկասում թյուրքերի բնակության տարածքի նկատմամբ։ Հայտնի է, որ Ռուսական Կայսրության պաշտոնական փաստաթղթերում կովկասյան նահանգների թյուրքերը՝ որպես «ադրբեջանցիներ», և նրանց տարաբնակեցման տարածքը՝ որպես

«Ադրբեջան», նույնպես հիշատակված չեն: Մի խոսքով՝ «ԽՍՀՄ-ը անկանխատեսելի անցյալ ունեցող երկիր է» հայտնի կատակը լիովին վերաբերում է Ադրբեջանին, որտեղ իշխանությունների պատվերով գրվում է տարածաշրջանի նոր պատմություն՝ նստակյաց բնիկ ժողովուրդների և եկվոր քոչվոր ցեղերի տեղի ու դերի արմատական փոփոխմամբ: Հենց այդ ծեռնածվական դիրքերից էլ Բաքվի իշխանությունները «ադրբեջանական ժողովրդի դեմ» կատարված հանցագործություններ են վերագրում հայերին նույնիսկ այն ժամանակաշրջաններում, երբ ներկայիս ադրբեջանցիների թյուրք նախնիները Կենտրոնական Ասիայից դեռ չէին էլ ներթափանցել Հարավային Կովկաս:

Հող նախապատրաստելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքի նկատմամբ իրենց գաղութատիրական նկրտումները արդարացնելու համար՝ Բաքվի իշխանությունները շահարկում են նախկինում Շահ Աբասի կողմից Պարսկաստան քշված սահմանափակ թվով հայերի՝ 1828 թվականին ռուս-պարսկական պատերազմի արդյունքներով հայրենադարձության փաստը: Իշխանությունների կողմից ներգրավված որոշ բաքվեցի գիտնականներ փորձում են ադրբեջանական հասարակայնության շրջանում տարածել այն կարծիքը, թե Արևելյան Կովկասում բոլոր հայերը եկվորներ են: Վերջին շրջանում այդ «գիտականացված» քարոզչությունը հնչեցվում է անմիջականորեն նախագահ Ալիևի կողմից: Ճշմարտացի գիտական տեղեկույթ ստանալու մարդու իրավունքի նկատմամբ իշխանությունների գործադրած նման բռնությունը նպատակ ունի Ադրբեջանի ժողովրդին ներշնչելու այն գաղափարը, թե իբր Արցախը թուրքերի նախահայրենիքն է, իսկ Ղարաբաղում և Հայաստանում հայերն իրենց հիմնական զանգվածով վերաբնակներ են կամ ամենևին էլ հայ չեն:

Ժողովուրդների միջև վստահության քայքայման քաղաքականության մեջ Բաքվի իշխանությունները հատուկ տեղ են հատկացնում հայերի նկատմամբ Օսմանյան կայսրությունում իրագործված ցեղասպանության մասին տեղեկույթի գիտակցված խեղաթյուրմանը: 1,5 միլիոն զոհված հայերի հիշատակի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի պետական քաղոքչությունը դուրս է գալիս առանձին հրապարակումների շրջանակներից՝ վերածվելով Բաքվի իշխանությունների կողմից ուղղորդվող սրբապղծության: Որպես Արևելյան Անդրկովկասի պատմության գծեհիկ նենգափոխման օրինակներ կարելի է բերել 20-րդ դարում հայ բնակչության դեմ կատարված եղեռնական հանցագործությունները «ադրբեջանցիների դեմ իրագործված» գոյություն չունեցող ցեղասպանությամբ «հավասարակշռելու» անսկզբունք քաղաքական փորձերը: Այդ նենգափոխումների հիման վրա 1998 թ. հրապարակվեց «Ադրբեջանցիների նկատմամբ իրա-

գործված ցեղասպանության մասին» Ադրբեջանի Հանրապետության նախագահի հրամանագիրը: Անգամ Բաքվի մտավորականության ներկայացուցիչները վստահելի նեղ շրջանում ծաղրում են հայ և ռուս ժողովուրդների դեմ «ադրբեջանական ժողովրդի քաղաքական համախմբման» այս անազնիվ ու վտանգավոր եղանակը: Նրանք գիտեն, որ իրականում 20-րդ դարի սկզբին տեղի են ունեցել հայերի կոտորածներ և հայերի դիմադրություն այդ կոտորածներին, ինչպես և հետագայում՝ որպես խաղաղ հայ բնակչության պատասխանը 1988 թ. Սումգայիթում և 1990 թ. Բաքվում կազմակերպված ջարդերին:

Հարկ է նշել, որ Բաքվի իշխանությունների կողմից Սփյուռքի միլիոնավոր հայ ընտանիքների ցավի ու մարդկային արժանապատվության ծանակումը, Ադրբեջանի բնակչության շրջանում ազգատեցության քարոզչության հետ մեկտեղ, խաղում է նաև տրամագծորեն հակառակ դեր՝ համայն հայությանը համախմբում է հայ ժողովրդի դեմ կատարված ցեղասպանության պետական անվանարկմանը համապատասխան ձևով հակազդելու համար:

Հայերի և հրեաների միջև բախում հարուցելուն է ծառայում իբր լեռնային հրեաների նկատմամբ հայերի կողմից իրագործված «ցեղասպանության» զոհերի հիշատակման վերջերս կազմակերպված քարոզարշավը: Չեռնաձուները պատմական ճշմարտության այդ սրբապիղծ ոտնահարումը հասցրել են այն աստիճանի ցինիզմի, որ 20-րդ դարի սկզբին խողխողված հայերի պեղված զանգվածային թաղումները տեղեկատվական պատերազմի միջոցներով ներկայացվում են որպես հենց իրական զոհերի՝ հայերի գործած եղեռնական գործողությունների «զոհեր»: Նպատակն է՝ փչացնել Շիրվանի հայերի և լեռնային հրեաների դարավոր բարիդրացիական հարաբերությունները՝ դրանով իսկ Իսրայելին ու հրեական լոբբիական կազմակերպություններին դրդելով բռնելու հակահայկական դիրք:

Բաքվի վարչակարգի վարած և հատուկ քարոզիչների կողմից մարդու իրավունքների պաշտպանության դրոշի ներքո ծավալված տեղեկատվական պատերազմի հակագիտական մշակումներում գիտնականների ներգրավման նման արգասիքների շարքում հատուկ ուշադրության է արժանի Խոջալուի ողբերգական դեպքերի ժամանակ զոհվածների դիակների պղծագործության հեղինակներին կեղծելու փաստը: Տվյալ սադրանքի՝ որպես Բաքվում իշխանության համար մղվող քաղաքական պայքարի գործիքի մանրամասները թարմ հետքերով ներկայացվել են Ադրբեջանի նախկին Նախագահ Այազ Մութալիբովի՝ չեխ լրագրող Դանա Մազալո-

վային տված հարցազրույցում[14]: Հայկական կողմն ունի բոլոր ապացույցները, որ զոհվածների դիակները գտնվել են ադրբեջանական իշխանությունների պատասխանատվության գոտում, և հայերը ֆիզիկապես չէին կարող մոտենալ դիակներին՝ դրանք պղծելու համար:

Հուսադրում է այն, որ ինչպես Ադրբեջանում, այնպես էլ Հայաստանում վերլուծաբանական հանրությունը ներկայացված է անվտանգային իրողությունների և եվրահարևանության՝ մեր հարավկովկասյան հատվածի հեռանկարների վերաբերյալ հայացքների բավականաչափ լայն սպեկտրով: Ես պատիվ եմ ունեցել բազմազգ մասնագետների շրջանում, տարբեր պետությունների ու կազմակերպությունների օբյեկտիվ և արժանի ներկայացուցիչների հետ մեկտեղ, ծանոթ լինելու պատվարժան ադրբեջանցիների: Համոզված եմ, որ հարևան երկրում կան մասնագետներ, որոնք գիտակցում են եվրահարևանության ձևավորման գործընթացում Լեռնային Ղարաբաղի ժողովրդի նկատմամբ գաղութատիրության վերահաստատման հակաարգասաբերությունը: Այս պրոբլեմը Ադրբեջանի գիտնականների այն չներգրավված մասի համար, որն անհանգստացած է տարածաշրջանի ժողովրդավարական անվտանգ զարգացման հեռանկարներով, ինչպես և Մինսկի խմբի համանախագահության և միջազգային վերլուծաբանական հանրության համար կարող է դառնալ օբյեկտիվ ուսումնասիրության առարկա:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

[1] Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007:

[2] Տես «Map of Freedom in the world», 2007 (Armenia, Azerbaijan, Georgia). «Freedom House» (http://www.freedomhouse.org/template.cfm?page=363&year=2007Jcountry=7129):

[3] Տես *Ильхам Алиев*. Мои университеты, «Azerbajan.az», 24 декабря 2007 (http://azerbaijan.news.az/index.php?Lng=azeJpid=19934); «Ильхам Алиев: «Сам по себе переход власти от одного члена семьи к другому в современном мире не считается антидемократическим фактом» «Day.Az»» (http://www.day.az/print/news/politics/102285.html):

[4] Տես «Акт о результатах референдума о независимости Нагорно-Карабахской Республики», 10 декабря 1991 г., Степанакерт, Нагорно-Карабахская Республика. МИД (http://www.nkr.am/rus/facts/referendum.html):

[5] Տես «Конституционный Акт «О государственной независимости Азербайджанской Республики», 18 октября 1991 г., № 19–20»:

[6] Տես «Закон СССР от 3 апреля 1990 года, № 1410-1 «О порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР». «Ведомости Съезда народных депутатов СССР, Верховный Совет СССР», 1990, № 15:

[7] Տես «Закон АзР «Об упразднении НКАО АзР», 26 ноября 1991 года». «Ведомости ВС АзР», 1991, № 24:

[8] Ադրբեջանի ժողովրդավարական Հանրապետության չճանաչման մասին Ազգերի լիգայի որոշման հիմքում ընկած փաստարկների մեջ նշվում էր «Ադրբեջանի՝ իր հարևանների հետ տարածքային վեճերի հետ կապված իրական սահմանների ճշգրիտ որոշման անհնարինության» փաստը (տես «League of Nations» Journal. Geneva, № 17, P. 130):

[9] Տես «Конституция Азербайджанской Республики», глава II. «Основы Государства», глава III. «Основные права и свободы человека и гражданина» (http://www.azerbaijan.az/GeneralInfo/constitution01r.html):

[10] Տես «СБСЕ. Заключительный Акт» Хельсинки, 1 августа 1975 г. Принцип VIII. Вебсайт ОБСЕ (www.osce.org/documents/msc/1975/08/4044ru.pdf); «Международный пакт о гражданских и политических правах. Резолюция ГА ООН 2200 А(XXI) от 16 декабря 1966 г.». «Центр ООН по правам человека». «Права человека: Сборник Международных договоров»; «Международный пакт об экономических, социальных и культурных правах: Резолюция ГА ООН 2200 А (XXI) от 16 декабря 1966 г.». «Центр ООН по правам человека». «Права человека: Сборник Международных договоров»:

[11] Տես «Поздравление Президента Ильхама Алиева народу Азербайджана по случаю Дня солидарности азербайджанцев мира и Нового года», 31 декабря 2007, «Президент Азербайджана», официальная интернет страница (http://www.president.az/articles.php?item_id=20080 101020429299&sec_id=135):

[12] Տես *Фармони Фахраддин Абосзода* (Абассов) История нашей республики. 2003, «Центр Азия» (http://www.centrasia.ru/newsA.php4?st=1056939900):

[13] Տես «Речь Президента Азербайджана Ильхама Алиева на торжественном собрании, посвященном 60-летию Национальной Академии наук», 14.12.2005. «Президент Азербайджана» официальная интернет страница (http://www.president.az/print.php?item_id=20070810012543523 5&sec_id =11):

[14] Տես «Я гуманист в душе». Интервью президента АзР А. Муталибова чешской журналистке Дане Мазаловой. «Независимая газета», 2 апреля 1992:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

«Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում» մենագրության տեքստը հրապարակվում է 2003–2004 թթ. քաղաքական իրադրության առանձնահատկություններն արտացոլող խմբագրմամբ[1]:

Մենագրական հետազոտությունը կատարվել է 2003–2004 թթ. ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի (ՊԱՀ) Ազգային անվտանգության դպրոցում հեղինակի ակադեմիական ստաժավորման ընթացքում: Մենագրության տեքստի լրացումը հավելվածով կատարվել է 2005 թ. ՀՀ Պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության ուղենիշները» զեկուցման համար իր իսկ ղեկավարությամբ նյութերի նախապատրաստման արդյունքներով[2]:

Նախքան Հարվարդի համալսարանի Ջոն Քենեդիի անվան Պետութենագիտության դպրոցի էլեկտրոնային կայքում մենագրության հրապարակումը[3] արդեն ավարտված էին ինչպես Հայաստանի անվտանգային պրոբլեմների ամբողջ շրջանին վերաբերող բազային նյութերի փորձագիտական վերլուծությունը, այնպես էլ ՀՀ գլխավոր քաղաքական փաստաթղթի նախագծի միջգերատեսչական մշակման գործընթացը: Այդ աշխատանքի գիտակազմակերպական մասը Պաշտպանության նախարար, ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Սերժ Սարգսյանի հանձնարարությամբ կատարվել է ՀՀ ՊՆ ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի (ԱՌՀԻ) կողմից:

Մենագրությանն առաջնորդող այս նախաբանը կոչված է մասնագետների լսարանին պարզաբանելու ԱՄՆ-ի, ՌԴ, ՆԱՏՕ-ի անդամ եվրոպական երկրների առաջատար մասնագիտական կենտրոնների փորձագետների հետ ՀՀ մասնագետների մեթոդաբանական համագործակցության հանգուցային փուլերը: Նախաբանի նպատակն է նաև համառոտակի ներկայացնել պաշտպանության նախարարության ու ՀՀ այլ պետական հիմնարկների կողմից ազգային անվտանգության խնդիրների հայեցակարգման տրամաբանությունը, ինչպես նաև լուսաբանել հայության ազգային շահերի ուսումնասիրման ու աշխարհի առաջատար մասնագիտական կենտրոնների փորձի հիմքի վրա Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից ձևավորված մեթոդաբանական թղթապանակի առանձնահատկությունները:

1991 թ. հեղինակին, որն այդ ժամանակ Ռուսաստանի կառավարման ակադեմիայի դոկտորանտ և ավագ գիտաշխատող էր, վիճակվել է համադասողի առաքելություն կատարել այն բանակցություններում, որոնց նպատակն էր իր անկախությունը վերականգնած Հայաստանի նորաստեղծ Զինված ուժերի հրամանատարի պաշտոնին հրավիրել ԽՍՀՄ ցամաքային զորքերի Գլխավոր հրամանատարի նախկին տեղակալ գեներալ-լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանցին, որն էլ հետագայում ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալի պաշտոնում գլխավորեց հայկական ազգային բանակի մասնագիտական նախագծման ու կառուցման գործընթացը: ՀՀ ՊՆ ղեկավարությունը որպես բանակաշինության հանգուցային բաղադրատարր սահմանեց հայկական պետության ռազմական քաղաքականության մշակումը՝ այն համարելով օրինական ճանապարհով ստեղծված ԼՂՀ-ի դեմ Ադրբեջանի ագրեսիայի պայմաններում Հայաստանի պաշտպանական համակարգի ստեղծման ու կիրառման նպատակների իմաստավորման հիմք, ինչպես նաև միջազգային անվտանգության երկբևեռ համակարգի աղետալի փոփոխման պարագայում ՀՀ ռազմական քաղաքականության ուղեգիծ: Հենց Հայաստանի ազգային անվտանգության ռազմաքաղաքական տեսանկյունի մշակումը հանձնարարվեց հեղինակին, երբ 1992 թ. նա Մոսկվայից հրավիրվեց Երևան՝ ՀՀ ՊՆ ռազմաքաղաքական բաժին ստեղծելու առաջադրանքով:

1992 թ. հրապարակվեց այդ բաժնի գործունեության առաջին արգասիքը՝ «Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականության հիմունքները. ազգային անվտանգության ռազմաքաղաքական տեսանկյուն» վերտառությամբ[4]: Այդ մշակման առանձնահատկությունն այն էր, որ նրա մեթոդաբանական հիմքը ձևավորվել էր ԽՍՀՄ–ՌԴ ԱԳՆ-ի Միջազգային հարաբերությունների հետազոտության մեթոդաբանության կենտրոնի (ՄՀՀՄԿ) և Միջազգային հարաբերությունների տեսության և մոդելավորման ռուսաստանյան ասոցիացիայի (ՄՀՏՄՈԱ) փորձագետների հետ հեղինակի սերտ համագործակցությամբ, մասնագետների, որոնք ԽՍՀՄ արտաքին քաղաքականության «վերակառուցման» մտավոր ռեսուրս-

* ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի գիտակիրառական-վերլուծական հավելված «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 1:

ներից էին և մշակում էին նորանկախ Ռուսաստանի Դաշնության ազգային ու միջազգային անվտանգության հիմունքները: Այդ շրջանում հեղինակը իրավաբանական գիտությունների դոկտոր, ազգային անվտանգության ոլորտում միջազգային իրավունքի պրոֆեսոր Էդուարդ Սկակունովի գիտական ղեկավարությամբ մասնակցել է «Կայունություն» և «Հակամարտություն» նախագծերի շրջանակներում ՌԴ ԱԳՆ-ի ՄՀՀՄԿ-ում կազմակերպվող մեթոդաբանական սեմինարներին, ինչպես նաև եղել է ՄՀՏՄՌԱ-ի գիտական քարտուղարը: Հայաստանի ազգային անվտանգության ռազմաքաղաքական տեսանկյունների տեսական-մեթոդաբանական հիմաստավորմանը նպաստեց նաև հեղինակի համագործակցությունը ՌԴ ՋՈՒ-ի ԳՇ Ռազմագիտական ակադեմիայի ռազմաքաղաքական գիտությունների ամբիոնի հետ, որը ղեկավարում էր փիլիսոփայական գիտությունների դոկտոր գեներալ-մայոր Իգնատ Դանիլենկոն*:

Հետագայում Հայաստանի պաշտպանական քաղաքականության պրոբլեմների մշակումը, որում հաշվի էին առնված Ղարաբաղյան պատերազմի արդյունքները, զգալի չափով իրագործվում էր փոխլրացման սկզբունքով բազմավեկտոր անվտանգային գործընկերությանը կողմնորոշված ՀՀ քաղաքական ուղեգծում պաշտպանական բաղադրատարրի տեղի հիմաստավորման տեսանկյունից: 1995–1998 թթ. հեղինակը, ղեկավարելով ՀՀ ՊՆ արտաքին հարաբերությունների և միջազգային համագործակցության վարչությունը, մասնակցեց ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին Հայաստանի անդամակցության ձևակերպման վերաբերյալ ավարտական աշխատանքային խորհրդատվություններին, ինչպես նաև ՀՀ երկկողմ ու բազմակողմ պաշտպանական համագործակցության գծով բանակցություններին ու իրավապայմանագրային ձևակերպումներին, այդ թվում՝ ՀՀ և ՌԴ ռազմավարական գործընկերության վերաբերյալ համաձայնագրերի փաթեթի ռազմաքաղաքական մասի նախապատրաստմանը:

«Սառը պատերազմի» ավարտից հետո միջազգային անվտանգության համակարգի կերպափոխման գործընթացներին Հայաստանի մասնակցության վերաբերյալ ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարության տեսակետների հայեցակարգման ընթացքում ծագեց աշխարհի առաջատար գիտական դպրոցներում անվտանգության բնագավառի գիտելիքների յուրացման ու համակարգման անհրաժեշտություն: Այդ նպատակով

* Այս ամբիոնը 1992 թ. եղել է «Քաղաքական գործընթացներ և հաստատություններ» մասնագիտացմամբ քաղաքագիտության դոկտորի գիտական աստիճան հայցելու հեղինակի ատենախոսության առաջատար կազմակերպությունը:

հեղինակի կողմից, ղեկավարության հանձնարարությամբ, յուրացվեցին «Ազգային անվտանգության ռազմավարության ձևակերպում. ռազմավարական փոփոխությունների կառավարում» (Ջ. Մարշալի անվան Անվտանգային հետազոտությունների եվրոպական կենտրոնի գեներալական դասընթացներ, Գերմանիա, 1998) և «Մարտահրավերներ. պաշտպանական-անվտանգային վերլուծության նոր տեխնիկաները 21-րդ դարում» (ՌԷՆԴ կորպորացիայի Մագիստրոսական դպրոց, ԱՄՆ, 2001) մասնագիտական ծրագրերը:

2003–2004 թթ. ՀՀ Պաշտպանության նախարար, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Սերժ Սարգսյանի հանձնարարությամբ հեղինակը, լինելով նրա խորհրդականը, ակադեմիական ստաժավորման գործուղվեց ԱՄՆ-ի Պաշտպանության ազգային համալսարան:

«Անհատական գործընկերության գործողությունների» ծրագրի և ՀՀ ՋՈՒ-ի պաշտպանական գնահատումների նկատմամբ ՀՀ դիրքորոշման իմաստավորման անհրաժեշտության, ինչպես նաև Ազգային անվտանգության ռազմավարության (ԱԱՌ) մշակման կապակցությամբ Պաշտպանության նախարարի խորհրդականի ստաժավորման ծրագրում, ամերիկյան կողմի համաձայնությամբ, ներառվեցին համապատասխան բաղադրամասեր: Առաջադրված խնդիրների լուծման համար Ազգային անվտանգության դպրոցի հիմնական ծրագրին (Դպրոցի տնօրեն՝ դոկտոր Ջոզեֆ Դը Սատեր, որը նախկինում եղել էր ԱՄՆ-ի փոխնախագահի աշխատակազմի ղեկավարի՝ ազգային անվտանգության հարցերով տեղակալ, Դպրոցի գիտության գծով դեկան՝ դոկտոր Զեկ Քանգաս, որը նախկինում եղել էր ԱՄՆ-ի Պաշտպանության քարտուղարի՝ ռազմավարության հարցերով օգնականի տեղակալ, ԱՌՀԻ-ի ավագ գիտաշխատող՝ դոկտոր Զեֆրի Սայմոն, որը ՆԱՏՕ-ի փոխակերպման քաղաքականության գծով առաջատար փորձագետն էր) հավելվեցին ՆԱՏՕ-ի Շտաբային սպաների ծրագիրը, ինչպես նաև ԱՄՆ-ի ՊԱՀ-ի ԱՌՀԻ-ում ՀՀ ՊՆ ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի՝ որպես ՀՀ առաջին ԱԱՌ-ի միջգերատեսչական մշակման գործընթացի գիտական ղեկավարման ու համադասման գործիքի ստեղծման նախագծի մշակումը: Տվյալ եռաբաղադրատարր ստաժավորումը ՀՀ պաշտպանության նախարարությանը հնարավորություն տվեց ակադեմիական խնդիրների լուծման ընթացքում ՊԱՀ-ի առաջատար փորձագետների օգնությամբ յուրացնելու ԱԱՌ-ի միջգերատեսչական մշակման ամերիկյան մեթոդաբանությունը և որոշելու Հայաստանի համար առաջին այսպիսի փաստաթղթի նախագծի հիմնական բովանդակային ուղենիշները: Դրա հետ մեկտեղ

ՊԱՀ-ի ԱՈՀԻ-ի գիտական խորհրդում հաջողությամբ պաշտպանվեց ՀՀ ՊՆ ԱՈՀԻ-ի ստեղծման նախագիծը:

Հայաստանի պետականության պատմության մեջ ազգային անվտանգության առաջին ռազմավարության հիմնական մեթոդաբանական ուղենիշները կարելի է ուրվագծել հետևյալ կերպ[5]: Անվտանգային գծով հայեցակարգային փաստաթղթերի միաքայլ կամ երկքայլ մշակման վերաբերյալ ամերիկյան և եվրոպական գործընկերների այլընտրանքային առաջարկներից ընտրվեց ամերիկյան միաքայլ մոտեցումը: Ազգային անվտանգության հայեցակարգի մշակման նկատմամբ եվրոպական-ռուսաստանյան մոտեցումը ենթադրում է ուշադրության կենտրոնացում ազգային անվտանգության համար առկա ու հնարավոր սպառնալիքների և դրանց կանխման միջոցների վերաբերյալ տեսակետների համակարգի մշակման վրա: Այնուհետև ենթադրվում է տվյալ ստատիկ հիմքի վրա մշակել ԱԱՌ-ը՝ որպես ազգային անվտանգության ոլորտում գործունեության կողմնորոշիչների համակարգ: Ամերիկյան մեթոդաբանությունը գնահատվեց որպես գործունեական ռազմավարության ամբողջական մշակման նկատմամբ համակարգված ու դինամիկ մոտեցում, որի շնորհիվ այդ ռազմավարությունը նպատակաուղղվում է հասարակության անվտանգ ու կայուն զարգացման ապահովմանը ինչպես ազգային, այնպես էլ միջազգային չափումներում: Հատուկ ուշադրություն էր դարձվել այն ռազմավարական խնդրին, որ առաջատար ամերիկյան մասնագիտական կենտրոններում յուրացվի ազգային ռեսուրսների սիներգիկ համախմբում պահանջող բարդ համազգային պրոբլեմների միջգերատեսչական մշակման նորարարական մեթոդաբանությունը և ապա ներդրվի Հայաստանի քաղաքական պրակտիկայում:

Միջգերատեսչական հանձնաժողովի դիրքորոշման սկզբունքորեն կարևոր մյուս մեթոդաբանական առանձնահատկությունն իր արտացոլումն ստացավ ՀՀ ղեկավարությանը տրված հետևյալ առաջարկում՝ ԱԱՌ-ը չձևակերպել որպես Օրենք, ինչն առաջարկում էին անել եվրոպական գործընկերները և իրենց իրավաքաղաքական պրակտիկայում կիրառում էին մի շարք հետխորհրդային երկրներ: Հանձնաժողովի Նախագահի կարծիքով՝ ժողովրդավարության արմատավորման անցումային շրջանում ԱԱՌ-ի կերպափոխումը օրենսդրական նորմատիվների համակարգի կարող էր հայ հասարակության առաջադիմական բարեփոխումների համար այն վերածել «զսպաշապիկի»: Ելնելով այս մեթոդաբանական սկզբունքներից և հանրապետության անվտանգ ու կայուն զարգացման ազգային շահերի պրագմատիկ հաշվարկումից, ինչպես նաև հենվելով ՈԴ ու ԱՄՆ-ի փորձի վրա՝ ՀՀ իշխանությունները գերադասեցին փոփոխություն մտցնել «Նորմատիվային ակտերի մասին» ՀՀ օրենքում՝ հետագայում ՀՀ Նախագահի կողմից ԱԱՌ-ը որպես պետության գլխավոր քաղաքական փաստաթուղթ հաստատելու համար[6]:

ԱՄՆ-ի ՊԱՀ-ի Ազգային անվտանգության դպրոցի, Ռազմական քոլեջի ու Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի հեղինակավոր մասնագետների հետ ՀՀ պաշտպանության նախարարության փորձագետների խորհրդատվությունների կարևոր արդյունք եղավ Հանձնաժողովի որոշումը՝ ԱԱՌ-ին զուգահեռաբար մշակել նրա իրականացման ուղղությամբ գերատեսչական ծրագրերի նախագծերի համընդգրկուն փաթեթը[7]:

Որպես ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության մշակման ընդհանուր մեթոդաբանական հիմք ընդունվեց համակարգային մոտեցումը[8]: ՀՀ գլխավոր քաղաքական փաստաթղթի նախապատրաստման գործում այդ մոտեցման կիրառումը Միջգերատեսչական հանձնաժողովում ներկայացված բոլոր գերատեսչությունների փորձագիտական ռեսուրսն ուղղորդեց Հայաստանի ազգային անվտանգության՝ որպես միջգիտաճյուղային և միջգերատեսչական մշակման ամբողջականության ապահովմանը: Համակարգային մոտեցումը հնարավորություն տվեց նախագծի միջգերատեսչական մշակման ընթացքում ի հայտ բերելու համակարգաստեղծ պարամետրերի բազմակերպությունը և Հայաստանի ազգային անվտանգության գլխավոր տարրերի միջև եղած էութենական կապերը, ինչպես նաև դրանց միավորմամբ ձևավորելու անկախ հայկական պետության անվտանգ ու կայուն զարգացման ռազմավարության մեկ միասնական հայեցակարգային տեսլականը:

ԱԱՌ-ի նախագծի և դրա իրականացման ուղղությամբ գերատեսչական ծրագրերի մշակման հիմքում դրվեցին 2004 – 2005 թթ. յուրացված մեթոդաբանությունը, որն օգտագործված էր ԱԱՌ-ի հիմնական կառուցվածքային կողմնորոշիչների մենագրական մշակման մեջ, ինչպես նաև բոլոր գերատեսչություններից անվտանգությանը վերաբերող տեղեկույթի համադրումը և ՀՀ ներքին ու արտաքին անվտանգության խնդիրների ամբողջ համախմբի համար ռազմավարական գնահատականների ձևավորումը: Այս նախագծի ռազմաքաղաքական մասի մշակմանը նպաստեցին ՁՈՒ-ի պաշտպանական գնահատումները, որոնք հայ-ամերիկյան երկկողմ ռազմական համագործակցության շրջանակներում 2005 թ. կատարեց ԱՄՆ-ի ՁՈՒ-ի եվրոպական հրամանատարությունը՝ ՀՀ պաշտպանության նախարարության հետ համատեղ:

ԱԱՌ-ի մշակման աշխատանքների մեթոդաբանական գինման գործում անգնահատելի օգտակարություն ունեցան ՌԴ Նախագահին առընթեր Պետական ծառայության ռուսաստանյան ակադեմիայում (ՊԾՌԱ) կայացած խորհրդատվությունները (պրեզիդենտ՝ պրոֆեսոր Վլադիմիր Եգորով, պրոռեկտոր՝ դոցենտ Անատոլի Տուպիկին, ազգային անվտանգության ամբիոնի վարիչ՝ պրոֆեսոր Ալեքսեյ Պրոխոժև, միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ՝ պրոֆեսոր Կյաչեսլավ Միխայլով), ինչպես նաև ԱՄՆ-ի Ազգային ռազմական քոլեջի փորձագետների կողմից 2006 թ. սկզբին Երևանում կազմակերպված մասնագիտական սեմինարը: Էներգետիկ անվտանգության բնագավառի ամերիկյան ՊԱՀ-ի պրոֆեսոր, դոկտոր Թերեսա Սաբոնիս-Հելֆի ղեկավարած այդ սեմինարն օգնեց ապահովելու Միջգերատեսչական հանձնաժողովի անդամների մեթոդաբանական համատեղելիությունը, քանի որ այնտեղ փոխնախարարների ու կարգավիճակով նրանց հավասարեցված պաշտոնատար անձանց մակարդակով ներկայացված էին Հայաստանի 19 տարբեր գերատեսչություններ:

ԱԱՌ-ի մշակման համար Հանձնաժողովի մեթոդաբանական թղթապանակի ձևավորման գործում սկզբունքորեն կարևոր դեր խաղաց ԱԱՌ-ի նախագծի ակադեմիական փորձաքննության համար մասնագիտական միջավայրի ընտրության վերաբերյալ Հանձնաժողովի Նախագահ Սերժ Սարգսյանի որոշումը: Ըստ այդ որոշման՝ որպես այդպիսի միջավայրեր ընտրվեցին անվտանգության վերաբերյալ գիտության բնագավառում աշխարհի առավել առաջատար կազմակերպությունները: Էականն այն է, որ Հանձնաժողովի Նախագահը, օբյեկտիվորեն գնահատելով Հայաստանում անվտանգության բնագավառում ձևավորված գիտական դպրոց դեռ չլինելու փաստը, գործընկերների համաձայնությամբ խորհրդատվական ու փորձաքննական համագործակցության այդ ուրվանկարն ընտրեց ՀՀ արտաքին քաղաքականության մեջ որդեգրված փոխլրացման սկզբունքին համապատասխան: ՀՀ Պաշտպանության նախարար, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Սերժ Սարգսյանի և ՌԴ Ազգային անվտանգության խորհրդի, Պենտագոնի ու ՆԱՏՕ-ի ղեկավարների հետ բանակցությունների և պաշտոնական նամակագրության արդյունքներով որպես արտաքին մասնագիտական խորհրդատվությունների ու փորձաքննությունների ձևաչափ սահմանվեց «Երևան–Մոսկվա–Վաշինգտոն–Բրյուսել» ոչ տրիվիալ քառանկյունին: Տվյալ ձևաչափում գործընկերային համագործակցության կարևոր մեթոդաբանական տարր դարձավ այն փաստը, որ Հայաստանը պարտավորվեց ինչպես ներքին, այնպես էլ միջազգային ձևաչափերում պահպանել ԱԱՌ-ի նախագծի մշակման գործընթացի թափանցիկության միջազգային չափանիշները և, ինչպես

հետագայում նշեցին արտաքին փորձագետները, ամենայն պատասխանատվությամբ կատարեց այդ պարտավորությունը: Ելնելով այս դիրքերից՝ Հանձնաժողովի Նախագահը իր արտաքին գործընկերներին և Հայաստանի հասարակայնությանը նախապես տեղեկացրել էր անվտանգային խորհրդատվությունների վերաբերյալ խորհրդատվական-փորձաքննական «քառանկյունու» բոլոր օղակների հետ ձեռք բերված սկզբունքային համաձայնությունների մասին:

ՀՀ-ում ԱԱՌ-ի միջգերատեսչական մշակման կազմակերպման առանձնահատկությունն այն էր, որ ներքաղաքական ու արտաքին քաղաքական շրջաններն ըմբռնեցին Հայաստանի դիրքորոշումը արտաքին գործընկերային կենտրոնների հետ համագործակցության անհրաժեշտության հարցում: Այդ համագործակցությունը պետք է ծավալվեր գերազանցապես մեթոդաբանական մակարդակով (մոտեցումների, սկզբունքների, ստանդարտների, հասկացությունների ապարատի, գիտական գործիքակազմի և այլն), առանց յուրաքանչյուր պետության համար անհատականացված բովանդակության մեջ արտաքին ներխուժում թույլ տալու: Հիմնվելով այդ համաձայնությունների վրա՝ Հանձնաժողովը կարողացավ ԱՄՆ-ի ՊԱՀ-ի Ազգային Ռազմական քոլեջի ակադեմիական կոմիտեում, ՌԴ Նախագահին առընթեր ՊԾՌԱ-ի ազգային անվտանգության և միջազգային հարաբերությունների ամբիոնների համատեղ նիստում, ինչպես նաև ՆԱՏՕ-ի եվրոպական անդամների Միջազգային անվտանգության ոլորտում խորհրդակցական խմբում հաջողությամբ փորձարկել ԱԱՌ-ի նախագծի համապատասխանությունը միջազգային մասնագիտական հանրության կողմից ընդունված մեթոդաբանական չափորոշիչներին: Հեղինակը նշում է ռազմական-անվտանգային քաղաքականության հարցերի վերաբերյալ ՀԱՊԿ-ի՝ Արտակարգ և լիազոր դեսպան, գեներալ-գնդապետ Նիկոլայ Բորդյուժայի գլխավորած Գիտափորձագիտական խորհրդի կազմում իր անդամության շրջանակներում տեղի ունեցած մտքերի ու ռազմավարական գնահատականների ոչ պաշտոնական մասնագիտական փոխանակման կարևորությունը:

Նաև հաջողվեց նշված առաջատար մասնագիտական կենտրոնների կապուղիներով ազգային ու տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության առավել զգայուն տարրերի վերաբերյալ կողմնորոշիչ ազդակներ (մեսիջներ) փոխանակել՝ համաձայնեցված գլխավոր մեթոդաբանական կողմնորոշիչների պահպանման պայմանով: Քաղաքական կենտրոնների հետ Հայաստանի իշխանությունների գիտականորեն միջնորդավորված մասնագիտական փոխգործության տվյալ բաղադրիչը դարձավ ՀՀ ԱԱՌ-ի մշակման Միջգերատեսչական հանձնաժողովի մեթո-

դաբանական գործիքակազմի առանձնահատուկ, գործընկերների հետ համաձայնեցված տարրերից մեկը: Ոչ թե քողազերծ քաղաքական, այլ փոխակերպված՝ ակադեմիական, ձևաչափով կողմնորոշիչ ազդակների հավասարակշռված ու շահագրգիռ քննարկումը «Երևան–Մոսկվա–Վաշինգտոն–Բրյուսել» փորձաքննական քառանկյունու բոլոր կողմերին հնարավորություն տվեց իրենց պատկերացումները ճշգրտելու սեփական և գործընկերային անվտանգության շահերի «խաչման կետերում»:

Պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի՝ հիմքային տեքստ հանդիսացող «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության ուղենիշները» զեկուցման բաժիններում փոփոխություններ կատարելու մասին Միջգերատեսչական հանձնաժողովի անդամների կողմից արվող առաջարկությունների մշակման ժամանակ կիրառվեցին միջգերատեսչական փորձաքննության գործընթացին հարմարեցված «Դելֆի» մեթոդիկայի տարրեր[9]: Հիմքային տեքստի բազմաքայլ փորձաքննության ժամանակ ՈՒՆԴ կորպորացիայի կողմից մշակված այս մեթոդի կիրառման առանձնահատկությունն այն էր, որ հիմքային տեքստի առանձին բաժինների վերաբերյալ գրավոր առաջարկությունները փուլ առ փուլ, փոխհամաձայնեցված ժամանակացույցին համապատասխան, «հեռակա կարգով» ներկայացվում էին Հանձնաժողովի քարտուղարություն: Որպես գլխավոր փորձագետներ հանդես էին գալիս փոխնախարարներն ու կարգավիճակով նրանց հավասարեցված ղեկավարները, որոնք ներգրավված գերատեսչություններում համադասում էին ռազմավարական պլանավորման բաժինները: Տեքստի փուլաշրջանային փորձաքննություններին աջակցում էին գերատեսչական փորձագիտական խմբերը:

Հանձնաժողովի քարտուղարության դերն ստանձնած ՀՀ ՊՆ ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը՝ որպես համադասող-վերլուծական փորձագիտական կենտրոն, վերլուծում էր զեկուցման կոնկրետ բաժնի վերաբերյալ բոլոր առանձին փորձագիտական գնահատականներն ու առաջարկությունները, դրանք ներկայացնում Հանձնաժողովի Նախագահին և նրա հետ քննարկումների արդյունքներով ձևավորում այսպես կոչված «փորձագիտական խճանկար»: Այդ «խճանկարը» Հանձնաժողովի անդամների առաջարկությունների համադրությունն էր, որը փուլաշրջայնորեն վրադրվում էր փորձագիտության ենթարկվող բաժնի հիմքային տեքստին և ուղեկցվում փորձագիտական գնահատականների ու տեքստային նորամուծությունների հեղինակների վերաբերյալ լեգենդով, այնուհետև ուղարկվում էր Հանձնաժողովի անդամներին՝ երկրորդ փորձաքննության, որի արդյունքները նույն կերպ

մշակվում էին և նիստից առաջ բաժանվում Հանձնաժողովի անդամներին: Հանձնաժողովի պլանային նիստերում ազգային անվտանգության ռազմավարության նախագծի՝ փորձագիտության ենթարկվող բաժնի լրացուցիչ գնահատականներն ու առաջարկությունները տեքստի իմաստային բլոկների հաջորդականությամբ ենթարկվում էին հրապարակային փորձաքննության և արձանագրվում: Յուրաքանչյուր դիտարկվող բաժնի երրորդ փորձաքննության և խմբագրման արդյունքները, Հանձնաժողովի Նախագահի հետ համաձայնեցումից հետո, երկրորդ կամ, անհրաժեշտության դեպքում, երրորդ նիստում ենթարկվում էին եզրափակիչ հրապարակային փորձաքննության՝ առաջարկությունների ներհանձնաժողովային քննարկմամբ և տեքստի կոնսենսուսային հաստատմամբ:

Հանձնաժողովի կողմից վերլուծության և փորձաքննության համակարգման արդյունքների փուլային առաքումը ՀՀ բոլոր գերատեսչություններ լուծում էր անվտանգության պրոբլեմների համապարփակ շրջանակի վերաբերյալ փոխադարձ փուլաշրջանային փորձագիտական խորհրդատվության խնդիրը ինչպես միջգերատեսչական շահերի համադասման, այնպես էլ բախման տեսանկյունից:

Ազգային անվտանգության ռազմավարության նախագծի ամբողջ տեքստի միջգերատեսչական փորձագիտական վերջնամշակման ավարտից հետո Հանձնաժողովի անդամների կողմից Քարտուղարություն ներկայացվեցին ռազմավարության իրականացման գերատեսչական ծրագրերի նախագծերը: Ազգային անվտանգության ռազմավարության իրականացման ուղղությամբ գերատեսչությունների գործունեության համակարգման համար գերատեսչական ծրագրերի նախագծերի ամբողջական փաթեթը փորձագիտական գնահատման նպատակով ուղարկվեց բոլոր գերատեսչություններ: ՀՀ ՊՆ ԱՈՀԻ-ն, ռազմավարության տեքստի վերջնախմբագրմանը զուգահեռաբար, Հանձնաժողովի Նախագահ Սերժ Սարգսյանի մտահղացմամբ, ավարտեց Հայաստանի նախարարությունների ու գերատեսչությունների կենսագործունեության բոլոր ոլորտներում ԱԱՌ-ի իրականացման վերաբերյալ Հանձնաժողովի փորձագետ-անդամների վերլուծական հոդվածների գիտախմբագրական ու հրատարակչական նախապատրաստումը[10]:

Ազգային անվտանգության ռազմավարության վավերացման վերաբերյալ ՀՀ Նախագահի հրամանագրի համաձայն՝ Հայաստանի Կառավարությունը որոշում կայացրեց ռազմավարության իրականացման գերատեսչական ծրագրերի հաստատման ժամանակացույցի վերաբերյալ: Հանձնաժողովի Նախագահը, որը դարձավ ՀՀ Վարչապետ, ծրագրեց, որ մտա-

վոր ու կազմակերպական ջանքերի համադասման նպատակով ՀՀ ՊՆ ԱՈՀԻ-ն հրապարակի ԱԱՌ-ի իրականացման վերաբերյալ փոխնախարարների ու կարգավիճակով նրանց հավասարեցված պաշտոնատար անձանց հայեցակարգային հոդվածների ամբողջական փաթեթը: Հանձնաժողովի քարտուղարության՝ ՀՀ ՊՆ ԱՈՀԻ-ի կողմից հատուկ ուշադրության արժանացավ ՀՀ ԱԱՌ-ի հայերեն տեքստի թարգմանությունների բնագրաբնույթության ապահովման հարցը՝ ԱՄՆ-ում ու ՌԴ-ում քաղաքական անվտանգային գիտության մեջ ու պրակտիկայում ձևավորված հասկացութային-տերմինաբանական ավանդույթների հաշվառմամբ: Քարտուղարությունը նաև նկատելի ներդրում ունեցավ անվտանգային գիտության ու պրակտիկայի ոլորտում հայերեն տերմինաբանության մշակման գործում: Այդ նպատակով աշխատանքներում որպես փորձագետներ ներգրավվեցին արտաքին գործերի նախարարի տեղակալ, պատմական գիտությունների դոկտոր Ա. Ջ. Կիրակոսյանը, ԱԳՆ սպառազինությունների վերահսկման և միջազգային անվտանգության վարչության պետ Ա. Ա. Եդիգարյանը: Հայերեն տեքստի խմբագրման ժամանակ արժեքավոր առաջարկություններ ներկայացրեց Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) փիլիսոփայության պատմության ամբիոնի վարիչ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Ա. Զաքարյանը:

Քարտուղարության մեթոդաբանական հետազոտություններում կարևոր տեղ հատկացվեց ՀՀ ազգային անվտանգության համակարգի հասկացութային ապարատի մշակմանը: Այդ նպատակով ՀՀ ՊՆ ԱՈՀԻ-ում հեղինակի կողմից՝ ԱՈՀԻ-ի պետի տեղակալ գնդապետ Դ. Ս. Չիլինգարյանի և ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի պրոֆեսոր Ս. Ա. Գալստյանի ակտիվ մասնակցությամբ մշակվեց և Երևանի, Մոսկվայի, Վաշինգտոնի, Բրյուսելի մեթոդաբանական կենտրոններում փորձարկվեց ՀՀ ազգային անվտանգության հարցերին առնչվող հիմնական տերմինների հայերեն–ռուսերեն–անգլերեն բառարանը[11]: Անգլերեն տեքստի մասնագիտական լրամշակման համար կիրառվեց Ռազմավարության նախագծի մշակման գիտական ղեկավարի և մասնագիտական քաղաքական-տերմինաբանական մշակույթի կրողներ հանդիսացող ամերիկահայ փորձագետների (ՀՀ-ում և ԼՂՀ-ում «Ամերիկայի հայկական համագումարի» տարածաշրջանային տնօրեն Արփի Վարդանյան, «Հայք» ԳՀԻ-ի ղեկավար Բաբկեն Վարդանյան և ուրիշներ) միջև նորմատիվ թարգմանության վերաբերյալ պարբերական վերլուծական-լեզվաբանական քննարկումների մեթոդիկան:

Հատուկ պետք է շեշտել այն փաստը, որ ՀՀ ՊՆ ԱՈՀԻ-ն ապահովում էր ոչ միայն Ռազմավարության եռալեզու տեքստերի նույնությունը, այլև դրանց բնագրաբնույթությունը: Տվյալ մոտեցման դրսևորում եղավ ոչ

միայն այն, որ յուրաքանչյուր լեզվով տեքստում օգտագործվեց արևմտյան ու ռուսաստանյան դպրոցներին բնորոշ հասկացութատերմինային համակարգը, ինչով բացառվեց տառացիական թարգմանությունը մայր լեզվից՝ հայերենից, այլև յուրաքանչյուր լեզվում կատարվող խմբագրումների փոխադարձ ներգործությունը՝ հայերեն տեքստի գերակայության պահպանմամբ: Նման փոխներգործությունը հնարավորություն տվեց ապահովելու բարձր մասնագիտական մակարդակ երեք լեզուներով, ինչպես նաև Ռազմավարության ռուսերեն և անգլերեն տեքստերը դարձնելու ռուսախոս և անգլախոս ընթերցողների համար լիովին հասկանալի՝ «հարազատ»: Եռալեզու տեքստերի վրա զուգահեռ աշխատանքի տվյալ փորձը հետագա զարգացման դեպքում կարող է շատ օգտավետ լինել այնպիսի կարևոր քաղաքական փաստաթղթերի մշակման ժամանակ, որոնք նախատեսվում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին մասնագիտական լսարանների համար: Այս առումով հատուկ նշենք «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի գլխավոր խմբագիր գնդապետ Դ. Չիլինգարյանի մասնակցությունը բազմալեզու տեքստերի և բառարանների բովանդակային խմբագրման գործին:

Նախագծի միջգերատեսչական մշակման թափանցիկության ապահովման գործում զգալի դեր խաղաց պաշտպանության նախարարության մամլո ծառայությունը՝ պաշտպանության նախարարի մամլո քարտուղար գնդապետ Ս. Շահսուվարյանի գլխավորությամբ: Այն ապահովում էր ոչ միայն Հանձնաժողովի նիստերի ժամանակացույցի ու ծրագրի պատեհաժամ տեղադրումը պաշտպանության նախարարության էլեկտրոնային կայքում և նիստերին ԶԼՄ-ների ներկայացուցիչների մասնակցությունը, այլև հասարակայնության իրազեկումը Հանձնաժողովի աշխատանքների ընթացքի մասին:

Հարկ է նշել նաև Միջգերատեսչական հանձնաժողովի անդամների միջև անխափան օպերատիվ կապի ապահովման գործում այն ակտիվ գործունեությունը, որ ծավալեցին ԱՈՀԻ-ի պետի տեղակալ գնդապետ Ա. Վ. Զաքարյանը, գործավարության պետ Ենթասպա Մ. Ա. Մախսոյանը, ԱՈՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի գլխավոր խմբագրի տեղակալ փոխգնդապետ Ա. Կ. Հակոբյանը: Հանդեսի տեխնիկական խմբագիր կապիտան Ա. Պ. Նազարեթյանը սուղ ժամկետներում և բարձր որակով ապահովում էր եռալեզու տեքստերի համակարգչային մշակումը և դրանց պատրաստումը ինչպես էլեկտրոնային, այնպես էլ տպածո տարբերակներով: Նախագծի մշակման նախնական փուլում խմբագրական աշխատանքներում մասնակցություն ունեցավ ՀՀ Պաշտպանության նախարարի վարչատնտեսական ծառայության հրատարակ-

չության պետ փոխգնդապետ Ա. Գ. Գրիգորյանը: Ռազմավարության հաստատված ու նախագծային եռալեզու տարբերակները տպագրությանը նախապատրաստելու գործին մասնակցեցին «Հայկական բանակ» հանդեսի խմբագրության բոլոր աշխատողները:

2006 թ. նոյեմբեր-դեկտեմբերին տեղի ունեցան ԱԱՌ-ի գիտական քննարկումներ ԵՊՀ գիտխորհրդի և ԳԱԱ նախագահության ընդլայնված նիստերում՝ գիտական հանրության և հասարակական կազմակերպությունների փորձագետների մասնակցությամբ, ինչպես նաև բաց քննարկում Աժ-ում:

2007 թ. փետրվարին ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանի կողմից ԱԱՌ-ի հաստատումը նշանավորեց ՀՀ պաշտպանական համակարգում երկարաժամկետ բարեփոխումների մշակման աշխատանքների ծավալում: Դրան հաջորդեց Պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի զեկուցումը, որում նա, հանդես գալով ՀՀ ԶՈՒ-ի ղեկավար կազմի առջև, նշեց, որ «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը» Հայաստանում պաշտպանական բարեփոխումների մշակման քաղաքական հիմքն է[12]: Եվ այս համատեքստում ԱԱՌ-ի միջգերատեսչական մշակման մեթոդաբանությունը, որը գործնականում ապացուցեց իր արդյունավետությունը և մեթոդաբանական հիմք ստեղծեց ՀՀ ռազմական դոկտրինի մշակման համար:

Ամերիկյան և ռուսաստանյան մի շարք փորձագետների կարծիքով՝ Հայաստանի ԱԱՌ-ի մշակման գործում ամերիկյան, ռուսաստանյան ու եվրոպական մասնագիտական կենտրոնների մեթոդաբանական աջակցության փոխազդեցական ներառմամբ նորամուծական միջգերատեսչական տեխնոլոգիայի կիրառման փորձը կարող է օրինակ դառնալ գործընկեր երկրի կայուն զարգացման ընդհանուր ռազմավարական շահերի հիմքի վրա ԱՄՆ-ի և ՌԴ-ի միջև մտավոր անվտանգային արդյունավետ համագործակցության ծավալման համար: Միևնույն ժամանակ, հայկական պետական-քաղաքական պրակտիկայում միջգերատեսչական քաղաքական տեխնոլոգիայի կիրառման առաջին հաջող փորձը կարող է երաշխիք դառնալ ՀՀ-ում համապետական մասշտաբի փաստաթղթերի ապարատային-բյուրոկրատական նախապատրաստման՝ հետխորհրդային պետություններին բնորոշ ձևականության հաղթահարման համար:

Որպես ամփոփում հարկ է նշել, որ ազգային անվտանգության ռազմավարության մշակման ժամանակ Միջգերատեսչական հանձնաժողովի քարտուղարության դերում ՀՀ ՊՆ ԱՈՀԻ-ի գործունեությունը դարձավ նրա հետագա հետազոտական գործունեության տրամաչափման տեսա-մեթոդաբանական ու կազմակերպական միջոց:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

[1] Տես *Հ. Ս. Քոթանջյան*, Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման հիմնական ուղեցույցները Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 1, ինչպես նաև սույն ժողովածուում:

[2] Տես «ՀՀ Նախագահին առընթեր Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, ՀՀ Պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության ուղենիշները» զեկուցումը ՀՀ ԶՈՒ-ի հրամանատարական կազմի համար»: Ե., 2005:

[3] Տես *H. S. Kotanjian*. South Caucasus: Developing a Regional Security Architecture. Harvard University, JFK School of Government, «Black Sea Security Program» (http://www.harvard-bssp.org/files/2005/presentation/publications/KOTANJIAN_THE_SOUTH_CAUCASUS_DEVELOPING_ENG.pdf):

[4] Տես *Г. С. Котанджян*. Основы военной политики Республики Армения: военно-политический аспект национальной безопасности. Отдел военной политики, МО РА. Е., 1992; *его же:* Введение в этнополитологию консенсуса–конфликта. Теоретико-методологические проблемы цивилизационного анализа. М., 1992; *его же:* Этнополитология консенсуса–конфликта. Цивилизационный аспект национальной безопасности. М., 1992:

[5] Տես «Open public hearings of Draft NSS at the National Assembly, Republic of Armenia. Report of the Honorable Serzh Sarkissian, Chairman, NSS Elaboration Interagency Commission, Secretary, National Security Council to the President of the Republic of Armenia, Minister of Defense of the Republic of Armenia». 2006, 1 December (http://www.harvard-rgp.org/static/files/273/national_security_armenia_01_15_2007.pdf):

[6] Տես «Հարցազրույց Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար, Ազգային անվտանգության ռազմավարության նախագծի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ Սերժ Սարգսյանի հետ» (http://www.mil.am/arm/?page=2&id=23&p=4&y=2007&m=10&d=03), *նաև*՝ «Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիրը Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» (http://www.president.am/president/arm/?task=16&id=329): «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007:

[7] Տես «Հայաստանի Հանրապետության Վարչապետ, Ազգային անվտանգության ռազմավարության նախագծի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ Սերժ Սարգսյանի ներածական խոսքը»: «Հայկական բանակ», 2007, հմ. 2–3:

[8] Տես *E. S. Quade*. The Systems Approach and Public Policy. «RAND Paper»; *նաև՝ Д. Истон*. Категории системного анализа политики (http://grachev62.narod.ru/Hrest_2/Easton.htm):

[9] Տես «The Delphi Method. IV. Effect of Percentile Feedback and Feed-In of Relevant Facts» (http://www.rand.org/pubs/research_memoranda/RM6118/, *նաև՝* http://www.rand.org/pubs/research_memoranda/2008/RM6118.pdf, *նաև՝* http://stinet.dtic.mil/oai/oai?verb=getRecord&metadataPrefix=html&identifier= AD0702790):

[10] Տես «Հայկական բանակ», 2007, հմ. 2–3:

[11] Տես Հավելված 2. «Հիմնական տերմիններ և հասկացություններ»: «Հայկական բանակ», 2006, հմ. 2:

[12] Տես «ՀՀ Պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի զեկուցումը ՀՀ Զինված ուժերում պաշտպանական բարեփոխումների իրականացման վերաբերյալ»: «Հայկական բանակ», 2007, հմ. 1:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԴՈԿՏՐԻՆԻ ՄՇԱԿՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ*

«Ցանկացած պետության գերխնդիրը, նրա հիմնական գործառույթը ազգային անվտանգության ապահովումն է: Այն իրականացվում է տվյալ բնագավառում հասարակայնության փորձագետ-ներկայացուցիչների համագործակցությամբ իշխանությունների կողմից մշակվող և ազգային անվտանգության գերակայություններն արտացոլող միասնական պետական քաղաքականության միջոցով: Ազգային անվտանգության ապահովման կարևոր բաղադրիչն է այդ քաղաքականության իրացման ուղղությամբ գերատեսչությունների և իշխանության տարածքային մարմինների գործունեության շարակարգված պլանավորումը»[1]:

Ազգային անվտանգության հարցերին վերաբերող համապետական փաստաթղթերի համակարգում իր ուրույն տեղն ունի պաշտպանական դոկտրինը: Նախկինում, երբ աշխարհը բաժանված էր երկու հակամարտող ճամբարների, պետությունների անվտանգության ապահովումը մեծապես պայմանավորված էր արտաքին համաչափ սպառնալիքներին դիմակայելու նրանց կարողությամբ: «Սառը պատերազմի» դարաշրջանի ավարտից հետո պետությունների մեծ մասի համար համաչափ սպառնալիքների կողքին հայտնվեցին անհամաչափ սպառնալիքները, ինչպիսիք են միջազգային ահաբեկչությունը, ժողովրդագրական և բնապահպանական ճգնաժամները, մահաբեր համաճարակները, հասարակության ու տնտեսության կայուն զարգացմանը խոչընդոտող տարբեր երևույթներ: Դա պահանջեց վերանայել և ընդլայնել անվտանգության ապահովմանը, այդ թվում՝ պետության պաշտպանական ոլորտին, առնչվող հարցերի շրջանակները:

Անվտանգության ապահովման ասպարեզում պետության զինված ուժերի կիրառման, նոր սպառնալիքներին ու մարտահրավերներին համարժեք դիմակայությանը դրանց մշտական պատրաստության ապահովման, պաշտպանական համակարգի արդիականացման, զինված ուժերի սպառազինման քաղաքականության, պաշտպանական ոլորտի պահանջմունքներին տնտեսության, ֆինանսական հնարավորությունների համապատասխանեցման, երիտասարդ սերունդների ռազմահայրենասիրա-

* «Հայկական բանակ», 2007, հմ. 1:

Հոդվածը գրված է Լ. Մարտիրոսովի, Տ. Մարտիրոսյանի և Դ. Չիլինգարյանի համահեղինակությամբ:

կան դաստիարակության վերաբերյալ երկրի ռազմաքաղաքական ղեկավարության տեսակետները համակարգված ձևով ամփոփվում են այդ պետության պաշտպանական դոկտրինում: Ի դեպ, տարբեր երկրներում այդ փաստաթուղթը կրում է տարբեր անվանումներ՝ պաշտպանական կամ ռազմական դոկտրին, ռազմավարություն, հայեցակարգ:

Իհարկե, յուրաքանչյուր պետություն, ելնելով իր միջազգային հարաբերությունների վիճակից, զինված ուժերի առաջ դրվող խնդիրներից, առկա մարդկային, տնտեսական ռեսուրսներից, յուրովի է մոտենում այդ փաստաթղթի մշակմանը: Այդուհանդերձ, կարելի է առանձնացնել «արևմտյան» և «արևելյան» մոդելները: Դրանցից յուրաքանչյուրն արտացոլում է տվյալ պետական-հասարակական կառուցվածքային համակարգի յուրահատուկ կողմերը: Այսպես. արևմտյան մոդելում շեշտը դրվում է գիտության և տեխնոլոգիաների բարձր զարգացածության վրա, մինչդեռ արևելյան մոդելում նախապատվությունը տրվում է մարդկային ռեսուրսների օգտագործմանը:

Ըստ արևմտյան մոդելի նախատեսվում է երեք մակարդակի փաստաթղթերի ստեղծում: Ամենավերին տեղն զբաղեցնում է ազգային անվտանգության ռազմավարությունը, որով ուրվագծվում է պետության գործունեությունը իր դեմ ուղղված սպառնալիքների հաղթահարման և կայուն զարգացման ապահովման ուղղությամբ: Երկրորդ մակարդակի փաստաթուղթը ազգային պաշտպանական ռազմավարությունն է, որը առանձնացնում է պաշտպանական ոլորտում անվտանգության ապահովման ռազմաքաղաքական, ռազմատնտեսական, ռազմագիտական և մյուս ընդհանուր պաշտպանական խնդիրները, նպատակները և այդ նպատակներին հասնելու ուղիները: Երրորդ մակարդակի փաստաթուղթը ռազմական ռազմավարությունն է, կամ ռազմական դոկտրինը, որում խնդիրներն էլ ավելի են կոնկրետացվում: Այստեղ սահմանվում են արտաքին սպառնալիքներին ու մարտահրավերներին հաջողությամբ դիմակայելու համար անհրաժեշտ ռազմական ուժը, նրա կազմը, կառուցվածքը, մարտական պատրաստման եղանակները, ռազմատեխնիկական ապահովման խնդիրները: Բացի այդ, երրորդ մակարդակում մշակվում են նաև առանձին զորատեսակների ռազմավարությունը, օպերատիվ պատրաստման սկզբունքները, մարտավարությունը:

Արևելյան մոդելում փաստաթղթերը մշակվում են երկու մակարդակով՝ ազգային անվտանգության հայեցակարգ և ռազմական դոկտրին, որում համակարգված ձևով տրվում են պաշտոնական տեսակետները զինված ուժերի և այլ զորքերի վերաբերյալ: Բայց վերջերս Ռուսաստանի Դաշ-

նությունում ևս առաջարկ եղավ վերանայելու դոկտրինի մշակման նկատմամբ մոտեցումները և ընդլայնելու այնտեղ կանոնակարգվող հարցերի շրջանը, որպեսզի ոչ թե ստեղծվի երեք փաստաթուղթ, այլ դոկտրինում ներառվեն ընդհանուր պաշտպանական խնդիրները[2]: Դոկտրինը պաշտպանական է, քանի որ այն պետք է արտահայտի պետության միասնական քաղաքականությունը՝ միտված պաշտպանական ոլորտին առնչվող բոլոր բնագավառներում (ռազմական, տնտեսական, ֆինանսական, գիտակրթական, տարածքային կառավարման, ժողովրդագրական և այլն) պետական մարմինների ու հասարակական կազմակերպությունների գործունեության համադասմանը:

Կարծում ենք, որ փոքր երկրների համար նպատակահարմար չէ անվտանգության վերաբերյալ փաստաթղթերի մշակումը երեք մակարդակով: Ուստի պաշտպանական դոկտրինը պետք է նկարագրի ՀՀ ԶՈՒ-ի դերն ու առաքելությունը և ծառայի որպես սկզբունքային փաստաթուղթ բարեփոխումների ուղղորդման համար[3]:

Սովորաբար պաշտպանական դոկտրինը բաղկացած է լինում ներածությունից և մի քանի բաժիններից: Դրանցից առաջինում ներկայացվում են ռազմաքաղաքական հիմքերը՝ վերլուծվում է միջազգային իրադրությունը, արվում են նրա զարգացման վերաբերյալ կանխատեսումներ, բացահայտվում են պետության համար առկա արտաքին սպառնալիքները, ուրվագծվում է դրանց չեզոքացման ընդհանուր ուղին, տրվում են պետության պաշտպանական կազմակերպվածքն ու պաշտպանական քաղաքականությունը և պաշտպանական համակարգի արդիականացմանը նպատակաուղղված բարեփոխումները:

Երկրորդ բաժնում տրվում են ռազմական-ռազմավարական հիմքերը՝ ռազմական սպառնալիքների չեզոքացմանն ուղղված ռազմավարությունը, պաշտպանական անվտանգության ապահովման սկզբունքներն ու եղանակները, Զինված ուժերի կողմից պաշտպանական անվտանգության ապահովման պահանջների բավարարման հայեցակարգային դրույթները: Այստեղ հեռանկարային զարգացումների հաշվառմամբ նկարագրվում են նաև ԶՈՒ-ի կառուցվածքը, նրանց ղեկավարման պետական մարմինները, ԶՈՒ-ի կարողություններն ու մարտական խնդիրների լուծման եղանակները ինչպես պատերազմական, այնպես էլ խաղաղ շրջանում, ռազմատեխնիկական ապահովման քաղաքականության ուղենիշները:

Ռազմատնտեսական հիմքերը շարադրվում են հաջորդ բաժնում: Այստեղ հեռանկարի կտրվածքով ներկայացվում են ռազմատեխնիկական քաղաքականության հիմնադրույթները, այն մարդկային ու նյութատեխնիկական

ռեսուրսները, որոնք պետությունը կարող է տրամադրել պաշտպանական անվտանգության պահանջների բավարարման նպատակով:

Իհարկե, սա տարբերակներից մեկն է. կարող են լինել կառուցվածքային այլ տարբերակներ:

Այնուհանդերձ, հարկ է նշել, որ բաժիններից կարևորագույնը առաջին բաժինն է, քանի որ այստեղ է ներկայացվում ռազմաքաղաքական իրադրության վերլուծությունը, այստեղ են թվարկվում հիմնական ռազմական սպառնալիքները, ըստ որոնց և որոշվում են պաշտպանական ոլորտում անվտանգության ապահովման ուղղությամբ պետության գործունեության գերակայությունները՝ պետության տնտեսական և այլ ռեսուրսների հաշվառմամբ: Ոնստի մենք կարևոր ենք համարում տալ Հայաստանի Հանրապետության շուրջ ձևավորված միջազգային իրադրության համառոտ վերլուծությունը, նրա զարգացման հնարավոր հեռանկարը և ըստ այդմ որոշված ռազմական սպառնալիքները: Այդ վերլուծությունը նպատակահարմար է կատարել ինչպես բազմակողմ, այնպես էլ երկկողմ ձևաչափով և տարբեր մակարդակներում՝ տարածաշրջանային ու միջազգային:

Ռազմաքաղաքական իրադրության համառոտ վերլուծություն

Տարածաշրջանային մակարդակ

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է հարավկովկասյան տարածաշրջանում, որն առանձնանում է այստեղ տիրող բարդ ռազմաքաղաքական իրադրությամբ: Տարածաշրջանում առկա են մի քանի ազգամիջյան հակամարտություններ, այստեղ խաչվում են տարբեր տերությունների և ռազմաքաղաքական դաշինքների շահերը: Այդ շահերի համադրման ու մրցակցության պայմաններում էլ ավելի է բարդանում ու խճճվում ռազմաքաղաքական իրադրությունը:

Հայաստանի Հանրապետության անվտանգության համար առանցքային է Ղարաբաղյան հակամարտությունը: Ադրբեջանի ձգտումը՝ այդ հակամարտությունը կարգավորելու Հայաստանի նկատմամբ ռազմական գերազանցության հասնելու միջոցով և որպես դրա հետևանք՝ Ադրբեջանի կողմից հարուցված սպառազինությունների մրցավազքը, պատերազմական գործողություններ վերսկսելու վերաբերյալ Ադրբեջանի բարձրագույն ղեկավարության կողմից բազմիցս հնչեցված սպառնալիքներն ու պատերազմին անթաքույց նախապատրաստությունները, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի տնտեսական ու տրանսպորտային շրջափակումը Ադրբեջանի և Թուրքիայի կողմից, վերջինիս ծավալուն ռազմական ու

դիվանագիտական օգնությունը Ադրբեջանին հարուցում են Հայաստանի անվտանգության համար մի շարք լուրջ ռազմական սպառնալիքներ:

Այդ ամենը ՀՀ ԶՈՒ-ից պահանջում է գտնվել մշտական բարձր մարտական պատրաստության վիճակում, կատարելագործել ու հզորացնել իր կարողությունը՝ հակառակորդին զսպելու համար:

Նշված սպառնալիքները չեզոքացնելու համար Հայաստանը դիմում է նաև քաղաքական միջոցների: Տարածաշրջանում ռազմաքաղաքական հավասարակշռության պահպանման տեսակետից կարևոր հանգամանքներ են Հայաստանի տարածքում ռուսաստանյան զորակայանի առկայությունը, Հայաստանի ներգրավվածությունը անվտանգության գծով տարբեր միջազգային կառույցներում, ինչպիսիք են ՄԱԿ-ը, ԱՊՀ-ն, ՀԱՊԿ-ը, ԵԱՀԿ-ն, մասնակցությունը ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին, համագործակցության սերտացումը ԱՄՆ-ի հետ, մասնավորապես՝ պաշտպանական ոլորտում:

Կարևոր գործոն է նաև բարիդրացիական հարաբերությունների պահպանումը Իրանի Իսլամական Հանրապետության հետ, որը Ղարաբաղյան հակամարտության հարցում վարում է հավասարակշռված քաղաքականություն: Իրանի հետ բարեկամական հարաբերությունները հնարավորություն են տալիս չեզոքացնելու Ադրբեջանի հնարավոր փորձերը՝ շահարկելու իսլամական գործոնը, քանի որ Իրանը իսլամական աշխարհի հեղինակավոր պետություններից մեկն է: Բացի այդ, Իրանի դերը Հայաստանի շրջափակման պայմաններում էլ ավելի է կարևորվում, քանի որ Իրանի տարածքով ապահովվում է Հայաստանի կապը ասիական պետությունների հետ, այդ երկրի հետ տնտեսական կապերով լուծվում են նաև ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման մի շարք հարցեր: Տարածաշրջանային պետությունների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատումն ու պահպանումը կարևոր են նաև Ադրբեջանի կողմից հարևան պետությունների տարածքները որպես ռազմահենադաշտ օգտագործելու հնարավորության բացառման առումով:

Միջազգային մակարդակ

Հայաստանի համար միջազգային մակարդակում բացահայտ սպառնալիքներ չկան: Դրան էապես նպաստում է ՀՀ-ի կողմից իր արտաքին քաղաքականության մեջ փոխլրացման սկզբունքի որդեգրումը: Միևնույն ժամանակ միջազգային իրադրության վերլուծություն կատարելիս պետք չէ մոռանալ, որ հաճախ նույն երևույթը անվտանգության ապահովման առումով կարող է լինել և՛ դրական, և՛ բացասական: Օրինակ՝ արդի

աշխարհին առավել բնորոշ գործընթացներից է համընդհանրացումը (գլոբալացում): Այն, մի կողմից, նպաստում է պետությունների միջև գոյություն ունեցող հակասությունների հարթմանը, մյուս կողմից՝ սպառնում է հատկապես սակավաթիվ ժողովուրդների ազգային ինքնությանը:

Այսօր էապես նվազել է համաշխարհային պատերազմի բռնկման հավանականությունը: Միևնույն ժամանակ ահաբեկչությունը ձեռք է բերել միջազգային բնույթ: Ուստի Հայաստանի համար կարևոր խնդիր է ակտիվ մասնակցությունը միջազգային ահաբեկչության դեմ պայքարին: Բայց դա հանգեցնում է նաև մեր և այլ պետությունների պաշտպանական համակարգերի համատեղելիության, նրանց փոխգործունակության ապահովման անհրաժեշտությանը: Այս առումով կարևոր է Հայաստան–ՆԱՏՕ երկխոսության հետագա զարգացումը: ԳՀԽ ծրագրի շրջանակներում իրականացվող «Անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը» նպատակաուղղված է ՀՀ ԶՈՒ-ի և ընդհանուր առմամբ պաշտպանական համակարգի արդիականացմանը, այդ նպատակով ծրագրվող բարեփոխումների հաջող ընթացքի ապահովմանը:

Հայաստանի պաշտպանական անվտանգության ապահովման տեսակետից կարևոր է մասնակցությունը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության շրջանակներում ծավալված գործունեությանը՝ միտված կոլեկտիվ անվտանգության ապահովման, միջազգային ահաբեկչության, զանգվածային ոչնչացման զենքի ու նրա բաղադրամասերի և թմրանյութերի տարածման, մարդկանց առևտրի դեմ պայքարի գործուն մեխանիզմների ստեղծմանը: Մասնակցությունն այդ կազմակերպությանը Հայաստանին հնարավորություն է տալիս իր համար շահավետ կերպով լուծելու Զինված ուժերի ռազմատեխնիկական ապահովման մի շարք խնդիրներ:

Հայաստանի Հանրապետության պաշտպանական անվտանգության դեմ ուղղված արտաքին սպառնալիքները

Նշված բարդ ռազմաքաղաքական միջավայրում ի հայտ են գալիս Հայաստանի Հանրապետության պաշտպանական անվտանգության համար մի շարք սպառնալիքներ, որոնք ունեն համաչափ և անհամաչափ բնույթ:

Համաչափ սպառնալիքներն են.

– Հայաստանի Հանրապետության բնակչության ֆիզիկական գոյության, պետության անկախության, ինքնիշխանության և տարածքային ամբողջականության, սահմանների անձեռնմխելիության նկատմամբ այլ պետությունների կամ նրանց կառույցների կողմից ձեռնարկվող ոտնձգությունները, միջամտությունը Հայաստանի ներքին գործերին,

– Հայաստանի Հանրապետության նկատմամբ Ադրբեջանի Հանրապետության ռազմական գերազանցության ձեռքբերման միջոցով Ղարաբաղյան հիմնախնդրի ռազմական հանգուցալուծման նպատակով Ադրբեջանի Հանրապետության կողմից պատերազմական գործողությունների վերսկսումը,

– Հայաստանի Հանրապետությանը սահմանակից պետություններում տեղի ունեցող ներքին քաղաքացիական բախումները և լայնածավալ ռազմական գործողությունները,

– բարեկամական ռազմաքաղաքական դաշինքների թուլացումը կամ քայքայումը,

– թշնամական դաշինքների ստեղծումն ու ամրապնդումը, մասնավորապես՝ Թուրքիայի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության ռազմավարական դաշինքը,

– այլ պետությունների հատուկ ծառայությունների քայքայիչ գործունեությունը,

– Հայաստանի Հանրապետության քաղաքական, տնտեսական, մշակութային, հաղորդակցային մեկուսացումը,

– Հայաստանի Հանրապետության դեմ տեղեկատվական պատերազմի վարումը՝ Հայաստանի մասին ապատեղեկատվության տարածման միջոցով:

Անհամաչափ սպառնալիքներն են.

– Հայաստանի Հանրապետության դեմ ոչ կանոնավոր արտաքին ռազմական ուժի կիրառումը,

– անդրազգային հանցագործությունները, այդ թվում՝ միջազգային ահաբեկչությունը, զանգվածային ոչնչացման զենքի ու նրա բաղադրամասերի, թմրանյութերի տարածումն ու տարանցումը,

– Հայաստանի Հանրապետության տարածքում և սահմանակից շրջաններում, ինչպես նաև համընդհանուր մասշտաբների մահաբեր համաճարակները, բնական ու տեխնածին աղետները[4]:

Տվյալ և ապագայում հնարավոր այլ սպառնալիքների հաջողությամբ դիմակայելու, դրանք չեզոքացնելու և/կամ վերացնելու համար Հայաստանի Հանրապետությունը որպես գերակայություն որդեգրել է պաշտպանական ոլորտում բարեփոխումների իրականացման և փոխլրացման սկզբունքի վրա հիմնվող միջազգային ինտեգրման քաղաքականությունը[5]:

Պաշտպանական ոլորտում ծրագրված բարեփոխումները նպատակաուղղված են՝

– ՀՀ պաշտպանական ոլորտի կայուն զարգացմանը,

– ՀՀ ՁՈՒ-ի արդիականացմանն ու մարտունակության բարձրացմանը, արտաքին սպառնալիքներին ու մարտահրավերներին համարժեքորեն հակազդելու կարողության ապահովմանը,

– համընդհանուր անվտանգության ապահովման ուղղությամբ միջազգային ձեռնարկումներին ՀՀ ՁՈՒ-ի ակտիվ մասնակցության համար միջազգային անվտանգության տարբեր կառույցների հետ փոխգործունակության ու համատեղելիության ապահովմանը[6]:

Միջազգային ինտեգրումը նպատակաուղղված է Հայաստանի Հանրապետության կողմից իր պաշտպանական անվտանգության համար միջազգային երաշխիքների ստեղծմանը: Ընդսմին Հայաստանը մշտապես շեշտում է, որ իրեն դիտում է ոչ որպես միջազգային անվտանգության սպառողի, այլ որպես դրա ապահովման ակտիվ մասնակցի:

Հայաստանի Հանրապետության պաշտպանական կազմակերպվածքն ու պաշտպանական քաղաքականությունը

Հայաստանի Հանրապետությունն իր պաշտպանական անվտանգությունն ապահովելու համար համադրված ու նպատակային ձևով կիրառում է իր պաշտպանական կազմակերպվածքը, որը ներառում է պետության ամբողջ՝ ռազմական, քաղաքական, տնտեսական, գիտական, հոգևոր, տեղեկատվական և այլ բնագավառների ներուժը:

Պետության պաշտպանական կազմակերպումը ծառայում է ՀՀ պաշտպանական անվտանգության ապահովման նպատակներին: Որպես կազմակերպման արդյունք ձևավորվում է պետության պաշտպանական կազմակերպվածքը:

Հայաստանի պաշտպանական կազմակերպվածքը *ներառում* է՝

– Նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհուրդը, որն իր աշխատակազմով ու ռազմավարական հետազոտությունների կենտրոնով հանդերձ ռազմավարական ղեկավարման գլխավոր մարմինն է և համադասում է պետական մարմինների գործունեությունը պաշտպանական ոլորտում,

– ՀՀ Զինված ուժերը, որոնք պաշտպանական անվտանգության ապահովման միջուկն ու հիմքն են, այլ զորքեր, աշխարհազորը, ռազմական կազմավորումները և պետական մարմինները, որոնք նախատեսված են ռազմական մեթոդներով պաշտպանական անվտանգության ապահովման խնդիրների իրականացման համար, ինչպես նաև՝ նրանց ղեկավարման մարմինները,

– երկրի արդյունաբերական և գիտական համալիրների այն մասը, որը նախատեսված է պաշտպանական անվտանգության պահանջմունքների բավարարման համար:

Պետության պաշտպանական կազմակերպվածքի զարգացման *հիմնական նպատակն* է ազգային շահերի, Հայաստանի և նրա դաշնակիցների պաշտպանական անվտանգության երաշխավորված պաշտպանությունը:

Պաշտպանական կազմակերպվածքի զարգացման *գլխավոր սկզբունքներն* են՝

– ռազմաքաղաքական իրադրության և նրա զարգացման հեռանկարների վերլուծության արդյունքների հաշվառում,

– ղեկավարման կենտրոնացում՝ միանձնյա ղեկավարման իրավական հիմքերի վրա,

– երկրի տնտեսական հնարավորությունների սահմաններում մարտական և զորահավաքային պատրաստականության բարձր մակարդակի, ինչպես նաև պաշտպանական անվտանգության խնդիրներին ռազմական ղեկավարման ու զորքերի (ուժերի) կառավարման մարմինների, նրանց ենթակառուցվածքների, մարտական կազմի ու պահեստազորի թվաքանակի, նյութական միջոցների ու պաշարների համապատասխանության ապահովում,

– կրթության և դաստիարակության միասնություն,

– ծառայողների իրավունքների ու ազատությունների իրականացում, նրանց սոցիալական պաշտպանվածության, արժանապատիվ սոցիալական կարգավիճակի ու կյանքի բարձր որակի ապահովում:

Պետության պաշտպանական կազմակերպվածքի բոլոր բաղադրիչների զարգացումն իրականացվում է համապատասխան նորմատիվ-իրավական ակտերի, որոնք դրանց գործունեությունը կանոնակարգում են համադրված, համակարգված և համաձայնեցված ծրագրերի ու պլանների միջոցով:

Պետության պաշտպանական կազմակերպվածքի զարգացման *գերակայություններն* են՝

– պետության պաշտպանական կազմակերպվածքի միացյալ ղեկավարման համակարգի ստեղծում ու արդյունավետ գործունեության ապահովում,

– ռազմավարական զսպումն ապահովող զորքերի (ուժերի) զարգացում և կատարելագործում, ներառյալ՝ աշխարհազորի կառուցվածքը և կազմը,

– զորահավաքային ռեսուրսների նախապատրաստման համար ենթակառուցվածքների անհրաժեշտ պատրաստության ձևավորում ու պահպանում և ՀՈՒ-ի, այլ զորքերի ու աշխարհազորի զորահավաքային ծավալման ապահովում,

– մշտական մարտական պատրաստությամբ զորամիավորումների, միավորումների և զորամասերի համալրում, հանդերձավորում, համակողմանի ապահովում ու պատրաստում լայնածավալ կամ տեղային պատերազմներում ու հակամարտություններում մարտական գործողությունների վարման խնդիրների լուծման համար:

Պետության պաշտպանական կազմակերպվածքի զարգացման ուղղություններն են՝

– պետության պաշտպանական կազմակերպվածքի բաղադրիչների, կառուցվածքի, կազմի ու թվաքանակի համապատասխանեցում պաշտպանական անվտանգության ապահովման խնդիրներին՝ երկրի տնտեսական հնարավորությունների հաշվառմամբ,

– պետական և ռազմական ղեկավարման համակարգի գործունեության որակական մակարդակի, արդյունավետության և տեխնոլոգիական հիմքի անվտանգության բարձրացում,

– պաշտպանական կազմակերպվածքի ռազմատնտեսական ապահովման կատարելագործում՝ հիմնված դաշնակիցների հետ հարաբերությունների սերտացման, ֆինանսական միջոցների ու նյութական ռեսուրսների կենտրոնացման, նպատակային ու արդյունավետ օգտագործման վրա,

– ռազմավարական պլանավորման կատարելագործում՝ ՁՈՒ-ի, այլ զորքերի և աշխարհազորի միասնական կիրառման սկզբունքի հիման վրա,

– կադրերի պատրաստման, ռազմական կրթության, օպերատիվ և մարտական պատրաստման, զինծառայողների դաստիարակության, ինչպես նաև ռազմական գիտության համակարգերի գործունեության արդյունավետության մեծացում, նոր համակարգերի ստեղծում,

– համալրման համակարգի կատարելագործում՝ պայմանագրազորակոչային սկզբունքի հիման վրա, պայմանագրային զինծառայողների մասնաբաժնի ավելացում՝ անհրաժեշտ սոցիալ-տնտեսական պայմանների ստեղծմանը զուգահեռ, առաջնահերթորեն՝ կրտսեր հրամանատարական կազմի ու մարտական մասնագիտությունների գծով առաջատար մասնագետների պաշտոնների համար,

– սպառազինության և ռազմական տեխնիկայի շահագործման և վերանորոգման համակարգի արդյունավետության մեծացում,

– ՁՈՒ-ի և այլ զորքերի, նրանց ղեկավարման մարմինների հատուկ տեղեկատվական ապահովման կատարելագործում,

– օրինականության, իրավակարգի ու զինվորական կարգապահության ամրապնդում,

– զինվորական ծառայության վարկի բարձրացման, ՀՀ քաղաքացիներին զինծառայությանը նախապատրաստման ուղղությամբ պետական քաղաքականության իրականացում,

– միջազգային ռազմական (ռազմաքաղաքական) և ռազմատեխնիկական համագործակցության զարգացում,

– պաշտպանական կազմակերպվածքի, ինչպես նաև հասարակության հետ նրա հարաբերությունների համակարգի նորմատիվ-իրավական հենքի կառուցման, զարգացման և կիրառման կատարելագործում:

Ռազմական շինարարության արդի փուլի բաղկացուցիչ և գերակա խնդիր է համալիր պաշտպանական բարեփոխման իրականացումը՝ պայմանավորված ՀՀ ռազմաքաղաքական իրադրության, խնդիրների և պաշտ-

պանական անվտանգության ապահովման պայմանների արմատական փոփոխություններով:

Պաշտպանական բարեփոխման շրջանակներում իրականացվում է պետության պաշտպանական կազմակերպվածքի բոլոր բաղադրիչների փոխկապված ու համակարգված բարեփոխում:

Հայաստանի Հանրապետության պաշտպանական քաղաքականությունը

Հայաստանի պաշտպանական անվտանգության ապահովման գլխավոր միջոցը Հայաստանի Հանրապետության պաշտպանական քաղաքականությունն է: Այն բխում է «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության» հիմնադրույթներից և ունի արտաքին ու ներքին ուղղություններ:

Հայաստանի պաշտպանական քաղաքականության *կարևոր նպատակները* սահմանված են երկրի հիմնական օրենքով՝ Սահմանադրությամբ: Դրանցից է բնակչության ֆիզիկական գոյության, պետության անկախության, ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության, սահմանադրական կարգի պահպանման երաշխավորումը:

Պաշտպանական քաղաքականության *հիմնական խնդիրներն* են՝ պաշտպանական ներուժի ստեղծումը, ձևավորումը, նրա կազմի կարգավորումը և անհրաժեշտ մակարդակի ապահովումը, ազգային և պետական քաղաքական նպատակներին հասնելու համար ռազմական ուժի կիրառման պայմանների որոշումը:

Պաշտպանական քաղաքականությունը կոչված է *որոշելու*՝

– պաշտպանության նպատակներին հասնելու համար ռազմական ուժի կիրառման հնարավորությունը, անհրաժեշտությունը և սահմանները,

– պետության պաշտպանական անվտանգության ապահովման համար անհրաժեշտ ու բավարար ռազմական և այլ բնույթի ներուժի որակական ու քանակական բնութագրերը,

– Հայաստանի Հանրապետության կողմից ռազմական ուժի օգտագործման ուղիները, պաշտպանական անվտանգության ապահովման, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև հակառակորդի վրա ռազմական ներգործության եղանակները:

Պաշտպանական ոլորտում ծրագրվող բարեփոխումների կարևոր ուղղություններից են՝

– ՀՈՒ-ի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության սահմանումը, այդ թվում՝ պաշտպանության նախարարության և Գլխավոր շտաբի աշխատակազմերի համապատասխան քաղաքացիականացումը,

– պաշտպանական ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի կատարելագործումը:

Հասկանալի է, որ այն վարչությունները, որոնք անմիջականորեն զբաղվում են մարտական խնդիրների կատարման ժամանակ զորքերի կառավարման և մարտական ապահովման հարցերով, պետք է պահպանեն զինծառայողների գերակշռությունը, թեև իրենց հաստիքացուցակում կարող են ունենալ նաև քաղաքացիական պաշտոններ: Մյուս վարչությունները կարող են քաղաքացիականացվել՝ ըստ անհրաժեշտության պահպանելով առանձին զինվորական հաստիքներ:

Օրենսդրական դաշտը ոչ լիովին է համապատասխանում ներկայիս պահանջներին և իրողություններին, առավել ևս՝ չի համապատասխանի հեռանկարում: Ուստի նպատակահարմար է մշակել նոր օրենքներ կամ փոփոխություններ կատարել արդեն գործող օրենքներում: Այստեղ կարևոր է, որ դոկտրինում արտացոլված լինեն ընդհանուր պահանջներն ու մոտեցումները, ինչը հնարավորություն կտա ապահովելու նոր օրենքների համակարգված մշակումը և խուսափելու օրենքների միջև հակասությունների առաջացումից:

Ժողովրդավարական արժեքների արմատավորման առումով շատ կարևոր է զինծառայողների իրավունքների պաշտպանության համակարգի ձևավորումը: Դա կարող է արվել կա՛մ առանձին հաստատության ստեղծմամբ, կա՛մ էլ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում հատուկ խմբի կազմավորմամբ:

Պաշտպանական անվտանգության ռազմատնտեսական ապահովումը

Ռազմատնտեսական ապահովման *հիմնական նպատակն* է պետության պաշտպանական կազմակերպվածքի ֆինանսական ու նյութական կարիքների բավարարումը:

Ռազմատնտեսական ապահովման *կարևոր խնդիրներն* են.

– պետության պաշտպանական կազմակերպվածքի կողմից լուծվող խնդիրների և նրա առաքելությունների՝ ժամանակին և ամբողջ ծավալով ֆինանսական ապահովումը,

– պաշտպանական անվտանգության ապահովման նպատակով հատկացվող նյութական ռեսուրսների և դրամական միջոցների ծախսերի օպտիմալացումը, դրանց օգտագործման արդյունավետության մեծացումը,

– երկրի գիտատեխնիկական, տեխնոլոգիական և արտադրական բազայի, Զինված ուժերի և այլ զորքերի, պաշտպանական ենթակառուցվածքի զարգացման ապահովումն ըստ պաշտպանական անվտանգության շահերի,

– պաշտպանական անվտանգության շահերին համապատասխան՝ երկրի տնտեսության քաղաքացիական ու ռազմական ճյուղերի ինտեգրումը և պետության ռազմատնտեսական գործունեության համակարգումն ու համադրումը,

– Զինված ուժերի և այլ զորքերի զինվորական ու քաղաքացիական ծառայողների, ինչպես նաև ռազմաարդյունաբերական համալիրում աշխատող քաղաքացիների սոցիալական ապահովման մակարդակի բարձրացումը,

– երկրի տնտեսության ու բնակչության զորահավաքային պատրաստության ու պատրաստման համակարգերի գործունեության ու կատարելագործման ապահովումը,

– նյութական միջոցների պաշարների կուտակումն ու պահպանումը,

– փոխշահավետ միջազգային ռազմական (ռազմաքաղաքական) ու ռազմատեխնիկական համագործակցության իրականացումը,

– ռազմատնտեսական ոլորտին վերաբերող միջազգային պայմանագրերի կատարումը:

Անհրաժեշտության դեպքում պետության տնտեսությունը պետք է կարողանա արագ և առանց մեծ դժվարությունների խաղաղ պայմաններից փոխադրվել պատերազմականի:

Ռազմատեխնիկական քաղաքականությունը

Ռազմատեխնիկական քաղաքականության *հիմնական նպատակն* է ապահովել Զինված ուժերի պահանջմունքները սպառազինության և մարտական տեխնիկայի հարցում: Ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, առավել գերադասելի է շեշտը դնել մարտական համակարգերի վրա՝ նախընտրելով համատեղելի համակարգեր: Ռազմատեխնիկական քաղաքականությունը սահմանում է, թե որ սպառազինությունը, ռազմամթերքը նպատակահարմար է արտադրել երկրի ներսում, իսկ որը՝ գնել արտերկրում:

Ռազմական ռազմավարությունը

Ռազմական ռազմավարությունում շարադրվում են պաշտպանական դոկտրինի ռազմավարական-օպերատիվ հիմքերը՝ ռազմական պաշտպանության գլխավոր սկզբունքները, ՀՈՒ-ի, այլ զորքերի, աշխարհազորի կիրառման նպատակներն ու հիմնական ձևերը, զորքերի խնդիրները խաղաղ, սպառնագին և պատերազմական շրջաններում, անհրաժեշտ ռազմական կարողությունները, ՀՈՒ-ի կառուցվածքը, զորքերի օպերատիվ նպատակները, ինչպես նաև պատերազմներում ու զինված հակամարտություններում ռազմարշավների և օպերացիաների բնույթն ու տարատեսակները: Ընդ որում, պետք է հատուկ նշվեն ՀՈՒ-ի գործունեության օպերատիվ հիմունքները, այդ թվում՝

– զինված պայքարի, Զինված ուժերի և այլ զորքերի կիրառման մեթոդների ու միջոցների հնարավոր բնույթը, պատերազմի վարման, կանոնավոր բանակի ու աշխարհազորի ռազմավարության սկզբունքները,

– ռազմարշավների, օպերացիաների և այլ ռազմական գործողությունների շրջանակները, բնութագրերը և տարատեսակները,

– այդ գործողությունների հաջողության ապահովմանը նպատակաուղղված կադրային քաղաքականության ուղենիշները:

Ռազմական ռազմավարությունը օպերատիվ արվեստի միջոցով ներազդում է մարտավարության, ռազմական ընթացակարգերի, Զինված ուժերի կառուցվածքի ու կազմակերպման, օպերացիաների պլանավորման, կադրերի ուսուցման և վերապատրաստման, ինչպես նաև վարժանքների, զինվորական խաղերի ու մոդելավորման վրա: Ռազմական ռազմավարությունը նաև ազդում է տվյալ պետության, ինչպես նաև այլ պետությունների քաղաքականության ուղեգծերի վրա:

Զինվորական անձնակազմի ուսուցումն ու վերապատրաստումն իրենց հերթին ազդում են ռազմական ռազմավարության ապագա վերամշակումների վրա:

Զինված ուժերի կարողությունները սովորաբար վերլուծում են՝ ելնելով այն ենթադրությունից, որ այդ ուժերը գործելու են ռազմական ռազմավարությամբ ուրվագծված ռազմավարական-օպերատիվ սահմաններում: Նման վերլուծությունները հիմք են դառնում պլանավորման համար: Ռազմական ռազմավարությունը հաշվի է առնում ոչ միայն զինված ուժերի ներկա վիճակը, այլև դրանց ապագա զարգացումը՝ դրանով իսկ ազդելով օպերացիաների (մարտական գործողությունների) և մարտական ներուժի պլանավորման վրա:

Եթե նախկինում պետությունը ռազմական ռազմավարություն չի ունեցել, ապա դրա մշակման ժամանակ օգտագործվում են գլխավոր պաշտպանական (զորահավաքային, զորքերի ծավալման և այլն) կամ օպերացիաների պլանները: Իսկ պաշտպանական դոկտրինի հաստատումից հետո օպերացիաների պլանավորումն արդեն բխում է դոկտրինից և նրա ռազմական ռազմավարությունից:

Զորքերի (ուժերի) կամ զորատեսակների համատեղ գործողություններ, ինչպես նաև միջազգային ռազմական գործողություններ պլանավորելիս կարևոր է, որ պետական պաշտպանական մարմինները և ռազմական ստորաբաժանումները իրազեկ լինեն միմյանց գործողությունների պլաններից: Այս առումով առաջանում է պաշտպանական ոլորտին առնչվող տարբեր տեսակի ու մակարդակների ռազմավարությունների, հայեցակարգերի, կանոնադրությունների ու կանոնագրքերի համահունչ լինելու խնդիրը:

Ռազմական ռազմավարությունը հիմք է ծառայում ընդհանրացման ու ստանդարտացման համար, որպեսզի տարբեր զորատեսակներ ու զորքեր համատեղ գործելիս ցուցաբերեն միանման ըմբռնում ու մոտեցում: ՀՀ պաշտպանական կառույցներում ստանդարտացումը, կարծում ենք, պետք է կատարվի ռազմական ռազմավարության հիման վրա, թեև ստանդարտացման աղբյուր են նաև այլ՝ ավելի ցածր մակարդակի փաստաթղթերը (կանոնագրքեր, կանոնադրություններ և այլն), սակայն դոկտրինի ընդունումից հետո դրանք պետք է միայն լրացնեն հիմնական ռազմավարական փաստաթուղթը:

Ռազմական ռազմավարության մշակման միջազգային փորձը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես ազգային ռազմական ավանդույթները, այնպես էլ համաշխարհային ռազմական զարգացումները:

Ազգային բանակաշինական փորձը և միջազգային զարգացումները

Նախորդ դարի հայկական ռազմուժի պատմության ամբողջ ընթացքը մեր ուշադրությունը սևեռում է հատկապես մի նշանակալի փաստի վրա, որը մինչ օրս չի կորցրել իր արդիականությունը: Եվ հայ-վրացական պատերազմի, և՛ Զանգեզուրի ինքնապաշտպանական կռիվների ժամանակ զորավար Դ. Կանայանը և սպարապետ Գ. Նժդեհը կիրառել են աշխարհազորային ստորաբաժանումների կազմավորման և զորահավաքի անցկացման տարածքային սկզբունքները, որոնք չափազանց արդյունավետ են եղել պաշտպանական կռիվների շրջանում: Բայց դրանք բավական անարդյունավետ էին հակառակորդի տարածքում հակահարձակման ժամանակ, քանի որ գյուղացիները լքում էին զորքը, երբ այն հեռանում էր իրենց բնակավայրերից: Արցախյան ազատամարտի սկզբնական՝ պաշտպանական, շրջանում, երբ ռազմական գործողությունները ծավալվում էին ֆիդայական ջոկատների միջոցով, կիրառվեց նման սկզբունք, սակայն բանակաշինության հենց սկզբից կիրառվեց զորակոչի արտատարածքային սկզբունքը. այն ավելի էր համապատասխանում պատերազմի հաջորդ՝ հակահարձակման փուլին: Ժամանակակից զինված բախումները ուսումնասիրելով՝ տեսնում ենք, որ տեխնիկապես կամ թվապես մեծ գերակշռություն ունեցող հակառակորդի դեմ կռվելիս կանոնավոր բանակը չի կարողանում երկար ժամանակ պաշտպանվել, մինչդեռ աշխարհազորային միավորները բավական հաջող են կիրառում հայդուկային ռազմավարությունը՝ հակառակորդին պատճառելով անընդունելի կորուստներ և ստեղծելով անհանդուրժելի պայմաններ: Պարտիզանական մեթոդների կիրառումը նշանակում է, որ ստորաբաժանումները պետք է զինված պայքար մղեն միայն ռազմական նշանակության օբյեկտների ու կոմբատանտների դեմ, և նման պարագայում այդ պայքարի ձևը կհամարվի օրինաչափ՝ միջազգային իրավունքին համապատասխանող: Շատ կարևոր է հաշվի առնել այս հանգամանքը՝ ահաբեկչական գործունեության մեջ մեղադրված չլինելու համար:

Պետության կողմից ռազմական ռազմավարության մեջ անհամաչափ պայքարի համակարգի նախատեսումը ժամանակակից պատերազմներում թվաքանակով կամ սպառազինվածությամբ գերազանցող հակառակորդի դեմ գործելու իրեն արդարացնող հիմնական մեթոդներից է: Այն դրսևորում է անգամ ղեկավարման կենտրոնական համակարգի փլուզման դեպքում՝ ի հաշիվ տվյալ երկրի մարդկային ռեսուրսների: Պարտիզանական պատերազմի կիրառման արդյունավետ ձևերից է նաև պայքարի ինչպես սովորական, այնպես էլ պարտիզանական մեթոդներ կիրառող հակառակորդի վրա ներգործության կամ դիմադրության ցան-

ցային համակարգի անցնելու դեպքում լիազորությունների հանձնումը անմիջական կատարողներին (օրինակ՝ «Կասկադը» Աֆղանստանում) կամ դաշտային հրամանատարներին: Ուսումնասիրելով հանուն իրենց անկախության Սլովենիայի ու Խորվաթիայի մղած պատերազմներում կիրառված տարածքային պաշտպանության փորձը*, Վիետնամի, Աֆղանստանի ու Իրաքի օրինակները՝ կարելի է պնդել, որ պարտիզանական պայքար կազմակերպելու համար աշխարհագրային ստորաբաժանումների համակարգի կիրառումը արդյունավետ և իրեն միանգամայն արդարացրած միջոց է: Նման ստորաբաժանումներն իրենց լավ են դրսևորում նաև երկրի տարածքի խորքը ներխուժած օդաշարժունակ և դիվերսիոն ստորաբաժանումների ու խմբերի մեկուսացման և չեզոքացման գործում, ինչը ժամանակակից ռազմարվեստում էական դեր ունի փոքր տարածքով երկրների համար[7]:

Կարծում ենք, որ ռազմական դրության պայմաններում զորահավաքի տարածքային սկզբունքը նպատակահարմար է կիրառել նաև այն պատճառով, որ ներկայումս սպառնագին և պատերազմի սկզբնական շրջանները խիստ կրճատվել են[8], և հարձակման ենթարկված երկրները չեն հասցնում իրականացնել արտատարածքային սկզբունքով զորահավաքն ու զորքերի ծավալումը մինչև գլխավոր ուժերի մարտի բռնվելը[9], իսկ որոշ դեպքերում, երբ պետությունը չունի համապատասխան ռազմավարական տարածք, անգամ մինչև երկրի ռազմակալումը**: Դա է պատճառը, որ մի շարք երկրներ զորահավաքի արագ իրագործման համար նախատեսում են հենց տարածքային սկզբունքը, որը ենթադրում է զորահավաքային՝ ինչպես մարդկային, այնպես էլ նյութատեխնիկական, ռեսուրսների նպատակային նախապատրաստում ու կուտակում:

Ռազմական դրության համար նմանատիպ զորահավաքային համակարգեր նախատեսում են Շվեյցարիան (պատերազմի դեպքում կարող է կազմավորել շուրջ 600 հազար մարդուց կազմված բանակ), Իսրայելը

* Կարծիք կա, թե պարտիզանական պայքարը կարող է կրել միայն տարերային բնույթ: Սակայն երկրորդ համաշխարհային և այլ պատերազմների փորձը (պարտիզանական շարժումը Խորհրդային Միության գրավված տարածքներում, «մակի» շարժումը Ֆրանսիայում և այլն) վկայում է, որ պարտիզանական պայքարը կարող է կազմակերպված լինել նաև հակառակորդի ագրեսիայի ենթարկված պետության կառավարության կողմից: Հաշվի առնելով սույն թեմայի յուրահատկությունը և կարևորությունը՝ հեղինակները նախատեսում են դրա առանձին քննարկում հետագա հոդվածներում:

** Ինչը տեղի ունեցավ 20-րդ դարում Լիբանանի դեմ Իսրայելի ծավալած գործողությունների ժամանակ:

(կարող է 6 ժամվա ընթացքում կազմավորել մոտ 250 հազար մարդուց կազմված բանակ) և Դանիան: Ընդ որում, վերջինս ռազմական դրության պայմաններում կիրառում է աշխարհագրային ստորաբաժանումներ «Հեմվեռն» կառույցի միջոցով, որի տարեկան բյուջեն կազմում է պաշտպանական բյուջեի 3 տոկոսը: ԱՄՆ-ում ևս կա նման կառույց: Այն կոչվում է Պետության պաշտպանության ուժեր, կամ միլիցիա: Նրա խնդիրն է պատերազմի ժամանակ իրականացնել տարածքային պաշտպանություն՝ աջակցելով զինված ուժերին:

Արևելյան դոկտրինները պաշտպանական համակարգերի կառուցման ժամանակ նկատի են ունենում մեծ ռազմավարական տարածքներ, ինչը պատերազմի դեպքում հնարավորություն կտա իրականացնելու զորահավաքը: Կարծում ենք՝ Հայաստանի պարագայում դա այնքան էլ նպատակահարմար չէ: Ուստի անմիջական հարձակման պայմաններում կարելի է զորահավաք անցկացնել տարածքային սկզբունքով: Իսրայելը, որը անցյալ դարի կեսերին ուներ զորահավաքի արտատարածքային համակարգ, յոթնասունականների պատերազմի ժամանակ կանգնեց նման խնդրի առջև և մեծ դժվարությամբ հասցրեց կատարել զորահավաքը ու փոխել պատերազմի անբարենպաստ ընթացքը: Այդ էր պատճառը, որ Իսրայելում դրանից հետո սկսեցին կիրառել ռազմական բնակավայրերի սկզբունքը, որը, կարծում ենք, կիրառելի է նաև Հայաստանի պայմաններում:

Արևմտյան դոկտրինները նախատեսվում են սահմանափակ պատերազմներ վարելու համար և ամենևին պատրաստված չեն երկարատև ու զանգվածային պատերազմների (բացի ԱՄՆ-ից ու Ֆրանսիայից): Բացառություն են կազմում նաև թուրքական և իրանական ռազմական համակարգերը, որոնք նախատեսում են կորպուս–բրիգադ օպերատիվ կառուցվածքը, յուրաքանչյուրը ունի մոտ 1–2 միլիոնանոց պատրաստի պահեստազորի հնարավորություն՝ հիմնված զորակոչի համակարգի վրա, միևնույն ժամանակ դրանք ունեն նաև բարձր շարժունակությամբ մեծ ստորաբաժանումներ՝ օժտված ռազմավարական տեղաշարժի կարողությամբ: Թեև նման ունակության ապահովումը ՀՀ ԶՈՒ-ում նպատակահարմար է միայն խաղաղապահ բրիգադի համար (համաձայն ԱԳԳԾ-ի), այնուամենայնիվ անհրաժեշտ է դեսանտագրոհային գնդի (կամ պատերազմական հաստիքներով՝ բրիգադի) մակարդակով ունենալ խիստ շարժունակ և հզոր կրակային կարողություններով օժտված ստորաբաժանումներ, որոնք կկարողանան նախանշված վայրում և ժամանակահատվածում կատարել ռազմավարական նշանակության թե՛ պաշտպանական, թե՛ հարձակողական առաջադրանքներ: Պատերազմի

ժամանակ ծայրագույն անհրաժեշտության դեպքում նման դեր կարող են ստանձնել նաև ՆԱՏՕ-ի չափանիշներով ստեղծվող խաղաղապահ բրիգադը, ինչպես նաև նրա օրինակով կազմավորվելիք նատոյական տիպի պահեստազորային բրիգադներն ու համազարկային համակարգերի առանձին շարժունակ ստորաբաժանումները, որոնք ի վիճակի լինեն կասեցնելու, անգամ կանգնեցնելու հակառակորդի առաջխաղացումը շնորհիվ ճակատի երկայնքով արագ տարաշարժի: Ընդսմին նպատակահարմար կլինի խաղաղապահ բրիգադը հագեցնել համապատասխան տեխնիկայով, իսկ պահեստազորային բրիգադների համար մշակել այնպիսի կառուցվածքային կմախք, որը գործի մշտապես՝ կատարելով նաև պահեստազորի ուսումնավարժական հավաքատեղիի գործառույթ:

Քանի որ տարածաշրջանի որոշ երկրներ կարողություն ունեն՝

1. ճակատի փոքր հատվածում անսպասելի կերպով ճեղքելու ռազմավարական պաշտպանությունը և արագ զարգացնելու հարձակումը, ինչպես նաև օդաշարժունակ ուժերով մեծ դեսանտներ իջեցնելու Հայաստանի տարածքում՝ գրավելով անպաշտպան ռազմավարական կետերը, ապա նպատակահարմար է զարգացնել մեր ՀՕՊ-ի համակարգը և, վերը նշված շարժունակ ստորաբաժանումներից բացի, ունենալ արագ կազմավորվող (տարածքային սկզբունքով) աշխարհազորային ստորաբաժանումներ, իսկ գլխավոր ուղղությունների վրա՝ ռազմականացված բնակավայրեր: Աշխարհազորային ստորաբաժանումը պետք է ունենա լայն ինքնուրույնություն և թեթև զենքի ու զինամթերքի մեծ պաշարներ, ընդսմին շեշտը պետք է դրվի հակաօդային ու հակատանկային միջոցների վրա: Այդ ստորաբաժանումը պետք է անմիջականորեն ենթարկվի տեղի զինկոմիսարիատին, իսկ օպերատիվ առումով՝ այն զորամիավորման հրամանատարությանը, որի պատասխանատվության գոտում է գտնվում,

2. արագ շարքից հանելու առանձին վերցված զորամասերի կապի համակարգը: Ռուսի նպատակահարմար կլինի, որ ՀՀ-ում ներդրվի և կիրառվի արևմտյան արհեստավարժ կրտսեր հրամանատարական կազմի համակարգը՝ հրամանատարների լայն լիազորություններով, ինչը վերադաս հրամանատարությանը հնարավորություն կտա խնդիրներն առաջադրելու ընդհանուր գծերով՝ առանց պարտադիր մշտական վերահսկման, իսկ կրտսեր հրամանատարական կազմին հնարավորություն կտա ընդհանուր նպատակների ու խնդիրների շրջանակներում իրականացնելու գործողություններ՝ պահպանելով ճկունություն ու օպերատիվություն:

ՀՀ քաղաքացիների մտավոր ներուժի առավել արդյունավետ օգտագործման համար նպատակահարմար կլիներ բարձրագույն կրթությամբ զորակոչիկներին տալ կրտսեր հրամանատարական կազմի պատրաստման համար նախատեսվող ուսումնական զորամասերում ծառայելու հնարավորություն: Համապատասխան քննությունները հաջողությամբ հանձնելու դեպքում նրանք կգործուղվեին մարտական զորամասեր: Արդի տեխնոլոգիական առաջընթացի պայմաններում նպատակահարմար է ՀՀ բուհերում (նրանց իսկ միջոցներով) վերականգնել ռազմական ամբիոնները՝ ՀՀ Զինված ուժերի և այլ զորքերի, պահեստազորի և աշխարհազորի համար բարձր որակավորմամբ մասնագիտական անհրաժեշտ կադրեր պատրաստելու նպատակով:

Պահեստազորը և աշխարհազորը պետք է լինեն ՀՀ պաշտպանական համակարգի հենասյուներից մեկը՝ լայնածավալ պատերազմի պայմաններում հակառակորդին երկիր չթողնելու և նրան ռազմավարական պարտության մատնելու համար: Ռուսի նպատակահարմար է զորացրված և պահեստազորի առաջին խմբում ընդգրկված զինապարտներին պարբերաբար զորակոչել ուսումնավարժական հավաքների՝ մասնագիտական գիտելիքները կատարելագործելու, իսկ քննությունները հաջող հանձնելու դեպքում՝ հերթական կոչում շնորհելու համար: Բարձրագույն կրթությամբ կամ կրտսեր հրամանատարական կամ սպայական կոչումներով պահեստազորայիններին, բացի վերոհիշյալ հավաքներից, նպատակահարմար է զորակոչել կարճատև ուսումնական և վերապատրաստման վարժանքների՝ ստուգման բալային համակարգի հիման վրա նրանց շնորհելով համապատասխան զինվորական կոչում: Նպատակահարմար է նաև կիրառել արևմտյան մշտական պահեստազորի սկզբունքը, ըստ որի որոշ մարդիկ առանց արտադրությունից կտրվելու պարբերաբար մասնակցում են զինվորական ուսուցման՝ ստանալով հավելավճարներ, և առաջին իսկ պահանջով արագ ներկայանում են մոտակա ուսումնական զորամասի հավաքակայան՝ նոր մարտական զորամաս համալրելու նպատակով: Ընդսմին այդ բոլոր բարեփոխումները պետք է ձևակերպված լինեն օրենսդրական կարգով:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

[1] Տես «Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար, ազգային անվտանգության ռազմավարության նախագծի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ Սերժ Սարգսյանի ներածական խոսքը»: «ՀՔ», 2006, հմ. 2:

[2] Տես *Махмут Гареев*. Новые условия – новая военная доктрина. «Независимое военное обозрение», 2 февраля 2007 г.:

[3] Տես «ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Սարգսյանի զեկուցումը ՀՀ Զինված ուժերում պաշտպանական բարեփոխումների իրականացման վերաբերյալ»: «ՀՔ», 2007, հմ. 1:

[4] Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 17 – 22:

[5] Տես «ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Սարգսյանի զեկուցումը ՀՀ Զինված ուժերում պաշտպանական բարեփոխումների իրականացման վերաբերյալ»: «ՀՔ», 2007, հմ. 1:

[6] Տես նույն տեղում:

[7] Տես *А. И. Калистратов*. Искусство принятия решения на оборонительную операцию. «Военная мысль», 2004, № 11:

[8] Տես *С. А. Богданов*. Начальный период войны: история и современность. «Военная мысль», 2004, № 11:

[9] Տես նույն տեղում:

ԿՈՍՈՎՈՅԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐ*

Հումանիտար ճգնաժամը Հարավսլավիայի Կոսովո երկրամասում խորապես ցնցեց ժամանակակից միջազգային հարաբերությունների կառուցվածքը և առաջ բերեց մի շարք նոր իրողություններ միջազգային անվտանգության «հետսառըպատերազմյան» համակարգում: Հյուսիսատլանտյան դաշինքը (ՆԱՏՕ), ստանձնելով Կոսովոյի ալբանացիների փոքրամասնության պաշտպանությունը Հարավսլավիայի նախագահ Սլոբոդան Միլոշևիչի կողմից հրահանգված «էթնիկական զտման» քաղաքականությունից, դրանով իսկ ստեղծեց հնարավոր նախադեպ նմանատիպ այլ դեպքերի համար՝ արդեն ազդարարելով իր որոշիչ դերը միջազգային քաղաքականության մեջ: Հատկանշական է, որ ՆԱՏՕ-ի դաշնային ուժերի գործողությանը մասնակից մի շարք երկրներ, հատկապես՝ դեպի արևելք ՆԱՏՕ-ի ծավալման վրա հույս դնող երկրներն արդեն դիմել են ՆԱՏՕ-ին՝ հուսալով, որ նա կլուծի իրենց տարածքային խնդիրները և հակամարտությունները՝ հաշվի առնելով իրենց աներկբա համակրանքն այդ դաշինքին:

Այդպիսի մի երկիր է Ադրբեջանը՝ Կովկասում նախկին խորհրդային հանրապետություններից մեկը: Ադրբեջանը պայքարում է Արևմուտքի աչքում աշխարհառազմավարական կշիռ ձեռք բերելու համար՝ զգալ տալով իր առավելությունը՝ կապված Կասպից ծովի առափնյա էներգետիկ պաշարների հետ: Իսկ վերջերս նա առաջարկեց իր տարածքում տեղակայել ՆԱՏՕ-ի ռազմակայաններ՝ փոխարենը ակնկալելով ՆԱՏՕ-ի միջամտությունը հայ-ադրբեջանական հակամարտությանը: Մասնավորապես՝ Ադրբեջանը մնում է գամված Լեռնային Ղարաբաղի բնիկ հայերի հետ տասնամյա հակամարտությանը, մի տարածաշրջան, որն արդեն մի քանի տարի պահպանում է անկախ պետության «դե ֆակտո» կարգավիճակը՝ մինչև 1994 թվականը հաջողությամբ պաշտպանելով իր տարածքի անվտանգությունը ադրբեջանական մեծաքանակ զինուժի հարձակումներից:

---

* «Կառավարում. տեսություն և պրակտիկա» հանդես: 2002, հմ. 3:

Հոդվածում շարադրված տեսակետները հեղինակինն են և չեն արտացոլում Հայաստանի Հանրապետության իշխանությունների դիրքորոշումն ու պաշտոնական քաղաքական տեսակետները:

Կոսովոյի ճգնաժամին ՆԱՏՕ-ի միջամտությունը ստեղծում է աշխարհաքաղաքական մի նախադեպ, որը բնավ ձեռնտու չէր լինի Ադրբեջանին, եթե այն ուղղակիորեն կիրառվեր Լեռնային Ղարաբաղում: Դա առաջին պլան կմղեր Ադրբեջանի կողմից իրականացված «էթնիկ զտման» նմանատիպ գործողությունները, որտեղ Ադրբեջանը մեղավոր է Լեռնային Ղարաբաղի ինքնավարության վերացման, իսկ ավելի ուշ՝ այդ ամբողջ տարածաշրջանի գրավման փորձերում: Այդ իսկ պատճառով Ադրբեջանը դիմում է «պատմական ռևիզիոնիզմի» նոր փորձերի՝ ձգտելով «մաքրագրելու» Լեռնային Ղարաբաղի հակամարտության իրական պատկերը՝ տարածելով ի սկզբանե աղավաղված պատկերացումներ և փորձելով իր դիրքն արդարացնել միջազգային հասարակայնության աչքում: Ադրբեջանը «հայտնաբերել է» նմանություններ Լեռնային Ղարաբաղի և Կոսովոյի հակամարտությունների միջև այնտեղ, որտեղ դրանք գոյություն չունեն, և փորձում է անտեսել այդ երկու դեպքերի սկզբունքային տարբերությունները:

Ավելի լայն հեռանկարում, այնուամենայնիվ, Լեռնային Ղարաբաղում և Կոսովոյում եղած հակամարտությունների համեմատական վերլուծությունը զգալիորեն կգերազանցի Կովկասում և Բալկաններում առկա քաղաքական իրողությունների գնահատման նեղ չափորոշիչները: Այս երկու ճգնաժամերի կառուցվածքների և դինամիկայի խորքային վերլուծությունը հնարավորություն է ընձեռում մշակելու արդյունավետ տեսական հիմքեր նմանատիպ միջազգային հակամարտությունների վաղ նույնականացման և կանխման համար, հակամարտություններ, որոնք մեծ հավանականությամբ կարող են հետագայում վերաճել մեծածավալ հումանիտար ճգնաժամերի, ինչպես դա տեղի ունեցավ Կոսովոյի էթնիկ ալբանացիների հետ: Միայն միջազգային իրավունքի ոլորտում այնպիսի էթնոքաղաքական փոքրամասնությունների հետ կապված համածայնագրերի համապատասխան ճանաչումը, որոնք զոհ են դառնում ազգային պետության իշխող էթնիկ խմբի վարած ցեղասպանական քաղաքականությանը, որոշ առանձնահատուկ դեպքերում երկարաժամկետ երաշխիք կտա փոքրամասնությունների անվտանգության և նրանց քաղաքական իրավունքների պաշտպանության համար:

Ազգային պետության անհաջողությունները և ձեռքբերումները

էթնիկական զտման դեպքերը ԽՍՀՄ և Հարավսլավիայի Դաշնության նախկին հանրապետությունների ամբողջ տարածքում այդ դաշնությունների կազմալուծումից հետո ի հայտ եկան ոչ հանկարծակի: Այդ ծրագրերը, օրինակ, ԽՍՀՄ-ում հետևանք էին ավելի վաղ շրջանում ազգա-

փոխությամբ միութենական հանրապետությունների էթնոմշակութային միատարրացման քաղաքականության, որը Խորհրդային Միության պատմության առանձին ժամանակահատվածներում որոշում էր տվյալ հանրապետության ազգային քաղաքականությունը: Այդ կիսապաշտոնական քաղաքականությունը նպատակ ուներ առաջ մղելու տվյալ հանրապետության այսպես կոչված «տիտղոսային» ազգի (այն ազգի, որի անունով կոչվում է հանրապետությունը) մշակութային, քաղաքական և անգամ ժողովրդագրական գերակայությունը, ընդ որում հաճախ՝ ի հաշիվ տվյալ հանրապետության «ոչ տիտղոսային» էթնիկ խմբերի: Այն կառուցված էր և կարգավորվում էր երկրի էթնոդաշնային հաստատությունների կողմից և հանրապետություններում իրականացվում էր կոմունիստական կուսակցության կառույցների ու վարչական ապարատի կողմից՝ այդպիսով վերածվելով համընդհանուր թույլատրված և սահմանափակ քաղաքական ուղեցույցի՝ որոշ դեպքերում առաջ բերելով ուղղակի բռնություն:

Խորհրդային Միության և Հարավսլավիայի Դաշնության փլուզումից հետո և այդ երկու դաշնությունների կառուցվածքների հետագա քայքայման հետ ստեղծվեցին անորոշության պայմաններ, որոնք վերածնեցին նախկինում մի կողմ քաշված ազգայնամոլական քաղաքական գործիչների կողմից տասնամյակներ փայփայված էթնոժողովրդագրական միատարրացման ծրագրերը: Բռնությունը ժայթքեց, երբ ԽՍՀՄ և ՀՍԴՀ փլուզման հետևանքով վերացան պետական կառույցների կողմից դրվող արգելքները, որոնք ազգային փոքրամասնությունների համար ծառայում էին որպես անվտանգության երաշխիք, և երբ հետագայում տիտղոսային ազգերը ձեռք բերեցին անսահմանափակ հնարավորություն՝ հետապնդելու ազգային փոքրամասնություն կազմող խմբերին «իրենց» հանրապետություններում:

Ադրբեջանի և Սերբիայի դեպքերում պետական քաղաքական հաստատությունների արագ բռնատիրումը էթնիկ ադրբեջանցիների և սերբերի կողմից դարձավ մի զարհուրելի մղձավանջ Ադրբեջանի բնիկ քրիստոնյաների (հայերի, ուտիների և քրիստոնյա թաթերի) և, համապատասխանաբար, Սերբիայում էթնիկ ալբանացիների համար: Ե՛վ Ադրբեջանը, և՛ Սերբիան միակողմանիորեն լուծարեցին իրենց տարածքում գոյություն ունեցող ինքնավարությունները՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը (1991 թ.) և Կոսովոյի ինքնավար երկրամասը (1989 թ.): Էթնիկ միատարրացման քաղաքական համատեքստում իրավահաջորդ պետություններում այս գործողությունները մեծ ակտիվությամբ դրսևորվեցին ոչ տիտղոսային ազգությունների քաղաքական մարգինալացման գործըն-

թացում: Եվ պետություն չունեցող ինքնավար շրջանների ազգություններն ընդվզեցին ճնշող միջոցառումների և իրենց ինքնավար կարգավիճակի լուծարման դեմ: Ադրբեջանցիների և սերբերի կողմից ղեկավարվող պետությունները կազմակերպեցին փոքրամասնությունների դեմ ֆիզիկական ահաբեկման և զանգվածային ջարդերի արշավ: Իսկ մինչ բախումները ծավալվում էին, Բելգրադում և Բաքվում կենտրոնական իշխանությունները համառորեն հրաժարվում էին բանակցություններում ներգրավել, համապատասխանաբար, Կոսովոյի և Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչներին: Սերբիայի և Ադրբեջանի նպատակները Կոսովոյի և Լեռնային Ղարաբաղի հարցում նույնական էին, այն է՝ իրենց նախկին ինքնավարության տարածքներից դուրս մղել ալբանացիներին և բնիկ հայերին:

Քննարկվող առումով Կոսովոն և Լեռնային Ղարաբաղը իրարից տարբերվում են իրենց պատմությամբ: Լեռնային Ղարաբաղը, կամ Արցախը, հայկական պետականության օրրաններից է և նույնքան կարևոր է Հայաստանի համար, որքան Կոսովոն՝ Սերբիայի: Արցախը՝ Մեծ Հայքի 10-րդ նահանգը, նոր, կարևոր նշանակություն ստացավ 4-րդ դարավերջում, երբ քրիստոնեությունը տարածվում էր Հայաստանի արևելյան գավառներում, և դարձավ այն վայրը, որտեղ հայոց գրերի ստեղծող սուրբ Մեսրոպ Մաշտոցը 5-րդ դարում հիմնեց առաջին կրոնական դպրոցներից մեկը՝ Ամարասի վանքում: Եվ Երբ վերջին անկախ հայկական պետությունը՝ Կիլիկիայի թագավորությունը, 14-րդ դարում կործանվեց, Արցախը մնաց հին Հայաստանի այն սակավաթիվ վայրերից մեկը, որտեղ հայերը պահպանեցին իրենց ինքնակառավարումը և ի վիճակի էին պաշտպանվել արևելքից քոչվոր հորդաների ներխուժումից: Ղարաբաղի հինգ մելիքությունների հայկական կանոնավոր զորքը, որը 18-րդ դարի սկզբում հաշվվում էր շուրջ 40 հազար զորական, հաջողությամբ հակահարված հասցրեց և ջախջախեց ոչ միայն Պարսկաստանի կողմից եկած թուրքական ցեղերի զինված հրոսակախմբերին (այսօրվա ադրբեջանցիների նախնիներին), այլև Օսմանյան Կայսրության զորքին՝ պարբերաբար տեղի ունեցող թուրք-պարսկական պատերազմներում[1]: Արցախի լեռնային հատվածը (ժամանակակից Լեռնային Ղարաբաղը) վաղ միջնադարից մինչև 1930-ական թվականները, համեմատած մյուս հայկական հողերի հետ, ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության տարածքը, ուներ առավելապես միատարր հայ բնակչություն:

Համանման ձևով էլ Կոսովո-Մետոհիա շրջանը հին Սերբական Թագավորության սիրտն է համարվել և իր զարգացման գագաթնակետին է հասել 14-րդ դարում: Սա նույնպես մի վայր է, որտեղ գտնվում են սերբա-

կան կրոնական և մշակութային ամենակարևոր կենտրոնները՝ ներառյալ Պեչի պատմական պատրիարքարանը և Կոսովո Պոլե մարտադաշտը: Ի հակադրություն Լեռնային Ղարաբաղի, սերբերը, այնուամենայնիվ, Կոսովոյում դարձան փոքրամասնություն: Լեռնային Ղարաբաղում, չնայած հայերի արտահոսքին և հարևան ադրբեջանական շրջաններից ազերիների ագրեսիվ միգրացիային Լեռնային Ղարաբաղ, հայերը պահպանեցին իրենց թվային գերակշռությունը՝ կազմելով մարզի ամբողջ բնակչության 75%-ը՝ ըստ 1989 թ. մարդահամարի: Հայերի թիվը, այնուամենայնիվ, նույնպես նվազել է՝ համեմատած 1926 թ. իրավիճակի հետ, երբ նրանք կազմում էին ինքնավար մարզի սահմաններում բնակվող բնակչության 95%-ը: Ինչ վերաբերում է սերբերին, ապա 1989 թ. նրանք կազմում էին Կոսովոյի ինքնավար մարզի բնակչության մոտ 10%-ը:

Կոսովոյի ալբանացիները և Ղարաբաղի հայերը տարբեր չափով էին հաջողակ՝ զսպելու իրենց ինքնությանը և քաղաքական կարգավիճակին ուղղված թշնամու սպառնալիքները՝ օգտագործելով իրենց սեփական քաղաքական և ռազմական ռեսուրսները: Նախկին Խորհրդային Միության և Հարավսլավիայի Դաշնության անկման գործընթացների քաղաքական միջավայրը և իրավական նախադրյալները ապահովում էին երկու ինքնավար մարզերին տարբեր հնարավորություններ՝ թույլ տալու նրանց օրենքի շրջանակներում ջանքեր գործադրել սպասվող ցեղասպանության վտանգը կանխելու համար: Ե՛վ Ղարաբաղի հայերը, և՛ Կոսովոյի ալբանացիները, իրենց խնդիրների վրա ուշադրություն հրավիրելու համար սեփական դաշնային կառավարություններին, միջազգային կազմակերպություններին և արտասահմանյան երկրներին բազմիցս դիմելուց հետո, ի վերջո ջանքերն ուղղեցին իրենց ազգային պետությունները ստեղծելուն: Լեռնային Ղարաբաղի հայերը Ադրբեջանի կողմից կազմակերպված ցեղասպանության սպառնալիքին ընդդիմացան արդյունավետորեն՝ ձևափոխելով իրենց նախկին ինքնավարության քաղաքական և ռազմական կառույցները՝ ստեղծելով էթնիկ ազգային, թեկուզ և ոչ ավարտուն պետություն: Մինչդեռ Կոսովոյի ալբանացիները չկարողացան նույնն անել և հարավսլավական բանակի ու ոստիկանության կողմից կազմակերպված էթնիկ զտման ենթարկվեցին, ինչը հանգեցրեց հազարավոր քաղաքացիական անձանց սպանության: Խաղաղությունը Կոսովոյում հաստատվեց ոչ թե կենտրոնական կառավարության բանակի և ապստամբների միջև ուժերի հավասարակշռության ստեղծման արդյունքում, ինչպես դա տեղի ունեցավ Ստեփանակերտի և Բաքվի պարագայում, այլ որպես Հարավսլավիայի դեմ ՆԱՏՕ-ի 78-օրյա ռազմարշավի արդյունք:

Երկու հակամարտությունների սկզբում Լեռնային Ղարաբաղի և Կոսովոյի տեղական զինված դիմադրությունը կենտրոնական իշխանությունների ուժերին անհամաչափ էր. դա արդյունք էր կանոնավոր և ոչ կանոնավոր (ֆիդայական) կառույցների հակադրության, ինչպես նաև ադրբեջանական և հարավսլավական զինված ուժերի թվային գերազանցության և ավելի լավ սպառազինվածության: Այնուամենայնիվ, Լեռնային Ղարաբաղի դեպքում ադրբեջանական ռազմուժի քանակական գերազանցությունը հակակշռվեց ղարաբաղյան զորքի բարձր բարոյահոգեբանական մակարդակով և շարժառիթներով: Նրանք կարողացան Հայաստանում և մյուս նախկին խորհրդային հանրապետություններում ակտիվորեն հավաքագրել Լեռնային Ղարաբաղի նախկին բնակիչներին, որոնք տասնամյակներ առաջ, մինչև հակամարտությունը, հեռացել էին իրենց հայրենի օջախներից հիմնականում Ադրբեջանի հայերի նկատմամբ մշակութային խտրականության և Ղարաբաղում տնտեսական հնարավորությունների բացակայության հետևանքով, նրանք ցրված էին Հայաստանից մինչև Ռուկրաինա, Հյուսիսային Կովկաս, Կենտրոնական Ասիա, իսկ նրանց թվաքանակը մոտենում էր կես միլիոնի: Ղարաբաղյան բանակի ձևավորումը (որը դարձավ հասունացող ցեղասպանության վտանգը կանխելու միջոց) համարվում է ղարաբաղյան ազգային պետության լուրջ հաջողություններից մեկը: Լեռնային Ղարաբաղի զինվորականները արդյունավետորեն կատարեցին այն նույն պարտականությունները, որ ստանձնեց ՆԱՏՕ-ն Կոսովոյի ալբանացիներին օգնելու համար:

Ադրբեջանական ազգայնամոլությունը վտանգավոր ուղեծրում

Կոսովոյի և Լեռնային Ղարաբաղի խնդիրների միջև եղած մեկ այլ զգալի տարբերությունն այն է, որ Լեռնային Ղարաբաղը քրիստոնեական ինքնավարություն էր մուսուլմանական Ադրբեջանի կազմում, այն դեպքում, երբ Կոսովոն մուսուլմանական ինքնավարություն էր ուղղափառ քրիստոնյա Սերբիայի կազմում: Բալկաններում և Կովկասում էթնիկ խմբերի միջև կրոնական հարաբերությունները առնվազն իրենց ձևավորման շրջանում միշտ հանդես են եկել որպես մի գործոն, որը ոչ միայն զգացմունքայնորեն, այլև իրավաբանորեն երանգավորել է պետություն կրող ազգերի և փոքրամասնություն կազմող խմբերի հարաբերությունները: Սա հատկապես կարևոր է Ադրբեջանի ազգայնամոլության զարգացման ներկա փուլի գնահատման տեսանկյունից՝ հաշվի առնելով նրա ծագումը բնութագրող ինքնատիպ ուղին: Դա այն ուղին է, որը ադրբեջանական պետությունը դարձրեց հայեցակարգորեն «եղեռնածին» պետություն՝ ուրիշ այլընտրանք չթողնելով Լեռնային Ղարաբաղին, քան հնարա-

վոր ոչնչացումից խուսափելու համար դուրս գալ ադրբեջանական պետության կազմից[2]:

Լեռնային Ղարաբաղի վաղ շրջանի պատմությունը ցույց է տալիս, որ Կենտրոնական Ասիայից ներխուժած թուրքական քոչվոր ցեղերի՝ այսօրվա ազերիների և թուրքերի նախահայրերի մահմեդականացումը ավելի բարձր քաղաքակրթություն ունեցող բնիկ քրիստոնյաների հետ նրանց մշտական տնտեսական հակամարտությունը վերածեց կրոնական հակամարտության:

Ավելի որոշակիորեն՝ նախա- և հետխորհրդային Ադրբեջանի այն գաղափարախոսությունը, թե Ղարաբաղի հայերը չեն կարող կազմել որևէ տարածքային ինքնավարություն, առավել ևս՝ անկախ պետականություն, մասամբ ծագում է վաղ մուսուլմանական այն կարծրատիպից, որը բխում է քրիստոնեական և մուսուլմանական համայնքների՝ իսլամական օրենքների ավանդական շրջանակներում ձևավորված փոխհարաբերություններից[3]: Իսլամական օրենքի ավանդույթը, որը դարեր ի վեր ձևավորում էր տարբեր կրոնական համայնքների փոխհարաբերությունները, Ադրբեջանում աշխարհիկ պետության հիմնումից հետո էլ ամբողջությամբ չէր վերացել: Այն մնացել էր կենդանի ժողովրդական հավատքի տեսքով՝ թեև ձևափոխված և արդիականացած՝ պետության օրենսդրական շրջանակների եզրամասում:

Բայց ամենակարևորն այն է, որ Ադրբեջանում, ինչպես նաև Թուրքիայում էթնիկ պետության եվրոպական հայեցակարգի վերանայումը միաձուլվել է իսլամական քաղաքական ավանդույթի մնացուկների հետ: Իսլամական օրենքը թույլ է տալիս, որ քրիստոնյաները մուսուլմանական պետության ներսում ունենան կրոնական ազատություն, բայց նրանց համար նախատեսվում են շատ սահմանափակ քաղաքական իրավունքներ: Եթե քրիստոնեական համայնքի անդամները գերազանցեն մուսուլմանական օրինական պահվածքի ընդունված սահմանները, ապա նրանք ինքնաբերաբար կհայտնվեն մուսուլմանական համայնքի՝ ումմայի նկատմամբ ներքին ընդդիմության վիճակում և կենթարկվեն իսլամական կրոնապետական կառույցների կողմից ղեկավարվող և ումմայի ներգրավմամբ իրագործվող ջիհադի վտանգի:

Ջիհադը ցեղասպանական «սուրբ պատերազմ» է, որը մուսուլմանական ումմա-պետության կողմից մղվում է ողջ այլակրոն համայնքի դեմ: Մասնավորապես ջիհադ է հայտարարվում այն դեպքերում, երբ քրիստոնեական փոքրամասնությունը հարցականի տակ է դնում իսլամական պե-

տության օրինականությունը կամ տարածքային ամբողջականությունը[4]: Մյուս կողմից՝ ըստ ազգային պետության եվրոպական հայեցակարգի այս մեկնակերպի, որն ամրագրված էր Խորհրդային Միության վարած ազգափոխության և էթնիկ միատարրացման քաղաքականությամբ, պետությունը հանդես է գալիս որպես էթնիկ խմբի մասնավոր պետություն, ինչպես նաև՝ որպես պետություն այդ խմբի համար: Այսպիսով՝ Ադրբեջանը հայտնվում է երկու հարացույցների՝ մի կողմից՝ ավանդական մուսուլմանական ազդեցության, մյուս կողմից՝ ժամանակակից և աշխարհիկ ազգայնամոլական միտումների միջև: Երկու հարացույցներն էլ արտացոլում են մի գաղափար, որը, այնուամենայնիվ, մերժում է ազգային փոքրամասնությունների քաղաքական իրավունքները:

Այդ երկու հարացույցները միահյուսվեցին և ի վերջո առաջ բերեցին տարածաշրջանի հայ բնակչության նկատմամբ եղերական բռնության պայթյուն և Լեռնային Ղարաբաղին մղեցին ձեռնամուխ լինելու ինքնապաշտպանության: Ադրբեջանի ազգայնամոլության ծավալման ուղեգիծը, մի երկրի, որը հիմնականում ընդօրինակում է թուրքական ազգային պետության այն մոդելը, որը ժամանակին զարգացրել է Քեմալ Աթաթյուրքը, թուրք մուսուլմանական մեծամասնության և քրիստոնեական փոքրամասնության միջև երկարատև խաղաղության հաստատման համար քիչ երաշխիքներ է տալիս: Գրեթե ամբողջությամբ ավերված քրիստոնեական համայնքները այսօրվա Թուրքիայի տարածքում դառը հիշեցում են Ադրբեջանի քրիստոնյաներին, որ նմանատիպ ճակատագիր է սպասում իրենց, եթե բարձրանա ադրբեջանական ազգայնամոլության ալիքը՝ ընդունելով թուրքական մեծապետական ազգայնամոլության մոդելը: Քրիստոնեական էթնիկ համայնքների համար քաղաքական ինքնավարության մերժումը բխում է իսլամական օրենսդրության կարծրատիպից, որով քրիստոնյա փոքրամասնությունների նկատմամբ բռնությունները նրանց «սխալ վերաբերմունքի» պարագայում դիտվում են որպես օրինական և արդարացի: Ադրբեջանի մոդելը շաղկապված է ժամանակակից այն ազգայնամոլական գաղափարախոսության հետ, որում ակնհայտ է էթնիկ փոքրամասնության նկատմամբ ազգային մեծամասնության քաղաքական գերիշխանության և մշակութային առավելության արդարացումը:

Ի լրումն դրա, ադրբեջանական մեծապետական ազգայնամոլությունն էին սնում նաև այլ գործոններ, որոնք ի հայտ եկան տարածաշրջանում արդյունաբերական հեղափոխության ընթացքում: Հայերի նկատմամբ ադրբեջանցիների ազգայնամոլական վերաբերմունքը հոգեբանական առումով հակասեմիտականության նմանակն է. այստեղ էլ, իբր, տեղի է

ունենում լավ կրթություն ստացած և բարգավաճող հայերի «համընդհանուր դավադրություն» ադրբեջանական պետության դեմ: Զարմանալի չէ, որ առաջին իսկ հնարավորության դեպքում ադրբեջանցիները շտապեցին լուծարել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը և հայաբնակ շրջանները մասնատել՝ դրանք վերածնելով ու կցելով Լեռնային Ղարաբաղի տարածքային սահմաններից դուրս գտնվող և խառը բնակչություն ունեցող ավելի մեծ ադրբեջանական շրջաններին: Այսպիսով՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի լուծարումով փորձ արվեց փոխելու նրա ժողովրդագրական հաշվեկշիռը, ինչի հետևանքով բնիկ հայ բնակչությունը տոկոսային առումով կնվազեր՝ այս նոր ստեղծված ավելի մեծ վարչական միավորման մեջ վերածվելով փոքրամասնության՝ Ադրբեջանի կազմում:

Ցավոք, քաղաքական պրակտիկայում և պատմության մեջ ցայսօր չկա նախադեպ, երբ ավանդական քրիստոնյա փոքրամասնությունները խնդիրներ չունենան մուսուլմանական պետություններում[5]: Քրիստոնյաների ծանր գոյությունը Օսմանյան Կայսրության մեջ, ինչպես նաև ժամանակակից Թուրքիայում, հայերի, ուտիների և քրիստոնյա թաթերի ողբերգական ճակատագիրը Ադրբեջանում, քրիստոնեական համայնքները հարավային Սուդանում, ղպտիները Եգիպտոսում, ասորիները Իրաքում և ուրիշներ խոսուն օրինակներ են այն բանի, թե ինչպես քրիստոնյաների դեմ իսլամական տրամադրվածության կործանիչ ներուժը ոչ միայն հաջողությամբ պահպանեց իր գոյությունը՝ հակառակ նոր ժամանակների պահանջների, այլև բացառիկ ձևով ուժեղացավ շնորհիվ եվրոպական ազգայնամոլական գաղափարախոսության:

Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավական կողմը

Կոսովոյի և Լեռնային Ղարաբաղի պարագաների միջև կա նաև տարբերություն ըստ իրենց դաշնությունների այնպիսի օրենսդրական ակտերի առկայության կամ բացակայության, որոնք նախատեսեին միութենական հանրապետություններից ինքնավար կազմավորումների անջատման իրավական կարգը և ընթացակարգը: Լեռնային Ղարաբաղի դեպքում Խորհրդային Միության իրավական մեխանիզմները մինչև այդ երկրի կազմալուծման ժամանակները նշանակալից դեր խաղացին Խորհրդային Լեռնային Ղարաբաղի ինքնավարության կարգավիճակի քաղաքական ձևափոխման մեջ: 1990թ. ԽՍՀՄ Գերագույն խորհուրդն ընդունեց օրենք «ԽՍՀՄ–ից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին»[6]: Հաջորդ երկու դաժան տարիները բնորոշվեցին Բաքվի և Ստեփանակերտի միջև հարաբերությունների

լարվածությամբ և անորոշությամբ: Լեռնային Ղարաբաղի քաղաքական կարգավիճակի լուծման հարցը իր զարգացման մեջ հատավ մի նոր որակական մակարդակի: Հիշյալ օրենքը իրավունք էր տալիս Խորհրդային Միության ներսում ինքնավար մարզերին և հանրապետություններին՝ որպես միութենական անկախ սուբյեկտների, ակտիվորեն մասնակցելու իրենց քաղաքական կարգավիճակի որոշման գործին, անգամ անջատվելու այն միութենական հանրապետությունից, որին նրանք ենթարկվում էին: Այս իրավունքը պահպանվում էր այն դեպքի համար, երբ որևէ միութենական հանրապետություն դիմեր ԽՍՀՄ կազմից դուրս գալու համար, իսկ ինքնավար միավորը կամ միավորները հրաժարվեին այդ միութենական հանրապետության կազմում որպես անջատվող հանրապետության բաղկացուցիչ մաս մնալուց: Ի հակադրություն խորհրդային սահմանադրության՝ Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության սահմանադրությունը չէր պարունակում դաշնության կազմից իր հանրապետությունների դուրս գալու ընթացակարգ, առավել ևս՝ ինքնավարությունների անջատում դաշնությունից[7]:

Ադրբեջանական ԽՍՀ-ն հայտարարեց ԽՍՀՄ կազմից դուրս գալու իր մտադրությունը արդեն 1989 թ. սեպտեմբերին՝ ընդունելով սահմանադրական օրենք ինքնիշխանության մասին, իսկ հետագայում նաև՝ սահմանադրական օրենք անկախության մասին[8]: Ընդունելով այս օրենքները՝ Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղի հայերին ձևականորեն իրավական հիմք տվեց իրացնելու Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի օրինական ինքնորոշման իրավունքը: 1991 թ. օգոստոսին Մոսկվայում հեղաշրջման ձախողված փորձից հետո Ադրբեջանը միակողմանիորեն որոշում կայացրեց դուրս գալու ԽՍՀՄ կազմից՝ մինչև ԽՍՀՄ պաշտոնապես կազմալուծվելը դեկտեմբերին: 1991թ. դեկտեմբերի սկզբին Լեռնային Ղարաբաղի բնակչությունը հռչակեց իր անկախությունը թե՛ նոր կազմավորված Ադրբեջանական Հանրապետությունից, և թե՛ Խորհրդային Միությունից: Անկախության այս հռչակագրին, ինչպես նախատեսված էր ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին 1990թ. օրենքով, նախորդեց ազգային հանրաքվեն, որը տեղի ունեցավ միջազգային օրենքի նորմերին և պայմաններին համապատասխան և բազմաթիվ միջազգային դիտորդների ներկայությամբ[9]:

Այսպիսով՝ որպես իրենց ժողովուրդների սահմանադրական կամքի արտահայտման արդյունք, նախկին ԱդրԽՍՀ տարածքում օրինականորեն կազմավորվեցին երկու անկախ և իրավահավասար պետություններ՝ Ադրբեջանական Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրա-

պետությունը: ԽՍՀՄ փլուզմամբ Լեռնային Ղարաբաղի տարածքի, նրա բնակչության և ղեկավարության ենթակայությունը նորաստեղծ Ադրբեջանական Հանրապետությանը պաշտոնապես դադարեցվեց: Կարևոր է նշել, որ Ադրբեջանական ԽՍՀ-ի տրոհումը երկու միավորների միակ հնարավոր ելքը չէր Ադրբեջանի և Ղարաբաղի ժողովուրդների ինքնորոշման խնդրում: Մասնավորապես՝ Ռուսաստանի և Թաթարստանի, Մոլդովայի և գագաուզների ինքնավարության պարագաներում զարգացումներն այլ ուղղությամբ ընթացան՝ առաջադրելով իրադարձությունների այլընտրանքային սցենար նախկին խորհրդային ժամանակահատվածում: Դա արտահայտվեց ինքնավարության սուբյեկտի և հանրապետության միջև նոր տիպի բանակցային հարաբերություններով՝ ընդսմին պահպանելով հանրապետության տարածքային ամբողջականությունը: Ցավոք, Ղարաբաղի և Ադրբեջանի միջև դա տեղի չունեցավ ո՛չ հակամարտության սկզբում, ո՛չ էլ ԽՍՀՄ կազմից նախկին Ադրբեջանական ԽՍՀ դուրս գալուց հետո: Կառուցողական երկխոսության հնարավորությունը կորսվեց և այլևս չվերստեղծվեց որպես հետևանք ադրբեջանական ղեկավարության համառ անպատրաստակամության՝ բանակցելու ղարաբաղյան կողմի հետ: Դեռ ավելին, հույսը դնելով իր զինուժի թվային գերազանցության վրա՝ Ադրբեջանը շարունակ փորձում էր Ղարաբաղի հայերի հետ իր վիճահարույց խնդիրը լուծել ահաբեկումների, ջարդերի և ի վերջո էթնիկ զտումների միջոցով, որոնք իրականացվեցին լայնածավալ ռազմական գործողությունների ընթացքում: Սերբերի վերաբերմունքը Կոսովոյի ալբանացիների նկատմամբ էապես չէր տարբերվում հայերի նկատմամբ ադրբեջանցիների վերաբերմունքից:

Լեռնային Ղարաբաղի խնդրի հիմնական իրավական և քաղաքական առանձնահատկությունն այն է, որ նա իր անկախությունը հռչակել է համաձայն ԽՍՀՄ սահմանադրության իրավական չափանիշների, իսկ սահմանադրությունն օրենսդրական ճանապարհով իրար հետ կապում էր բոլոր միութենական հանրապետությունները: Այն բանից հետո, երբ ԱդրԽՍՀ-ն փոխակերպվեց երկու առանձին իրավահավասար սուբյեկտների՝ Ադրբեջանի Հանրապետության և ԼՂՀ-ի, Ղարաբաղի հակամարտությունը սահմանների անձեռնմխելիության սկզբունքից անցավ պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքին՝ կիրառված նախկին ԱդրԽՍՀ-ի նկատմամբ: Ի հակադրություն այս իրողության, եթե Կոսովոյի ալբանացիները ցանկանում են շարունակել իրենց ազգային պետության կառուցումը, նրանք դեռ պետք է որոշեն Հարավսլավիայի Դաշնությունից իրենց անջատման ճշգրիտ իրավական մեխանիզմը:

Էթնիկ զտումը որպես խուճապի արդյունք

Կոսովոյում դաշնակցային ուժերի գործողությունների շնորհիվ ալբանացի փախստականների վերադարձից հետո Կոսովոյի ազատագրական բանակի մարտիկների վերաբերմունքը սերբ փոքրամասնության նկատմամբ էապես չէր տարբերվում Ղարաբաղի հայերի նկատմամբ քաղաքացիական ադրբեջանցիների վերաբերմունքից Խորհրդային Միության փլուզումից հետո և այն ժամանակահատվածում, երբ ադրբեջանցիները կորցրին ռուսական ռազմական աջակցությունը Լեռնային Ղարաբաղում իրենց ձեռնարկած էթնիկ զտումներին:

Թեև 1992–93 թթ. ադրբեջանական ռազմական հարձակումները Լեռնային Ղարաբաղում առաջացրին հումանիտար աղետ՝ բնիկ հայկական տարածքների 60 %-ից հայերի տեղահանում (Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտի դաժան հրետակոծում և այլն), այնուամենայնիվ, Ադրբեջանին չհաջողվեց իրականացնել Ղարաբաղի հայերի զանգվածային տեղահանում՝ ի տարբերություն Կոսովոյի դեպքից: Երբ Լեռնային Ղարաբաղի պաշտպանական ուժերը ազատագրեցին Ղարաբաղի տարածքներն ադրբեջանական ռազմուժից, Ղարաբաղի հայ փախստականները վերադարձան իրենց տները՝ առանց արտասահմանյան մարդասիրական միջամտության:

Եթե գոյություն ունի ակնհայտ վկայություն այն բանի, որ տեղի է ունեցել սերբերի կողմից Կոսովոյի ալբանացիների պարբերական տեղահանում, ապա չի եղել Ղարաբաղից և նրա շրջակա տարածքներից ադրբեջանցիների տեղահանման նպատակով հայկական ղեկավարության կողմից նախապես կազմած պլան, դա պարզապես արդյունք էր ինքնաբերաբար առաջացած խուճապի: Ղարաբաղի հայերը չունեին, օրինակ, կազմակերպական միջոցներ շրջապատելու և դուրս քշելու բնակչությանն ամբողջական տարածաշրջաններից՝ նրանց լցնելով ավտոմեքենաները և գնացքները, ինչպես դա արեցին սերբական ուժերը Կոսովոյում: Ի հակադրություն Կոսովոյի պարագայի, Ղարաբաղում տեղի բնակչությունը մոբիլիզացվեց մեծաքանակ ադրբեջանական բանակի ագրեսիան հետ մղելու համար, և այն գործողությունները, որոնք ձեռնարկվեցին ի պատասխան խաղաղ բնակչության դեմ հակառակորդի ագրեսիայի, ավելի մեծ ծավալ ստացան Ղարաբաղում, քան դա արեցին Կոսովոյի ազատագրական բանակի մարտիկները:

Հետաքրքրական է, որ ադրբեջանական և սերբական ազգայնամոլական կառավարությունների խաչակրաց արշավանքներն ընդդեմ, համապա-

տասխանաբար, Ղարաբաղի հայերի և Կոսովոյի ալբանացիների սկսվեցին գրեթե միաժամանակ՝ 1987 թ. աշնանը ադրբեջանցիների կողմից կազմակերպված Ադրբեջանի հյուսիս-արևմտյան շրջանում գտնվող Չարդախլու գյուղի հայ բնակչության ջարդերով և Կոսովո Պոլեում Հարավսլավիայի նախագահ Սլոբոդան Միլոշևիչի տխրահռչակ ճառով:

Ի պատասխան խորհրդային ղեկավարությանն ուղղված դարաբաղյան հայերի դիմումների՝ իրենց մարզը հանձնելու Հայկական ԽՍՀ իրավաենթակայությանը, տեղի ունեցան 1988–89 թթ. Սումգայիթում և Կիրովաբադում, ապա և՝ 1990 թ. Բաքվում հայ բնակչության նոր ջարդեր: Ադրբեջանում ազգայնամոլության պոռթկումը հանգեցրեց բազմաթիվ անմեղ քաղաքացիական անձանց սպանությանը և ավելի քան 350 հազար հայերի (ամբողջ Ադրբեջանում բնակվող հայերի 75 %) տեղահանմանը: Միայն Լեռնային Ղարաբաղը կարողացավ դիմակայել այդ արհավիրքին՝ դիմելով ինքնապաշտպանական միջոցների:

Անսպասելի չէր, որ Ղարաբաղի հայկական զինված ուժերն սկսեցին գլխավոր հակահարձակումը 1992թ., որպեսզի ճեղքեն ադրբեջանական բանակի՝ ավելի քան մեկ տարի մարզը խեղդամահ անող շրջափակումը: Նրանք շահագրգռված չէին համոզելու Լեռնային Ղարաբաղում և շրջակա տարածքներում խուճապի մատնված ադրբեջանցի բնակչությանը՝ չլքել իրենց բնակավայրերը: Պատերազմական ակտիվ գործողությունները Լեռնային Ղարաբաղում ավարտվեցին 1994թ. մայիսի 16-ին Ռուսաստանի միջնորդությամբ կրակի դադարեցումով: Այդ պահին Ղարաբաղի ուժերն իրենց հսկողության տակ էին առել Լեռնային Ղարաբաղի տարածքը, բացառությամբ Մարտունու և Մարտակերտի շրջանների որոշ հատվածների, իսկ հյուսիսում՝ ամբողջությամբ Շահումյանի շրջանի: Դրա փոխարեն Ղարաբաղի ուժերն ամբողջովին իրենց հսկողության տակ են առել Քելբաջարի, Լաչինի, Քուբաթլիի, Զանգելանի և Ջեբրայիլի շրջաններն ամբողջությամբ և տարածքներ Ֆիզուլու և Աղդամի շրջաններից՝ մարզի շուրջ ստեղծելով «Հոլանի բարձունքների» նման մի յուրօրինակ անվտանգության գոտի: Սա կրճատեց ռազմաճակատի գիծը և Ղարաբաղի հայերին թույլ տվեց պաշտպանել իրենց հայրենիքը խորության մեջ, ընդդեմ թվային գերազանցություն ունեցող, ավելի լավ զինված ադրբեջանական բանակի հետագա հնարավոր ագրեսիայի:

Նախադեպի սխալ ըմբռնում

Կոսովոյում սերբական բռնաճնշումները կանգնեցնելու նպատակով ՆԱՏՕ-ի արշավը մեծ արձագանք է գտել Բալկաններից դուրս: Այժմ, երբ

էթնիկ զտում կատարելու Ադրբեջանի գործողությունները ձախողվել են Լեռնային Ղարաբաղի զինված ուժերի հակահարվածով, Բաքուն փնտրում է արտաքին աջակցություն: Ադրբեջանը, որը ձգտում է հետ վերցնելու Լեռնային Ղարաբաղը, գերադասելի է՝ առանց հայ բնակչության, այժմ փորձում է հարուցել ՆԱՏՕ-ի միջամտությունը հօգուտ իրեն: Ադրբեջանցիները հավատում են, որ ՆԱՏՕ-ին ինքնակոչ դաշնակից լինելու իրենց դիրքը, Կասպից ծովի նավթի հարուստ պաշարները և իրենց սերտ կապերը ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի հետ վաղ թե ուշ կգայթակղեն ՆԱՏՕ-ին ներգրավվելու Ղարաբաղյան հակամարտության մեջ ադրբեջանցիների կողմից՝ նրանց օգնելով հնազանդեցնել Ղարաբաղի հայերին:

Մի կողմից՝ չկամենալով հայերի հետ հակամարտության փոխզիջումային լուծում գտնել, մյուս կողմից՝ անկարող լինելով նոր պատերազմ սկսել Լեռնային Ղարաբաղի դեմ՝ Ադրբեջանը փորձում է շահարկել դեպի արևելք ՆԱՏՕ-ի ծավալման այսօրվա նախածեռնությունը: Նույն ձևով Ադրբեջանը շահարկում էր Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության հակահայկական դիրքորոշումը Ղարաբաղի հակամարտության սկզբնական շրջանում: Մոսկվայում կենտրոնական իշխանության պահպանողական տարրերը Ղարաբաղի հակաբռնապետական շարժումը համարում էին վտանգավոր և գտնում էին, որ այն ուղղված է կոմունիստական վարչակարգի սկզբունքների դեմ: Մոսկվայի և Բաքվի միջև 1991թ. գործակցությունն արտահայտվեց այսպես կոչված «Օղակ» օպերացիայի իրականացմամբ, ռազմավարժական մի արշավի, որն ուղղված էր Ղարաբաղի բնիկ հայերի էթնիկ զտմանը: Այդ գործողությունը, որը համատեղ իրականացրին խորհրդային բանակի դեսանտայինները և Ադրբեջանի ներքին գործերի նախարարության միլիցիայի հատուկ ուժերի՝ ՕՄՕՆ-ի պատժիչ ստորաբաժանումները, մի կոպիտ փորձ էր՝ լուծելու Ղարաբաղի հարցը ԽՍՀՄ-ի փլուզումից անմիջապես առաջ, երբ առանձնապես ուժեղ էր Կրեմլում ընդդիմությունը Միխայիլ Գորբաչովի նկատմամբ: «Օղակ» օպերացիայի իրական նպատակն էր անձնագրերի ստուգման քողի տակ դուրս քշել հայերին Լեռնային Ղարաբաղի ծայրամասերում գտնվող քանչորս գյուղերից: Դա հանգեցրեց հարյուրավոր հայերի ծերբակալմանն ու կալանավորմանը և իրենց տներից հազարավոր հայ ընտանիքների տեղահանման՝ բռնության և մարդու իրավունքների պարբերական ոտնահարումով: Այն բոլոր վայրերում, որտեղ կազմակերպվեց դիմադրություն, ինչպես օրինակ՝ Գետաշենում, բազմաթիվ խաղաղ բնակիչներ սպանվեցին:

ՆԱՏՕ-ի նկատմամբ Ադրբեջանի ցինիզմն այն է, որ Բաքուն չի ուզում տեսնել արմատական տարբերությունը ՆԱՏՕ-ի դաշնային ուժերի գործողությունների մարդասիրական բնույթի և 1980-ականների վերջերին դարաբաղյան ժողովրդավարական շարժման դեմ ուղղված Մոսկվայի գործողությունների հետադիմական բնույթի միջև: Զարմանալի է նաև այդ առնչությամբ Բելգրադի և Բաքվի դիրքորոշումների նմանությունը, քանի որ երկուսն էլ ՆԱՏՕ-ն դիտում են որպես մի անսկզբունք և անպատասխանատու կռվարարի՝ պատրաստ գրավելու աշխարհը: Տարբերությունն այն է, որ Բելգրադը խորապես անհանգստացած է ՆԱՏՕ-ի գործողությունների կապակցությամբ, այն դեպքում, երբ Բաքուն փորձում է բարեկամանալ ՆԱՏՕ-ի հետ, որպեսզի տարածաշրջանի իր թշնամիներն ընդգրկվեն այն երկրների ցուցակի մեջ, որոնց հետագայում նա «կխոյահարի»:

Բաքվի համար ՆԱՏՕ-ի օգնությունն իր սեփական շահերին ծառայեցնելու գլխավոր հնարավորությունը Բալկաններում ՆԱՏՕ-ի գործողությունների նկատելի թերությունն է այսպես կոչված «անելանելիության» ռազմավարությունը: Այլ կերպ ասած՝ Բաքուն հույս ունի, որ երբ ՆԱՏՕ-ն ձեռնամուխ լինի Կովկասում խաղաղության պարտադրման իրեն առաջարկվող օպերացիային, «անելանելիության» ռազմավարության տրամաբանությամբ ՆԱՏՕ-ն ստիպված կլինի իսկույն ավելի ու ավելի խորը ներքաշվելու հակամարտության մեջ՝ ընդլայնելով իր գործողությունները և դրանք բացատրելով ու անդրադառնալով խիստ կողմնակալ դիրքերից՝ հաշվի չառնելով բարոյական, քաղաքական և նյութական վնասների հետ: Եվ քանի դեռ ՆԱՏՕ-ն և Ադրբեջանը «դաշնակիցներ» են՝ հավասարապես «պայքարելով» տարածաշրջանում ռուսական ներկայության դեմ, ապա «պարզ է», որ ՆԱՏՕ-ն Ադրբեջանին կօգնի դուրս քշելու էթնիկ հայ բնակչությանը Լեռնային Ղարաբաղից այն նույն ձևով, ինչպես 1991թ. խորհրդային բանակը և ՊԱԿ-ն օգնում էին Ադրբեջանին էթնիկ զտման իր գործողություններում:

Տարածաշրջանի երկրների բևեռացումը Հարավսլավիայի դեմ ՆԱՏՕ-ի օդային հարձակումների ընթացքում մեկ այլ գործոն է, որն Ադրբեջանը փորձում է օգտագործել որպես ճնշման միջոց Ղարաբաղի հայերի դեմ: Ադրբեջանը փորձում է գտնել իր գոյատևման բանաձևը՝ բախտախաղի դնելով արհեստականորեն վերակառուցված մի նոր սառը պատերազմի իրավիճակ Կովկասում: Բաքվում «Մոսկվայի կողմից հարուցվող հեղաշրջումները» և Ղարաբաղ-Ադրբեջան սահմանային գծի վրա պարբերաբար տեղի ունեցող սադրանքները և այլն օգտագործվում են ՆԱՏՕ-ի երկրների, Ռուսաստանի և քաղաքական խաղերի այլ տարածաշրջանային մասնակիցների միջև անվստահությունը մեծացնելու, ՆԱՏՕ-ն Ռուսաստանի դեմ հանելու նպատակով: Դրան հակառակ, Հայաստանն

իր անվտանգության խնդիրները լուծում է՝ կիրառելով այսպես կոչված «փոխլրացման ռազմավարություն», այսինքն՝ կառուցում է մի քաղաքականություն, որով աջակցում է ՆԱՏՕ-ին և Ռուսաստանին հանդես գալու որպես տարածաշրջանային անվտանգության մի նոր համագործակցության գործընկերներ:

Եթե Հարավսլավիային ՆԱՏՕ-ի օդային հարվածները ուղղակի պատասխան էին Կոսովոյում Հարավսլավիայի ոստիկանության վարած պարբերական էթնիկ զտման, որի կոդային անվանումն էր «Պայտ», ապա պատերազմը Լեռնային Ղարաբաղում ավարտվեց 5 տարի առաջ՝ 1994թ. մայիսին պաշտոնապես կրակի դադարեցման համաձայնագրի ստորագրությամբ:

Այսպիսով՝ քաղաքացիական բնակչությանը ոչնչացումից փրկելու համար տարածաշրջան միջազգային մարդասիրական ռազմական ուժեր մտցնելու խիստ անհրաժեշտություն չկա: Այն ադրբեջանական ուժերը, որոնք այնուամենայնիվ հույս են տածում ամեն գնով իրականացնելու ՆԱՏՕ-ի ներխուժումը տարածաշրջան, վերջերս փորձեցին վերսկսել զինված ընդհարումները Ղարաբաղի հյուսիսային սահմանի երկայնքով և հայերին մեղադրեցին անվտանգության գոտին ընդլայնելու մտադրության մեջ:

ԱՄՆ-ի պաշտոնյաները և ՆԱՏՕ-ի ներկայացուցիչները Կոսովոյի ճգնաժամի օգտագործման Ադրբեջանի փորձերը մերժեցին որպես անհիմն: Հունիսի 28-ին Նյու Յորքում ՆԱՏՕ-ի Արտաքին հարաբերությունների խորհրդի նիստում ԱՄՆ-ի պետքարտուղար Մադլեն Օլբրայթն ասաց. «Ոմանք հույս ունեն, իսկ ուրիշները վախենում են, որ դա (Կոսովոն.–Հ. Ք.) նախադեպ կդառնա ամբողջ աշխարհում (ՆԱՏՕ-ի կողմից.–Հ. Ք.) նմանատիպ միջամտությունների համար: Ես կզգուշացնեի նման ամեն մի անհիմն հետևություն անելուց»: Իր կողմից ՆԱՏՕ-ի նախկին գլխավոր քարտուղար Խավիեր Սոլանան նույնպես դեմ արտահայտվեց ՆԱՏՕ-ի մասնակցությանը Ղարաբաղյան հակամարտությանը: Իսկ վերջերս ԱՄՆ-ի սենատի արտաքին նստաշրջանում օրենսդիրները կրկին ընդգծեցին, որ Ադրբեջանը չի ստանա ԱՄՆ-ի մարդասիրական օգնությունը, մինչև չցուցաբերի բարի կամք բանակցությունների սեղանի շուրջ, չընդունի խաղաղ կարգավորման ուղղությամբ ԵԱՀԿ պլանները, ինչպես դրանք ընդունել են Հայաստանն ու Ղարաբաղը, և չվերացնի Հայաստանի ու Ղարաբաղի շրջափակումը:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

[1] Հինգ մելիքությունները նույնպես հայտնի են գրականության մեջ, որպես Խամսայի մելիքություններ: Տես՝ Զորջ Բուռնությանի «Ղարաբաղի պատմություն», Միրզա Ջամալ Ջավանշիրի «Qarabaghis Tarikh-e Qarabagh», CA, Mazda Publishers, 1994 թ. էջ 15–21:

[2] Ադրբեջանում բնակվող ավանդական և բնիկ քրիստոնյա խմբերի՝ հայերի, ուտիների և քրիստոնյա թաթերի նկատմամբ զանազան վերաբերմունք է ցուցբերվում, և դա էլ իր հերթին արտացոլում է ներգաղթած սլավոնների (հիմնականում՝ էթնիկ ռուսներ) նկատմամբ վերաբերմունքը, որոնք զանգվածաբար բնակություն հաստատեցին ներկայիս Ադրբեջանի տարածքում Բաքվի նավթի վերելքի ժամանակ՝ 19-րդ դարավերջին: Ի տարբերություն ավանդական քրիստոնյա խմբերից՝ սլավոնները ոչ պաշտոնապես, սակայն վայելում էին Ռուսական Կայսրության, իսկ ավելի ուշ՝ ԽՍՀՄ մոսկովյան կենտրոնական իշխանությունների բարյացակամությունը: Միևնույն ժամանակ, սլավոնները մի փոքր վտանգ էին ներկայացնում Ադրբեջանի տարածքային ամբողջականությանը՝ մեծամասամբ խոշոր քաղաքներում բնակվելով:

[3] Թեպետ Ադրբեջանի Նախագահ Հեյդար Ալիևը Ղարաբաղի հայերին խոստացավ «ընդարձակ» ինքնավարություն Ադրբեջանի տարածքում, այդուհանդերձ, այդ գաղափարը շատ վերլուծաբանների կողմից պարզորոշ կերպարով ընդունվեց որպես դիվանագիտական քայլ՝ ուղղված ԵԱՀԿ 1996թ. Լիսաբոնի գագաթնաժողովի մասնակիցներին խաղաղեցնելու, և որը դեռ պետք է ընդունվի Ադրբեջանի ընդդիմության կողմից:

[4] *Г. Котанджян.* Этнополитология консенсуса-конфликта: цивилизационный аспект национальной безопасности. М., 1990, сс. 104–120; *H. S. Kotanjian.* Politologische probleme der identifizierung and Regulung des bewaffneten Konflikts in Karabach. Frankfurt am Main. 1999.

[5] Կենտրոնական Ասիայի հետխորհրդային մուսուլմանական հանրապետություններում բնակվող ուղղափառ սլավոնների քիչ թե շատ ոչ խնդրահարույց գոյակցությունը այս փաստարկի օգտին չի խոսում: Էթնիկ ռուսները և մյուս սլավոնները Կենտրոնական Ասիա էին ներգաղթել ԽՍՀՄ արդյունաբերական փոխակերպման ծրագրի շրջանակներում մեծամասամբ 20-րդ դարի կեսերին: Քրիստոնեական և մուսուլմանական համայնքները Կենտրոնական Ասիայում երբևէ չեն սահմանադրականացվել մուսուլմանական օրենքների կողմից, այսուհանդերձ, Կենտրոնական Ասիայի մուսուլմանների փորձառությունը չէր բավարարում ներգաղթած սլավոններին մուսուլմանական իրավական սնահավատության պրիզմայի միջոցով վերահսկելու:

[6] «Закон о порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР». М., изд. Верховного Совета СССР, «Ведомости Съезда народных депутатов Верховного Совета СССР», 1990, № 15.

[7] Կասկած կա, որ «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին օրենքը» գործածվել է ԽՍՀՄ իշխանությունների կողմից Միության բազմաէթնիկ մի շարք հանրապետությունների նկատ-

մամբ, որոնք ցանկություն էին հայտնել դուրս գալու Խորհրդային Միությունից՝ խոչընդոտներ ստեղծելու նպատակով: Այնուամենայնիվ, վերը նշված օրենքը թե՛ իրավական, թե՛ քաղաքական ակտ է, ինչպես և իրավական ուժ ունեցող մի գործընթաց՝ ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

[8] «Конституционный акт о государственной независимости Азербайджанской Республики». «Баку», 18 сентября, 1991 г.

[9] «Акт о результатах референдума о независимости Нагорно-Карабахской Республики». «Статус Нагорного Карабаха в политико-правовых документах и материалах», сс. 85–87, նաև՝ «Декларация о государственной независимости Нагорно-Карабахской Республики», там же, сс. 88–89.

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ)*

Վերջին ժամանակներս ԵԱՀԿ-ի մասնակից պետությունների հասարակայնության շրջանում առանձնակի հետաքրքրություն է առաջացրել Լիսաբոնի գագաթնաժողովում (1996 թ. դեկտեմբեր) Հայաստանի Հանրապետության Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի ելույթի այն մասը, որտեղ պետությունների ղեկավարների ուշադրությունն էր հրավիրվում այն հանգամանքի վրա, որ անհրաժեշտ է հաշվի առնել Ղարաբաղյան հակամարտության յուրօրինակությունը՝ կապված Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ցեղասպանության սպառնալիքի հետ:

Միջազգային շրջաններն այժմ ձգտում են Ղարաբաղյան հակամարտության առանձնահատկությունների ավելի լավ ըմբռնման՝ Արևելյան Եվրոպայում տեղի ունեցող ժամանակակից տարածաշրջանային հակամարտությունների ծագումնաբանության ու դինամիկայի հիմնահարցերի հետազոտությունների հետ առադրման մեջ: Դրանով է բացատրվում նախկին ԽՍՀՄ տարածքում եղած այլ հակամարտությունների հետ համեմատության մեջ Ղարաբաղյան հակամարտության ընդհանուր և առանձնահատուկ բնութագրերի դիտարկման հրատապության աճումը: Ադրբեջանական քարոզչությունը փորձեր է ձեռնարկում պատմամշակութաբանական ու քաղաքական-իրավական բնույթի հարմարեցնելու և ծառայեցնելու Լեռնային Ղարաբաղի տարածքը և ժողովրդին Ադրբեջանի ենթակայության տակ դնելու գործին: Այդ նպատակով ակտիվորեն առաջ է մղվում այն տեսակետը, որ Ղարաբաղի անկախության ճանաչման նախադեպը, իբր, կարող է վտանգի տակ դնել ԵԱՀԿ-ի մեկ տասնյակից ավելի մասնակից պետությունների տարածքային ամբողջականությունը: Այս առումով և՛ տեսական, և՛ գործնական կարևոր նշանակություն է ստանում այն փաստարկների համակարգումը, որոնք հակամարտության առանձնահատկությունների նույնականացման հիմք են ծառայում և ենթակա են հաշվառման նրա լուծման ժամանակ:

Ղարաբաղյան հակամարտության ծագումնաբանության ու դինամիկայի քաղաքագիտական հիմնահարցերի միջգիտաճյուղային քննարկումը

* «Ղարաբաղ. հակամարտություն–համաձայնություն (պատմաքաղաքագիտական ժողովածու)»: ՀՀ ՊՆ «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 1997 թ.:

ենթադրում է նրանց քաղաքական, իրավական, ազգաբանական և այլ տեսանկյունների բացահայտում Ղարաբաղի հայության և Արևելյան Անդրկովկասի թուրքերի՝ որպես պետության ու իրավունքի սուբյեկտների գոյակցման քաղաքական պատմության առանձնահատկությունների համատեքստում: Տվյալ հիմնահարցի պատմության մանրամասները բողնելով պատմաբաններին՝ նշենք միայն, որ գիտական ավանդույթը Ղարաբաղի քաղաքական պատմության սկզբնակետ համարում է Արցախ–Ռերտեխե մարզի հիշատակությունը Վանի, կամ Արարատյան, թագավորության սեպագիր արձանագրություններում[1]: Ռերարտուի անկումից հետո (մ. թ. ա. VI դ. սկիզբ) Արցախը մշտապես եղել է պատմական Հայաստանի տարածքում ստեղծված բոլոր պետությունների՝ Երվանդունիների (մ. թ. ա. VI–II դդ.), Արտաշեսյանների (մ. թ. ա. II դ.–մ. թ. I դ.), Արշակունիների (մ. թ. I–IV դդ.) թագավորությունների կազմում: Ստրաբոնն իր «Աշխարհագրության» մեջ Արցախը նշում է Մեծ Հայքի կազմում որպես մի բերրի երկիր, որը տրամադրում է մեծաթիվ այրուձի[2]:

Մ. թ. 301 թ. Հայաստանում քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոնի նոր փուլ նշանավորեց Արցախի քաղաքական զարգացման մեջ, երբ Արցախը դարձավ քրիստոնեական պետականության գաղափարների տարածման խոշոր օջախներից մեկը: Այդ հանգամանքի նշանակությունն ավելի մեծացավ, երբ հայկական գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցը հայոց գրերի դպրոց հիմնադրեց Ամարասի վանքում (Արցախում): Հետագայում հենց լեզվի ու կրոնի ընդհանրությունը դարձավ պատմական զարգացման ընթացքում հայ ժողովրդի միավորման հզոր գործոններից մեկը: 4-րդ դ. վերջը նշանավորվեց Արշակունիների իշխանության թուլացմամբ և 387 թ. Հայաստանի բաժանումով Հռոմի ու Սասանյան Պարսկաստանի միջև: Վերջինիս կազմում տեղի ունեցավ Արցախի վարչական երկատումը լեռնային ու դաշտային մասերի:

Չնայած տիրող աշխարհաքաղաքական բարդ իրավիճակին, որն էլ ավելի էր բարդանում միջկրոնական ու ներկրոնական դիմակայություններով, Արցախի հայ իշխանները Պարսկաստանի կազմում օգտվում էին սահմանափակ ինքնիշխանության իրավունքից, որը կարողացան պահպանել նաև Պարսկաստանը, Հայաստանը, Աղվանքն ու Վրաստանը արաբների կողմից նվաճվելուց հետո. խալիֆայության ժամանակաշրջանում Պարսկաստանի ու արաբական պետությունների պատմության մեջ հայտնի է ավատառվական տարածքների ազնվականության ներկայացուցիչներին գերիշխանի կողմից իր որոշ իրավունքների հանձնման փաստը: Պարսկական տիրապետության ժամանակ տեղի ունեցավ նաև

«Արցախ» անվան փոխարինումը պարսկական «Բաղ-ե սիախ» (սև այգի) անունով:

11-րդ դարում ժամանակակից Անդրկովկասի տարածաշրջան ներխուժեցին սելջուկ թուրքերի ցեղերը, որոնք Արցախի՝ պարսկերենից եկող անվանումը բառացի թարգմանեցին «Ղարաբաղ»: Արցախի հայկական իշխանությանը հաջողվեց որոշ ժամանակ ոչ միայն դիմակայել նվաճողների ճնշմանը. այդ ընթացքում Արցախն ապրեց նաև որոշ յուրահատուկ վերածննդի շրջան, որը դրսևորվեց այնպիսի ճարտարապետական կոթողների կառուցմամբ, ինչպիսիք են՝ Գանձասարի ու Դադիվանքի համալիրները, Գտիչի վանքի ու Խաթրավանքի եկեղեցիները և այլն: Սակայն թաթարամոնղոլական նվաճումը և դրան հետևած թուրքական քոչվոր կարակոյունլու ու ակկոյունլու ցեղերի ասպատակությունները ամայացրին ծաղկուն երկրամասը, և հենց այդ շրջանն էլ նշանավորվեց Արցախի վերջնական բաժանումով երկու մասի՝ Լեռնային Արցախի, որտեղ հաջողվեց պահպանել անկախություն և ինքնակառավարում, և Դաշտային Արցախի, որի բնակչությունը հայտնվեց քոչվորների ուժեղ ազդեցության ոլորտում:

16-րդ դարի վերջերում պարսկական պետության շրջանակներում Ղարաբաղի հայ իշխանները պահպանում էին որոշակի ինքնուրույնություն տեղական կառավարման մեջ՝ մելիքությունների ձևով:

17–18-րդ դարերը դարձան պարսից տիրապետության դեմ Արևելյան Հայաստանի ժողովրդի պայքարի շրջան: Այդ ժամանակ էլ հենց Ղարաբաղի հայության աշխարհիկ ու հոգևոր առաջնորդները, արտահայտելով իրենց ժողովրդի կամքը, բազում անգամ դիմեցին Ռուսաստանին կայսրության կազմի մեջ կամավոր մտնելու հայցով՝ իրենց կողմից ձեռնարկելով քաղաքական, դիվանագիտական ու ռազմական բնույթի ռեալ քայլեր[3]: Այս քայլերի համընկնումը հարավային ուղղությամբ ռուսաստանյան պետության աշխարհառազմավարական նկրտումների հետ հանգեցրեց 1813 թ. Գյուլիստանի հաշտության պայմանագրի կնքմանը, որով ամրագրվեցին 1804–1812 թթ. ռուս-պարսկական պատերազմի արդյունքները և Ղարաբաղը, ի թիվս Հայաստանի հյուսիսարևելյան այլ շրջանների, ընդգրկվեց Ռուսաստանյան կայսրության կազմում: Կորցրած տարածքները հետ վերադարձնելու Պարսկաստանի 1826 թվականի փորձը ձախողվեց, իսկ 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով վերջնականապես ամրագրվեցին Ռուսաստանի հարավային սահմանները:

Ղարաբաղի պատմության ռուսաստանյան տիրապետության շրջանը խորհրդանշվում է երկրամասի տնտեսական ու սոցիալական կյանքի

ազատագրումով ավանդական ասիական տնտեսավարության կապանքներից: Զարգացման էական խթան ստացան գյուղատնտեսությունը, արդյունաբերությունը, քաղաքաշինությունը, առևտուրը, կրթությունը, գիտությունն ու արվեստը: 19-րդ դ. վերջում Շուշին դարձավ Ռուսաստանի անդրկովկասյան նահանգների արդյունաբերական ու մշակութային հիմնական կենտրոններից մեկը, որտեղ գործում էին տպարաններ, գիմնազիաներ, թեմական դպրոց, հայկական թատրոն, լույս էին տեսնում լրագրեր ու հանդեսներ:

Հոկտեմբերյան հեղափոխությունից և Անդրկովկասում 1918 թ. անկախ պետությունների կազմավորումից հետո Ղարաբաղը, որը մինչ այդ մտնում էր Ռուսաստանի Ելիզավետպոլի հայաբնակ նահանգի կազմի մեջ, ստիպված էր ինքնուրույն հետ մղել թուրքական զորքերի և Ղարաբաղի, Զանգեզուրի, Նախիջևանի ու Հայաստանի հյուսիսարևելյան շրջանների նկատմամբ հավակնություններ հայտնած Ադրբեջանի մուսավաթական կառավարության ջոկատների հարձակումները:

1918 թ. հուլիսին Շուշիում կայացավ Ղարաբաղի հայության 1-ին համագումարը, որը Ղարաբաղը հռչակեց անկախ վարչաքաղաքական միավոր, ընտրեց իշխանության ներկայացուցչական մարմինը Ղարաբաղի հայկական Ազգային խորհուրդը, և կազմավորեց ժողովրդական կառավարություն: Ազգային խորհրդի փաստաթղթերում հռչակվում էր հարգալից վերաբերմունք յուրաքանչյուր ժողովրդի ինքնորոշման իրավունքի նկատմամբ, ողջունվում էր Ադրբեջանի ինքնորոշումը, պատրաստակամություն էր հայտնվում «բարիդրացիաբար աշխատելու երկու ժողովուրդների բարօրության համար», բայց նույնպիսի վերաբերմունք էր պահանջվում Ղարաբաղի ժողովրդի կամքի ազատ արտահայտման իրավունքի նկատմամբ[4]: Ընդհանուր առմամբ Ղարաբաղի Ազգային խորհրդին, որն ստիպված էր Բաքվի իշխանությունների կողմից ցեղասպանության սպառնալիքի դեմն առնել, հաջողվեց ընդհուպ մինչև Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատումը վերահսկել Ղարաբաղի տարածքի մեծ մասը[5]:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման հաջորդ իսկ օրը՝ 1920 թ. նոյեմբերի 30-ին, Ադրբեջանի Հեղկոմն ընդունեց որոշում, որով «Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը ճանաչվում էին Հայկական Սոցիալիստական Հանրապետության բաղկացուցիչ մաս»: Այդ մասին Խորհրդային Հայաստանի Հեղկոմին էր հաղորդվում Խորհրդային Ադրբեջանի Հեղկոմի հեռագրով, որն ստորագրել էին Հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովը և արտգործժողկոմ Մ. Հուսեյնովը[6]: Սակայն շուտով Ադրբեջանի կուսակցական ղեկավարությունը հակառակ դիրք բռնեց, իսկ

նրա ճնշման տակ հրավիրված ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովբյուրոյի պլենումի նիստը 1921 թ. հուլիսի 5-ին ընդունեց որոշում, որում ասվում էր, որ, «ելնելով մահմեդականների և հայերի միջև ազգային հաշտության անհրաժեշտությունից», Լեռնային Ղարաբաղը մտցվում է ԱդրԽՍՀ կազմի մեջ, ընդսմին «Լեռնային Ղարաբաղի ինքնավարության ծավալը կորոշի Ադրբեջանի Կենտկոմը»[7]:

Ադրբեջանի Խորհուրդների Կենտգործկոմի կողմից 1923 թ. հուլիսի 7-ին ստեղծված Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի բնակչությունը խորհրդային իշխանության ամբողջ շրջանում բազմաթիվ անգամներ դիմել է ԽՍՀՄ ղեկավարությանը ԼՂԻՄ-ի պատկանելության հարցի վերանայման և ԼՂԻՄ-ը Հայաստանի կազմում ընդգրկելու խնդրանքով՝ նկատի ունենալով Ղարաբաղի հայության նկատմամբ սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում կիրառվող խտրականությունը, հայ բնակչության իրավունքների ու ազգային արժանապատվության ոտնահարումը: Ինքնավարության կառավարման կառույցներում ԼՂԻՄ-ի բնակչության ճնշող մեծամասնությունը կազմող հայերի (1926 թ. 89,14 %, 1979 թ. 75,89 %) անհամամասնական ներկայացուցչությունը, Բաքվի իշխանությունների կողմից գործադրվող մշտական ճնշումը հայերին զրկում էին Լեռնային Ղարաբաղի ներքին քաղաքականության ձևավորման գործում ռեալ մասնակցության հնարավորությունից: 1970–1980 թթ. ԱդրԽՍՀ-ում ծավալվեց «պատմության սրբագրման (խեղաթյուրման)» կամպանիան, որը գլխավորում էր ակադեմիկոս Զ. Բունիաթովը[8], ուժեղացավ հայ մտավորականներից «այլախոհների» հետապնդումը, ավելի եռանդուն կերպով սկսեց կիրառվել հայերի բռնի արտամղման և ադրբեջանցիներով տարածքի բնակեցման Նախիջևանի ԻԽՍՀ-ում արդեն փորձարկված քաղաքականությունը:

Հենց այս բոլոր պատճառներով էլ պայմանավորված էր 1988 թ. փետրվարի 20-ին մարզի ներկայացուցչական իշխանության մարմնի՝ ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների խորհրդի արտահերթ նստաշրջանում ընդունված որոշումը, որով խնդրվում էր ԱդրԽՍՀ, ՀԽՍՀ և ԽՍՀՄ Գերագույն խորհուրդներին ԼՂԻՄ-ը ԱդրԽՍՀ կազմից հանել և ընդգրկել ՀԽՍՀ կազմում, ինչը համապատասխանում էր ԽՍՀՄ Սահմանադրությանը[9]: ԱդրԽՍՀ կազմից ԼՂԻՄ-ի դուրս գալու մասին ԱդրԽՍՀ Գնժ մերժողական որոշումը նրանց միջև քաղաքական հակամարտության հիմք դրեց: Բայց քանի որ ժողովուրդների ինքնորոշման վերաբերյալ ԽՍՀՄ Սահմանադրության նորմը ամրապնդված չէր դաշնության կազմից նրա սուբյեկտի (հետևաբար և ԼՂԻՄ-ի) դուրս գալու համապատասխան իրավանորմատիվ մեխանիզմով, ապա այս հակամարտությունը չստա-

ցավ օրինական լուծում և վերածվեց ներքին ոչ միջազգային հակամարտության:

Ադրբեջանական միլիցիայի և ԱդրԽՍՀ տարածքում տեղաբաշխված զինված ուժերի զորամասերի կողմից ԼՂԻՄ-ի ժողովրդի հանուն ինքնորոշման զանգվածային շարժման դեմ ուժի կիրառումից հետո ոչ զինված հակամարտությունը վերածվեց ներքին ոչ միջազգային զինված հակամարտության:

1990 թ. «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքի[10] ընդունման և ԽՍՀՄ քաղաքական լուծարման գործընթացի ծավալման հետևանքով Ղարաբաղյան հակամարտությունն անցավ որակապես նոր մակարդակի: Օրենքն ինքնավար կազմավորումներին հնարավորություն էր ընձեռում ինքնորոշվելու որպես միութենական դաշնության ինքնուրույն սուբյեկտներ ընդհուպ մինչև դուրս գալն այն միութենական հանրապետության կազմից, որի մեջ նրանք մտնում են (միութենական հանրապետությունների կողմից ԽՍՀՄ-ից դուրս գալու վերաբերյալ հարցադրման դեպքում): Վերոհիշյալ օրենքի իրավական մեխանիզմների շրջանակներում ժողովուրդների ինքնորոշման իրավունքի վերաբերյալ միջազգային-իրավական[11] ու սահմանադրական նորմերի կոնկրետացումը Լեռնային Ղարաբաղի ժողովրդին տվեց ԽՍՀՄ-ում մինչ այդ գոյություն չունեցող օրինական հիմքեր իր քաղաքական կամքի արտահայտման և կառուցային մարմնավորման համար՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին ԱդրԽՍՀ հայտարարված մտադրության հաշվառումով (ԱդրԽՍՀ Գերագույն խորհուրդը ինքնիշխանության մասին սահմանադրական օրենքն ընդունել էր դեռևս 1989 թ. սեպտեմբերին[12], իսկ ԱդրՀ ԳԽ-ն 1991 թ. հոկտեմբերին ընդունել էր պետական անկախության մասին սահմանադրական ակտը[13]):

1991 թ. դեկտեմբերի սկզբին սահմանադրական հիմունքներով, միջազգային դիտորդների հսկողությամբ ԼՂԻՄ-ում անցկացվեց հանրաքվե Լեռնային Ղարաբաղի անկախության հռչակման, ԼՂՀ կազմավորման ու ԼՂՀ օրինական իշխանությունների ձևավորման հարցերով[14]: 1991 թ. հոկտեմբերին ստեղծվեց Ադրբեջանական Հանրապետությունը, իսկ նույն թվականի դեկտեմբերին լուծարվեց ԽՍՀՄ-ը:

Այսպիսով՝ կամքի սահմանադրական արտահայտման հետևանքով ԱդրԽՍՀ տարածքում ստեղծվեցին երկու անկախ իրավահավասար պետություններ՝ ԼՂՀ-ն և ԱդրՀ-ն, և օրինական ձևով դադարեցվեցին լուծարված ինչպես ԽՍՀՄ-ի, այնպես էլ ԱդրԽՍՀ-ի նկատմամբ ԼՂՀ ժողովրդի,

տարածքի ու իշխանությունների ենթակայության հարաբերությունները: ԼՂՀ կարևոր քաղաքական-իրավական առանձնահատկությունն այն է, որ, ի տարբերություն այլ՝ ազգամիջյան հակամարտությունների ընթացքում ինքնահռչակ պետություններից, ԼՂՀ-ում անկախ պետականության ձևավորումը իրագործվեց ԽՍՀՄ Սահմանադրության և ԽՍՀՄ վերոհիշյալ օրենքի իրավակիրառության ժամանակային շրջանակներում:

Կարևոր է նշել, որ դրա հետևանքով Ղարաբաղյան հակամարտությունը ձեռք բերեց որակապես նոր ծև՝ իր վերամիացական ուղղվածությունը փոխարինելով անկախ ազգային-պետական կողմնորոշմամբ: Արդյունքը եղավ այն, որ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն օրինական ձևով հաղթահարեց տարածքի ամբողջականության սկզբունքը՝ կիրառված ինչպես ԽՍՀՄ-ի, այնպես էլ ԱդրԽՍՀ-ի նկատմամբ: Դրա հետ մեկտեղ ԼՂՀ-ն միջազգային-իրավական հիմք ձեռք բերեց տարածքի ամբողջականության ու սահմանների անձեռնմխելիության սկզբունքները կիրառելու ի շահ իր իսկ ԼՂՀ-ի՝ որպես նորաստեղծ անկախ պետության ազգային անվտանգության:

Այսպիսով՝ 1991 թ. վերջում ռեալ իրավական ու քաղաքական նախադրյալներ ստեղծվեցին Ղարաբաղի ժողովրդի և արդեն գոյություն չունեցող ԽՍՀՄ ու ԱդրԽՍՀ իշխանությունների միջև ներքին ոչ միջազգային զինված հակամարտության լուծման համար: Սակայն ԱդրՀ հետագա ռազմաքաղաքական հակազդեցությունը ԼՂՀ ազգային-պետական կայացմանը հնարավորություն չտվեց իրականանալու խաղաղարարության այս պատմական շանսին: Հենց ԱդրՀ իշխանությունների կողմից տվյալ եզակի հնարավորությունը չօգտագործելու հանգամանքը պատճառ դարձավ, որ ներքին ոչ միջազգային զինված հակամարտությունը վերափոխվի երկու նորաստեղծ իրավահավասար պետությունների՝ ԼՂՀ-ի և ԱդրՀ-ի միջև միջազգային զինված հակամարտության[15]: Ավելին, հույս դնելով ռազմական տեխնիկայի ու սպառազինության մեջ իր ճշնող գերազանցության վրա՝ Ադրբեջանը ձեռնարկեց մի շարք լայնամասշտաբ մարտական գործողություններ, որոնց ընթացքում բռնագաղթվեցին Գետաշենի ենթաշրջանի (1991 թ.) և Շահումյանի շրջանի (1992 թ.) ողջ բնակչությունը, Հադրութի շրջանի (1991 թ.) բնակչության մի զգալի մասը, Մարտակերտի շրջանի (1992 թ.) բնակչության մեծամասնությունը, զանգվածային կրակային հարվածների ենթարկվեցին խաղաղ քաղաքներն ու ավանները: Ելնելով ինքնապաշտպանության հարկադրվածությունից ու անհրաժեշտությունից՝ Ղարաբաղի իշխանությունները (ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածին համապատասխան), ի պատասխան ԼՂՀ-ի դեմ ԱդրՀ-ի կողմից ձեռնարկված զինված ագրեսիայի, ստիպված էին

դիմել համապատասխան միջոցների, որոնք հանգեցրին «Լաչինի միջանցքի» բացման միջոցով Լեռնային Ղարաբաղի ապաշրջափակմանը, ԼՂՀ սահմանամերձ գոտիները հսկողության տակ վերցնելուն: Ադրբեջանական զորքերի աշնանային (1993 թ.) ու ձմեռային (1993–1994 թթ.) հարձակումները նրանց հաջողություն չբերեցին. Լեռնային Ղարաբաղի ուժերը, հակահարվածների շնորհիվ, կարողացան ամրանալ ռազմավարական առումով ձեռնտու պաշտպանական բնագծերում: Հետևաբար, ինքնորոշման ու քաղաքական կամքի արտահայտման ազատությունը, Ղարաբաղի ժողովրդի անվտանգության երաշխիքները ապահովվեցին ԼՂՀ պետական իշխանության կառույցների ձևավորման ընթացքում սեփական պաշտպանության բանակի ստեղծման ու կիրառման միջոցով: Այսպիսով Ադրբեջանական Հանրապետության նկատմամբ կիրառած «տարածքի ամբողջականության» սկզբունքի խախտումը հետևանք էր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ նրա ագրեսիայի հարկադրական հետմղման, ինչպես նաև անվտանգության գոտիների սարքավորման ու պահպանման ԼՂՀ-ին սահմանակից ԱդրՀ այն տարածքներում, որոնք ագրեսորից նվաճվել էին նրա կրակային բնագծերի ոչնչացման ընթացքում:

Մենք քննեցինք Ղարաբաղի հիմնահարցի առանձնահատկությունները, որոնք Ղարաբաղյան հակամարտությունն առանձնացնում են հետխորհրդային տարածքում տեղ գտած այլ հակամարտությունների բազմությունից: Այդ առանձնահատկությունների հետ կապված այն փաստարկները, որոնք հարկ է հաշվի առնել Ղարաբաղի հակամարտության լուծման գործում, կարելի է սեղմ համակարգել հետևյալ ձևով:

ա) Անկախ ԼՂՀ կազմավորումը իրականացվել է ԽՍՀՄ Սահմանադրության և «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքի իրավակիրառության ժամանակային շրջանակներում:

բ) Լուծարված ինչպես ԽՍՀՄ-ին, այնպես էլ ԱդրԽՍՀ-ին ԼՂՀ ժողովրդի, տարածքի ու իշխանությունների ենթակայության հարաբերությունները դադարեցվել են օրինական ձևով: Դրա հետևանքով Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը օրինական ձևով հաղթահարել է տարածքի ամբողջականության սկզբունքը՝ կիրառված ինչպես ԽՍՀՄ-ի, այնպես էլ ԱդրԽՍՀ-ի նկատմամբ:

գ) ԼՂՀ ողջ տարածքում հինգ տարուց ավելի է, ինչ անընդմեջ իրականացվում է ժողովրդավարության միջոցով ստեղծված ու զարգացող օրինական պետական ներկայացուցչական և գործադիր իշխանություն, անկախ միջազգային դիտորդների հսկողությամբ համաժողովրդականորեն ընտրվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խորհրդարան և նախագահ:

դ) Լեռնային Ղարաբաղի հայությունը ինքնորոշվել է իր անընդհատ պատմական բնակության տարածքում, որտեղ գոյություն ունի երկու հազարամյակից ավելի ժամանակաընթացքում նրա ստեղծած նյութական ու հոգևոր մշակույթի հուշարձանների մի ամբողջական համալիր:

ե) ԼՂՀ ստեղծումը տեղի է ունեցել ոչ թե որպես Ղարաբաղի հայության ինքնորոշման սկզբնական կամայական գործողություն, այլ ընթացել է պետականության դարեր շարունակ պահպանվող ավանդույթների, նրանց օրինաչափ զարգացման և նոր քաղաքական-պատմական պայմաններում պետական-իրավական կառուցավորման հունով:

զ) Ադրբեջանական Հանրապետության իշխանությունները, ի տարբերություն Ռուսաստանյան Դաշնության (Իչկերիա Չեչենական Հանրապետության դեպքում) և Վրաստանի (Աբխազիայի Հանրապետության դեպքում) իշխանություններից, բանակցություններ չեն վարում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ որպես գինված հակամարտության մի կողմի ղեկավարության հետ՝ անտեսելով ստեղծված վերոհիշյալ քաղաքական և իրավական իրողությունները:

է) Խաղաղ հայ բնակչության զանգվածային և հատուկ դաժանությամբ կատարվող ֆիզիկական ոչնչացման պարբերաբար տեղի ունեցած ակտերի՝ 1905 թ. Բաքվի ջարդերի, 1918–1921 թթ. ԱդրԽՍՀ գործնականում ողջ տարածքում ու Ղարաբաղում տեղի ունեցած կոտորածների, 1988–1990 թթ. Սումգայիթում, Կիրովաբադում ու Բաքվում հայերի զանգվածային սպանությունների պատմական փորձի, ինչպես նաև գինված հակամարտության խաղաղ լուծման վերաբերյալ քաղաքական երկխոսությանը ԼՂՀ ղեկավարության պատրաստակամության ԱդրՀ իշխանությունների կողմից մշտական անտեսման՝ այս ամենի վերլուծությունը հիմք է տալիս բավարար չափով հոռետեսորեն վերաբերվելու Ղարաբաղյան հակամարտության հօգուտ ԱդրՀ կազմում հայերի ինքնավարության քաղաքակիրթ լուծման հնարավորությանը և պնդելու, որ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության վերադարձումը ադրբեջանական պետության ենթակայության տակ կունենա արդի ազգամիջյան հակամարտությունների մեծ մասի լուծման համար ոչ բնորոշ հետևանքներ՝ ցեղասպանության ձևով, որը «Ցեղասպանության կանխման և նրա համար պատժման մասին կոնվենցիայով» ճանաչված է որպես միջազգային հանցագործություն[16]:

Այստեղ պետք է հատուկ կերպով նշել նաև խորհրդային շրջանում ԱդրԽՍՀ հովանավորության տակ գտնվելու ընթացքում, նրա կազմում ստացած լայն ինքնավարության պայմաններում Նախիջևանի ԻԽՍՀ լրիվ հայաթափման փաստը, որը յուրովի ցույց է տալիս նույն պայմաններում Ղարաբաղին սպասող ապագան:

Ղարաբաղյան հակամարտության այս առանձնահատկության նշանակությունը շեշտվեց ՀՀ նախագահի վերոհիշյալ ելույթում, որտեղ նա հարկ համարեց Լիսաբոնյան գագաթնաժողովի մասնակիցների ուշադրությունը հրավիրել այնպիսի մի յուրահատուկ մոտեցման մշակման անհրաժեշտության վրա, որը երաշխավորեր ԼՂՀ ժողովրդի պաշտպանվածությունը ցեղասպանության ռեալ վտանգից:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

[1] Տես *Г. А. Капанцян*. Chetto-Armeniaca. Е., 1931, с. 104:

[2] Տես *Страбон*. География. М., 1964, кн. XI, п. 4:

[3] Տես «Армяно-русские отношения в первой трети XVIII в.», т. 2, ч. II. Е., 1964, сс. 28, 57, 68, 80, 204–205:

[4] Տես ЦГИА РА, ф. 200, оп. 1, д. 244, лл. 38–44:

[5] Տես ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. ЦК КПСС, общий отдел, 6-й сектор, д. 44–3/3–а, лл. 54–58:

[6] Տես «Կոմունիստ» (Երևան), 1920 թ. դեկտեմբերի 7:

[7] «Протокол № 12». ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 64, оп. 1, ед. хр. 1 л. 124.

[8] Տես *П. Мурадян*. История–память поколений. Проблемы истории Нагорного Карабаха. Е., «Айастан», 1990, сс. 120–127.

[9] Տես «Конституция (Основной Закон) Союза Советских Социалистических Республик». «Юр. лит-ра», М., 1987.

[10] «Закон о порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР». М., изд. Верховного Совета СССР, «Ведомости Съезда народных депутатов Верховного Совета СССР», 1990, № 15.

[11] Տես «Декларация о предоставлении независимости колониальным странам и народам. ООН. Генеральная Ассамблея. Официальные отчеты. XV сессия. Резолюции». Нью-Йорк, 1961, сс. 74–75; «Международный Пакт о гражданских и политических правах», часть I, статья 1.В. «Права человека», сб. международных документов. Изд. МГУ, 1986, сс. 46–47:

[12] Տես «Конституционный закон о суверенитете Азербайджанской ССР», «Бакинский рабочий», 17 сентября 1989 г.:

[13] Տես «Конституционный акт о государственной независимости Азербайджанской Республики», «Баку», 7 ноября 1991 г.:

[14] Տես «Акт о результатах референдума о независимости Нагорно-Карабахской Республики». «Статус Нагорного Карабаха в политико-правовых документах и материалах», Е., 1995, сс. 85–87, նաև «Декларация о государственной независимости Нагорно-Карабахской Республики», նույն տեղում, էջ 88–89:

[15] Տես «Дополнительный протокол к Женевским конвенциям от 12 августа 1949 г., касающийся защиты жертв международных вооруженных конфликтов (Протокол I)», часть I, статья 1, п. 4. «Права человека. Сборник международных договоров», т. I (часть вторая), «Универсальные договоры». Организация Объединенных Наций, Нью-Йорк и Женева, 1994, с. 1028:

[16] Տես «Права человека. Сборник международных договоров», т. 1 (часть вторая), «Универсальные договоры». Организация Объединенных Наций, Нью-Йорк и Женева, 1994, сс. 780–785:

ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

(ԱՖՂԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՓՈՐՁԻՑ)*

Պատերազմը մարդկության պատմական ուղեկիցն է եղել, և յուրաքանչյուր նոր սերունդ ջանացել է, հանրագումարի բերելով նախորդ փորձը, դասեր քաղել անցյալից: Բոլոր մեծ զորավարների գործնական հաջողությունների գրավականը անցյալի դասերի յուրացումն է՝ ոչ միայն գործնական, այլ նաև տեսական գիտելիքների մակարդակով: Անհամեմատ քիչ ուշադրության է արժանացել հակառակորդի ժողովրդական զանգվածների վարքն ու բարքը որպես պատերազմի վրա ազդեցություն թողնող գործոն: Անշուշտ, եղել են մեծ զորապետներ, որոնք վարպետորեն օգտվել են նվաճվող երկրի ազգաբնակչության առանձնահատկությունների մասին տեղեկույթից: Սակայն մինչև վերջերս ռազմական նպատակներով նման ուսումնասիրությունները չեն կրել գիտահետազոտական բնույթ:

Աֆղանստանի դեմ ԽՍՀՄ «չհայտարարված պատերազմում» ազգաքաղաքական գործոնը ռազմաքաղաքագիտական հատուկ ուսումնասիրության առարկա դարձավ հատկապես Լ. Ի. Բրեժնևի վախճանից հետո, երբ քաղաքական ուժերի նոր հարաբերակցությունը հանգեցրեց հօգուտ ռազմական բախումից դուրս գալու ռազմավարության ընտրության: Համապատասխան փոփոխություններ կատարվեցին ռազմական քաղաքականության մեջ՝ հայեցակարգային և կիրառական մակարդակներում, փոփոխվեց նաև խորհրդատվական գործունեությունը՝ նրա բովանդակության մեջ վերլուծական բաժինների ինտենսիվ ներմուծմամբ: Քաղաքական ու հակաքարոզչական ավանդական հակազդման հիմնահարցերի շարունակվող մշակումների հենքի վրա մի շարք մասնագետներ ներգրավվեցին ձևավորվող համաձայնահակամարտային ուղեգծի տեսական-մեթոդաբանական հիմքերի վերահիմաստավորման գործում:

Հետզհետե պարզ դարձավ, որ աֆղանական հակամարտության ներքին և արտաքին քաղաքական կարգավորմանն անցնելու բարդությունները զգալի չափով բխում են նրա մոդելի հիմնարար ձևախախտումից: Խորհրդային զորքերի մուտքն Աֆղանստան արդարացնելու, «ագրեսիա» և «զավթում» կարգի միջազգային-իրավական գնահատականները չեզոքացնելու նպատակով ժամանակին մշակվել էին «աֆղան ժողովրդի դեմ

* «Հայկական բանակ», 1996, հմ. 2:

իմպերիալիզմի չհայտարարված պատերազմի» մեթոդաբանական հայեցակարգը և մոդելը: Այդ երևակայական մոդելը ԱԺՀ-ում խորհրդային զորքերի ներկայության արդարացմանն ու արտաքին ագրեսիայի հետմղմանն իր կողմնորոշվածությամբ քողարկում էր աֆղանական հակամարտության հիմնակառույցը: Դրանով իսկ երկար ժամանակով կասեցվել էր սեփական ներքին քաղաքական հիմքերի վրա հակամարտության դինամիկայի հնարավոր սցենարների համածայնական ներուժի դրսևորումը:

Հակամարտության հիմքային մոդելի էության գիտական իմաստավորումը, նրա կառուցվածքի և դինամիկայի որոշումը մեթոդաբանական հիմք դարձան համածայնական գիտափորձերի կատարման հնարավորության մասին վարկածի քաղաքագիտական հիմնավորման համար: Այս գիտափորձերի նպատակն էր ճշտել և փորձարկման ենթարկել դեպի ազգային հաշտություն տանող ուղեգծի քաղաքական գործիքակազմը:

Տվյալ վարկածի տեսական միջուկը այն հայեցակարգն էր, ըստ որի միջազգայնացված (խորհրդային ներկայությամբ) զինված հակամարտությունը պետք է վերադառնար ընդդիմության և Աֆղանստանի պաշտոնական վարչակարգի միջև քաղաքացիական հակամարտության սկզբնական հունը[1]: Ներազգային հակամարտության մասնակիցների՝ աֆղանների կողմից սկզբնապես ընտրված դերերի վերադարձումը հենց իրենց՝ աֆղաններին, հիմք դարձավ խորհրդային զորքերի դուրսբերման ուղիների մասին չքարոզվող, սակայն իրատեսական վարկածի համար:

Այսպիսով՝ հենվելով համամեթոդաբանական և ընդհանուր քաղաքական սահմանափակումների վրա, դիտարկվում էին այն լրացուցիչ կոնկրետ սահմանափակումները, որոնք «ռազմական դրության» վարչակարգի կողմից դրվում էին համածայնական գիտափորձի մշակման վրա՝ այդ վարչակարգի էությունից բխող բոլոր հանգամանքներով հանդերձ:

«Ճգնաժամային ազգաքաղաքականության» կողմից դրվող սահմանափակումները հիմնականում պայմանավորված էին հուսալի տեղեկույթի աղբյուրների, համածայնահակամարտային պրակտիկայի սուբյեկտների և օբյեկտների ինքնարտահայտման միջավայրի հետ անմիջական շփումների խիստ սահմանափակվածությամբ: Աֆղանական պատերազմի պայմաններում կոնկրետ ազգաքաղաքագիտության գործիքակազմից գործնականում բացառվում էին քաղաքական սոցիոլոգիայի մեթոդների կիրառմամբ կատարվող զանգվածային հետազոտությունները: Դրա հիմնական պատճառներն էին՝ երկրում ցանկացած ուղևորության ժամանակ իրական վտանգ էր ստեղծվում հետազոտողի կյանքի համար[2], բնակ-

չության մեծ մասն անգրագետ էր, զանգվածային հարցումների համար պատրաստված կադրեր և համապատասխան ավանդույթներ չկային և այլն: Քանի որ բնակչությունը հարցազրույցները ընկալում էր որպես անձնական կյանքին միջամտություն, ուստի զանգվածային ուսումնասիրությունների արդյունքների իսկությունը անհնարին էր ստուգել քիչ թե շատ հուսալի կերպով:

Կիրառական ազգաքաղաքագիտության գործիքակազմում հատուկ տեղ էր գրավում իր բովանդակությամբ ու կառուցվածքով առավել բարդ մեթոդը՝ գիտափորձը՝ կապված վերլուծության արդյունքների մշտական գործնական ստուգման, ինչպես նաև ռազմաքաղաքական կառավարման պրակտիկայում դրանց ներդրման անհրաժեշտության հետ:

Աֆղանստանում ջիհադի ռազմաքաղաքական և սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների հետևանքով գիտափորձերը կարող էին անցկացվել միայն հետազոտվող օբյեկտների բնական ինքնարտահայտման դաշտային պայմաններում: «Կախյալ փոփոխականների» վրա ազդեցության վերահսկման նպատակով նախապես «անկախ փոփոխական» ընտրելու և գրանցման նախապատրաստելու հնարավորություն հիմնականում չէր լինում: Ուստի հետազոտողները մեծ մասամբ գործում էին «բնական փորձի» աշխատակարգով, երբ ստիպված էին ուշադիր դիտարկել դրա օբյեկտները և սպասել մինչև համաձայնության – հակամարտության հետազոտվող գործընթացում հստակորեն արտահայտվի այն համաձայնական կամ հակամարտային տարրերի փոփոխությունը, որոնք կարող են հանդես գալ փաստորեն միջնորդավորված կերպով վերահսկվող անկախ փոփոխականի դերում:

Համաձայնական գիտափորձում որպես հետազոտման և ուղղակի կամ միջնորդավորված կերպով վերահսկվող ազգաքաղաքականության օբյեկտներ դիտարկվում էին ռազմական և քաղաքական ռեալ իշխանության կառույցները, որոնք գոյություն ունեին ինչպես ԱԺՀ պաշտոնական հաստատություններում, այնպես էլ զինված ընդդիմության ռազմաքաղաքական ստորաբաժանումների գործունեության ոլորտում: Ի դեպ, վերջիններս թեև ճանաչված չէին որպես օրինական իշխանության սուբյեկտներ, սակայն բավականաչափ ազդեցիկ էին:

Որպես անկախ համընդհանուր փոփոխականներ դիտվում էին օբյեկտների այն բնութագրերը, որոնք վկայում էին նրանց՝ զինադադարի և համագործակցության վիճակ մտնելու մասին (բանակցություններ բանակցությունների վարման մասին, տնտղիչ բանակցություններ, միջնորդական առաջարկությունների իրականացնելիության, անմիջական բանակ-

ցությունների մեջ մտնելու գլխավոր հատկանիշների քննարկում և համաձայնեցում, զինադադարի պայմանների վերահսկելիության, բանակցությունների և բուն զինադադարի վերարտադրման երաշխիքների պահպանում և այլն):

Տվյալ դեպքում գործող զինված կազմավորումների վարքին ուղղակի միջամտության ուղղությամբ յուրահատուկ դաշտային գիտափորձ կատարելու խնդիր էր դրված: Գործն ավելի էր բարդացնում այն հանգամանքը, որ գիտափորձի օբյեկտը՝ ԱԺՀ-ում հակամարտության կողմերը, գերզգայուն վերաբերմունք էին ցուցաբերում թեկուզ որոշ չափով ներգործիչ տարր պարունակող ցանկացած միջամտության նկատմամբ:

Այսպիսով՝ դաշտային գիտափորձը գործնականում բացառում էր իր ընթացքի վերահսկման անմիջական ձևերը և ենթադրում էր հետազոտական ու գործնական աշխատանք պատերազմող և բանակցող կողմ-հակընկերակիցների (կոնտրպարտնյորների) ներխմբային և արտախմբային բնական ինքնարտահայտման պայմաններում: Գիտափորձի տվյալ ձևը հետազոտվող և կառավարվող օբյեկտների բնույթով մի այնպիսի հասարակական գործունեության բարդ համալիր էր, որը չէր սահմանափակվում միայն զինված կազմավորումների ռազմաքաղաքական վարքի ոլորտով: Թեև խմբային վարքի կարգավորման հարցում արտաքնապես գերակշռում էին ռազմաքաղաքական գործոնները, այնուամենայնիվ այդ վարքն զգալի չափով պայմանավորված էր օբյեկտի սոցիոմշակույթի և ազգամշակույթի առանձնահատկություններով:

Հարկ է ուշադրություն դարձնել այդ գիտափորձի հետազոտական և գործնական կողմերի սերտ կապին: Ի դեպ, հետազոտական մասն առաջին հերթին ներառում էր օբյեկտների՝ ռազմական հակամարտության կողմերի վերաբերյալ տեղեկությունների հավաքում և վերլուծում, այդ թվում նաև գիտափորձի այնպիսի առարկայի մասին, ինչպես համաձայնական ու հակամարտային ներուժը:

Հետազոտման ընթացքում կիրառվում էին այն հետազոտական գործիքները, որոնք հնարավորություն էին տալիս բացահայտելու և նկարագրելու զինված խմբավորումների սոցիալական, առաջին հերթին՝ ռազմաքաղաքական և ազգաքաղաքական վարքի որոշման գործոններն ու մեխանիզմները:

Զինված ընդդիմության կազմավորումների ընդհանուր և առանձնահատուկ բնութագրերի, շահերի, նպատակների, ինչպես նաև նրանց համաձայնական կամ հակամարտային վարքի կարգավորման մեխանիզմների

միջև պատճառահետևանքային կապի բացահայտման համար հիմնականում օգտագործվում էին այնպիսի գործիքներ, ինչպես փաստաթղթերի ուսումնասիրումը, արտաքին և ներառական դիտարկումները, փորձագիտական տեղեկույթի հավաքումն ու վերլուծումը, «բանակցությունների տեխնոլոգիաների» տարրերը:

Ռազմական իրադրության յուրահատկությունը, ինչպես վերը արդեն նշվել է, կանխորոշում էր համաձայնական գիտափորձի օբյեկտի և առարկայի համակողմանի ուսումնասիրման հնարավորության սահմանափակությունը: Ոևստի գիտական բնույթի փորձի ծրագրի մշակման մեջ ներգրավվում էին մի քանի գերատեսչությունների ու ծառայությունների վերլուծաբաններ, որոնք օգտվում էին տեղեկույթի հավաքման և մշակման տարբեր աղբյուրներից ու մեթոդներից: Սվյալ փուլում ուսումնասիրման օբյեկտներ էին ոչ միայն պետական հաստատություններն ու կազմակերպությունները (կուսակցություններ, շարժումներ և ռազմաքաղաքական կառավարման կառույցներ), այլև աֆղանական ավանդական հասարակության այնպիսի կարևոր տարրեր, ինչպես ցեղերը, տոհմերը, կլանները, դրանց առաջնորդները, հեղինակավոր կրոնական գործիչները:

Հետազոտվող օբյեկտների գործունեությանը վերաբերող փաստաթղթերի ուսումնասիրությունը կառուցվում էր աֆղանական և խորհրդային կողմերի վերլուծական ծառայությունների աղբյուրագիտական հիմքի վրա: Հիմնական ուշադրությունը դարձվում էր իսլամական ընդդիմադիր կուսակցությունների կենտրոնական մարմինների և տեղերում նրանց «իսլամական կոմիտեների» ծրագրերի, կանոնադրությունների, ուղղորդող փաստաթղթերի ու հրահանգների ռազմաքաղաքական և իրավաքաղաքական վերլուծությանը: Հետազոտական գիտափորձը ուղեկցվում էր նաև զինված ընդդիմության և նրա արտասահմանյան դաշնակիցների մամուլի՝ որպես պաշտոնական գնահատականների և իրադարձությունների ուսումնասիրման լրացուցիչ աղբյուրի գննական վերլուծությամբ:

Սոցիոլոգիական զանգվածային հարցումների անցկացման բացարձակ անհնարինության հետևանքով զանգվածային տեղեկատվության միջոցների ուսումնասիրումը որոշ չափով լրացնում էր նաև աֆղանական հասարակությունում հասարակական կարծիքի արժանահավատ և ներկայացուցչական գնահատումների պակասը: Սվյալ հրապարակումների ուսումնասիրման ժամանակ հիմնական ուշադրությունը դարձվում էր առաջնորդող հոդվածներին և հակամարտության կողմերի ռազմական ու քաղաքական գործունեության հետ կապված փաստերի վերաբերյալ տեղեկութային հաղորդումներին: Հատուկ ուշադրության առարկա էր

խորհրդային և աֆղանական հակաքարոզչությանը դիմակայելու, ինչպես նաև հօգուտ ջիհադի ազգաբնակչության հասարակական տրամադրվածություն ստեղծելու նպատակ հետապնդող նյութերի ուսումնասիրումը: Տվյալ դեպքում հաշվի էր առնվում նաև այն փաստը, որ մոջահեդների մեծամասնության անգրագիտության պատճառով ընդդիմությունը հատուկ քարոզչական նյութերը դիմադրության լայն շրջաններին էր հասցնում իր ակտիվիստների կողմից կատարվող խմբակային ընթերցումների և մեկնությունների միջոցով[3]:

Գիտափորձի նախապատրաստման հետազոտական մասը ներառում էր աֆղանական ընդդիմության առավել հեղինակավոր առաջնորդների՝ Գուլբեդդին Հեքմաթիարի, Բուրհանուդդին Ռաբբանիի, Սեբղաթուլլա Մոջադադդիի և ուրիշների մասին կենսագրական բնույթի տեղեկությունների, նրանց աշխատությունների և ելույթների ուսումնասիրումը: Նման նյութերի համեմատական վերլուծությունը հնարավորություն էր տալիս ավելի ճշգրիտ որոշելու այդ գործիչների ռազմական և ազգաքաղաքական վարկանիշը, ազդեցության ոլորտներն ու ձևերը, ռազմական քաղաքականության մեջ նրանց առաջնորդական ոճի առանձնահատկությունները[4]:

Գիտափորձի նախապատրաստման վերլուծական մասում հատուկ տեղ էր զբաղեցնում ընդդիմության ռադիոհաղորդումների ծրագրերի այն ընդհանրացված տեսությունների տեքստերի համեմատական ուսումնասիրությունը, որոնք մշակվում էին ԱԺՀ պաշտոնական տեղեկատվական հաստատությունների հակաքարոզչական ծառայությունների կողմից: Լուծվում էր ընդդիմության քարոզչության նպատակների, փաստարկման, ձևերի և մեթոդների, ինչպես նաև ունկնդիրների համախմբի մասնագիտական և ազգամշակութային առանձնահատկությունների նույնականացման խնդիրը:

Չնայած ռազմաքաղաքական քարոզչության արտահայտչամիջոցների ղուրանական կանոնակարգման իներցիային՝ աֆղանական զինված հակամարտության ընթացքում ընդդիմությունը գունեղ պլակատներում, թռուցիկներում, բուկլետներում բավական լայնորեն օգտագործում էր կերպարվեստի, այդ թվում՝ ղուրանական բովանդակությամբ, իսլամական այնքան հեղինակավոր գեղագրության ստեղծագործությունները, սրբավայրերի պատկերները, իսլամական ականավոր գործիչների ու շահիդների (ջիհադում հավատի համար զոհված հերոսներ) դիմանկարները, հակառակորդների ծաղրանկարները և այլն: Համաձայնական գիտափորձի սցենարներ մշակողների կողմից այս և այլ տեսակի փաստաթղթերի

ուսումնասիրությունը հնարավորություն էր տալիս պատկերացում կազմելու բնակչության բազմազան խմբերի վրա ընդդիմական կոնկրետ կազմակերպությունների կողմից հուզագեղարվեստական ներգործման ձևավորված եղանակների և սրբազան պատերազմում ցուցաբերվող ռազմաքաղաքական ակտիվության նմուշների և ստերեոտիպների մասին:

Նման ազգաքաղաքական և ռազմաքաղաքական վերլուծության էր ենթարկվում կողմերի գործունեությունն արտացոլող կինո-, տեսա- և ֆոտոփաստաթղթերի մշտապես համալրվող զանգվածը: Փաստերի արժանահավատության կամ աղճատվածության պարզումից հետո բովանդակային վերլուծման էին ենթարկվում այն տեսողական փաստաթղթերը, որոնք պատկերում էին ցեղային պատերազմի և «կադրերի» ազգաքաղաքական սահմաններում ջիհադի առանձնահատկությունները, ինչպես նաև հակամարտության կողմերի ռազմական հակամարդասիրական գործողությունները միմյանց դեմ:

Ձայնագրական փաստաթղթերը վերլուծելիս բացահայտվում էին սովորաբար ձայնահոլովակների վրա վերարտադրված տեքստերի բովանդակային (նպատակադրումը և փաստարկումը) և ազգալեզվական առանձնահատկությունները՝ կապված տեքստերի հեղինակների և ունկնդիրների լսարանի հետ:

Փաստաթղթերի վերլուծությունը ուղեկցվում էր տեղեկատվական աղբյուրների արժանահավատության և հուսալիության ուսումնասիրմամբ: Հարկ էր լինում նաև մշտապես հաշվի առնել հետաքրքրող տեղեկույթի աղբյուրների և այդ տեղեկույթը կրողների քաղաքական-գաղափարախոսական նախապաշարվածությունը, ինչպես նաև նրանց ապատեղեկատվական պաշտպանվածությունը: Հատկապես էական էր այն վիճակագրական տեղեկատվության անհավաստիությունը, որն արտացոլում էր աֆղանական հասարակության տնտեսական և սոցիալական առաջընթացի դինամիկան: Զուրկ լինելով պետական վիճակագրության ստորաբաժանումների ինչ-որ չափով լուրջ ցանցից և ավանդույթներից, իրենց պրակտիկայում ընդօրինակելով բյուրոկրատական հավելագրումների խորհրդային փորձը՝ ԱԺՀ պետական մարմինները հաճախակի էին ապրիլյան հեղափոխության մտացածին զարգացման մասին տրվող տվյալներով մոլորության մեջ գցում վերլուծական խմբերին: Իսկ դա, իր հերթին, սխալ եզրակացությունների տեղիք էր տալիս:

Աֆղանական հասարակության քաղաքական կտրուկ շերտավորման հետևանքով նկատելի դարձավ ռազմաքաղաքական և ազգաքաղաքական տեղեկույթի կրողների հակվածությունը դեպի գաղտնի կամ կեղծ-գաղտ-

նապահական տեղեկությունների այսպես կոչված վերահսկվող, կամ պլանային, սորակորստի կազմակերպումը: Այդ միջոցներին դիմակայելու անհրաժեշտությունը, տվյալների ապատեղեկատվական բազայի զատման ուղղությամբ աշխատանքները լրացուցիչ ջանքեր էին պահանջում ուսումնասիրվող օբյեկտների ռեալ վիճակի պարզման ուղղությամբ:

Ընտրված մեթոդիկաների համակցումը հնարավորություն էր տալիս վերահսկելու իրադարձությունների համաձայնական զարգացման հիմքերի ընդունելի հուսալիությունը (վալիդությունը) և բավարար փաստարկվածությունը: Փաստաթղթերի բնագրաբնույթ լինելու և ընդհանրապես ազգաքաղաքական ու ռազմաքաղաքական տեղեկույթի հավաստիության հաստատմանն զգալի չափով նպաստում էր երկրագիտական և պատմալեզվաբանական պատրաստություն ունեցող խորհրդատու մասնագետների, ինչպես նաև թարգմանիչների մասնագիտացված խմբի մասնակցությունը:

Քանի որ հետազոտվող հակամարտային շահերն ու հարաբերությունները պահանջում էին ծայրաստիճան նրբանկատություն, ապա ազգաքաղաքագիտական վերլուծության ժամանակ հարկ էր լինում մշտապես վերահսկելու ստացվող տեղեկույթի հավաստիությունը: Դա հիմնականում իրականացվում էր լրացուցիչ վերլուծակիրառական մեթոդիկաների օգտագործմամբ, օրինակ՝ տարբեր ժամանակներում, ճգնաժամի աստիճանով տարբեր իրավիճակներում միևնույն աղբյուրից ստացվող տեղեկույթների բովանդակությունների համեմատությամբ: Ի լրումն այս ամենի՝ անկախ աղբյուրների համեմատական վերլուծության մեթոդը հնարավորություն էր ընձեռում ազգաքաղաքական օբյեկտների համաձայնահակամարտային ներուժի՝ վերլուծաբաններին հետաքրքրող պարամետրերի բաղդատման ճանապարհով ապահովելու ինչպես տեղեկույթի, այնպես էլ օբյեկտների նկարագրման տեսանկյունների բավարար բազմազանություն: Հայտնի սահմանափակումները առաջին պլան էին մղում գիտափորձի հավաստիության ապահովման նաև այնպիսի մի յուրահատուկ հնար, ինչպիսին է տվյալների և դրանց վրա հիմնված եզրակացությունների համեմատումը ստանդարտների հետ: Տվյալ դեպքում որպես գիտափորձի օբյեկտի և առարկայի ընդհանուր գնահատականների և բնութագրերի ձևավորման ստանդարտներ ամենից հաճախ քննվում էին փորձագիտական և հրահանգային, ցավոք, ոչ միշտ հիմնավոր գնահատականներն ու կողմնորոշումները: Գիտափորձի մեթոդաբանական և ընդհանուր-տեսական ապահովումը կատարվում էր ակադեմիական և կիրառական գիտությունում ձևավորված ստանդարտների հիման վրա:

Փաստաթղթերի և ընդհանրապես տեղեկույթի ուսումնասիրման բազմատեսակ գործիքակազմի կիրառումը, հավաստիության ապահովումից բացի, հնարավորություն էր տալիս ավելի լիարժեքորեն հարաբերակցելու գիտափորձի օբյեկտի ընդհանուր, առանձնահատուկ և միավորիչ ազգաքաղաքագիտական և ռազմաքաղաքական չափումները, գնահատելու համաձայնական կոնկրետ գիտափորձի հնարավոր վերարտադրելիությունը:

Հարկ է նկատի ունենալ, որ միայն վերլուծության պահանջները պայմանավորեցին Աֆղանստանում ռազմաքաղաքական փորձագիտական աշխատանքի գիտակիրառական առումների նախապատրաստման ու անցկացման համալիր գործիքակազմի զուտ մտահայեցողական տարաբաժանման անհրաժեշտությունը: Ավելացնենք, որ, չնայած կոնկրետ վերլուծական ծառայությունների որոշակի մեթոդիկագործիքային մասնագիտացման, իրադրությունը թելադրում էր բոլոր ներգրավված վերլուծական խմբերի աշխատանքի արդյունքների ու հնարների համակարգում: Դրանով էին պայմանավորված վերլուծական աշխատանքի մեթոդիկաների հնարավոր ընդհանրականացումը, ինչպես նաև այդ խորհրդատվական ծառայությունների մասնագետների առավել սերտ համագործակցությունը[5]:

Աֆղանստանում քաղաքացիական հակամարտության հեռանկարների իմաստավորման համաձայնական մոտեցումների մերժումը և դրանց հանդեպ անվստահությունը էապես բարդացնում էին նոր մասնագետների անմիջական մուտքը ռազմաքաղաքական այն միջավայր, որտեղ ձևավորվում ու վերարտադրվում էր հակամարտային ներուժը պատերազմի «հեղափոխական» և «հակահեղափոխական» մասնակիցների փոխհարաբերություններում: Ռուսի արտաքին և ներառական դիտարկման մեթոդները դարձան զինված հակամարտության սուբյեկտների հետ փոխգործակցության և համագործակցության աշխատանքային կապերի հաստատման, իրենց բնական ռազմաքաղաքական ինքնարտահայտման պայմաններում քաղաքացիական պատերազմի տվյալ սուբյեկտների՝ որպես համաձայնական գիտափորձի օբյեկտի, ուսումնասիրման առանցքային գործիք:

Մարտնչող կողմերին հաշտության միտելու վերաբերյալ առաջին համաձայնական սցենարների մշակումների ինտենսիվացումը նպաստեց աֆղանական կողմի տարբեր կազմակերպություններում որպես ներառված դիտորդ-խորհրդականներ աշխատող վերլուծաբանների մշտապես գործող կոորդինացիոն խորհրդակցության կազմակերպմանը:

ԽՍՀՄ ռազմաքաղաքական դոկտրինի՝ Աֆղանստանից խորհրդային զորքերի դուրսբերման առումով վերահիմաստավորման առաջին փուլում տվյալ կոորդինացիոն խորհրդակցության մասնակիցները հետևողականորեն նախապատրաստում էին, ինչպես այն ժամանակ դա անվանվում էր, զինված ընդդիմության բանդկազմավորումներին ժողովրդական իշխանության հետ համագործակցության տրամադրելու ուղղությամբ առաջին փորձերը: Այդ կապակցությամբ ներառական դիտարկման բովանդակությունն ու կառուցվածքը սկսեցին հագեցվել վերլուծական աշխատանքով՝ հակամարտահամաձայնական նյութի տեսական իմաստավորման տարբեր մակարդակներում:

Հետազոտական խնդիրների շարքում հեղինակի մասնակցությամբ, ներառական դիտարկման գծով գործընկերների հետ համատեղ, լուծվել են նաև յուրահատուկ վերլուծականավարային խնդիրներ: Այստեղ օգտավետ է բացահայտել ռեալ քաղաքական գործընթացների վրա կիրառական ռազմաքաղաքական տեխնոլոգիաների ներգործության որոշ գործիքային առանձնահատկությունները: Բավականին յուրահատուկ կիրառական քաղաքագիտական գործունեության այդ ոլորտի գնահատման համար կարելի է հիմնվել սոցիալական ուսումնասիրության օբյեկտի և գործիքի փոխազդեցության հիմնարար սկզբունքների վրա: Հայտնի է, որ դիտարկվող կամ հարցվող սոցիալական օբյեկտների չափումներում և գնահատումներում ուսումնասիրողի կողմից հնարավոր աղավաղումների նվազեցման համար նախատեսվում են լրացուցիչ մեթոդիկաներ: Այլ խոսքով՝ դիտորդի առջև կանգնած է հետևյալ մեթոդական խնդիրը՝ նախատեսել դիտարկվող սոցիալական օբյեկտի հետազոտման արդյունքների ամփոփման ժամանակ կոնտրագենտի հետ իր փոխազդեցության արդյունքի բացառումը:

Իրադրության վերլուծության, կառավարման ենթախորհրդատվական ապարատի կողմից որոշումների նախապատրաստման, ընդունման ու կատարման կազմակերպման գործընթացին մշտապես մտածագործունեաբար ուղեկցող քաղաքական խորհրդականի և խորհրդատուի կարգավիճակն իր մեջ կրում էր ինչպես լիակատար ներառման, այնպես էլ բնական միջավայրում (օբյեկտի հետ իրական անմիջական շփման պայմաններում) նրա դաշտային դիտարկման դերային տարրեր: Դաշտային յուրահատուկ ներգործողություն (ինտերակցիա) էին աֆղան ղեկավարության և զինված ընդդիմության անդամների հետ շփումները: Դիտորդի ներառման դոզավորվածությունը տվյալ դեպքում ցուցադրականորեն իրականացվում էր կողմերի շփումների միջնորդավորվածությամբ, որն

արտահայտվում էր բանակցությունների արձանագրության թարգմանության ու ձևակերպման կարգի միջոցով:

Դիտորդի և դիտարկվողի փոխհարաբերությունների հաշվառման հիշյալ մեթոդական սկզբունքի իրացման մյուս կողմը շարունակական համագործակցության նպատակաուղղված օգտագործումն էր ոչ միայն ուղղակի կառավարային, այլև միջնորդավորված, մի շարք դեպքերում՝ հակընդդեմ կողմի քաղաքական վարքի վրա արժեքակողմնորոշումային ներգործման նպատակով:

Վերլուծակառավարային ներառման երկմիասնությունը հնարավորություն էր տալիս աստիճանաբար հաղթահարելու քաղաքացիական պատերազմի մասնակիցների հակամարտային դիմակայման կողմնորոշումը: Ներառված դիտորդի դերը պահանջում էր որոշակի նրբանկատություն. նա պետք է պահպաներ ոչ միայն պաշտոնական վարվելակարգը, այլև արևելյան բավականաչափ խիստ վարվեցողական և բարոյական նորմերը: Կառավարային համագործակցության ընթացակարգաբյուրոկրատական կողմերով հաճախակի քողարկվում էին խորհրդային և աֆղանական կողմերի իրական շահերը՝ կապված նախկին հակամարտային ուղեգիծը ներազգային ու միջազգային մարդասիրական համաձայնության վերափոխելու ընթացքում «համբավի փրկման» համար միջոցների մշակման հետ:

Փորձենք ընդհանրացնել տեսական և կիրառական ազգաքաղաքագիտության այն խնդիրները, որոնք վերլուծական խմբերի կողմից մշակվել են Աֆղանստանի նկատմամբ ԽՍՀՄ քաղաքականության փոփոխման կապակցությամբ:

Վերլուծաբանները հանգեցին «չհայտարարված պատերազմի» այն մոդելի տեսական և մեթոդաբանական թերարժեքության գաղափարին, որը վերջին հաշվով խոչընդոտում էր զորքերի դուրսբերմանը:

Ապահովվեց զինված ընդդիմության կուսակցությունների և այլ կազմակերպությունների փաստաթղթերի վերլուծման աղբյուրագիտական հիմքը:

Կատարվեց ընդդիմական կազմակերպությունների և դրանց առաջնորդների ռազմաքաղաքական և ազգաքաղաքական վարկանիշի փորձագիտական գնահատումը[6]: Դաշտային դիտարկումների հիման վրա առաջարկվեցին ընդդիմության զինված կազմավորումները իշխանությունների հետ համագործակցության մղելու ուղղությամբ առաջին ստուգիչ գիտափորձերի օբյեկտները:

Անցկացվեց ընդդիմության այն դաշտային հրամանատարների առաջին ջիրգան (համաժողով), որոնք անցել էին կենտրոնական իշխանությունների հետ համագործակցության:

Մշտապես գործող կոորդինացիոն խորհրդակցության[7] մասնակիցների կատարած վերլուծական աշխատանքի շնորհիվ մշակվել են՝

- ընդդիմության ազդեցության գոտիների քարտեզը՝ ցեղերի և «կադմ» միջցեղային միությունների բնակեցման ազգակրոնական բնատարածքի (արեալի) վրա վրադրմամբ,
- ազգաքաղաքագիտական վերլուծության և բանակցությունների արդյունքներով որպես համաձայնական գիտափորձի օբյեկտներ առաջարկվել են Ահմադ Շահ Մասուդի (Փյանջշիրյան հովիտ) և Սաիդ Ձագրանի (Հազարաջաթ) ռազմական կազմակերպությունները: Դրանք աֆղանական զինված ընդդիմության ոչ փուշտունական կազմավորումների թվում ճանաչվել էին որպես ազգային համաձայնության ուղեգծին առավել համապատասխան,
- Աֆղանստանում ջիհադի վերաբերյալ աշխատությունների մատենագիտություն,
- ընդդիմական կուսակցությունների, դրանց գաղափարաքաղաքական պլատֆորմների և ռազմաքաղաքական պրակտիկայի վերաբերյալ հավաքական վերլուծական նյութեր,
- Սաիդ Ձագրանի ռազմական կազմավորումներին համագործակցության միտելու ուղղությամբ կիրառական ազգաքաղաքագիտական և գործնական գիտափորձի սցենար:

Մեր կարծիքով, կիրառական ազգաքաղաքագիտության հետազոտական գործիքակազմի տեսական-մեթոդաբանական և մեթոդական հուսալիության հաստատման համար օգտակար է այստեղ քննարկել մեթոդական գործիքների օգտագործման այսպես կոչված «կենդանի փորձը», որում գործիքները կիրառվել են և՛ միջին տեսության մակարդակով ընդհանրացումների համար (օրինակ՝ «Աֆղանստանում զինված հակամարտության ազգաքաղաքագիտություն»), և՛ կոնկրետ-իրավիճակային ռազմաքաղաքական վերլուծությունում («Իսլամական քաղաքական կազմակերպությունները և նրանց առաջնորդները՝ որպես Աֆղանստանում ջիհադի նոր սուբյեկտներ»):

Աֆղանստանում քաղաքացիական պատերազմի կողմերի հակամարտահամաձայնական ռեսուրսների և փոխհարաբերությունների բնագավառ-

ներում ռազմաքաղաքագիտական հետազոտությունների յուրօրինակ համադրական արդյունք է այն համաձայնական գիտափորձի ուրվագծային սցենարը, որը 1982 թ. մշակվել է սույն հոդվածի հեղինակի գիտագործնական ղեկավարությամբ: Մեր կարծիքով, այդ բնօրինակ սցենարի զետեղումը հոդվածում իմաստավորված է ռազմադաշտում հակամարտաբանական տեսության պրակտիկ կիրառման կարևորությամբ, քանի որ, նախ՝ միմյանց հանդեպ մեղապարտ պատերազմող կողմերի միջև խաղաղարար գիտափորձի մշակման մեջ ներդրված գիտագործնական բազում ջանքերի յուրահատուկ կենտրոնացում է, երկրորդ՝ տվյալ սցենարն ինքը ռազմաքաղաքագիտական հետազոտության և պրակտիկ ռազմաքաղաքական գործողության համալիր գործիքակազմի օրինակ է:

ԱՖՂԱՆՍՏԱՆՈՒՄ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԿԱՆ ԳԻՏԱՓՈՐՁԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՍՑԵՆԱՐ[8]

Բաժին Ա. Հետաքրքրող օբյեկտի վերաբերյալ վերլուծական նյութի հավաքում հակաքարոզչական փաստարկների մշակման նպատակով

1. Ինչ քաղաքական, սոցիալական և այլ արտոնություններ ստացան հազարացիները 1978 թ. դեկտեմբերից հետո (օրենսդրական և այլ նորմատիվ ակտերի վերլուծություն, կրթության, գիտության և մշակույթի, տնտեսության, զինված ուժերի և այլ ոլորտների վերաբերյալ ընդհանրացնող նյութեր), ինչ է պլանավորված առաջիկայում:

2. Երկրում և արտասահմանում շիական համայնքի նկատմամբ ժողովրդական կառավարության դրական վերաբերմունքի (հազարացիների ներկայացուցչությունը ուլեմների բարձրագույն խորհրդում, իսլամի գործերով գլխավոր վարչությունում, ուսումը կրոնական ուսումնական հաստատություններում, այդ թվում և Քաբուլի համալսարանի աստվածաբանական ֆակուլտետում) փաստարկումը (հաջ, կառավարության նյութական օգնություն շիական համայնքին, մզկիթների ու սրբավայրերի նորոգում, բարելավում և շինարարություն...):

3. Կառավարության և խռովարարների կողմից վերահսկվող տարածքներում հազարական բնակչության կենսամակարդակի բնութագրումը (այն հարցի փաստարկման համար, թե ինչ արտոնություններից և դրական փոփոխություններից են զրկվում հազարացիները իրենց բնակության տարածքները հակառակորդի վերահսկողության տակ անցնելու դեպքում):

Ծանոթություն 1, 2, 3 կետերի վերաբերյալ: Հատուկ ուշադրություն դարձնել կուսակցական և պետական մարմիններում հազարացիների ներկայացուցչությանը (ընկ. Քեշթմանդ և ուրիշներ, ինչպես նաև հասարակական կյանքի տարբեր ոլորտներում ներկայացվածության տեսակարար կշռի դինամիկան):

1, 2 կետերում նշված բնութագրերի դինամիկան նպատակահարմար է տալ (առավել շահավետ պահերը) փուլերի կտրվածքով՝ մինչ 1978 թ. հեղափոխությունը, նրա նոր փուլում և այլն:

4. Բանդկազմավորումների ազգասոցիալական կազմի, ստորաբաժանումների հրամանատարների բնութագրումը՝ հակաքարոզչական նյութերում խռովարարների շահերն արտացոլելու նպատակով (այդ թվում՝ նրանց դասակարգային շահերին հնարավոր ապավինման համար):

5. Սաիդ Զագրանի բանդկազմավորումների դեմ անցյալում ձեռնարկված ռազմական, քաղաքական, ագիտացիոն-քարոզչական բնույթի միջոցների բնութագրումը (թռուցիկների, ռադիոհաղորդումների ծրագրերի, բանակցությունների արձանագրությունների տեքստեր, հատուցման գործողություններ՝ ի պատասխան բանդիտների հանցագործությունների, հնարավոր սխալ գործողություններ՝ ի խախտումն օրինականության, պայմանավորվածությունների, սովորույթների և այլն):

6. Սաիդ Զագրանի և խռովարար այլ կազմակերպությունների, խմբերի միջև հակասությունների վերլուծություն (նպատակահարմար է հատուկ ուշադրություն դարձնել քաղաքական, կրոնական, ազգային և միջցեղային տարածայնություններին, ինչպես նաև վիրավորանքներին, փոխադարձ հավակնություններին, հակահեղափոխական կազմակերպությունների և բանդկազմավորումների ղեկավարների միջև չլուծված վրեժին):

Ծանոթություն 6-րդ կետի վերաբերյալ: Նպատակահարմար է համակարգել միմյանց դեմ բանդկազմավորումների կատարած հանցագործությունների փաստերը:

Բաժին Բ. Որոշ առաջարկություններ բանդկազմավորումներին ժողովրդական իշխանության հետ համագործակցության միտելու գործընթացի կազմակերպական, քաղաքական, ագիտացիոն-քարոզչական և ռազմական ապահովման վերաբերյալ

1. ԱԺՀ զինված ուժերի, ինչպես նաև խորհրդային 40-րդ բանակի խորհրդատվական ապարատի համապատասխան ծառայությունների լիազոր ներկայացուցիչներից հատուկ խմբի ստեղծում՝ տվյալ հարցի շուրջ փոխգործակցության ծրագրի մշակման համար (նախանշել միջոցառումներ ըստ կոնկրետ տարածքների՝ ժամկետներով և կատարողներով):

Ծանոթություն 1-ին կետի վերաբերյալ: Փոխգործակցության սխեմայի մշակումից հետո նպատակահարմար է աֆղանական կողմից գործի դնել նախապատրաստված և ստուգված մասնագետների (ըստ հնարավորին՝ հազարացիների կամ շիական համայնքի և նրանց բանդակազմավորումների վերահսկողության ներքո գտնվող տարածքներում ծնված անձանց):

2. Երաշխավորական նամակի տեքստի մշակում (ժողովրդական իշխանության կողմն անցնելու անհրաժեշտության փաստարկում, անցման պայմանների ձևակերպում...):

Հարկ է հաշվի առնել Ա բաժնի կետերի (1-6) վերաբերյալ մշակված փաստարկները, ընդ որում, նպատակահարմար է, հենվելով «Ներման մասին հրամանագրի» վրա, ավելի շեշտել պետական իշխանության դիրքորոշման հետ հազարական բնակչության, շիական համայնքի որոշակի շահերի համընկնումը, բանդակազմավորումների զինված պայքարի անհեռանկարայնությունը:

ժողովրդական իշխանության կողմն անցնելու պայմանները ձևակերպելիս հարկ է նախատեսել նաև ռազմական, քաղաքական, սոցիալական, տնտեսական (այդ թվում՝ ֆինանսական) պահեստային պայմանները:

Ծանոթություն 2-րդ կետի վերաբերյալ: Նպատակահարմար է ժողովրդական իշխանության կողմն անցնելու պայմանների ձևակերպումից առաջ տալ հակառակորդի կողմից առաջադրվող պայմանների վերլուծությունը (վստահելի աղբյուր-միջնորդների տեղեկատվության հիման վրա):

3. Բանակցություններ ու այլ շփումներ վարող խմբերի համալրումը կատարել գերազանցապես ի հաշիվ հեղինակավոր հազարացիների՝ ժողովրդական իշխանության, ԱժՀ ԶՈՒԻ-ի և այլ գերատեսչությունների լիազոր ներկայացուցիչների: Ուշադրություն դարձնել բանակցող կողմերի աստիճանակարգերի և լիազորությունների իրավահավասարության (համապատասխանության) վրա, ինչպես նաև պայմանավորվածությունների պահպանման հանդիպակաց երաշխիքներին: Միջնորդների կազմի համապատասխան ընտրություն (հեղինակություն, վստահություն և այլն):

Ծանոթություն 3-րդ կետի վերաբերյալ: Նպատակահարմար է երաշխիքային նամակի բանավոր մեկնաբանությունների բովանդակության և բանակցությունների վարման ընթացակարգի վերաբերյալ հրահանգավորումը, ինչպես նաև այդ բանակցությունների ընթացքի հնարավոր տարբերակների «խաղարկումը»: Կոնկրետ բանակցությունների ընթացքի անվտանգության ապահովման նպատակով կարելի է երաշխիքային նամակներ ուղարկել նաև այլ բանդակազմավորումների (Սադի Զագրանի կողմից վերահսկվող տարածքին հարող գոտիներում):

4. Կուսակցական և պետական տեղական մարմինների (դրանց ղեկավարների) կազմի համապատասխանեցում գերազանցապես հազարացիներով բնակեցված տարածքների ազգային կազմին: Նպատակահարմար է հատուկ ուշադրություն դարձնել Զագրանի ազդեցության գոտում կազմ-միջուկների ազգային կազմի վրա:

5. Իսլամի (շիական համայնքի) ոլորտում կոնկրետ (ցուցադրական) գործողությունների մշակում.

ա) շիական առավել հարգի մզկիթների և սրբավայրերի նորոգում, վերակառուցում, շինարարություն, բարեկարգում,

բ) ԱժՀ բարձրագույն կրոնական մարմիններում, ԱԱՃ-ում*, Քաբուլի համալսարանի աստվածաբանական ֆակուլտետի դասախոսների և ուսանողների շրջանում շիական համայնքի ներկայացուցչության համապատասխանեցում հավատացյալ հազարական բնակչության տեսակարար կշռին,

գ) ժողովրդական իշխանությունը պաշտպանող շիական հեղինակությունների դիմում հավատացյալների հոտին (հնարավոր է նաև կոնկրետ դիմում Սադի Զագրանին և Բեհեշթիին)՝ զինված պայքարը դադարեցնելու կոչով:

6. Վերահսկել հազարական բնակչությամբ տարածքներում պլանավորված նյութական և բժշկական օգնությունը (հատկապես՝ Սադի Զագրանի ազդեցության գոտում): Հարկ եղած դեպքում նախատեսել լրացուցիչ օգնություն (քարոզչական ապահովմամբ):

Ծանոթություն 6-րդ կետի վերաբերյալ: Հաշվի առնելով, որ խռովարարների կողմից հնարավոր է ցուցաբերված օգնության օգտագործումը պատերազմող բանդակազմավորումների նյութական օժանդակության, հանդերձավորման համար, ինչպես նաև հուզական ազդեցություն գործելու նպատակով իմաստ ունի օգնություն ցույց տալ հիմնականում դեղորայքով, ինչպես նաև երեխաների, կանանց և ծերերի համար հագուստով և կոշիկներով:

Բացառիկ դեպքերում կարելի է ցույց տալ ավելի լայն նյութական օգնություն, ներառյալ՝ ֆինանսական օգնությունը, ինչպես նաև հրազենի որոշ տեսակներ (համապատասխան ղեկավար մարմինների հատուկ որոշմամբ):

7. Անհրաժեշտության դեպքում նախատեսել նշանավոր հազարացիների (ընկ. Քեշթմանդի և այլոց) մեկնումը Ղազնի կամ Հազարաջաթի որևէ այլ

* ԱԱՃ՝ ազգային-ազատագրական ճակատ:

բնակավայր (ընկ. Քարմալի՝ Մազարի-Շարիֆ կատարած այցի սխեմայով): Նպատակահարմար է այցերը կապել համակուսակցական կամ պետական միջոցառումների հետ (ԱԺԴԿ* Կենտկոմ և ԱԺՀ կառավարության որոշումների կատարում, ժողովրդատնտեսական օբյեկտների այցելություն և այլն):

8. Ժողովրդական իշխանության կողմից ռազմական օգնություն ցուցաբերելու պատրաստակամության ցուցադրման ուղղությամբ միջոցառումներ: Նման ցուցադրական գործողությունները կարելի է իրականացնել Սաիդ Զագրանին՝ ընդդեմ կոնկրետ մրցակից բանդկազմավորման ծառայություն մատուցելու ծևով (նրա խնդրանքի առկայության դեպքում):

Ծանոթություն 8-րդ կետի վերաբերյալ: Նման գործողությունները կարող են նպաստել բանակցությունների ժամանակ ժողովրդական իշխանության ներկայացուցիչների դիրքերի ամրապնդմանը: Միևնույն ժամանակ պետք է միջոցառումներ ծեռնարկել բանակցող մյուս կողմի դեմ չհամաձայնեցված ռազմական գործողությունները (բանակի, ցարանդոյի և ԽԱԴ-ի) բացառելու ուղղությամբ:

9. Հազարացիների ջիրգաների հետ (կամ տոհմացեղային հեղինակությունների համանման «խորհուրդների» հետ՝ օգտագործելով եղած դրական փորձը, օրինակ՝ Գարդեզ և այլն) աշխատանքի գծով միջոցառումների մշակում: Այդ աշխատանքը նպատակահարմար է անցկացնել ԱԱԾ-ի կամ ցեղերի ու ազգությունների գործերով նախարարության հովանու ներքո:

10. Հազարական բնակչության շիական համայնքի նկատմամբ ժողովրդական իշխանության դրական քայլերը լուսաբանող թռուցիկների, պլակատների, լուսանկարչական ցուցահանդեսների նախապատրաստում, հրատարակում և համապատասխան միջոցներով տարածում (օգտագործել Ա բաժնի 1-3 կետերի, ինչպես նաև Բ բաժնի 4, 5, 6, 9 կետերի փաստարկները): Հատուկ ուշադրություն դարձնել «Ներման մասին հրամանագրի» քարոզմանը՝ գուներ և մատչելի ծևավորված թռուցիկների հրապարակման միջոցով:

Ծանոթություն 10-րդ կետի վերաբերյալ: Հաշվի առնելով հավատացյալ հազարացիների որոշակի մասի կրթական ցածր մակարդակը և կրոնական մոլեռանդությունը, ինչպես նաև ռադիոհաղորդումների միջոցով իրանական գործուն ազդեցությունը հազարական բնակչության վրա, օգտագործելով տպագրության առումով գրավիչ թռուցիկներ, պլակատներ՝ նպատակահարմար է տպագիր արտադրանքի բովանդակության մեջ հմտորեն օգտագործել շիական դավանանքի յուրահատկությունը՝ նախապատվությունը տալով իրանական համաբնույթ նյութերի կրոնական ծևավորում ունեցող պատկերներին:

* ԱԺԴԿ՝ Աֆղանստանի ժողովրդադեմոկրատական կուսակցություն:

Մեծ ուշադրություն է պահանջում թշնամական քարոզչության արտադրանքի հետ ծևավորմամբ գոնե մրցակցող հակաքարոզչական հրատարակությունների գրավչության նյութատեխնիկական ապահովման հիմնախնդրի լուծումը:

11. Կենտրոնական և տեղական ռադիոհաղորդումների ծրագրերի մշակում (Բ-րդ բաժնի 10-րդ կետում նշված նյութերի բովանդակության հաշվառումով):

Նախատեսել հայտնի հազարացիների ելույթներ հեռուստատեսությամբ և ռադիոյով, ծայնա- և տեսահոլովակների առաքում տեղեր՝ նպատակ ունենալով դրանք օգտագործելու ավտոնոմ էներգակիրներով սնվող տեղական ռադիոտեսալսնդունիչներով և բարձրախոս սարքերով հաղորդելու, ինչպես նաև Սաիդ Զագրանի ազդեցության գոտու ազգաբնակչության և այնտեղ եղած բանդկազմավորումների անձնակազմերի շրջանում հատուկ կապուղիներով տարածելու նպատակով:

12. Կազմակերպել ԱԺԴԿ, ժողովրդական իշխանության, բանակի, ցարանդոյի, տնտեսության, մշակույթի, գիտության և կրթության համակարգերում հազարական ծագում ունեցող հայտնի ներկայացուցիչների ելույթները կենտրոնական մամուլի օրգաններում (դրանք պարտադիր կերպով արտատպելով տեղական թերթերում):

13. Կինո- (հեռուստա-) հոլովակների պատրաստում հազարական բնակչության, շիական համայնքի նկատմամբ ժողովրդական իշխանության դրական քայլերի մասին (օգտագործել Ա բաժնի 1-3, ինչպես նաև Բ բաժնի 4, 5, 6, 7 և 9 կետերում շարադրված փաստարկները):

Հեռուստատեսությամբ, կինոթատրոններում, շարժական կինոսարքերի միջոցով կինոհոլովակների ցուցադրման կազմակերպում (հատկապես հիմնականում հազարացիներով բնակեցված վայրերում):

14. Հազարացիների հիմնական բնակության տարածքում (հատկապես Սաիդ Զագրանի ազդեցության գոտում) հետաքրքրող ժամանակահատվածում ԱԺՀ Զինված ուժերի, խորհրդային զորքերի մարտական հակաքարոզչական ջոկատների օպտիմալ տեղաբաշխում:

Ապահովել այդ ջոկատների համալրվածությունը կադրերով, հատկապես՝ քարոզչական և բժշկական, համապատասխան ագիտացիոն-քարոզչական նյութով (հայտնի հազարացիների ելույթների մագնիտոֆոնային ծայնագրություններ, կինոնկարներ՝ Բ բաժնի 13-րդ կետով, ինչպես նաև «Ներման մասին հրամանագիրը», «Դիմում ցեղերին դարի լեզվով» և այլ տեքստեր՝ Բ բաժնի 10-րդ կետով), զգեստով և կոշիկով՝ երեխաների, կանանց և ծերերի միջև բաշխելու համար, դեղորայքով և մթերքով:

Նպատակահարմար է, որ ջոկատի մեջ մտնի սանիտարաբժշկական բրիգադ, ինչպես նաև համերգային խումբ՝ զերազանցապես հազարական համերգացանկով:

Ընդհանուր կարգի ծանոթագրություններ

ա) Նպատակահարմար է ստեղծել միջոցառումների պատրաստումն ու իրականացումը վերահսկող խումբ (տեղերում ստուգումներով),

բ) ունկնդիրների վրա հուզական ազդեցության ուժեղացման նպատակով ցանկալի է 10, 11, 12, 13, 14 կետերը կենսագործելիս այլ նյութերի հետ տալ նաև խոռվարարների զինված պայքարի դադարեցմանն ուղղված նյութեր, որոնք հնչեն «երկու մայրերի», «երկու քույրերի», «երկու հայրերի» (ժողովրդական իշխանության և հակահեղափոխության շահերի համար զոհվածների հարազատների) և այլոց շուրթերից,

գ) լսարանի հոգեբանական հակվածության ամրապնդման համար նպատակահարմար է հաղորդումներում և տպագիր տեքստերում հաշվի առնել դարի-հազարի լեզվի յուրահատկությունները:

* * *

Կարծում ենք, որ սույն հոդվածում շարադրված դատողությունները և գործնական միջոցառումները կհետաքրքրեն Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղղությամբ աշխատող մասնագետներին: Անտարակույս, ուղղակի ընդօրինակումը անհնարին է, սակայն կարծում ենք, որ նշված մեթոդիկան որոշ վերապահումներով կիրառելի է Ղարաբաղյան հակամարտության դեպքում հակառակորդի ազգաքաղաքական, ազգակրոնական և սոցիոմշակութային առանձնահատկությունների հաշվառմամբ (ինչպես այն ընդհանուր առմամբ ներկայումս կիրառվում է Չեչնիայում):

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

[1] «Աֆղան ժողովրդի դեմ չհայտարարված պատերազմի» մոդելում մարմնավորված հայեցակարգի քաղաքական-գաղափարախոսական ուղղվածությունը տարիներ շարունակ բացառում էր ընդդիմության ներկայացուցիչների իրավահավասար մասնակցությունը միջազգային բանակցություններում և պայմանագրերում: Աֆղանական ընդդիմության նման արհեստական չեզոքացումը բացառում էր այդ պայմանագրերի պահպանման պարտավորության ընդունումը նրա կողմից, քանի որ ընդդիմությունը չէր մասնակցում այդ պայմանագրերի կնքմանը: Փաստորեն այդպիսի մոտեցումը անուղղակիորեն խթանում էր պատերազմի շարունակումը:

[2] Այն մասնագետները, որոնք 1982–1983 թթ. աշխատել են ԱԺՀ-ում, ի հակադրություն աֆղանական պաշտոնական քարոզչության գնահատականների, գիտեն, որ անգամ ցերեկային ժամերին Աֆղանստանի տարածքի շուրջ 80 %-ը վերահսկվում էր զինված ընդդիմության կողմից:

[3] Տես *Г. С. Котанджян.* Краткая характеристика некоторых исламских контрреволюционных организаций и основных направлений их подрывной пропаганды. Кабул, август 1982 г., –13 с., *մույլի*՝ Մոջահեդի բարոյահոգեբանական կողմնորոշումների հարցի շուրջ: «ՀՔ», 1996, հմ. 1:

[4] Տես *Себгатулла Моджадади.* Цели национального спасения Афганистана.– Б. м., б. г.; «Коротко о жизни одного моджахеда: Биография С. Моджадади».– Изд. НФС Афганистан.– Б. г.; *Бурхануддин Раббани.* Мухаммад–первый воспитатель и учитель человечества.– Б. м., б. г.; *его же:* Обращение к народу Афганистана.– Б. м., б. г. (пер. с дари); *Гульбеддин Хекматияр.* Требования веры и ее защиты (текст выступления 28.08.1360 г. Хиджры в лагере № 2 ИПА).

Վկայակոչման մեջ ճ. մ. և ճ. գ. տառերը նշանակում են, համապատասխանաբար, «առանց հրատարակության տեղի նշման» և «առանց հրատարակության տարեթվի նշման»: Աֆղանստանում ջիհադի յուրահատկության հետ կապված՝ զինված ընդդիմության շատ հրատարակություններում գաղտնապահության նկատառումով չեն նշված լույսընծայման տեղը, երբեմն և ժամանակը:

[5] Տվյալ միտումը երևան եկավ 1982 թ. ԽՍՀՄ-ում ղեկավարության փոխվելուց հետո:

[6] Տես *Г. С. Котанджян.* Контрреволюционные партии и организации, ведущие борьбу против народной власти ДРА, и их идейно-политические платформы. Кабул, март 1983, сс. 14–17:

[7] ԱԺՀ-ում ԽՍՀՄ դեսպանության տարածքում ամսական երկու անգամ անցկացվող այդ խորհրդակցության համադասողը 1982–1983 թթ. եղել է սույն հոդվածի հեղինակը:

[8] Սցենարը տպագրվում է ըստ *Г. С. Котанджян.* Этнополитология консенсуса–конфликта. Цивилизационный аспект национальной безопасности. Монография. М., «Луч». 1992, сс. 171–177. Այստեղ պահպանված է «Աֆղանստանում չհայտարարված պատերազմի» շրջանի քաղաքական բառապաշարի առանձնահատկությունը: Տես նաև *մույլի,* Схема ориентирования мероприятий по организационному, политическому, агитационно-пропагандистскому и военному обеспечению перехода вооруженных отрядов хазарейского населения на сторону народной власти (на примере предложений по склонению к сотрудничеству бандформирований Саида Джаграна). Кабул, 1982 г.

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԶԳԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՖՂԱՆՍՏԱՆԻ ՕՐԻՆԱԿՈՎ*

Ներկայացվող հոդվածում հեղինակը ընթերցողին հաղորդակից է դարձնում Աֆղանստանում ժամանակին գործած վերլուծաբանների և բանակցողների խմբերից մեկի աշխատանքային փորձին, որը վերաբերում է ջիհադի ձևով մղվող պատերազմի ընթացքի կառավարման և տեղային զինված բախումների սառեցման՝ ավանդական ռազմական քաղաքականության համար նոր աղբյուրների որոնմանը:

Աֆղանստանում զինված բախման օրինակով ուրվագծվում են ջիհադի՝ սրբազան պատերազմի, ներքին բազմազանության վերլուծության հիմնական չափումները: Քննվում են ինչպես այդ պատերազմի կառուցվածքի բազմամակարդակայնությունը (ջիհադ, ջանգ, արյան վրեժ), այնպես էլ տոհմացեղային և միջցեղային միությունների (քադմերի) սահմաններում նրա ազգատարածքային հատվածավորման դինամիկան:

Տվյալ հիմնախնդիրները քննվում են ջիհադի՝ Աֆղանստանում կատարված ռազմաքաղաքական արդիականացման համատեքստում: Հեղինակը զինված հակամարտությունների կարգավորման մեջ ներգրավված գործընկերների ուշադրությունն է հրավիրում այն բանի վրա, որ խաղաղարար բանակցությունների նրբերանգված մշակման և զինադադարի տեղային գոտիների հաստատման ու ընդարձակման միջոցառումների իրականացման գործընթացում մեծ կարևորություն ունի տարածաշրջանային պատերազմների կոնկրետ մասնակիցների ազգաքաղաքական յուրահատկության հաշվառումը[1]:

* * *

Ջիհադի մեկնաբանության պատմական հիմքը իսլամի սրբազան հավատի գոյության և դրսևորման դեմ ուղղված սպառնալիքին դիմագրավելու սկզբունքն է, որը ձևավորվել է իրենց գոյապահպանման և հաստատման համար առաջին մահմեդական համայնքների (ումմաների) մղած պայքարի առասպելական ժամանակներում:

Ջիհադի արևմտյան մեկնակերպը, որն ընդունված է որպես դասական սահմանում, Ռ. Փետերսը ձևակերպում է որպես «առավելագույն ջանքերի գործադրում... «անհավատների» դեմ պատերազմ մղելիս՝ նրանց

* «Հայկական բանակ», 1995, հմ. 4:

ռազմական հարվածներ հասցնելու, նրանց ունեցվածքն առգրավելու, նրանց սրբավայրերն ավերելու, նրանց իդեալները պսակազերծելու միջոցով»[2]:

Ումմայի առավելագույն մոբիլիզացման կոչի ռազմաքաղաքական բացատրության էությունն այն է, որ անհրաժեշտ է գրավել «պատերազմի տունը»[3], որից ծագում է ալլահի թշնամիների կողմից սպառնալիքը, այդ սպառնալիքն արմատախիլ անելու և «պատերազմի տունը» «իսլամի տան» կազմի մեջ մտցնելու նպատակով: Այսպիսով, մահմեդական պետությունները սրբազան պատերազմի պատճառական պայմանավորվածության ակունքներում դնում են իսլամի՝ որպես աստվածատուր գաղափարախոսության, և ումմայի՝ որպես այն կրողի ու պաշտպանողի դեմ ագրեսիային հակազդելու «հարկադրական անհրաժեշտությունը»: Ջիհադի պատմաքաղաքագիտական հիմնավորման տվյալ հարմարամշակումը՝ որպես «ումմայի անհրաժեշտ ինքնապաշտպանության», ժամանակակից մահմեդական քաղաքագետներին հնարավորություն է տալիս ջիհադը դիտելու ագրեսիայի բնորոշման միջազգային-իրավական չափանիշների, համապատասխան քաղաքական և ռազմական դոկտրինների, ինչպես նաև ագրեսիայի հետմղման կազմակերպման գործնական մեխանիզմների մշակման համակարգում[4]:

Միջազգային հարաբերությունների վերաբերյալ ժամանակակից մահմեդական հայեցակարգը ջիհադի նպատակադրումը հիմնում է իսլամական համայնքի դեմ ագրեսիային դիմագրավելու վրա՝ անհրաժեշտ համարելով վերականգնել արդարությունը, որի խախտումը վնաս է հասցրել մահմեդականներին, ապահովել մահմեդական պաշտամունքի ազատ դրսևորումը, հաստատել խաղաղություն և անվտանգություն:

Ժամանակակից ջիհադի բովանդակության և ձևերի հետազոտողներ Ն. Ժդանովը և Ա. Իգնատենկոն տարբերակում են ջիհադի մի քանի տեսակ՝ ջիհադ ալլահի թշնամիների դեմ, իսլամական պետության սահմանների անձեռնմխելիության նկատմամբ ոտնձգություն կատարողների դեմ, հավատուրացների, ճնշողների և բռնակալների դեմ, «հարկ վճարելուց հրաժարվող ավազակների դեմ»[5]: Այստեղից բխում է, որ ջիհադ կարող է հայտարարվել ոչ միայն մահմեդական պետությունից դուրս, այլև նրա ներսում: Ջիհադի օբյեկտ կարող են լինել պետություններ, հանրություններ և խմբավորումներ, կազմակերպություններ և առանձին ֆիզիկական անձինք: Բերված դասակարգումից կարելի է եզրակացնել, որ բացառված չէ ջիհադ մղելը ոչ միայն ոչ մահմեդական, այլև մահմեդական պետության դեմ, եթե նրա դիրքորոշումը բնորոշվում է որպես «ոչ

աստվածահաճո» (օրինակ՝ Իրաքի դեմ Իրանի վերջին պատերազմը): Չի բացառվում նաև ջիհադի մեթոդներով պայքարն առանձին իշխող կամ ոչ կառավարական կազմակերպությունների և անձանց դեմ ինչպես միևնույն մահմեդական պետության մեջ (օրինակ՝ «Հեզբոլլահ»-«Ամալ» Լիբանանում, Աֆղանստանի ժողովրդադեմոկրատական կուսակցություն-Աֆղանստանի իսլամական կուսակցություն, Աֆղանստանի իսլամական ընկերություն Աֆղանստանում և այլն), այնպես էլ այլ երկրների տարածքում, որոնք պատերազմի մեջ չեն այն մահմեդական երկրի հետ, որտեղ գտնվում է ջիհադի սուբյեկտը (պաղեստինյան կազմակերպությունների ահաբեկչությունը իսրայելյան գործիչների դեմ աշխարհի տարբեր երկրների տարածքում):

Ջիհադի սուբյեկտ կարող են լինել առանձին մահմեդական պետություններ, առանձին կառավարական և ոչ կառավարական կազմակերպություններ, ինչպես և խմբավորումներ:

Ջիհադը կարող է հայտարարվել միայն հեղինակավոր մահմեդական գործիչի կողմից՝ ումմայի առաջ համապատասխան փաստարկված հիմնավորումով (Ղուրանի հիման վրա):

Աֆղանստանում պատերազմի յուրահատկությունը, իհարկե, շատ ավելի «հին արմատներ» ունի, քան ԱԺԴԿ-ի վարչակազմի դեմ ընդդիմության ներքին քաղաքացիական զինված հակամարտությունը, որը միջազգայնացվեց ԱԴՀ-ի տարածքը խորհրդային զորքեր մտցվելու հետևանքով:

1979 թ. խորհրդային զորքերի քանակակազմը Աֆղանստան մտցվելուց հետո սկսեցին գործել միջինարևելյան տարածաշրջանում խախտված ռազմական և քաղաքական իրավիճակի հավասարակշռման մեխանիզմները: ԱՄՆ-ը և նրան բարեկամ պետությունները, ինչպես և մի շարք մահմեդական պետություններ սկսեցին աֆղանական ընդդիմությանն օգնել իրականացված ագրեսիայի դեմ նրա ռազմական և ռազմաքաղաքական դիմակայման գործում: Դրա հետ մեկտեղ գերտերությունների կողմից գլխավորվող բլոկների՝ որպես ուժի կենտրոնների, երկբևեռ համակարգի առանձնահատկությունները, տարածաշրջանային բախման ընդհանրականացման և միջուկային պատերազմի սանձազերծման սպառնալիքի կապակցությամբ, բացառեցին բախման մեջ ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների ուղղակի ներգրավումը աֆղանական զինված ընդդիմության կողմում:

Մահմեդական աշխարհի այլ երկրների և կազմակերպությունների, ինչպես նաև Արևմուտքի երկրների ոչ կառավարական կազմակերպություն-

ների միջոցով ԱՄՆ-ի միջնորդավորված մասնակցությունը խորհրդային կողմը բնորոշեց որպես «չհայտարարված պատերազմ Աֆղանստանի շուրջ»: Այսպիսով, և՛ ԱՄՆ-ում, և՛ ԽՍՀՄ-ում քարոզչական կամպանիաներն ուղղված էին իրադարձությունների լուսաբանմանը որպես դիմակայող գերտերության ուղղակի կամ միջնորդավորված ագրեսիայի հետևանքով ծագած տարածաշրջանային միջազգային հակամարտություն:

Մեր առջև նպատակ չդնելով հատուկ ուսումնասիրության ենթարկելու տվյալ միջազգային-իրավական, քաղաքական և ռազմական հիմնախնդիրը՝ նշենք, որ այս դեպքում վրադրվել և հակասությունների բարդ հանգույցի մեջ միահյուսվել են տարամակարդակ միջքաղաքակրթային շփման հակամարտ ներուժերը[6]: Բազմամակարդակ քաղաքակրթային վերլուծության մեթոդաբանությունը, որն այլ աշխատություններում առաջարկել է հեղինակը, թույլ է տալիս աֆղանական հակամարտության օրինակով բացահայտել միջքաղաքակրթային հակամարտային մոդելների բոլոր հիմնական մակարդակային տարբերակների առկայությունը:

Ավելի վաղ մշակված վերլուծական սխեմայի «վրադրումը» դիտարկվող նյութի վրա ցույց է տալիս, որ առկա են՝

– ընդհանրական միջքաղաքակրթային շփում՝ որպես միջնորդավորված հակամարտություն երկու՝ արևմտյան և կոմունիստական «գաղափարախոսական քաղաքակրթությունների» միջև,

– տարածքային քաղաքակրթային հակամարտություն այն պետությունների խմբերի միջև, որոնք ներկայացնում են մահմեդական քաղաքակրթային շրջանը և աթեիստական կոմունիստական տարածքը. միջքաղաքակրթային հակամարտության տվյալ չափումը ներառում է նաև քրիստոնեական (ռուսները և Ռուսաստանի մյուս քրիստոնյաները ավանդական-պատմական ըմբռնմամբ) և իսլամական քաղաքակրթային տարածքների միջև բախման փոխակերպված ձևը,

– ազգային-քաղաքակրթային բախում զինված աֆղանական ընդդիմության և ԱԺԴԿ-ի «անհավատ» վարչակարգի միջև. այստեղ հակամարտության կառուցվածքի մեջ ներկայացված է մահմեդական պետությունների մասնակցությունը աֆղանական իսլամական ընդդիմության կողմում,

– ներքաղաքակրթային հակամարտություն ազգամիջյան մակարդակում՝ Աֆղանստանի ցեղերի միջև,

– արյան վրեժի ներազգային բախում աֆղանական «վենդետայի» կողմերը ներկայացնող կլանների, տոհմերի և ընտանիքների միջև. այն

կարգավորվում է ադաթների (սովորութային իրավունքի նորմեր) համակարգով:

Այսպիսով, Աֆղանստանում պատերազմի համակարգը կարող է ներկայացվել հինգ մակարդակների քաղաքական-գաղափարախոսական, ռազմաքաղաքական և բուն ռազմական հակամարտությունների բարդ փոխազդեցության մեջ:

Միջցեղային զինված հակամարտությունների և միջկլանային արյան վրեժի ձևով պատերազմը (ջանգ) Աֆղանստանում առկա է անընդմեջ և ազգային-քաղաքակրթային նույնականության յուրահատուկ հատկանիշ է: Տվյալ մակարդակի պատերազմները սակավ շարժուն են և ծավալվում են որոշակի տարածքում, որը որոշվում է ցեղային կամ կլանային նույնականության սահմաններով: Այստեղ ռազմական բախումը կարգավորվում է ոչ միայն և ոչ այնքան շարիաթով, որքան ադաթների սովորութաիրավական մեխանիզմներով: Օրինակ՝ փուշթուն ցեղերի տարածքում միջցեղային պատերազմի կարգաբերումն իրագործվում է գերազանցապես «Փաշթունվալայ» ադաթների համակարգով (փուշթունի պատվի օրինակարգով): Այս մակարդակում պատերազմն ամենից առաջ իշխանության ուժի, զինվորական կազմակերպվածության, մարդկային, տարածքային և ֆինանսական ռեսուրսների ցուցադրում է: Ադաթների մանրակրկիտ մշակված կանոնակարգերին և համաշարհաթային նորմերին համապատասխան՝ միջցեղային և կլանային պատերազմը դադարում է՝ անընդհատ ուղեկցվելով բանակցությունների գործընթացներով:

Դրա հետ կապված՝ այս մակարդակների պատերազմների յուրօրինակությունն է ներքաղաքակրթային շփման փոխըմբռնումային-հակամարտային սցենարների մեծ շարժունությունը: Ռազմական գործողությունների և բանակցությունների նպատակը մեծ մասամբ ուժի և հեղինակության ցուցադրումն է: Սովորաբար այդպիսի պատերազմներում հակառակորդի զանգվածային ոչնչացում տեղի չի ունենում. աֆղաններն իրենք ասում են, որ իրենք «սպանում են որոշակի մարդկանց, որոնց պետք է սպանել»: Տվյալ սկզբունքը հատուկ բծախնդրությամբ պահպանվում է արյան վրեժի հարցում:

Տվյալ պատերազմների կարգաբերման մեջ հատուկ տեղ է գրավում ռազմական գործողությունները «արյան գնի» («ղեյմաթ-ե խուն») պայմանավորված վճարումներով փոխարինելու մեխանիզմը: Ցեղերի և կլանների միջև խաղաղության յուրահատկությունն է նաև այն, որ տղամարդիկ միշտ սառը զենք ու հրազեն են կրում և փոխհարաբերությունները՝ շնորհիվ «պատասխանը վերադարձնելու» պարտականության անկախության հետևանքով հոգեբանական լարվածությամբ ներծծված «թշնամանքի» և «հյուրընկալության» օրինակարգերի, կրկնօրինակվում են հավասար իրավունքների ինչպես անհատական, այնպես էլ կոլեկտիվ սուբյեկտների ու օբյեկտների միջոցով:

Պատերազմը՝ մեր դասակարգման մեջ որպես ջիհադ, ներկայացված է Աֆղանստանում հակամարտությունների տարածքային քաղաքակրթային և ազգային մակարդակներով: Ջիհադի ընդհանուր հատկորոշումները լրացնելով նրա կարգաբերման կոնկրետ քաղաքագիտությամբ՝ պետք է նշել տվյալ քաղաքակրթային մակարդակի նորմատիվ և արժեքային բազայի արմատական տարբերությունը ցեղային և կլանային նույնականության բովանդակությունից և մակարդակից: Սրբազան պատերազմն իր բովանդակությամբ վեր է կանգնում ցեղային մակարդակի տեղային արժեքային կողմնորոշումներից և իսլամի մաքրության պահպանման կոչի գերիշխման հետևանքով աչքի է ընկնում կրոնագաղափարախոսական ուղղադավանությամբ, իսկ որոշ դեպքերում՝ կրոնական անհանդուրժողության, անգամ մոլեռանդության դրսևորումներով:

Հարկ է նշել ջիհադի կաղապարման նկատմամբ եղած ավանդական մոտեցման որոշակի սահմանափակությունը. ըստ այդ մոտեցման՝ դա պատերազմ է, որ մղվում է բացառապես ումմայի և մելլաթի մակարդակում: Պատերազմի էթնիկական-ցեղային տեսանկյան այդօրինակ անտեսումն աղքատացնում էր ջիհադի քաղաքակրթային բազմազանության ըմբռնումը և վերջին հաշվով նվազեցնում էր պատերազմի և խաղաղարարության ընթացքի կառավարման արդյունավետությունը:

Աֆղանստանում պատերազմի արմատական փոխակերպումը միջցեղային և միջկլանային բախումների հարթությունից ջիհադի դրսևորվում էր տեղային պատերազմների որոշակի չափով մարման և ցեղերի միջև ժամանակավոր խաղաղության հաստատման ձևով:

Միջցեղային և միջկլանային մակարդակից ջիհադին անցման ժամանակ պատերազմի բովանդակության և մասշտաբների փոփոխությունը կարելի է նկատել սրբազան պատերազմի մասնակիցների կազմի, նրա բուն գործընթացին ուղեկցող հասկացությունների և տերմինների փոփոխության մեջ: Ջիհադը գործնականում գերակա էր ջանգի նկատմամբ, և դա իր արտացոլումն էր գտնում նաև առօրյա խոսքում:

Ի տարբերություն ջանգը իրականացնողներից՝ զինվորի (փուշթունի, տաջիկի, խազարացու կամ դուռանի, գիլզայ ցեղերի անդամների և այլն) փոխարեն ջիհադի սուբյեկտ դարձավ «մոջահեդը»՝ հավատի համար

մարտնչողը, որը «քաֆիրի» (անհավատի) դեմ կռվում է հանուն իսլամի մաքրության և հաղթանակի. պատերազմող ցեղախմբերի կողմից որպես միջցեղային պատերազմների թատերաբեմ զբաղեցվող տեղային տարածությունների (քաղաքների) փոխարեն սկսում է գործել «մելլաթը», այսինքն՝ մահմեդական ազգը և տարածքը, որը որոշվում է նվաճումների վերընթաց կամ կորուստների վարընթաց գծով: Որպես զոհեր հանդես են գալիս ոչ թե սպանվածները («քոշթե»), այլ հանուն հավատի սուրբ նահատակ դարձածները («շահիդ»):

Ինչպես վերն արդեն նշվել է, ջիհադի ընթացքում ներքաղաքակրթային և միջքաղաքակրթային հակամարտությունների կարգաբերման մեջ գերիշխող պլան մղվեց դասական մահմեդական իրավունքի նորմերի համակարգը՝ շարիաթի մեխանիզմներով: Սակայն մոջահեդի զինվորական վարքագծի դրսևորման մեջ շարունակում էր որոշակի տեղ գրավել սովորութաիրավական կարգավորումը՝ հիմնված զինվորի վարքի օրինակարգը որոշող համամահմեդական սովորութաիրավական նորմերի (Ադաբ) և փուշթունական ադաթների (Փաշթունվալայ) համակարգի ընդհանուր հասկացությունների վրա, ինչպիսիք են «նամուսը» (պատիվը), «խեյսյաթը» (համբավը), «մերանան» (արիությունը, խիզախությունը) և այլն:

Փաշթունվալայը ցուցումներ է տալիս մարտադաշտում որոշակի նորմերի կատարման վերաբերյալ: Ահա գլխավոր պահանջներից մի քանիսը՝ մեջքով դեպի թշնամին չշրջվել, սպանվածներին մարտադաշտում չթողնել, թույլ չտալ, որ նրանք ընկնեն թշնամիների ձեռքը և ենթարկվեն ծանակումների, անմիջապես առաջին օգնության ցույց տալ վիրավորներին և նրանց դուրս բերել կրակի տակից, ղեկավարներին՝ տեղում գնդակահարել ամեն մեկին, ով կփախչի մարտադաշտից, և այլն:

Որպես, մի կողմից՝ մահմեդական իրավունքի, մյուս կողմից՝ սովորույթների կարգաբերիչ համակարգերի բովանդակային փոխկապակցության և հարաբերական ինքնակայության ծանրակշիռ հաստատում կարող է բերվել հայտնի ֆրանսիացի իրավագետ Ռենե Դավիդի եզրակացությունը: Նրա կարծիքով՝ մահմեդական իրավունքը «սովորույթի նկատմամբ այնպիսի դիրքորոշում ունի, ինչպիսին է արևմտյան իրավունքի դիրքորոշումը հոժարական կամ հաշտ գործարքի վերաբերյալ վերապահման նկատմամբ... Իսլամը կարող էր տարածվել աշխարհում միայն այն պատճառով, որ հանդուրժողական դիրքորոշում էր պահպանում և չէր պահանջում զոհաբերել սովորույթով սրբագործված ապրելակերպը»[7]: Այսպիսով, ջիհադի՝ սրբազան պատերազմի իսլամական տեսա-

բանների աշխատությունների հիման վրա շարադրված մոդելը[8] անշուշտ արտացոլում է Աֆղանստանում ԽՍՀՄ-ի զինված ուժեր մտցվելուց հետո զինված բախման կրոնաքաղաքական տեսանկյունները: Սակայն տվյալ մոդելով որպես սրբազան պատերազմի թատերաբեմ են դիտվում սոսկ ումմայի և մելլաթի տեղաբաշխման սահմանները որպես միասնական տարածություն, որը կառուցարկված չէ ցեղերի կյանքի և նրանց միջև պատերազմի սովորութաիրավական տրամաբանության կանոնակարգումով: Քանի որ տվյալ մոդելը սահմանափակվում է միայն վերցեղային կրոնական պատերազմի սահմաններով, ուստի ուսումնասիրությունից դուրս է թողնվում ցեղերի՝ ադաթների համակարգով կարգավորվող ռազմական ազգաքաղաքականության և ազգահոգեբանության հարուստ աշխարհը: Դա հիմք է տալիս պնդելու, որ միջցեղային պատերազմից ջիհադի գործնականորեն լրիվ անջատվածության վերաբերյալ հայեցակարգը Աֆղանստանում պատերազմական հակամարտության՝ որպես ազգադավանական և ազգաքաղաքական երևույթի, իրական ամբողջականության բավական պարզեցված մոդել է:

Փորձենք պարզել, թե ինչ ազգաքաղաքագիտական հիմք ունի իսլամական կուսակցությունների ռազմաքաղաքականությունը վերահսկվող գոտիներում, որոնք ընդգրկում են ցեղերի՝ ավանդական ազգատարածքային ամրակցման և համախմբման սահմանները (քաղմերը):

Իսլամական կուսակցությունները ջիհադի կառավարման իրենց ռազմաքաղաքական կառույցներով՝ իսլամական կոմիտեներով, նախադրյալներ են ստեղծել աֆղանական ավանդական ռազմական դիմադրության էական բնութագծերից մեկի՝ նրա ռազմավարական անշարժունության, համախմբման կամ համերաշխության տարածքով սահմանափակվածության արմատական փոփոխության համար: Համերաշխության տարածքը՝ քաղմը, իր էությամբ ներկայացնում է ազգաժողովրդագրական և կոնվենցիոնալ-ֆեոդալական սահմանների ազգաքաղաքական գուգակցման հնամենի ակունքները:

Անընդմեջ միջցեղային և միջկլանային պատերազմի և թշնամական ու դաշնակցային կապերի փոխդասավորության՝ այդ գործընթացով պայմանավորված շարժունության առնչությամբ քաղմը իբրև երևույթ ներկայանում է որպես համերաշխության փոխկապակցված տարածքների՝ քաղմերի ցանցերի, դինամիկ համալիր: Այդպիսի տարածքներ են ձևավորում եղբայրությունները, էթնիկական խմբերը և նույնիսկ քաղաքական կուսակցությունները իրենց ճակատներով, որոնք ներկառուցված են ջիհադի մրցակցող սուբյեկտների ճակատների մեջ: Աֆղանստանի

տարածքի մեծ մասում, թեև ջիհադը իրականում մղվում էր ամբողջ ումմայի կողմից, այն իրագործում էին որոշակի ցեղերի և կլանների՝ իրենց քաղաքներում անշարժ տեղակայված մոջահեդները, ինչը կենդանի ուժի յուրահատուկ «ստատիկ ռազմական գործաշարժ» էր: Աֆղանստանի ողջ տարածքով ազատ գործաշարժ կատարող՝ կենտրոնական իշխանությունների կանոնավոր բանակին և խորհրդային բանակին դիմագրավելու՝ անցյալում առկա անհրաժեշտության պայմաններում սոսկ սեփական քաղաքի տարածքում այդօրինակ ստատիկ դիմադրությունը ռազմավարական առումով անշուշտ կորստաբեր էր: Այսպիսով՝ համընդգրկուն պատերազմին, որը մղում էին ԱԴՀ-ի կենտրոնական կառավարությունը և ժամանակին՝ խորհրդային բանակը, գործնականում հակադրվում էր ումմայի համընդհանուր սրբազան պատերազմը, որն իրագործվում էր տեղային ցեղային պատերազմի միջոցներով: Աֆղանստանում ձևավորված ավանդույթների համաձայն՝ նույնիսկ աղետալի փորձությունների և սպառնալիքների ժամանակ ցեղը կամ կլանը վատ են ընկալում ուրիշ ցեղի տարածքն անցնելու նպատակահարմարության վերաբերյալ խորհուրդները (հրամաններն այդպիսի դեպքերում անհնար են): Նման դեպքերում նախընտրելի է համարվում Պակիստանի կամ Իրանի տարածքներ տեղափոխվելը, քանի որ այդ տարածքները գնահատվում են որպես յուրահատուկ չեզոք գոտիներ:

Աֆղանստանում ռազմաքաղաքական իրադրության վերլուծությունը սոսկ ազգային մակարդակում կատարած քաղաքագետները հաշվի չէին առնում «համընդհանուր ջիհադի» իրական ազգաքաղաքական մեխանիզմները, որոնք այն վերածում էին խստիվ տեղայնացված և վատ փոխհամաձայնեցված ցեղային ջիհադների խճանկարի: Խորհրդային զորքերը ԱԴՀ մտցվելուն նախորդած և հաջորդած տարիներին պատերազմ վարելու ավանդույթների վատ իմացությունը իրադրության ռազմաքաղաքական քննությունը սահմանափակում էր աֆղանական ազգաքաղաքական բազմազանության մակերեսային վերլուծության մոդելներով և դրանց վրա հիմնված հանձնարարականներով: Ձուտ տեսական և մեթոդաբանական քաղաքագիտական վրիպումները գործնականում առաջ էին բերում քաղաքական, դիվանագիտական, ռազմական մեծ կորուստներ ԽՍՀՄ-ի կողմում, դառնում էին աֆղանական պատերազմի բոլոր մասնակիցների մեջ զոհերի չարդարացված մեծ քանակի պատճառներից մեկը:

Իսլամական կոմիտեներն իրենց աշխատանքներում ավելի ու ավելի մեծ ուշադրություն էին դարձնում դիմադրության առանձին անկլավային ուժերի միջև ռազմաքաղաքական փոխըմբռնման և մարտական համագործակցության ռեզերվների ու հնարավորությունների ձևավորմանը, սկզբում՝ գերազանցապես քադերի ուղղածիգ ցանցերով, որոնք, որպես կանոն, առնչակից էին կենտրոնաեզրամասային կուսակցական-ազգաքաղաքական կառավարման կառույցների ստորակարգությանը:

Ջիհադի ազգաքաղաքականության հիմնախնդիրների վերաբերյալ բոլոր նախորդ խորհրդածությունները կարելի է հանգեցնել հետևյալ քաղաքագիտական եզրակացությանը. ջիհադի ռազմաքաղաքական արդիականացումն Աֆղանստանում արդեն 1980-ական թվականների սկզբին կապված էր զինված ընդդիմության համար էական մի խնդրի հմաստավորման հետ, այն է՝ պատերազմի ազգաքաղաքականության փոփոխություն, ամենից առաջ՝ հրաժարում ջիհադի այնպիսի ռազմական կառուցումից, որի հիմքն է սրբազան պատերազմի տարածքի բաժանվածությունը քադերի:

Հենց էթնիկական-ցեղայինից ազգային տարածք ջիհադի ազգաքաղաքական փոխադրման անհրաժեշտությամբ էր պայմանավորված զինված ընդդիմության գործունեության փոխադրումը խճանկարային «գերիյայի» մակարդակից աֆղանական ազգային բանակի մղած համընդգրկուն պատերազմի ռազմավարական թատերաբեմ:

Պատերազմի ուսումնասիրումը ցույց է տալիս, որ զինված ընդդիմության առաջնորդներից ոմանք արդեն այն շրջանում գիտակցում էին ջիհադի տվյալ արդիականացման կարևորությունը: Փորձենք ցույց տալ այդ գործընթացի բարդությունը Ահմադ Շահ Մասուդի՝ Աֆղանստանում ամենահեղինակավոր դաշտային հրամանատարներից և Աֆղանստանի իսլամական ընկերության ռազմաքաղաքական մտավորական առաջնորդներից մեկի կողմից լուծումների արդյունավետ որոնման օրինակով:

ԱԴՀ-ում հեղինակի գտնվելու ժամանակ Ահմադ Շահը հայտնի էր որպես Փանջշիրի ռազմաճակատի հրամանատար, տաղանդավոր ռազմական կազմակերպիչ, ինչպես նաև խորամանկ և ճկուն բանակցող: Փանջշիրի դաշտավայրի ծնունդ լինելով՝ նա իր համերկրացիների նկատմամբ գլխավորություն էր ստացել 1980 թ. խորհրդային բանակի ստորաբաժանումների դեմ հանդուգն հարձակման շնորհիվ: Փանջշիրի ռազմական կազմակերպման առաջին փուլերում Ահմադ Շահի ռազմաճակատը ծավալվում էր քադերի ավանդական կառուցվածքով: Սակայն ժամանակի ընթացքում նա մշակեց և ընդդիմության ռազմաքաղաքական առաջնորդների մեջ առաջինն իրականացրեց պատերազմի այնպիսի մոդել, որը մոջահեդներին թույլ էր տալիս ճեղքել համերաշխության տարածքը և դուրս գալ ազգային թատերաբեմ: Վերջապես 1985 թ. Ահմադ Շահի

զորքերում հայտնվեցին կանոնավոր զինվորական ստորաբաժանումներ («քաթեհաե մարքյազի»), որոնց մեջ հավաքագրումն սկսեց կատարվել քադմերի ցանցերից անկախ:

Այդ ընտրյալ միավորումների ստեղծման և դրանց համազգային կազմակերպության առավելությունների ցուցադրման պահից Աիմադ Շահը գործունեություն ծավալեց իր ռազմական կազմակերպության մեջ ուրիշ համերաշխության տարածքներ ներգրավելու ուղղությամբ: Մասնագետները նշում էին, որ Մասուդը ազգային կանոնավոր ռազմական կազմակերպության կառուցման սկզբունքները ներառում էր քադմերի սահմաններում հատվածավորված ջիհադի ռազմազգաքաղաքական համակարգի մեջ: Նա, մասնավորապես, վերապատրաստման էր ընդունում ոչ փանջշիրյան խմբերին և նրանց տեղական դաշտային հրամանատարներին, որոնք, ըստ Աիմադ Շահի ստացած հետախուզական տվյալների, լարված հարաբերությունների մեջ էին ավանդական առաջնորդների հետ: Վերապատրաստվողները գործնականում յուրացնում էին արդիականացված պատերազմի մոդելը, համոզվում դրա առավելության մեջ, ապա փանջշիրյան հրահանգիչների և խորհրդականների ուղեկցությամբ ներգրավվում էին իրենց ծննդավայրերի ցեղային գոտիների քադմերի մեջ: Այս ամենը Աիմադ Շահին թույլ էր տալիս ջիհադը հետևողականորեն ձերբազատել էթնիկական-ցեղային համերաշխության տեղային տարածքների սահմաններից, այսինքն՝ գործնականում արդիականացնել ռազմաքաղաքական դոկտրինը և նրա ազգայնացման ազգաքաղաքական պրակտիկան:

Աիմադ Շահ Մասուդը, լինելով ոչ ավանդական մտածողության ներկայացուցիչ և միաժամանակ էթնիկական-ցեղային մշակույթի լավ գիտակ, օգտագործում էր նաև իր ռազմաքաղաքական դոկտրինի «մարդկայնացման» և ջիհադի տարամակարդակ քաղաքակրթային մասշտաբավորման գործընթացի անձնավորված կառավարման սոցիալ-հոգեբանական գործոնները: Նոր դաշտային հրամանատարները, որոնք վերջին հաշվով ներկայացնում էին որոշակի ցեղեր ու կլաններ, մոջահեդների ավանդական պարագլուխների համեմատությամբ ավելի շատ գիտելիքներ և ավելի լայն մտահորիզոն ունեին և դրանով իսկ «անաստված հակառակորդի» համընդգրկուն պատերազմին ռազմական դիմագրավման առավել ռացիոնալ տեխնոլոգիաների կրողներ էին: Նոր սերնդի հրամանատարները Աիմադ Շահի շարժման մեջ գտնում էին իրենց սոցիոդինամիկայի առավել ժամանակակից ձևը («սովորածների» առաջքաշում՝ ցեղերի և տոհմերի նահապետական ստորակարգությունների շրջանցմամբ): Մասուդը, անծեռնմխելի թողնելով ավանդական գյուղա-

կան ազգասոցիալական կառուցվածքը, ջիհադի ազգայնացման իր համակարգն իրագործում էր գերազանցապես վերևից՝ ռազմաքաղաքական կառավարման արդիականացման միջոցով: Այդ նպատակով 1985 թ. նա ստեղծեց «Հյուսիսի հսկողության խորհուրդը» («Շուրաե նազա»), կոլեկտիվ ռազմական կառավարման մի կառույց, որը կոչված էր հաղթահարելու ցեղային համերաշխության տարածքներում սրբազան պատերազմի ազգաքաղաքական հատվածավորումը՝ օգտագործելով Աֆղանստանի Իսլամական ընկերության քաղաքական հնարավորությունները և նրա ազդեցիկ առաջնորդ Բուրհանուդդին Ռաբբանիի օժանդակությունը:

Որպես Աիմադ Շահ Մասուդի բազմամյա բարենորոգչական ռազմաքաղաքական գործունեության արդյունք՝ նրա շարժունակ զինված խմբերը հնարավորություն ստացան անարգել շրջանառելու «Հյուսիսի խորհրդի» կողմից վերահսկվող ողջ տարածքում[9]:

Հատուկ հետաքրքրությամբ է օժտված այն միջոցառումների համակարգը, որոնք ժամանակին իրականացվել են Աիմադ Շահի խմբավորման վրա ռազմական ճնշումը և Փանջշիրի ռազմաճակատի հրամանատարի կողմից վերահսկվող տարածքում զինադադարի ու զինված բախման սառեցման վերաբերյալ բանակցությունները զուգակցելու նպատակով:

Ջիհադի առաջին ազգաքաղաքական հատվածներում անգամ կարճատև և տեղային խաղաղության հաստատման այդ փաստերը (հատկապես՝ է. Ի. Բրեժնևի մահից հետո ընկած ժամանակներում) նպաստում էին սանձազերծված պատերազմի հեռանկարների ռացիոնալ վերըմբռնմանը, զինված բախումը կարգավորելու հումանիտար կողմնորոշման առաջընթացին, ինչը կապված էր ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ դեսպանորդի՝ այն ժամանակվա համար նոր խաղաղարար առաքելության ծավալման հետ:

Նկատենք, որ տվյալ վերլուծաբանական և քաղաքական-դիվանագիտական աշխատանքը ժամանակին օգնեց ռազմաքաղաքական գիտամեթոդական հիմք ստեղծելու այն բանի համար, որ հոչակվի Աֆղանստանում ազգային համաձայնության կուրսի գերակայություն և ապա խորհրդային զորքերը դուրս բերվեն այնտեղից:

Մեր կարծիքով՝ անվիճելի է ԽՍՀՄ-ի քաղաքական կենտրոնի մասնակցությամբ ինչպես Աֆղանստանում, այնպես էլ սեփական տարածքում ժամանակին սանձազերծված զինված բախումների հակասական դասերի համեմատական վերլուծության ծավալման նպատակահարմարությունը:

* * *

Հայտնի է, որ Աֆղանստանի մոջահեդները դեռ ոչ հեռու անցյալում բավական գործուն մասնակցություն էին ունենում Ղարաբաղում մարտական գործողություններին ադրբեջանական կողմում, ինչպես նաև շարունակում են կռվել Չեչնիայում և Տաջիկստանում: Ղարաբաղյան հակամարտության մեջ աֆղանացի «հավատի համար մարտնչողների» ներկայությունը հակառակորդն օգտագործում էր իր զինծառայողների մարտական ոգին բարձրացնելու համար: Մոջահեդի կերպարը ադրբեջանական բանակի անձնակազմի շրջանում քարոզվում է որպես ջիհադի արժեքների վրա հիմնվող ռազմական վարքի էտալոն: Հատկանշական է, որ ղարաբաղյան բախման մեջ զոհված ադրբեջանցիները պաշտոնական մամուլում որակվում են որպես շահիդներ՝ հանուն հավատի զոհված սուրբ նահատակներ:

Եթե հաշվի առնենք, որ վարձկան մոջահեդները կարող են ներկայացնել աֆղանական ջիհադի տարբեր տոհմացեղային, ռազմակրոնական և քաղաքական տարրեր, ապա ոչ վաղ անցյալի սրբազան պատերազմի ազգաքաղաքականության յուրահատկությունների իմացությունը կարող է հիմք դառնալ հակառակորդի ռազմական հոգեբանության ավելի լավ ըմբռնման, ինչպես նաև տարածաշրջանում իրադրության վրա ներգործելու քաղաքական և դիվանագիտական միջոցների նրբերանգման համար:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

[1] Լինելով Աֆղանստանում քաղաքական վերլուծության հարցերով մշտապես գործող խորհրդակցության համադասողը՝ հեղինակը օգտվել է թարգմանիչների մի մասնագիտացած խմբի, ինչպես և գիտական խորհրդատուների ծառայություններից և իր երախտագիտությունն է հայտնում թարգմանիչներ Միսքինին, Փուլաթին, Սայֆուդդինին և Հայդրին, ինչպես նաև Աֆղանստանում ցեղերի և ազգությունների նախարարության խորհրդական դոկտոր-պրոֆեսոր Ս. Ֆ. Ալիևկինին:

[2] *R. Peters.* Islam and Colonialism. The Doctrine of Jihad in Modern History. N. Y., 1979, P. 10.

[3] «Տուն»-ը այստեղ երկրի, տեղի այլաբանական անվանումն է:

[4] Տես *Э. И. Скакунов.* Самооборона в международном праве. М., 1973, с. 176:

[5] Տես *Н. В. Жданов, А. А. Игнатенко.* Ислам на пороге XXI века. М., 1989, с. 214–237:

[6] Տես *Г. С. Котанджян.* Цивилизационный аспект национальной безопасности, «Безопасность», Инф. сб. Фонда национальной и международной безопасности.– М., 1992, № 2:

[7] Տես *Р. Давид.* Приспособление мусульманского права к современному обществу. Основные правовые системы современности. М., 1988, сс. 392–398:

[8] Տես *Башорми.* Требования мусульманской науки Афганистана. Издание «Национального фронта спасения Афганистана». Б. м., 1985 / Пер. с дари., *Кази Шахид Гази Абдулкадыр Абдулварис аль-Кашгари.* Догматы о необходимости. Дамаск, 1971. Пер. с дари; *Гульбеддин Хекматьяр.* Бог говорит: создавайте исламское государство. Текст выступления (1359 г. Хиджры) перед племенами Афганистана. Б. м., б. г., / Пер. с дари.

Վկայակոչման մեջ ե. մ. և ե. ղ. տառերը նշանակում են, համապատասխանաբար, «առանց հրատարակության տեղի նշման» և «առանց հրատարակության տարեթվի նշման»: Աֆղանստանում ջիհադի յուրահատկության հետ կապված՝ զինված ընդդիմության շատ հրատարակություններում գաղտնապահության նկատառումով չեն նշված լույսընծայման տեղը, երբեմն և ժամանակը:

[9] Երբ Բուրհանուդդին Ռաբբանին անցավ իշխանության գլուխ, Ահմադ Շահ Մասուդն առաջադրվեց Աֆղանստանի պաշտպանության նախարար՝ միասնական կանոնավոր ազգային բանակ ստեղծելու նպատակադրումով: Ընդդիմադիր առաջնորդ Գուլբեդդին Հեքմաթիարի ճնշման տակ բանակցություններից հետո Ահմադ Շահը հրաժարական տվեց՝ շարունակելով համարվել իր երկրի ռազմաքաղաքական առաջնորդներից մեկը: Ըստ որոշ տվյալների՝ նա Տաջիկստանի զինված ընդդիմության առավել ազդեցիկ գործակիցն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Г. С. Котанджян.* Схема ориентирования мероприятий по организационному обеспечению перехода вооруженных отрядов хазарейского населения на сторону народной власти (на примере предложений по склонению к сотрудничеству бандформирований Саида Джаграна). Кабул, 1983.

2. *Г. С. Котанджян.* «Джихад» как двигатель общественного прогресса. М., «Россия», 1992, 22–29 июля.

3. *Г. С. Котанджян.* Тбилисская встреча ветеранов афганской войны. М., «Безопасность», Инф. сб. Фонда национальной и международной безопасности, 1992, № 1.

4. *Г. Котанджян, С. Абрамян.* Методология урегулирования конфликтов (сущность и механизмы Гарвардского проекта). Е., ГИУА, 1995 (на англ. яз.).

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

(ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ, ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԵՐ)*

Լինելով հանրաքվեի և քաղաքական բանակցությունների միջոցով Ղարաբաղյան հակամարտության իմաստավորման ու լուծման ուղիների հետազոտողներից մեկը[1], հեղինակը սույն հոդվածում իր առջև խնդիր է դնում համակարգելու տարածաշրջանում իրավիճակի քաղաքական կայունացման անհրաժեշտությունն զգացող բոլոր կողմերի շահերի կառուցողական առաջնդման հակամարտաբանական հիմունքները:

Տվյալ խնդրի լուծման համար անհրաժեշտ է պատերազմի մարդասիրական իրավունքի մեթոդաբանական գործիքակազմը քննել իրենց էությամբ ու դրսևորման ձևերով Ղարաբաղյան հակամարտությանը նման զինված հակամարտությունների միջազգային-իրավական նույնականացման առավել լայն համատեքստում այդ գործիքակազմի նորմերի կիրառելիության տեսանկյունից: Խոսքն այն մասին է, որ այդ նորմերը կարող են ծառայել որպես գործիք ներքին ոչ միջազգային և միջազգային տեղական պատերազմների վիճակի որոշման, դրանց կարգավորման ու լուծման նկատմամբ քաղաքագիտական մոտեցումների մշակման համար:

Տվյալ մեթոդաբանությունը կկիրառվի, նախ, հակամարտության զինված փուլի վերլուծության համար, որը խիստ այժմեական է խաղաղարարության իրական ռեսուրսների իմաստավորման առումով, այնուհետև՝ ղարաբաղյան ճգնաժամի ծավալման հիմնական փուլերի համակարգային քաղաքական-իրավական փորձաքննության ավելի լայն ուրվագծման համար: Որպես գիտակիրառական լրացում՝ հոդվածի մեջ մտցված է ԼՂՀ-ի և ԱդրՀ-ի միջև եղած հակամարտության կարգավորման և լուծման հայեցակարգի մի նախագիծ, որը հեղինակն առաջարկում է քաղաքական բազմակողմ բանակցություններում դիվանագիտական կիրառման համար:

* * *

Գեներալ Դը Գոլը, նկարագրելով պատերազմը որպես մարդկության հավերժական ուղեկից, նշել է. «Ձենք օգտագործել է կյուցիֆերը, բայց այն եղել է նաև հրեշտակապետի ձեռքին: Ձենքը եղել է երկչոտների

* «Հայկական բանակ», 1995, հմ. 2–3:

արիությունը, ստահակների պատիվը, ստրուկների արժանապատվությունը... Ձենքը խեղել, բայց միաժամանակ և ձևավորել է աշխարհը: Ձենքը մարմնավորել է ամենայն լավագույնը և վատթարագույնը՝ արատի մեջ թաղված կամ փառքով շողշողացող: Ձենքի պատմությունը խայտառակության և գեղեցկության պատմություն է, մարդկության պատմությունն է»[2]:

Պատերազմի մարդասիրական իրավունքը չի հետապնդում այն նպատակները, որոնք իրենց առջև դնում են պատերազմի մասին գիտությունը կամ պատերազմի միջազգային իրավունքը, որոնցից առաջինն ուսումնասիրում է զինված պայքարի օրենքները և բացատրում է հակամարտությունների մշտակայության պատճառները, իսկ երկրորդը պատերազմն օրենքից դուրս է հայտարարում և միևնույն ժամանակ ձգտում է մշակելու իր հռչակած այդ արգելքի պահպանման ուղիներն ու միջոցները: Պատերազմի մարդասիրական իրավունքն իր էությամբ ավելի պրագմատիկ է. այն ընդունում է աշխարհում բռնության գոյության փաստը, և նրա գլխավոր նպատակն է որքան հնարավոր է խստիվ կարգավորել կողմերի ռազմական և ռազմաքաղաքական վարքը ծագած զինված հակամարտության ժամանակ: Ընդ որում, մարդասիրական իրավունքը նաև նպաստում է, որ հակամարտության մասնակիցների մեջ որոշակի պատրաստակամություն առաջանա՝ չպատճառելու ավելորդ տանջանք, թույլ չտալու ռազմական անհրաժեշտությամբ չթելադրվող դաժան գործողություններ: Ոի թեև խաղաղասիրական ոգու ձևավորումը փաստորեն պատերազմի մարդասիրական իրավունքի նպատակը չէ, բայց նրա անուղղակի արդյունքն է խաղաղ երկխոսության և հաշտարարության ընդհանուր տրամադրվածությունը:

Քաղաքականության և քաղաքագիտության բնագավառի գաղափարապաշտները, հանդես գալով աշխարհը պատերազմի արհավիրքներից զերծ պահելու օգտին, պատերազմի մարդասիրական իրավունքը համարում են անհուսալիորեն սահմանափակ: Իսկ սկեպտիկները համոզված են, որ բռնության մարդասիրականացումը և «նապալմի կուլտուրականացումը» իրենց հիմքում ուտոպիական են:

Զինված հակամարտության մարդասիրական իրավունքն իր պրագմատիստական դիրքերն է պաշտպանում այս տեսակետների հանդեպ և ձգտում է կանխելու, խափանելու եթե ոչ բուն բռնությունը, ապա գոնե սաստիկ դաժանությունները և տանջանքները: Պատերազմի կամ զինված հակամարտության մարդասիրական իրավունքը ուտոպիա չէ, դա մի գիտաճյուղ է, որը հիմնված է չարիքներից փոքրագույնի քաղաքակա-

նությունը սնուցող իրատեսության և ռացիոնալիզմի վրա, մի քաղաքականություն, որը հմուտ կիրառման դեպքում ի վերջո որոշակի շահույթ է բերում, քանի որ պատերազմի մարդասիրական և քաղաքական տեսանկյուններն անհամատեղելի չեն:

Սույն հոդվածում նպատակ չի դրվում տվյալ գիտաճյուղի շրջանակներում լիովին ընդգրկելու ռազմական քաղաքականության, ռազմագիտության և ռազմական պրակտիկայի պահանջների, ինչպես նաև զինված հակամարտությունների զոհերի իրավունքների պաշտպանության անհրաժեշտության միջև գոյություն ունեցող հակասությունների լուծման բազմազան տեսանկյունները: Քննելով պատերազմի մարդասիրական իրավունքի էությունը՝ մենք կփորձենք ուրվագծել ղարաբաղյան զինված հակամարտության քաղաքագիտական որակման տեսական-մեթոդաբանական և կիրառական հիմունքները 1949 թ. ժնևյան համաձայնագրերի և 1977 թ. դրանց կից Լրացուցիչ արձանագրությունների լույսով, քանի որ այդ համաձայնագրերը և Լրացուցիչ արձանագրությունները կազմում են ընդհանրապես զինված հակամարտությունների և, մասնավորապես, հակագաղութային բնույթ կրող հակամարտությունների լուծման և կարգավորման ժամանակ կիրառվող իրավական նորմերի և սկզբունքների հիմնական համակցությունը:

Նախքան «Ղարաբաղի շուրջ» քաղաքական բանակցությունների գիտական հիմունքների քննարկումը նպատակահարմար ենք համարում տալ պատերազմի մարդասիրական իրավունքի աշխատանքային սահմանումը: Համաձայն Միջազգային մարդասիրական հարցերով անկախ հանձնաժողովի նյութերի՝ մարդասիրական իրավունքը զինված բռնության հետ կապ ունեցող իրավիճակների զոհերին օգնություն ցույց տալուն և նրանց պաշտպանության նպատակներին ծառայող միջազգային-իրավական նորմերի հավաքածուն է: Զինված հակամարտությունների վրա տարածվող մարդասիրական իրավունքի ավելի ծավալուն ձևակերպումը տրված է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) կողմից: Ըստ այդ սահմանման՝ պատերազմի մարդասիրական իրավունքի նորմերն են «պայմանագրերով և սովորույթներով սահմանված այն միջազգային նորմերը, որոնք կոնկրետ կերպով նախատեսված են միջազգային կամ ոչ միջազգային զինված հակամարտություններով անմիջականորեն պայմանավորված մարդասիրական հիմնահարցերի լուծման համար, և որոնք մարդասիրական բնույթի պատճառներով սահմանափակում են հակամարտության կողմերի իրավունքը՝ օգտագործելու պատերազմ վարելու մեթոդներ և միջոցներ իրենց ընտրությամբ կամ պաշտպանում են

այն անձանց և սեփականությունը, որոնք այդ հակամարտության հետևանքով տուժել են կամ կարող են տուժել»[3]:

Այսպիսով, զինված հակամարտության մարդասիրական իրավունքի էական առանձնահատկությունը նրա երկու փոխլրացնող տեսանկյուններն են, որոնցից մեկը պայմանավորված է պատերազմի օրենքներով, մյուսը՝ մարդու իրավունքներով: Իհարկե, վերլուծությունը հնարավորություն է տալիս պարզելու մարդասիրական իրավունքի, պատերազմի օրենքների և մարդու իրավունքների միջև եղած տարբերությունը: Այստեղ հարկ է ընդգծել մարդու ինչպես անհատական, այնպես էլ կոլեկտիվ իրավունքները, այդ թվում և ժողովուրդների ինքնորոշման իրավունքը որպես մեկ համակարգ դիտելու կարևորությունը: Նշենք, որ հակամարտությունների կարգավորման և լուծման հիմնահարցերի ուսումնասիրման ժամանակ տվյալ տեսանկյունների անջատ քննարկումը կարող է հանգեցնել սխալ եզրակացությունների և լուծումների:

Ժնևյան համաձայնագրերի և դրանց կից Լրացուցիչ արձանագրությունների համակարգը, լինելով միջազգային մարդասիրական իրավունքի օրինակարգված նորմերի մի համակցություն, շահագրգռված կողմերին անվիճելի իրավական հիմքեր է ընձեռում միջազգային զինված հակամարտությունների կարգավորման հիմնահարցերի կոլեկտիվ քննարկման համար:

Իր ներկա վիճակով ղարաբաղյան զինված հակամարտության նույնականացման համար կարևորագույն հիմք է նրա հակագաղութային բնույթի ճանաչումը, իսկ այդ բնույթը պայմանավորված է նոր առաջացած ադրբեջանական պետության կողմից Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ռազմական և քաղաքական ճնշումով, ընդսմին այստեղ Ադրբեջանն իր վրա է վերցնում գաղութարար մետրոպոլիայի դերը:

Ժնևյան համաձայնագրերին կից առաջին Լրացուցիչ արձանագրության 1-ին հոդվածի 4-րդ կետում ասված է. «Նախորդ կետում հիշատակված իրավիճակները (այսինքն՝ միջազգային զինված հակամարտությունները) ներառում են այն զինված հակամարտությունները, որոնցում ժողովուրդները պայքար են մղում գաղութատիրական օտար գերիշխանության և ռասիստական վարչակարգերի դեմ՝ իրացնելով ինքնորոշման իրենց իրավունքը, որն ամրագրված է Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության մեջ և Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագրում, սկզբունքներ, որոնք վերաբերում են պետությունների միջև բարեկամական հարաբերություններին և համագոր-

ծակցությանը՝ Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությանը համապատասխան»[4]:

Այսպիսով՝ միջազգային զինված հակամարտությունների ժամանակ մարդասիրական նորմերի պահպանման մասին վերն ասվածը իր էությամբ լիովին կիրառելի է նաև հակագաղութային ազգային-ազատագրական պատերազմների նկատմամբ: Տվյալ նորմի հիմքում դրված է գաղութարար երկրի՝ մետրոպոլիայի դեմ ինքնորոշվող ժողովրդի հակագաղութային զինված հակամարտության՝ որպես միջազգային հակամարտության, նույնականացման իրավաբանորեն խստիվ ձևակերպված սկզբունքը:

Նշված նորմի մեջ արտացոլված է մետրոպոլիայի գաղութային ճնշման դեմ պայքարող ժողովուրդների ճանաչվելը համաշխարհային ընկերակցության կողմից որպես միջազգային իրավունքի սուբյեկտներ: Ժնևյան համաձայնագրում ձևակերպված նույնականացման նորմերի համընդհանուր միջազգային-իրավական մասշտաբը հաստատված է ՄԱԿ-ի Գլխաժողովի կողմից 1973 թ. 3013 բանաձևում: Այս փաստաթղթում ամրագրված է այն նորմը, որ «գաղութատիրական և օտարերկրյա գերիշխանության և ռասիստական վարչակարգերի դեմ ժողովուրդների պայքարի հետ կապված զինված հակամարտությունները պետք է դիտել որպես միջազգային զինված հակամարտություններ՝ 1949 թ. ժնևյան համաձայնագրերի իմաստով»[5]:

Հակագաղութային պատերազմների կապակցությամբ անհրաժեշտ է հաշվի առնել զինված հակամարտության կողմերի մի շարք առանձնահատուկ վիճակներ:

Զինված ազգային-ազատագրական հակամարտություններն իրենց սկզբնափուլում սովորաբար հանդես են գալիս որպես անզուգաչափ (ոչ սիմետրիկ) հակամարտություններ: Խոսքը վերաբերում է գաղութարար պետության և ազգային-ազատագրական ուժերի ղեկավար կենտրոնների միջև ռազմաքաղաքական հարաբերությունների իրական դինամիկայի քաղաքագիտական որակման անհրաժեշտությանը: Ռազմական տեսանկյունից այս անզուգաչափությունն արտահայտվում է զինված պայքարի միջոցների բնագավառում կողմերի բացարձակ անհավասարությամբ, հատկապես՝ օդում պետության կրակային հզորության և կանոնավոր զինվորական կազմակերպվածքի առումով: Կենսունակությունը պահպանելու համար հակագաղութային պայքարի կենտրոնները սովորաբար ստիպված են լինում դիմել պարտիզանական պատերազմի:

Հակագաղութային զինված հակամարտության կողմերի միջև հարաբերությունների ռազմական և քաղաքական անզուգաչափության վիճակի ձգձգման դեպքում սովորաբար բարդություններ են ծագում այդ հակամարտության կանոնակարգման ժամանակ: Ապագաղութացման և ՄԱԿ-ի կազմում անկախ պետությունների ընկերակցության ինտենսիվ ընդլայնման դարաշրջանի ազգային-ազատագրական պատերազմների փորձը վկայում է հակագաղութային զինված հակամարտությունների կողմերի միջև, հատկապես՝ նրանց անզուգաչափ վիճակների փուլում, փոխհարաբերությունների միջազգային-իրավական և քաղաքական կարգավորման համակարգում տեղ գտած լուրջ բացերի մասին:

Ժնևյան համաձայնագրերին կից Լրացուցիչ արձանագրությունների արժանիքներից մեկն այն է, որ դրանցում սահմանվում են հակագաղութային բնույթի զինված հակամարտությունների քաղաքական և ռազմական դինամիկայի բոլոր, այդ թվում և այսպես կոչված «պարտիզանական», փուլերում այդ հակամարտությունների միջազգային-իրավական նույնականացման նորմերը և կարգավորման ու լուծման սկզբունքները:

Մեր օրերում գաղութատիրության դեմ պայքարող ժողովուրդների իրավասուբյեկտության ճանաչումը պայմանավորված է հակագաղութային պայքարով, իսկ ինքնորոշվող ժողովուրդն իրավունք ունի այդ պայքարի ընթացքում ստեղծելու իշխանության համապատասխան ազգային մարմիններ: Եթե ինքնորոշվող ժողովրդի կամահայտությունն իրացվում է ժողովրդավարական ուղիով, ապա իշխանության օրինական մարմինների ստեղծման ընթացքում հակագաղութային զինված հակամարտության կողմերի միջև եղած քաղաքական անզուգաչափությունը փաստորեն հաղթահարվում է նրանով, որ այդ հակամարտությունը վերածվում է հակամարտության՝ նորաստեղծ անկախ պետության և նախկին գաղութարար մետրոպոլիայի միջև: Դրանով իսկ ինքնորոշված ժողովուրդը դառնում է միջազգային իրավունքի սուբյեկտ և որպես այդպիսին ձեռք է բերում ազգային պետության բոլոր իրավունքները և պարտականությունները: Այդ է հակագաղութային զինված հակամարտության դինամիկայի քաղաքագիտությունը, երբ կողմերի քաղաքական վիճակի անզուգաչափությունը վերածվում է դիմակայման զուգաչափության:

Հակագաղութային զինված հակամարտության նման զարգացման դեպքում նրա կողմերի վիճակի շարժումն անզուգաչափությունից դեպի զուգաչափություն պարունակում է ռազմական և ռազմաքաղաքական հույժ կարևոր բաղադրամասեր: «Մետրոպոլիայի կողմից կանոնավոր պատերազմ՝ ուղղված հակագաղութային պայքարի ճնշմանը»—«հակա-

գաղութային շարժման կողմից պարտիզանական պատերազմ մետրոպոլիայի ճնշման դեմ» հարաբերությունը փոխակերպվում է «գաղութարար մետրոպոլիայի կողմից կանոնավոր պատերազմ ինքնորոշված նորանկախ պետության իր կազմում պահելու համար»–«գաղութարար մետրոպոլիայի դեմ նորանկախ պետության կանոնավոր պատերազմ ինքնորոշված ժողովրդի ազգային անվտանգության պահպանման համար» հարաբերության: Համապատասխան կերպով ճնավորվում է հակագաղութային զինված հակամարտության ռազմաքաղաքական զուգաչափությունը՝ ի դեմս այդ դիմակայության երկու կողմերի կանոնավոր զինված ուժերի և դրանց կառավարման պետական-քաղաքական հաստատությունների:

Հակագաղութային պայքարում ազգային նոր պետության ժողովրդավարական կազմավորման գործում ինքնորոշման իրենց իրավունքն իրականացրած ժողովուրդների միջազգային իրավասուբյեկտության հիման վրա հաստատվում է նախկին մետրոպոլիայի գաղութատիրական գերիշխանության դեմ զինված պայքարի օրինականությունը: Ներկայումս գոյություն ունեն զգալի թվով միջազգային-իրավական ակտեր, որոնցում ամրագրված է հակագաղութային շարժումների կողմից զինված ուժի կիրառման օրինականությունը: Այսպես, ՄԱԿ-ի Գլխաժողովի 20-րդ նստաշրջանը ճանաչեց «այն պայքարի օրինականությունը, որը ինքնորոշման և անկախության իրենց իրավունքներն իրականացնելու համար մղում են գաղութային լծի տակ գտնվող ժողովուրդները»[6]: Ի լրումն դրա՝ ՄԱԿ-ի Գլխաժողովի 25-րդ նստաշրջանը, հաստատելով «հանուն ինքնորոշման իրենց իրավունքի իրականացման օտար գերիշխանության ներքո գտնվող գաղութային ժողովուրդների մղած պայքարի օրինականության իր ճանաչումը», ամենայն վճռականությամբ հայտարարեց, որ ժողովուրդներն այդ իրավունքը կարող են իրականացնել «իրենց տրամադրության տակ գտնվող բոլոր անհրաժեշտ միջոցներով»[7]:

Սահմանափակվելով նախկին գաղութարար պետության գաղութատիրական գերիշխանության դեմ պայքարող ժողովուրդների կողմից զինված ուժերի օգտագործման իրավունքի օրինականության օգտին վերը բերված փաստարկներով՝ ընդգծենք գաղութարար մետրոպոլիայի կանոնավոր բանակի կողմից ինքնորոշված ժողովրդի կամահայտության զինված ճնշման դեմ այդ ժողովրդի կանոնավոր հակազդման օրինականությունը:

Մարդասիրական-իրավական բաժնի վերջում կարելի է պնդել, որ հակագաղութային զինված պայքարի օրինականության այդ միջազգային-իրավական փաստարկման վրա է հիմնվում ԼՂՀ ռազմական հայեցակարգը: Այն հիմնված է ոչ միայն ԼՂՀ-ի կողմից ինքնապաշտպանության ազգային բանակի ստեղծման, այլև կանոնավոր զինված ուժերի կիրառման օրինականության վրա, թեպետև ընդհանուր իրավական առումով արգելված է ուժի կիրառումը միջազգային հարաբերություններում: Տվյալ միջազգային և պետական իրավազորությամբ հիմնավորված է իր ազգային և միջազգային անվտանգության ապահովմանն ուղղված ԼՂՀ ռազմական քաղաքականությունը:

Ղարաբաղյան հակամարտության զինված փուլի մարդասիրական-իրավական և ռազմաքաղաքական վերլուծության արդյունքները կարող են գիտակիրառական նշանակություն ունենալ ադրբեջանա-ղարաբաղյան կանոնավոր ռազմական հակակայության ռազմաքաղաքական սառեցման համար: Վերը բերված վերլուծությունն այդ առումով ավելի այժմեական է հակամարտության կարգավորման գիտական ապահովման համար: Խաղաղարարության տվյալ նախնական փուլից հետո դրված է հակամարտ կողմերի միջև եղած արմատական հակասությունների լուծման ավելի բարդ խնդիրը: Հակամարտության լուծման ուղիների որոնման գիտախորհրդատական ուղեկցումը ենթադրում է ղարաբաղյան ճգնաժամի ծավալման հիմնական փուլերի վերլուծության քաղաքական-իրավական մասշտաբայնացում:

Շարադրված նկատառումները կարող են ներգրվել հակամարտաբանական քաղաքական-իրավական փորձաքննության հետևյալ համատեքստի մեջ: Ղարաբաղյան հակամարտությունը քննվում է ներքին ոչ միջազգային քաղաքական հակամարտությունից միջազգային զինված հակամարտության փոխակերպվելու դինամիկայում: Քննվող հակամարտության գործընթացի առաջին փուլում ԼՂԻՄ-ի ժողովուրդը ներկայացուցչական իշխանության մարզային մարմնի միջոցով հայտնեց Հայկական ԽՍՀ-ի հետ միավորվելու իր կամքը՝ ԽՍՀՄ սահմանադրության համաձայն դիմելով ԽՍՀՄ, ԱդրԽՍՀ և ՀԽՍՀ Գերագույն խորհուրդներին ԼՂԻՄ-ի մարզխորհրդի որոշումը քննարկելու խնդրանքով: ԱդրԽՍՀ կազմից ԼՂԻՄ-ի դուրս գալու վերաբերյալ ԱդրԽՍՀ Գերագույն խորհրդի բացասական որոշման կապակցությամբ միութենական դաշնության տվյալ սուբյեկտների միջև հարաբերությունները քաղաքական հակամարտության տեսք ստացան:

Քանի որ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի վերաբերյալ ԽՍՀՄ սահմանադրության նորմը ամրապնդված չէր ԽՍՀՄ կազմից միութենական դաշնության սուբյեկտի (մեր դեպքում՝ ԼՂԻՄ-ի) դուրս գալու համապատասխան իրավանորմատիվ մեխանիզմով, տվյալ հակամար-

տությունը օրինական լուծում չստացավ և վերածվեց ներքին ոչ միջազգային հակամարտության: Հակամարտության «ներքին ոչ միջազգային» չափումը ձևավորվեց ոչ միայն ԱդրԽՍՀ, այլև ԽՍՀՄ իշխանությունների հետ ԼՂԻՄ-ի ժողովրդի՝ որպես ինքնորոշման սուբյեկտի, կայուն հակամարտային հարաբերությունների մեջ:

Հանուն ինքնորոշման ԼՂԻՄ-ի ժողովրդի զանգվածային շարժման դեմ ԱդրԽՍՀ-ում տեղաբաշխված ԽՍՀՄ ՋՈՒ-ի կիրառումից հետո հակամարտությունը չզինված հակամարտությունից վերածվեց ներքին ոչ միջազգային զինված հակամարտության:

Հարկ է հատուկ ուշադրություն դարձնել Ղարաբաղյան հակամարտության որակման նկատմամբ եղած մոտեցումներում սկզբունքային շրջադարձի կարևորությանը՝ հաշվի առնելով 1990 թվականին «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» օրենքի ընդունումը և ԽՍՀՄ քաղաքական փլուզման գործընթացի ծավալումը: Հիշեցնենք, որ ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին միութենական հանրապետության կողմից հարց բարձրացվելու դեպքում (ԱդրԽՍՀ Գերագույն խորհուրդն ինքնիշխանության մասին սահմանադրական ակտն ընդունել է դեռևս 1989 թ.) նշված օրենքը ինքնավար կազմավորումներին հնարավորություն էր ընձեռում ինքնորոշվելու որպես միութենական դաշնության ինքնուրույն սուբյեկտներ՝ ընդհուպ մինչև այն միութենական հանրապետությունների կազմից դուրս գալը, որոնց մեջ նրանք մտնում էին համաձայն ԽՍՀՄ Սահմանադրության: Քանի որ այդ պահին ԽՍՀՄ Սահմանադրությունը ԼՂԻՄ-ի ԽՍՀՄ և ԱդրԽՍՀ կազմում գտնվելու մասով դեռ անփոփոխ էր, ինչպես նաև ժողովուրդների ինքնորոշման իրավունքի սահմանադրական նորմը կոնկրետացվեց վերոհիշյալ օրենքի իրավաբանական մեխանիզմում, ապա Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը ձեռք բերեց օրինական հիմքեր (որոնք մինչ այդ չկային ԽՍՀՄ-ում) իր քաղաքական կամքը օրինաչափորեն արտահայտելու և ամրագրելու իրավական-պետական կառույցների միջոցով:

Հակամարտության գործընթացի քաղաքագիտական վերլուծությունը տվյալ փուլում թույլ է տալիս առանձնացնել հետևյալ քաղաքական և իրավաբանական հիմնական փաստերը.

– ԼՂԻՄ-ում, հաշվի առնելով ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին ԱդրԽՍՀ-ի հռչակած մտադրությունը, ինչպես նաև ԱԴՊԿ պարտությունից հետո ԽՍՀՄ լուծարման քաղաքական գործընթացի ծավալումը, սահմանադրական հիմունքներով և միջազգային դիտորդների հսկողությամբ 1991 թ.

նոյեմբերին անցկացվեց հանրաքվե Լեռնային Ղարաբաղի անկախության հռչակման և ԼՂՀ կազմավորման մասին, միաժամանակ ժողովրդավարական ընտրությունների միջոցով ստեղծվեցին ԼՂՀ օրինական իշխանությունները,

– նույն թվականի նոյեմբերին կազմավորվեց ԱդրՀ-ն,

– 1991 թ. դեկտեմբերին լուծարվեց ԽՍՀՄ-ը:

Այսպիսով՝ ԽՍՀՄ Սահմանադրության սուբյեկտ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովուրդը 1991 թ. նոյեմբերին, ԽՍՀՄ լուծարման ընթացքում, ստեղծեց իր անկախ ազգային պետությունը՝ ԼՂՀ-ն: Որպես արդյունք՝ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը օրինականորեն հաղթահարեց տարածքի ամբողջականության սկզբունքը ինչպես ԽՍՀՄ-ի, այնպես էլ ԱդրԽՍՀ-ի նկատմամբ: Դրա հետ մեկտեղ ԼՂՀ-ն ստացավ միջազգային իրավական հիմք տարածքի ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության սկզբունքները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ որպես նորաստեղծ անկախ պետության նկատմամբ կիրառելու համար:

Նախկին ԱդրԽՍՀ տարածքում երկու անկախ պետությունների՝ ԼՂՀ և ԱդրՀ, կազմավորման և այդ ակտերին հաջորդած ԽՍՀՄ փլուզման կապակցությամբ լուծարված ԽՍՀՄ-ին, ինչպես և ԱդրԽՍՀ-ին ԼՂՀ ժողովրդի, տարածքի և իշխանությունների ենթարկման ներքին քաղաքական հարաբերությունները օրինական հիմքով դադարեցվեցին:

Քննվող փաստերի համախումբը վկայում է, որ 1991 թ. վերջում ստեղծվել են Ղարաբաղի ժողովրդի և իրենց գոյությունը դադարեցրած ԽՍՀՄ ու ԱդրԽՍՀ իշխանությունների միջև ներքին ոչ միջազգային զինված հակամարտության օրինական արմատական լուծման իրական իրավաբանական և քաղաքական նախադրյալներ:

Սակայն ԼՂՀ ազգային-պետական կազմավորմանը ԱդրՀ-ի կողմից հետագա քաղաքական և ռազմական դիմագրավման կապակցությամբ ԼՂՀ և ԱդրՀ ժողովուրդների փոխհարաբերություններում խաղաղարարության այդ պատմական հնարավորությունը տվյալ փուլում չիրացվեց:

Հենց այն, որ տվյալ եզակի հնարավորությունը չօգտագործվեց նորաստեղծ ԱդրՀ իշխանությունների կողմից, պատճառ դարձավ, որ ԽՍՀՄ Սահմանադրության (միութենական դաշնության) սուբյեկտների միջև ներքին ոչ միջազգային զինված հակամարտությունը վերածվի միջազգային զինված հակամարտության երկու իրավահավասար նորաստեղծ պետությունների՝ ԼՂՀ-ի և ԱդրՀ-ի միջև:

Կարևոր է նշել, որ դրա հետևանքով Ղարաբաղյան հակամարտության քաղաքական չափումը ստացավ էապես այլ կողմնորոշում: Ղարաբաղյան հակամարտությունը իր «վերամիացումային» ուղղվածությունը փոխեց անկախ ազգային-պետական կողմնորոշման:

Ինչպես ապացուցվեց վերը, այդ կողմնորոշումը հակագաղութային բնույթ ստացավ այն փուլում, երբ Լեռնային Ղարաբաղի պետությունն ստիպված էր հակազդել Ադրբեջանական Հանրապետության զինված ագրեսիային, որի ընթացքում խախտվեցին ԼՂՀ սահմանների անձեռնմխելիությունը և տարածքի ամբողջականությունը:

* * *

Միջազգային զինված հակամարտությունների նույնականացման մեթոդաբանությունը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման խնդիրների տեսանկյունից ժամանակին փորձարկվել է ՀՊՃՀ սոցիալ-քաղաքական գիտությունների դեպարտամենտի և ՀԱՅՔ անկախ գիտահետազոտական ինստիտուտի հովանու ներքո կազմակերպված միջճյուղային սեմինարում (ֆիզ-մաթ. գիտ. դոկ. Արամ Առաքելյան, բանաս. գիտ. դոկ. Սուրեն Զոլյան, փիլ. գիտ. դոկ. Ալեքսանդր Մանասյան, ֆիզ-մաթ. գիտ. թեկ. Վահան Գալոյան, պատմ. գիտ. թեկ. Ռուբեն Կարապետյան, փիլ. գիտ. թեկ. Մարատ Մուսայելյան, պատմ. գիտ. թեկ. Հրանուշ Խառատյան, սեմինարի ղեկավար քաղաք. գիտ. դոկ. Հայկ Քոթանջյան): Այս հետազոտության ընդհանրացված արդյունքները ղարաբաղյան հակամարտության շուրջ բանակցությունների քաղաքական հայեցակարգի ծևով հրապարակվել են հանրապետական մամուլում[8]: Այդ հրապարակման նպատակն էր ԵԱՒՀ և ԵԱՀԿ հովանու ներքո ընթացող բանակցությունների պաշտոնական և ոչ պաշտոնական մասնակիցների խորհրդատվական սպասարկումը:

Քանի որ անցած աշնանը լույս տեսած այս նյութը այսօր էլ ընդհանուր առմամբ չի կորցրել իր արդիականությունը, ստորև բերում ենք այդ տեքստը որոշ փոփոխություններով և ճշտումներով:

* * *

Միջճյուղային սեմինարի ընթացքում որպես հիմնական խնդիր քննարկվել է Ղարաբաղյան հակամարտության նույնականացումը միջազգային նորմերին և չափանիշներին համապատասխան, ինչպես նաև բանակցություններում օգտագործվելիք հիմնական փաստարկների համակարգը:

Կիրառական քաղաքագիտության և դիվանագիտական պրակտիկայի տեսանկյունից, օրինական ճանապարհով ԼՂՀ և ԱդրՀ ստեղծումից հետո,

առավել կարևոր նշանակություն է ստանում բանակցությունների մասնակիցների կողմից ներքին հակամարտության մոդելի կիրառման պակասավորության հիմնավորումը: Ցույց է տրված, որ ներքին, ոչ միջազգային հակամարտության մոդելի վրա հիմնված բանակցություններին մասնակցելը, վերջիվերջո, «Ղարաբաղի ժողովրդին հանձնում է իր նախկին գաղութարար մետրոպոլիայի իշխանությունների դատաստանին»: Նման մոտեցումն օբյեկտիվորեն ուղղված է հակամարտության կարգավորման գործում ինչպես հայկական և ղարաբաղյան, այնպես էլ միջնորդ կողմի (ԱՊՀ և ԵԱՀԿ) քաղաքական և դիվանագիտական մասնակցության հնարավորությունների սահմանափակմանը: Միջազգային իրավունքի նորմերի հիման վրա հաստատված է ԼՂՀ-ն կարգավորման փուլում որպես միջազգային հակամարտության կողմ ճանաչելու օրինականությունը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի քաղաքական-իրավական կարգավիճակին վերաբերող բանակցությունների փուլում՝ ԼՂՀ պետական անկախությունը որպես կայացած քաղաքական փաստ դիտելու անհրաժեշտությունը:

Այլ կերպ ասած՝ ԼՂՀ-ն հակամարտության կողմ ճանաչելու վերաբերյալ որևէ մեկի կողմից արտահայտված կասկածը ժամանակավրեպություն է: Տարածաշրջանում իրադրության ռազմական և քաղաքական կայունացման շահերից բխում է, որ տվյալ հարցում բոլոր շահագրգիռ կողմերը պետք է խելամտորեն ճանաչեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև միջպետական հարաբերությունների կարգավորման գործում միջազգային-իրավական նորմերի գերակայությունը:

Այսպիսով՝ մշակված է հակամարտության կարգավորման և լուծման վերաբերյալ բանակցություններում հայկական և ղարաբաղյան, ինչպես նաև միջնորդ կողմերի հնարավոր դիրքորոշումների հիմնավորման մեթոդաբանություն:

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԸ

1. Ղարաբաղյան հակամարտությունը որպես միջազգային հակամարտություն է որակվում հետևյալ հիմնական դրույթների հիման վրա.

ա) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ որպես ազգային պետության կազմավորման համապատասխանությունը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին (1948 թ.) և Մարդու իրավունք-

ների մասին միջազգային համաձայնագրերին (1966 թ.), որոնց ներածական մասերում ժողովուրդների ինքնորոշման իրավունքը որակված է որպես մարդու անհատական տնտեսական, սոցիալական, մշակութային, ինչպես նաև քաղաքական և քաղաքացիական իրավունքների իրականացման անհրաժեշտ նախադրյալ:

բ) ԼՂՀ իշխանությունների օրինականությունը, որը հաստատված է նրանով, որ ԼՂՀ անկախության վերաբերյալ տեղի ունեցած հանրաքվեն և քաղաքական ներկայացուցչական հաստատությունների ձևավորման համար տեղի ունեցած ընտրությունները համապատասխանում են.

- ժողովուրդների ինքնորոշման վերաբերյալ միջազգային իրավունքի վերոհիշյալ նորմերին,
- ԽՍՀՄ 1990 թ. ընդունված «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» օրենքի պահանջներին, մի օրենք, որը ժողովուրդների ինքնորոշման վերաբերյալ միջազգային իրավունքի նորմերի իրացումն է ազգային–պետական մակարդակով:

2. Տրված է լրացուցիչ հիմնավորում Ղարաբաղյան հակամարտության նույնականացմանը՝ որպես միջազգային հակամարտության այնպիսի մի հատուկ տեսակի, ինչպիսին է միջազգային զինված հակամարտությունը: Այդ կապակցությամբ հաստատված է գաղութային տիրապետության միտումով Ադրբեջանական Հանրապետության ոտնձգությունների նկատմամբ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազգային դիմակայությունը որպես միջազգային զինված հակամարտություն որակելու օրինականությունը:

3. Առաջարկված է Ադրբեջանական Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջև եղած զինված հակամարտության կարգավորման հիմունքների ընտրության մեթոդաբանություն հետևյալ հակամարտաբանական սկզբունքների գերակայությանը համապատասխան.

ա) ներքին ոչ միջազգային հակամարտության դեպքում՝ սահմանների անփոփոխության, տարածքային ամբողջականության և չմիջամտության սկզբունքների գերակայությունը,

բ) միջազգային զինված հակամարտության դեպքում՝ կողմերի իրավահավասարության, ինքնորոշման և անհրաժեշտ ինքնապաշտպանության սկզբունքները[9]:

4. Հիմնավորված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ որպես հակագաղութային միջազգային զինված հակամարտության կողմի (ԼՂՀ-ն ընդդեմ ԱդրՀ-ի գաղութային տիրապետության) միջազգային իրավասուբյեկտությունը:

5. Հիմնավորված է Ղարաբաղյան հակամարտության գոտում սահմանների անձեռնմխելիության և տարածքի ամբողջականության սկզբունքների խախտման օրինականությունը այն հիման վրա, որ այդ խախտումը տեղի է ունեցել որպես նախկին ԱդրԽՍՀ տարածքում սահմանադրական, օրինական հիմունքներով երկու անկախ, իրավահավասար պետությունների՝ ԼՂՀ և ԱդրՀ, ստեղծման, ինչպես նաև ԽՍՀՄ լուծարման արդյունք:

6. Ելնելով այն բանի հիմնավորումից, որ Ղարաբաղի հայերի ինքնապաշտպանությունը հարկադրական և անհրաժեշտ ինքնապաշտպանություն է (ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածին համապատասխան) և պատասխան է Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման ազատության և քաղաքական կամահայտության կանոնավոր զինված ճնշման (գաղութարար նախկին մետրոպոլիայի կողմից՝ հանձին ԱդրՀ-ի), ապացուցվում է, որ օրինական է Ղարաբաղի ժողովրդի անվտանգության երաշխիքների ապահովումը ինքնապաշտպանության սեփական ազգային բանակի ստեղծման և օգտագործման միջոցով, ինչը տեղի է ունենում պետական իշխանության ձևավորման ընթացքում: Այդ կապակցությամբ հիմնավորված է ԼՂՀ-ի կողմից ԱդրՀ սահմանների անձեռնմխելիության և տարածքի ամբողջականության խախտման օրինականությունը այն հիման վրա, որ այդ խախտումը տեղի է ունեցել ԼՂՀ-ի դեմ ԱդրՀ-ի ձեռնարկած ագրեսիայի հետևման հետևանքով, ինչպես նաև հակաոռակորդից ևվաճված տարածքներում անվտանգության գոտիների ստեղծման և պահպանման նկատառումներով:

7. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը գաղութատիրական պատերազմի մարդասիրական-իրավական կանոնակարգման համակարգի մեջ մտցնելու նպատակով բերվում է ԼՂՀ-ի որպես միջազգային զինված հակամարտության կողմի ժնևյան համաձայնագրերի համակարգին միանալու մեխանիզմը, որ նախատեսված է առաջին լրացուցիչ արձանագրությամբ. այդ միացումը պետք է կատարվի Շվեյցարիայի համադաշնությանը՝ որպես պահնորդ երկրի, համապատասխան «միակողմանի դիմումով» դիմելու միջոցով[10]:

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԸ

Ապագա խաղաղարարական բանակցություններում ԼՂՀ՝ որպես հարկադրաբար ԱդրՀ-ի դեմ հակագաղութային պայքարը շարունակող ինքնորոշված ժողովրդի օրինական անկախ պետության, կարգավիճակի հիմնավորումը դիտվում է որպես հակամարտության համապարփակ լուծման համար քաղաքական-իրավական կարևորագույն գործոն:

Այս առումով մշակված են հետևյալ փաստարկները՝

ա) ԼՂՀ ամբողջ տարածքում շուրջ երեք տարի անընդմեջ իրականացվում է ժողովրդավարական եղանակով կազմավորված և զարգացող օրինական պետական ներկայացուցչական և գործադիր, այդ թվում նաև զինվորական իշխանություն,

բ) Լեռնային Ղարաբաղի հայությունն ինքնորոշվել է իր պատմական մշտական բնակության տարածքում, որտեղ գոյություն ունի երկու հազարամյակների ընթացքում նրա կողմից ստեղծված նյութական և հոգևոր մշակույթի հուշարձանների մի ամբողջական համալիր,

գ) ԼՂՀ կազմավորումը պետք է դիտվի ոչ թե որպես Ղարաբաղի հայության ինքնորոշման մեկնարկային ակտ, այլ որպես ԽՍՀՄ տապալման հետ կապված նրա պետական-իրավական կարգավիճակի օրինաչափ զարգացում:

Անկանխակալ հակամարտաբանական վերլուծությունը մղում է համաձայնելու այն հետևություններին, որ ստեղծված պայմաններում ԼՂՀ-ին հակամարտության կողմ չճանաչելը առնվազն հեռու է իրատեսությունից: Այդ բանը վերջերս հաստատեցին միջազգային ատյանները: Ավելին, մենք համոզված ենք, որ Ադրբեջանի համար Ղարաբաղյան հակամարտության առավել խելամիտ լուծումը կլիներ ԼՂՀ-ի՝ որպես իրավահավասար գործընկերոջ հետ միջպետական հարաբերությունների հաստատման քաղաքականությունը:

Այսպիսով՝ բանակցություններում ձեռք բերված հաջողությունները նպատակահարմար է գնահատել ոչ այնքան կարևոր ընթացիկ, իրադրությամբ պայմանավորված փոքրիկ առաջխաղացումներով, որքան այն բանով, թե այդ բանակցությունների արդյունքները ինչ չափով են միտված կողմերի արմատական այն շահերի փոխհամաձայնեցմանը, որ նրանք ունեն

կայուն խաղաղության ձեռքբերման մեջ, այնպիսի խաղաղության, որը պաշտպանված լինի տարածաշրջանում գործող ուժերի աշխարհաքաղաքական հավասարակշռությամբ և համաշխարհային ընկերակցության կողմից ԵԱՀԽ-ին լիազորված երաշխիքներով:

* * *

Վերջում անհրաժեշտ ենք համարում բանակցությունների գործընթացում, ինչպես նաև լրատվական միջոցներում ներգրավված քաղաքական գործիչների և դիվանագետների ուշադրությունը բևեռել Ղարաբաղյան հակամարտության «քաղաքական-իրավական» և «հակագաղութային» չափումների մշակման քաղաքագիտական բավականաչափ կառուցողականության վրա: Մեր կարծիքով՝ «բանակցությունների փաթեթի» կոորդինացված ձևավորման դեպքում այս մեթոդաբանությունը կարող է արժանանալ համաշխարհային ընկերակցության, այդ թվում և ժամանակին գաղութային պարտավորությունների բեռը թոթափած, ինչպես նաև գաղութատիրության տիրապետությունից ազատված զգալի թվով երկրների դրական արձագանքին: Քաղաքական խնդիրների ձևակերպման ժամանակ հատուկ մշակման են արժանի իսլամական պետությունների հետ հարաբերությունների դիվանագիտական ռեսուրսների իմաստավորումն ու օգտագործումը, պետություններ, որոնք միջազգային ամբիոնից ավանդաբար սատար են լինում ազգային անկախության համար գաղութատիրական լծի դեմ պայքարող ժողովուրդներին:

Ելնելով առաջարկված մեթոդաբանությունից՝ որպես ԼՂՀ-ի համար քաղաքական գերակա ռազմավարություն կարելի է քննարկել զուգաչափության հաստատումը ազգային պետականության կարևորագույն հատկանիշների ամբողջ բազմազանությամբ: Անշուշտ, խոսքը ԼՂՀ-ի և ԱդրՀ-ի միջև ազգային պետական հզորությունների քանակական հավասարության ուտոպիական հաստատման մասին չէ: Այստեղ մենք նկատի ունենք Ղարաբաղի ազգային պետականության ինքնահաստատման գործընթացի վրա ներքին և արտաքին քաղաքական արդյունավետ ազդեցություն ունեցող զուգաչափ հաստատությունների համալիր կառուցման, տարածաշրջանային անվտանգության ապահովման մեջ մասնակցության ռազմավարությունը:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

[1] Հեղինակը 1982–1983 թթ. (Լ. Ի. Բրեժնևի մահվանից հետո) Աֆղանստանում ԽՄԿԿ ԿԿ դեսպանորդ-խորհրդականի պարտականությունները կատարելիս ներգրավված է եղել ԱԴՀ զորքեր մտցնելու հետևանքների, ինչպես նաև առանձին ցեղային միությունների մարտական գործողությունների գոտում հակամարտությունների սառեցման հնարավորությունների քաղաքագիտական վերլուծության գործում: 1988–1990 թթ., լինելով ՀԿԿ ԿԿ անդամ և ՀԽՍՀ ԳԽ պատգամավոր, զբաղվել է Ղարաբաղյան հակամարտության լուծման քաղաքական-իրավական հնարավորությունների վերլուծությամբ: 1990–1992 թթ. Դիվանագիտական ակադեմիայի միջազգային հարաբերությունների ուսումնասիրման մեթոդաբանության կենտրոնի, Կառավարման ռուսաստանյան ակադեմիայի սոցիոլոգիական և սոցիալ-հոգեբանական ուսումնասիրությունների կենտրոնի, ՈԴ ՀՈՒ-ի Գլխավոր շտաբի ռազմական ակադեմիայի ռազմաքաղաքական գիտությունների ամբիոնի գիտնականների հետ համագործակցության մեջ, մասնակցել է տարածաշրջանային զինված հակամարտությունների կարգավորման ու լուծման պրոբլեմների միջճյուղային ուսումնասիրմանը: 1990–1993 թթ. մասնակցել է նախկին ԽՍՀՄ և Աֆղանստանի տարածքում տեղի ունեցող զինված հակամարտությունների համեմատական հետազոտությունների փորձաքննությանը: Լինելով ԽՍՀՄ արտաքին-քաղաքական ասոցիացիայի գիտական խորհրդատու, միջազգային հարաբերությունների տեսության և մոդելավորման ռուսաստանյան ասոցիացիայի գիտական բարտուղար, «Ռուսիա» շաբաթաթերթի քաղաքական մեկնաբան Անդրկովկասում՝ խորհրդատվական օգնություն է ցույց տվել ՈԴ-ում ՀՀ մշտական ներկայացուցչությանը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի մասնագետներին: Եղել է զինված հակամարտությունների գոտիներում, մասնակցել է միջազգային խաղաղարար բանակցություններին և միջազգային գիտական կոնֆերանսներին (տես *Կոտանջյան Գ. Ս., Ռուդենկո Ի. Պ.* Вариантов не признаю, когда речь идет о Родине, Знамени и Чести. "Комсомольская правда", 2 февраля 1989 г.; *Կոտանջյան Գ. Ս.* Выход из тупика. 14 июня 1989 г.; *его же.* Блокада… время игр? "Коммунист", 21 ноября 1989 г.; *его же.* Противоправное право, "Коммунист", 13 июля 1989 г.; *его же.* Тонкая нить согласия. "Огонек", февраль 1991 г., № 6, и др.).

[2] *Charles de Gaulle.* Du prestige, "Revue militaire française", Juin, 1931.

[3] "The efforts of ICCR in the case of violations of international humanitarian law", The International Review of The Red Cross, March-April 1991.

